2243-

# ԿՐԹՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆԻ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ։

Շարադրեցեալ՝ ի Հայր Ռոտ-
րիկվէց Աղփոնսոս քահանայէ
Յիսուեան կարգին։

Եւ Թարգմանեցեալ՝ ի Հայկական բար-
բառ ՚ի Պետրոսէ Մկրտչեան Թիֆ-
լիսեցւոյ ՚ի վաղնջուց ժամանակաց։

Եւ յանձնարարութ[եամ]բ նորին սրբագրե-
ցաւ մեծաւ աշխատութ[եամ]բ ՚ի Մխիթա-
րայ Վարդապետէ Սեբաստացւոյ,
Աբբայ հայր կոչեցելոյ։

Եւ տպագրեցաւ՝ ի Հայրապետու-
թ[եա]ն Տ[եառ]ն Ղազարու Հայոց
Կաթուղիկոսի։

Յամի Տ[եառ]ն. 1742։ Սեպտեմբ. 15։

՚Ի ՎԷՆԷՏԻԿ
՚Ի տպարանի Անտոնի Պօրթօլի։
Հրամանաւ Մեծաւորաց։

1482-2008




Հնազանդութ՟ն տուողին կենաց,
Մինչև 'ի մահ խաչին դիմեաց,
Համակերպիլ քեզ հրամայեաց,
Վարուց իւրոց նաև կամաց,
Ուստի դու զաչս հոգւոյդ քո բաց,
Եւ տե՛ս թէ զինչ քեզ պատուիրեաց։

# ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱ ԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԸՆԴ ԿԱՄԱՑՆ Ա̃Յ

## ԳԼՈՒԽ. Ա.

Առաջին գլխոյն երկու հիմունք գլխաւորք։

Ո՛Չ ՈՐՊԷՍ ԵՍ ԿԱմիմ, այլ որպէս դու։ Մատ. 26. 39։ Ասեն ծերքն, թէ վասն երկուց իրաց էջ որդին Ա̃Յ յերկնից, և զգեցաւ զմարմին, լինելով մարդ ճշմարիտ։ Մինն եղև առ'ի փրկել զմեզ պատուհասէն արեամբ իւրով։ Եւ միւսն՝ առ'ի ուսուցանել մեզ վարդապետութ̃ իւրով զճանապարհն երկնից, և կրթել զմեզ օրինակաւ իւրով։ Վ̃ն այսորիկ ոչ ոչինչ օգուտ էր մեզ գիտել զճանա-

պարգեւն երկնից, եթէ կամաւ մնայցեմք 'ի բանտի. այսպէս ( ասէ սուրբն Բեռնարդոս ) ոչինչ օգուտ էր ազատիլն 'ի բանտէ, եթէ ոչ գիտիցեմք զճանապարհն երկնից: Եւ քանզի Այ էր աներեւոյթ, հարկ եղեւ, զի եղանիցէ երեւելի, եւ զգենուցու զբնութիւն մեր, որպէս զի մեք կարիցեմք տեսանել զնա, եւ հետեւիլ նմա, որպէս հովիւն զգենու զմորթն ոչխարի, որպէս զի ոչխարքն հետեւեսցին նմա՝ տեսանելով զնմանութիւն իւրեանց 'ի նմա: Եւ սուրբ Լեւոն պապն ասէ. *Եթէ ոչ իցէր նա Այ ճշմարիտ, ոչ կարիցէր դարմանել զմեզ. եւ եթէ ոչ իցէր ճշմարիտ մարդ, ոչ տայցէր մեզ զօրինակ ||: Զմինն եւ զմիւսն ցուցին արար նա յոյժ կատարելապէս, եւ գերազանցագոյն սիրով, որով սիրէր զմարդիկ: Զի որպէս փրկութիւն եղեւ յոյժ առատ, ըստ այնմ, Եւ բազում 'ի նմանէ փրկութիւն: Սաղմ. 129. 7: այսպէս եւ առատաբար խրատեաց զմարդիկ, զի խրատ նորա ոչ միայն եղեւ բանիւք, այլ մանաւանդ առաւելագոյն օրինակօք գործոցն: Սկսաւ Յս առնել, և ուսուցանել, ասէ սուրբ Ղուկաս աւետարանիչն, Գործ. 1. 1: Նախ սկսաւ գործել, զոր ինչ արար 'ի կեանս իւր, եւ ապա քարոզել յերկս վերջին ամին: Արդ՝ 'ի մէջ այլոց բազմաց իրաց, զորս ուսոյց մեզ Քս փրկիչն մեր, մինն՝ եւ առաւել նախապատուականն եղեւ այս, զի ունիցեմք զամբողջ համակերպութիւն կամաց մերոց ընդ կամացն Այ 'ի յամէն իրս: Եւ ոչ միայն ուսոյց մեզ զայս բանիւք յայնժամ, յորժամ 'ի յուսուցանելն մեզ աղօթել՝ ասաց, թէ մինն յայնցանէ, զորս խնդրեսցէք 'ի Հօրէն ձեր մի երկնաւորէ, իցէ այս. Եղիցին կամք քո որպէս յերկինս, և յերկրի: Այլ եւ ուսոյց, եւ հաստատեաց յոյժ բարեաւ զվարդապետութիւս զայս օրինակաւ իւրով. քանզի առ այս գործ ասէ նա, թէ Իջի ես յերկնից, ոչ զի

զկամս

զկամս իմ արարից, այլ զկամս այնորիկ, որ առա-
քեացն զիս ։ Յոհ. 6. 38։ Եւ 'ի ժամանակի կա-
տարելոյ զգործ փրկութեան մերոյ յաղօթելն
'ի պարտիզին, թէպէտ մարմինն, և զգայա-
կան ախորժումն հրաժարէին 'ի մահուանէ.
ուստի առ 'ի ցուցանել, թէ էր ճշմարիտ
մարդ՝ ասաց. Հայր իմ, եթէ հնար է, անցցէ
բաժակս այս յինէն ։ Մատ. 26. 39։ Բայց սա-
կայն կամք նորա էր միշտ կարի յօժար, և
յոյժ ցանկայր ըմպել զբաժակն, զոր Հայրն
իւր առաքէր նմա. ուստի իսկոյն յաւել ա-
սել, Ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու ։

Արդ՝ առ 'ի ըմբռնել զայս 'ի յարմարոյ, և
առ 'ի բարւոք հիմնել զմեզ յայսմիկ համակեր-
պութեան, պարտին առաջադրիլ երկու կար-
ճառօտ հիմունք, բայց կարի գոյացականք.
'ի վր̃ որոց ամ̃ 'ի վր̃ երկուց ծխնեաց յեն-
լուն են այլք ամ̃ մնացեալ գործողութիւնք ։
Նախկինն է՝ թէ ամ̃ օգուտ, և կատարե-
լութիւն մեր կայանայ յայսմիկ համակերպու-
թեան կամաց մերոց ընդ կամացն Այ̃, և որ-
քան առաւել մեծ, և կատարեալ եղիցի
այս, այնքան առաւել մեծագոյն եղիցի օ-
գուտն մեր ։ Այս հիմն բարւոք կարէ իմա-
նիլ այնու, զի հաւաստի իմն է այս, թէ
կատարելութիւն էութենականաբար կայա-
նայ 'ի սէրն Այ̃. և այնքան որ եղիցի ա-
ռաւել կատարեալ, որքան առաւել սիրես-
ցէ զԱծ̃ ։ Եւ է այսու վարդապետութ̃ սրբա-
զան աւետարանն, լի են թուղթքն սրբոյն
Պօղոսի. լի են և գրեանք սրբոցն ։ Այս է
մեծն, և առաջին պատուիրանն ։ Մատ. 22. 38։
Սէրն է զօդ կատարելութեան ։ Կողոս. 3. 14։ Եւ
մեծ քան զսոսա սէրն է ։ 1. Կորն. 13. 13։ Արդ
առաւել բարեգոյն, և առաւել մաքրագոյն
մասն այնորիկ սիրոյն՝ որ առ Ած̃, և ամ̃
սէր կաթլին նորա է համակերպելն յամ̃ իրս
ընդ կամացն Այ̃, և ունելն զմի և զնոյն
կա-

կամիլ, և ոչ կամիլ ըն ԱՅ յամ իրս ։ Զի ասէ Տրն Հերոնիմոս, * կամիլ զնոյն, և ոչ կամիլ զնոյնն է հաստատ բարեկամութի ‖ ։ և զայս առնու 'ի չէչերոնէ փիլիսոփայէն ։ Ապա ուրեմն որքան որ եղիցի առաւել համակերպ, և առաւել միաձորեցեալ ընդ կամացն ԱՅ, այնքան եղիցի նա առաւել բարեգոյն, և կատարելագոյն ։ Դարձեալ, է յայտնի իմն, թէ ոչ գոյ իր ինչ առաւել բարեգոյն, և կատարելագոյն քան զկամս ԱՅ ։ Ուրեմն որքան որ առաւել համակերպի, և միաձորի ընդ կամացն ԱՅ, այնքան առաւել բարեգոյն, և կատարելագոյն եղիցի, որպ ձեռնարկէր այն փիլիսոփայն, ասելով, եթէ ԱԾ է առաւել կատարելագոյն քան զամ իրս, որք գոն, ապաուրեմն որքան իր ինչ առաւել նմանի ԱՅ, այնքան առաւել եղիցի կատարելագոյն ։

Երկրորդ հիմն է այս, թէ ոչինչ իր կարէ պատահիլ, կամ հանդիպիլ յաշխարհի աստ, եթէ ոչ կամաւն, և կարգադրութբն ԱՅ ։ և այս իմանալի է միշտ բացառոցելով ըզմեղս, և զյանցանս ։ զի ԱԾ ոչ է, և ոչ կարէ լինիլ պատճառ, կամ հեղինակ նոցին ։ Եւ որպ ընդդիմանայ բնութե հրոյ սառուցանելն, և բնութե ջրոյ ջերմացուցանելն, և արեգական խաւարեցուցանելն ։ այսպէս ևս անհնարի ընդդիմանայ անչափ բարութեն ԱՅ սիրելի զանօրէնութի ։ Ուստի Ամբակում մարգարէն ասաց ։ 1. 13 ։ Սբ է ակն քո. 'ի տեսանելոյ չարիս, և հայիլ յանօրէնութե ոչ կարասցես ։ Յորժամ ոմն ատէ զոք, ասեմք, թէ ոչ կարէ տեսանել զնա ։ և զայս ասեմք առ 'ի նշանակել զմեծ ատելութին, զոր ունի առ նա ։ այսպ ասէ՝ թէ ԱԾ ոչ կարէ տեսանել զանօրէնութիս մարդկան յաղագս դարչութեն, և մեծի ատելուե, որով ատէ զայնս ։

զայնս : Ո՛չ եթէ դու ԱԾ կամիս զանօրէնութիւն : Սաղմ. 5. 4: Եւ դարձեալ. Սիրեցեր զարդարութիւն , եւ ատեցեր զանօրէնութիւն : Սաղմ. 44. 9: Եւ է բոլոր ամենաշունչն , թէ որքան ատէ ԱԾ զմեղս . ուստի նա ո՛չ կարէ լինել պատճառ կամ հեղինակ մեղաց : Սակայն արտաքոյ ասցա այլք համայնք իրք , եւ ամ վիճակք , եւ ձևաւք պատժոց գան ըստ կամաց եւ կարգադրութեանն ԱՅ : Նաեւ այն հիմն է յոյժ ճշմարիտ : Ո՛չ գոյ բաղդ յաշխարհիս . զի այս եղև մոլորութիւն հեթանոսաց : Զբարեաւն զոր աշխարհս ըստ բաղդի կոչէ , ո՛չ տայ բաղդն , որ եւ ո՛չ գոյ , այլ զայնս տայ միայն ԱԾ : Այսպ ասէ հոգին նբ 'ի ձեռն իմաստնոյն . Սիրաք. 11. 14: Բարի եւ չար . կեանք եւ մահ . աղքատութիւն եւ հարստութիւն յՏէ են :

Եւ թէպէտ այսոքիկ իրք գան միջնորդութբ այլոց պատճառաց երկրորդաց . բայց սակայն այս է ճշմարիտ , թէ ոչինչ եղանի յայսմիկ աշխարհի , եթէ ոչ կամաւ եւ կարգադրութբն ԱՅ , որ է ծայրագոյն կայսր , եւ կառավարող ամի : Ոչինչ գոյ պատահմամբ 'ի կողմանէ ԱՅ . զի ամ ինչ մտանէ եւ անցանէ ընդ ձեռամբ նր : Թուեալ է զամ մազերս մարմնոյ քո , եւ զամ հերս գլխոյ քո . ուստի եւ ո՛չ մի 'ի նոցանէ եղիցի բարձեալ 'ի քէն առանց կամաց եւ կարգադրութեն նր : Ո՛չ միայն զմարդկանէ ասեմ զայս , այլ եւ զանբանից : Քանզի ասէ Քս փրկիչն մեր , ոպ ընթեռնումք 'ի նբ աւետարանին . Մատ. 10. 29: Ոչ ապաքէն երկու ճնճղուկք դանկի միոջ վաճառին , եւ մի 'ի նոցանէ ոչ անկցի յերկիր առանց հօր ձերոյ : Այլեւ ո՛չ տերեւ մի ծառոյ շարժի առանց կամաց նր : Զայս նաեւ զվիճակաց ասէ իմաստունն . 16. 33: Վիճակք դնին 'ի ծոցի . բայց 'ի Տնէ բարեխառնին : զի ասամադրութբ ԱՅ եղանին , ըստ այնմ ,

Գործ. I. 26: Եւ ել վիճակն Մատաթեայ: Ոչ անկաւ պատահմամբ վիճակն 'ի վ̄ր Մատաթեայ, այլ եղև վճռով, և նախախնամութե՛ Այ, որ կամեցաւ ընտրել զնա առաքեալ իւր այնու ճանապարհաւ:

Այսմիկ ճշմարտութե՛ հասին նաև բնական լուսով իմաստուն փիլիսոփայքն, և ասացին. Թէպէտ 'ի կողմանէ երկրորդ պատճառաց բազում իրք լինին պատահմամբ, սակայն 'ի կողմանէ առաջնոյ պատճառին, որ է Ած, ոչինչ լինի պատահմամբ. այլ ըստ կամաց, և ըստ հաճութե՛ նր. և տան զօրինակս զայս: Եթէ իշխան ոք առաքիցէր ընդ ծառայ մի ուրեք վս իրիք գործոյ. և յետոյ զմի այլ ծառայ ընդ այլ ճանապարհ 'ի նոյն տեղին, յո գնայր առաջինն, առանց գիտելոյ ծառայիցն զառաքումն միմեանց, և զկամս իշխանին, որ կամէր, զի պատահեցին նոքա միմեանց: Արդ՝ յորժամ ծառայքն հանդիպին միմեանց, հանդիպումն այն եղիցի պատահմամբ 'ի կողմանէ ծառայից. բայց 'ի կողմանէ իշխանին ոչ լինի պատահմամբ. զի գիտէր զհանդիպումն նց միմեանց, ը̄ որում կամեցեալ էր, զի հանդիպիցէին: Այսպէս և թէպէտ 'ի կողմանէ մարդկան ոմանք իրք լինին պատահմամբ. զի ոչ գիտէին, և ոչ խորհէին զայն. բայց սակայն 'ի կողմանէ Այ ոչ եղանին պատահմամբ, այլ խորհրդով, և կամաւ նր. զի այսպէս կարգաւորեաց և կամեցաւ վասն ծածուկ և անյայտ վախճանի, զոր ինքն գիտէ:

Այն, զոր պարտիմք արտահանել 'ի յերկուց հիմանցս յայսցանէ՝ է եզրակացութիւն, և նպատակն, զոր առաջադրեցաք, այս, թէ որպէսև իմն իրք պատահեն, և գան մեզ 'ի ձեռանէ Այ. և բոլոր կատարելութիւն մեր կայանայ 'ի համակերպելն ընդ կամացն Այ:

ԱԾ, ընկալցուք զոմն ինչ 'ի ձեռանէ Նորա, և համակերպեսցուք զմեզ ընդ ամենայնի կամաց Նորին ։ Ո՛չ պարտիս ընդունել զիր իմն, որ պատահմամբ եկեալ, և կամ որ հնարիւք, և մարդկային միջոցիւք գտեալ, զի այս է այն, որ սովոր է պատճառել զմեծ նեղսարտութն, և ցաւ ։ Մի՛ կարծեր, թէ այս կամ այն իրն պատահեցաւ քեզ վն այսորիկ, զի այս ոք կամ այն ոք թելադրեաց ․ և կամ եթէ ոչ լինէր այս իր, կամ այն իրն, պատահէր իրն այլ կերպիւ ․ մի՛ համարիր այսպէս, այլ ընկալ զոմն ինչ որ եկեալ 'ի ձեռանէ ԱԾ, որով ճանապարհաւ և գայցեն ․ զի նա է, որ առաքէ զայն այնու միջոցաւ ։

Սովոր էր ասել ոմն 'ի հռչակաւոր հարանցն անապատի, թէ ոչ կարէ մարդ ունել ըզճշմարիտ հանգիստ, և զճշմարիտ ապահովութիւն 'ի կեանս յայս, մինչև ոչ համարեսցի, թէ յայսմիկ աշխարհի իցէ միայն ԱԾ, և ինքն ։ Եւ Տրն Տորոթէոս ասէ, թէ հին հարքն այնուքիկ մեծաւ կրթէին զանձինս ընդունելով զոմն ինչ որ եկեալ 'ի ձեռանէ ԱԾ, թէև լինէին յոյժ փոքունք, և որով և իցէ կերպիւ գայցէին ․ և այսու պահէին զինքեանս մեծաւ խաղաղութբ, և հանգստեամբ, և կենցաղավարէին երկնային կենօք ։

## ԳԼՈՒԽ. Բ:

### Պարզաբանի առաւել բարեպէս երկրորդ հիմն:

Ճշմարտութիւս այս՝ թէ ամ վիշտք, և ձախողք պատահից գան 'ի ձեռանէ այ, է այնքան հաստատեցեալ 'ի յածային գրու_ածս, մինչզի աւելորդ էր ապացուցանել զայս, եթէ գեն հնարագիտութե իւրով ոչ ջանայցէր խաւարեցուցանել զայն: Քանզի յայնմանէ ճշմարտութէ, զոր ասացաք, թէ Այ ոչ է պատճառ, կամ հեղինակ մեղաց, մակաբերէ գեն զեզրակացութիւն մի պատրո_ղական, և ասէ՝ հաստատացուցանելով ո_մանց, թէ թէպէտ չարիքն, որք գան մեզ միջնորդութե բնական պատճառաց, և ան_բան արարածոց, զոր օրինակ, հիւանդու_թիւն, սով, անբերութիւն երկրի, և այլն, գան 'ի ձեռանէն Այ. քանզի անդ ոչ գոյ մեղք, և ոչ իսկ կարէ լինել, զի այսպիսի արարածոցս չեն ընդունակք մեղաց. բայց սակայն չարն և վիշտն, որ պատահի 'ի ձեռն մեղաց մարդոյ, որ վիրաւորեաց, կամ գո_ղացաւ, կամ անարգեաց զընկերն, ոչ գայ 'ի ձեռանէն Այ, և ոչ սահմանի 'ի նախա_տեսչութէ Այ, այլ գայ 'ի չարութէ մար_դոյ, և 'ի յանագորուն կամաց նորա: Յոյժ բարւոք ասէ սբն Տոսթէոս յանդիմանե_լով զնոսա զայս, և զնն 'ի միասին, որք ոչ ընդունին զամ ինչ եկեալ 'ի ձեռանէն Այ. * Մեք յորժամ լսեմք զբան ինչ ասացեալ ընդդէմ մեր, շանց նմանիմք, և հետևիմք. զի առ նն եթէ ոք զքար ընկենու, նոքա զքարընկէցն թողեալ, զքարն խածանեն: Այսպէս և մեք թողեալ զԱծ, որ նեղութե ջանայ մաքրել զմեզ 'ի մեղաց, առ քարն.

ի̃ց առ ընկերն դիմեմք ||:

Արդ՝ առ՚ի ընկենուլ ՚ի բաց զմոլորութիւն զայս, և ո՛չ զի բարուք հաստատեսցեմք ՚ի յուղղափառ Ճշմարտութե՛, ծանուցանեն մեզ ա̃մ ծարանքն, և ասեն, թէ ՚ի մեղս, զոր առնէ մարդ՝ երկու իրք համընթանան · որոց մինն է շարժումն, և գործն արտաքին · և միւսն է թիւրութին կամացն, որով հեռա_նայ յայնմանէ, զոր հրամայէ ԱԾ : Առաջ նոյն հեղինակ, և պատճառ է ԱԾ · իսկ երկրորդին մարդն · զո՛ր օրինակ, մարդ մի սկսանի կռուել ը̃ այլում մարդոյ, և կամի սպանանել զնա : Արդ՝ առ՚ի սպանանել զնա, պիտոյ է առնուլ զսուր ՚ի ձեռս, համբառնալ և ՚ի գործածել զբազուկ · և առնել զայլ գործս բնականս, որք կարեն նկատիլ առանձնաբար ըստ ինքեանց առանց թիւրութե՛ կամաց մարդոյն, որ խնդրէ սպանանել զմարդն զայն : Արդ՝ ամենից շարժմանցս այսոցիկ առան_ձնաբար և ըստ ինքեան նկատեցեալ պատ_ճառն է ԱԾ, որ առնէ զայս այնպէս, ո՛չ առնէ և զայլ ա̃մ գործս անբան ստեղծուա ծոց · քանզի ո՛չ նոքա ոչ կարեն շարժիլ և գործել զինչ առանց ԱԾՅ · այսպէս և ո՛չ մարդն առանց ԱԾՅ կարէ ՚ի գործածել զը̃ղ բազուկն իւր, կամ հասուցանել զձեռն ՚ի սուրն : Դարձեալ՝ գործքն այնք բնականք ոչ են չարք ը̃ ինքեանց · վ̃ զի եթէ մարդ զայնս գործս ՚ի կիրառնուցու առ՚ի ջատագո վել զինքն ՚ի պիտոյութե՛, կամ ՚ի յօրինաւոր պատերազմի, կամ ո՛չ պաշտօնեայ արդա_րութե՛, և սպանանիցէ զայլ մարդ, ո՛չ մե_ղանչէ : Բայց մեղացն, որ է պակասութիւն, և թիւրութի կամաց, որով չարացեալ մարդն առնէ զանիրաւութիւն, և հեռանայ յիրաւանց, և թիւրէ զայնս, ո՛չ ԱԾ, այլ մարդն է պատճառն, թէպէտ ԱԾ կարէր խափա_նել զայն, սակայն ո՛չ խափանէ, այլ թոյլ

տայ

ամյ յաղագս արդար դատաստանաց լուսոյ : Եւ զայս պարզաբանեն ածաբանքն այսու օրինակաւ : Կայ մարդ մի, որոյ ոտն գոլով վիրաւորեցեալ, շրջի կաղալով : Արդ պատճառն շարժելոյ, և շրջելոյ է զօրութիւն հոգւոյ, բայց պատճառն կաղալոյն ոչ է հոգին, այլ է վէրքն . այսպէս և 'ի գործս զորս 'ի մեղանչելն առնէ ոք, պատճառ գործոյն է Աստուած . իսկ սխալելն, և մեղանչելն է անձնիշխան կամաց մարդոյն :

Ուստի թէպէտ Աստուած ոչ է, և ոչ իսկ կարէ լինիլ պատճառ և հեղինակ մեղաց . բայց սակայն համառօտ պարտիմք գիտել, թէ ամ պատիժ մեղաց, և ամ ձախորդութիւն, և վիշտ, թէ գայցեն բնական պատճառաւ, թէ անբան առեղծուածովք, և թէ բանական առեղծուածովք որպիսի և իցէ ձևապարհաւ և կերպիւ, բնաւքն գան 'ի ձեռանէն Աստուծոյ, և անօրինմամբ և նախատեսութեամբ նորին : Աստուած է այն, որ 'ի գործ ածէ զձեռն նր, որ զքեզ էհար, և զլեզուն նր, որ զքեզ անարգեաց բանիւք : Ուստի ասէ մարգարէն Ամովս . 3 . 6 : Եթէ իցէ չարիք 'ի քաղաքի, և Տր ոչ իցէ արարեալ : և լի է ածաշունչն այսու ճշմարտութե ընձեռելով Աստուծոյ զչարն, զոր մարդ մի արար այլում մարդոյ, ասելով թէ ած արար :

'Ի գիրն երկրորդ թագաւորաց շուրջ զայնու պատժով, զոր ած ետ Դաւթի վն մեղաց նր չնութե, և մարդասպանութե 'ի ձեռն աբեսողոմայ որդւոյ նորին, ասաց ած ցդաւիթ, թէ ես արարից զչարն, զի ասէ : Ես յարուցից 'ի վերայ քո չարիս 'ի տանէ քումմէ . և առից զկանայս քո առաջի աչաց քոց, և տաց ընկերի քում . և ննջեսցէ ընդ կանայս քո յանդիման արեգականս այսորիկ . զի դու արարեր զայդ 'ի ծածուկ, և ես արարից զբանդ զայդ յանդիման ամ Իսրայէլի, և արեգականս այսորիկ : 2 . Թագ . 12 . 11 .

11։ Աստուած է, զի ամբարիշտ թագաւորքն, որք յաղագս հպարտութե և խստասրտութե իւրեանց 'ի գործ ածէին զխստագոյն տանջանս 'ի վր ժողովրդեանն Այ, կոչին յածաշունչ գրոց գործիք արդարութե ածայնոյ ։ Վա՜յ Ասորեստանեայն, գաւազան սրտմտութե բարկութե իմոյ ։ Եսայ. 10. 5։ Եւ յաղագս կիւրոս արքային պարսից, որով պատժելոց էր ԱԾ զքաղդէացիսն, ասէ Եսայ. 45. 1. Զօրոյ կալայ զաջոյ յեռանէ նր ։ Սրբն Օգոստինոս յայժբարուք ասէ յաղագս այսորիկ. * Անգթութի նր եղև ոպ մուրճ Այ։ Եղեն գործիք բարկացելոյ թագաւորի, և ոչ խաղաղացելոյ։ Առնէ ԱԾ զայն, զոր բազում անգամ առնէ մարդ. երբեմն բարկացեալ մարդն առնու զգաւազան անկեալ 'ի մէջ տան, և երբեմն զմահակ որպիսի և իցէ, և հարկանէ այնու զորդի իւր, և յետոյ ընկենու զզմահակն 'ի հուր. և վն որդւոյն պահէ զժառանգութիւն ։ Այսպ եւ ԱԾ 'ի ձեռն չարաց խրատէ զբարիս ‖ ։

Ի յեկեղեցական պատմագիրս ընթեռնումք, թէ 'ի կործանմանն երուսաղէմի տիտոս զօրավարութիւն հռովմայեցւոց մինչ շրջէր շուրջ զքաղաքաւն, ետես զի փոսքն լցեալ գլխովք և դիականցք մեռելոց՝ նեխեցուցանէին զօդ գաւառս մերձակայս, և համբարձեալ զաչս իւր յերկինս 'ի ձայն բարձր կոչեաց զԱԾ վկայ, և ասէ, Տէր ոչ եմ ես պատճառ այսպիսւոյ մեծի կոտորածի ։ Եւ յորժամ բարբարոս արքայն ատարիկոս երթայր կողոպտել և կործանել զհռոմ, եւ ընդ առաջ նր յարգելի միայնակեաց ոմն, և ասաց ցնա. մի կամիր լինել պատճառ այնքան չարեաց, որք կարեն գործիլ յաճախ յայսմիկ ։ Եւ նա պատասխանեաց ասաց ցնա. ես ոչ երթամ 'ի հռոմ կամաւ իմով, այլ է ոմն, որ պատերազմի ընդ իս, և տանջէ զիս զօրհանա-

պազ.

պաղ, և ասէ, երթ 'ի Հռոմ, և աւերեա զքաղաքն զայն : Սուտի ամ լոքս այսոքիկ գան 'ի ձեռանէն Այ, կամաւ, և կարգադրութե՛ նր : Վն որոյ մարգարէն Դաւիթ, յորժամ սեմէի անարգէր զնա, և ընկենոյր 'ի վր նր զքարինս, և զհող, ասաց առ նս, որք կամէին սպանանել զնա : Տր ասաց նմա անէծանել զԴաւիթ, և ով ասասցէ, թէ ընդէ՞ արարեր այդպէս : 2. Թագ. 16. 10.

Բայց ոչ է մեծ զարմանք ճանաչել զմարդիկ ոմ զգործիս արդարութե Այ, և նախատեսչութե նր . որովհետև նաև դևքն, որք խստացեալք, և քարացեալք են 'ի չարութե իւրեանց, և ցանկան կործանման մերում, են կարգեցեալք յԱյ առ այս վախճան : Սբն Գրիգորիոս զարմանալի կերպիւ ծանուցանէ զայս 'ի վր այնորիկ, զոր ասէ ածաշունչն յառաջին գիրս Թագաւորաց, թէ չար ոգին Տն լլկէր զՍաւուղ : Մի և նոյն ոգին կոչի ոգի Տն, և ոգի չար համանգամայն : Չար վն ցանկութե չարակամութե իւրոյ . և ոգի Տն, առ 'ի ցուցանել, թէ ած առաքեալ էր զնա առ 'ի տանջել զՍաւուղ, և թէ ած լլկէր զՍաւուղ միջնորդութե նր : Եւ այսպ պարզաբանէ 'ի նոյն տեղւոջ սկզբնագիրն, և ասէ . Խեղդէր զնա այս չար 'ի Տնէ : 1. Թագ. 16. 14: Յաղագս այսր պատճառի (ասէ Սբն) թէ դևքն, որք նեղեն և հալածեն զարդարս՝ կոչին 'ի Սբ գիրս առաքեալք Այ : Են առաքեալք վասն չարակամութե, որով կամին զչար առնել . և են Այ, զի զկարողութիւն, որով առնեն զչար, և զվնաս, յԱյ ունին :

Ստուի յոյժ բարւոք քննէ Սբն Օգոստինոս զբանն Յոբայ, թէ՝ Ոչ ասաց Յոբ, Տր ետ, և սատանայն եբարձ || . այլ զամ իր վերաբերեաց առ ած՝ ասելով, Տր ետ, և Տր եառ . զի բարւոք գիտէր Սբն Յոբ, թէ դևն

ոչ

ոչ կարէ առնել զչար առաւելի քան զայն, զոր Այ թոյլ տայ: Իսկ յաւել և ասել Սբն Օգոստինոս, ' Ամենեխմբ առ ձեռն քո վերա բերեալ զհարուածս քո, զի դևն զոչինչ կարէ առնել քեզ, եթէ ոչ թոյլտուութիւն Այ, զի 'ի վերուստ ունի զիշխանութիւն ‖: Եւ ոչ իսկ 'ի խոզսն գերգեսացւոց կարացին մտանել առանց խնդրելոյ նախ զհրաման 'ի Քսէ փրկչէն մերմէ, որպէս ճառէ սրբազան աւետարանն: Զիարդ ուրեմն կարասցեն մերձենալ 'ի քեզ, կամ փորձել զքեզ առանց հրամանին Այ: Նա որ ոչ կարաց մերձենալ առ խոզսն, որպէս կարասցէ մերձենալ առ որդիսն:

## ԳԼՈՒԽ Գ.

### Յաղագս բարեաց, և օգտից մեծամեծաց, զոր պարունակէ յինքեան համակերպութիւն այս ընդ կամացն Այ:

Երանելին Սբն Բարսեղ ասէ, թէ բովանդակութիւն սրբութեան, և կատարելութիւն քրիստոնէական կենաց կայանայ 'ի վերագրելն Այ զնմ պատճառս ամենից իրաց մեծաց և փոքունց, և 'ի համակերպելն ըղմեզ 'ի նոսին ընդ ամենայնիւ կամաց նորին: Բայց որպէս զի առաւել բարւոք կարասցուք ճանաչել զկատարելութիւն, և զհարկաւորութիւն սորա, և առաւել ըղձասցուք և ջանասցուք մեծաւ հոգացողութեամբ առ այն, պարզաբանեսցուք մասնաւորապէս զբարիս, և զօգուտս մեծամեծս, զորս պարունակէ յինքեան համակերպութիւնս այս ընդ կամացն Այ: Արդ՝ ասեմք նախ՝ թէ սա է ճշմարիտ և կատարեալ ընծայումն, զոր այնքան մեծացուցանեն Սրբքն, և համայնք ուսուցիչք հոգևորական վարուց, և ասեն, թէ է

սկիզբն,

միջոցն, և արմատ ամենից խաղաղութեանց, և հանգստութեանց մերոց · զի առնէ զմարդ հպատակ այ, և դնէ զնա 'ի ձեռսն նր որ զկայ 'ի ձեռն բռնի, որ զի առնիցէ զայն, զոր կամի, այլ և այսպիսիս ոչ կամի գոլ ինքն իւր, և ոչ կեալ վասն իւր · ոչ ուտել, ոչ ննջել, և ոչ աշխատիլ վս իւր · այլ առնէ զամ ինչ վասն այ : Արդ համակերպութիւն այս առնէ զայս գործ, զի մարդն տայ զինքն այնու բոլորովին, և ըստ ամի գերի կամացն այ · մինչ զի ոչ ցանկայ իմիք, և ոչ ջանայ առ այլ ինչ, եթէ ոչ առնել կատարելապէս զկամս այ, թէ շուրջ զգործովք իւրովք, և թէ շուրջ զայնոքիւք ընծայիւք, որք կարեն նմա պատահիլ · թէ իցեն իրք մխիթարականք, և յաջողականք, և թէ իցեն իրք ձախորդականք, և վշտալիք : Եւ այս այնքան հաճոյ է այ, մինչզի վս այսորիկ դաւիթ մարգարէն կոչեցաւ յայ այր ըստ սրտի իւրում, Գտի զայր ըստ սրտի իմում, որ արասցէ զամ զկամս իմ : Գործ. 13. 22: Քանզի ունէր դաւիթ զսիրտ իւր այնպէս զիջեալ, և հպատակ սրտին այ, և այնքան յօժար, և պատրաստ յաղագս ամ իրաց, զորս այ կամէր տպաւորել 'ի նմին, ըստ զկշռ, կամ զուրախութիւն, որպիսի է կակուղ մոմն առ 'ի ընդունելն յինքեան զոր ինչ տիպ, կամ ըղձե, զոր կամիցի ոք տալ 'ի նմին : Եւ վս այսորիկ ասաց նա երկիցս առ այ : Պատրաստ է սիրտ իմ այ · պատրաստ է սիրտ իմ : Սաղմ. 107. 1.

Երկրորդ՝ որ ունիցի զամբողջ և զկատարեալ համակերպութիւն զայս ընդ կամացն այ, ստանայցէ զամբողջ, և զկատարեալ մահացուցումն ամենից կրից, և չար յօժարութեանց իւրոց : Բարւոք գիտեմք մեք, թէ որքան հարկաւոր է մեզ մահացուցումն այս, և որքան դժուար, և պատուէրի 'ի սրբոց վար

պատկերաց, և 'ի սրբոց գրուածոց։ Արդ՝ մահացուցումն այս է միջոց մի, որ հարկաւորապէս ենթադրէ զատացումն համակերպութեան այսորիկ ընդ կամացն Այ․ ուստի սա է վախճանն․ իսկ մահացուցումն է միջոց ստանալոյ զայն․ և նախապետական վախճանն սոյոր է դոլ միշտ առաւել բարձրագոյն, և առաւել կատարեալ քան զմիջոցն։ Իսկ թէ ոմն մահացուցումն իցէ հարկաւոր միջոց առ 'ի ստանալ զմիաւորութեան զայս, և զամբողջ, և զկատարեալ համակերպութեան ընդ կամացն Այ․ յոյժ բարւոք տեսանի յայտնանէ, քանզի այն որ արգելու զմիաւորութեան, և զհամակերպութեան զայս, է յառուկ կամք մեր, և անկարգ ցանկութիւնն։ Որչափ որքան ոք առաւել ուրանայ, և մահացուցանէ զկամս և զցանկութիւն իւր, այնքան առաւել դիւրաւ միաւորի և համակերպի ընդ կամացն Այ։ Որ առ 'ի միաւորել և ուղղել զփայտ մի անհարթ, և անտաշ ընդ այլում փայտի բարւոք կոկեցելոյ, և տաշեցելոյ, պիտոյ է նախ կոկել և տաշել զփայտն զայն անհարթ․ ապա թէ ոչ՝ ոչ կարէ միաւորիլ, և կցիլ ընդ նմա բարեոք։ Արդ՝ զայս գործս առնէ մահացուցումն, զի տաշէ զմեզ, հաւասարէ, և կոկէ, որպէս զի կարասցուք միաւորիլ ընդ Այ համակերպելով զկամս մեր յամ իրս ընդ ամենայն կամաց նր։ Եւ այսպէս որքան ոք առաւել մահացուցանէ զինքն, այնքան առաւել ուղղի, և միաւորի ընդ կամացն Այ․ և յորժամ կատարելապէս մահացուցէ զինքն, ստասցի նաև զմիաւորութիւն և զհամակերպութիւն կատարեալ։

Յաւելի այսմիկ այլ իր մի, որ է երրորդն, զի ամենագրութեան, և ամբողջ համակերպութեան այս ընդ կամացն Այ, է մեծագոյն, և առաւել ընդունելի, և առաւել հաճոյ

կան զոհ և պատարագ, զոր մարդ կարիցէ առնել Այ: Վն զի յայլ պատարագս մատուցանէ մարդ զիրս իւր. բայց յայսմիկ մատուցանէ զանձն իւր: 'Ի յայլ զոհս, և 'ի մահացուցմունս մահացուցանէ մարդ զմասն ինչ իւր. զի ողջախոհութբ, պարկեշտութբ, լռակեցութբ, և կամ համբերութբ մատուցանէ Այ զմի մասն իւր. բայց այս է ողջակէզ մի, յորում մարդ մատուցանէ զինքն ամբողջապ և բոլորովին Այ. որպ զի Ած առնիցէ նմա զայն ամ, զոր կամի, և երբ կամի, և որպ կամի, առանց հանելոյ և 'ի բաց բառնալոյ, և կամ պահելոյ ինչ իւր զիր իմն: Եւ այսպէս որքան տարբերի բոլոր մարդն յիրաց իւրոց, և որքան տարբերի բոլորն 'ի մասանէ, այնքան տարբերի պատարագս այս յայլոց պատարագաց, և յայլոց մահացուցմանց:

Եւ այնքան մեծ համարի Ած զիրս զայս, մինչ զի ոչ զայլ ինչ կամի և խնդրէ 'ի մէնջ, եթէ ոչ զայս առնելով. Տուր ինձ որդեակ զսիրտ քո: Առակ. 23. 26: Զի որպ արքունի բաղէն ոչ այլով իւիք կերակրի, եթէ ոչ սրտիւ. այսպ և Ած զայլ ոչինչ համարի այնքան, որքան զսիրտ մեր. և եթէ ոչ տաս զայս նմա, ոչ այլով իւիք կարասցես շատացուցանել զնա, կամ հաճեցուցանել: Ո՛չ պահանջէ Ած 'ի մէնջ զբազում իրս՝ խնդրելով զայս, կամ զայն, Վասն զի եթէ այն ամ, զոր ստեղծ Ած, ոչ է բաւական շատացուցանել և յագեցուցանել զմեզ, որք եմք սակաւ մի հող, և մոխիր. և ոչ իսկ շատանայ փոքրիկ սիրտն մեր այլով իւիք, եթէ ոչ Այ. որպ կարծես դու, թէ կարասցես շատացուցանել և հաճեցուցանել զԱծ ոչ տալով զբոլոր սիրտն քո նմա, այլ միայն զկէսն նր, և զկէսն պահես ինչ քոյ: Իրաւի մեծապ խաբիս դու, եթէ համարիս, թէ

սիրտն

սիրտն մեր լիցի այսպիսաբար բաժանելի . Զի անձկացեալ անկողինն այնչափ, մինչև մինն 'ի ներքոյ անկցի · կարճ է վերարկուն , և զերկոսեանն ծածկել ոչ կարէ : Եսայ . 28 . 20 : Ասէ Եսայի մարգարէն , թէ սիրտն է անկողին մի փոքրիկ և անձուկ · յորում ոչ ոք կարէ զետեղիլ, եթէ ոչ միայն ԱԾ · և վասն այսորիկ հարսն կոչէ զնա անկողին փոքրիկ ասելով · 'Ի յանկողինի իմում 'ի գիշերի խնդրեցի , զոր սիրեաց անձն իմ : Երգ . 3 . 1 : զի ունէր զսիրտ իւր այնպ̃ անձուկ , մինչզի ոչ այլ ինչ կարէր զետեղիլ 'ի նմին , եթէ ոչ փեսայն իւր : Եւ որ կամի տարածել և ընդարձակել ըզ սիրտ իւր առ 'ի զետեղել անդ զայլ ոք , որ տեղեաց զԱԾ անտի · վն̃ այսորիկ գանգատի ԱԾ 'ի ձեռն Եսայեայ , և ասէ , 57 . 8 : Զի մերձ առ իս հոլանի եղեր · և ընկալար զնոսօքն · լայնեցեր զանկողինս քո , և կուեցեր զնոսա ընդ նմա : Եթէ ունիցեմք զհազար սիրտս , զայն ա̃մ պարտեմք մատուցանել ԱՅ , և տակաւին պարտեմք սակաւ համարիլ զայն բաղդատելով առ այնպիսի մեծագոյն տէրն :

Զորրորդ՝ ապ̃ ասասցուք 'ի սկզբանն , որ ունիցի զհամակերպութիւն զայս , ունիցի նաև զկատարեալ սէրն ԱՅ · և որքան առաւել աճի 'ի նմին , այնքան առաւել աճեսցի 'ի սէրն ԱՅ , և հետևապ̃ 'ի կատարելութե̃ , որ կայանայ 'ի սէրս յայս : Ուստի բաց յայնմանէ , որ ասացաւ , կարեմք յաւելուլ և զայս , թէ սէրն ԱՅ ոչ կայանայ 'ի բանս , այլ 'ի գործս , ապ̃ ասէ սբն Գրիգորիոս , * Փորձ սիրոյ է ցուցումն գործոյ ‖ : Եւ որչափ առաւել դժուարին և աշխատալի է գործն , այնքան առաւել յայտնի սէրն : Ուստի առաքեալն և աւետարանիչն սբն Յօհաննէս՝ կամելով ցուցայայտել զայնչափ մեծ սէրն , որով ԱԾ սիրեաց զաշխարհս · Նաև զմեծ սէրն , որով Քս փրկիչն մեր սի-

ընտաց զհայրն իւր յաւիտենական, առէ վն առաջնոյն • Այնպէս սիրեաց ԱԾ զաշխարհ, մինչեւ զՈրդին իւր միածին ետ : Յոհ. 3. 16: Իսկ վն երկրորդին առէ նոյն ինքն Քս, Զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զհայր, և որպէս պատուիրեաց ինձ հայր, այնպէս առնեմ, ծն արիք գնասցուք աստի : Յոհ. 14. 31: Իսկ գործն այն, զոր երթայր առնել՝ էր մեռանիլն 'ի վերայ խաչին : Այսու վկայեաց և եցոյց աշխարհի, թէ սիրէր զհայր՝ կատարելով զայնքան խստագոյն հրամանն նր : Այսու գործով երևի, և մեծ ցուցանի սէրն այնքան առաւել, որքան առաւել մեծ է գործն, և աշխատալի : Արդ՝ այս ամբողջ համակերպութիւն ընդ կամացն Այ, ոպ տասցուք՝ է մեծագոյն և բարեգոյն պատարագ, զոր կարեմք առնել մեք, զի առաջադրէ զկատարելագոյն մահացուցումն, և զանձնազրկութն, որով ոք մատուցանէ զանձն այ, և դնէ զինքն բոլորովին 'ի ձեռս նր • ոպ զի արասցէ նմա, զոր ինչ կամի առնել : Իսկ այսպ ոչ գոյ այլ այնպիսի իր, որով ցուցցէ ոք զմեծագոյն և զառաւելն սէր առ ած, որչափ ցուցանէ այսու, զի ամենայն տայ և մատուցանէ նմա զայն ամ, զոր ունի, նաև զայն ամ, զոր կարէ ունիլ, և որում կարէ ցանկալ • և եթէ ունիցէր զինչ առաւել քան զինքն, տայր և զայն նմա :

ԳԼՈՒԽ.

# ԳԼՈՒԽ · Գ ·

Թէ կատարեալ համաձայնութիւն այս ընդ կամացն այ̄, է երջանկութիւն, և երանութիւն մի 'ի յերկրի աստ :

Որ ոք ժամանեսցէ առ այս ամբողջ համակերպութիւն ը̄ կամացն Ա.Յ ընդունելով զամ ինչ որ̄ եկեալ 'ի ձեռանէ նր̄, և համակերպելով զինքն 'ի յայնս ընդ ամենայնի կամաց նորին, ստանայ զերջանկութիւն և զերանութիւն յաշխարհի աստ : Քանզի զմայլեսցի խաղաղութը̄, և անդորրութը̄ մեծաւ յոյժ, և ժառանգեսցէ միշտ զխնդութիւն, և զուրախութիւն ինչ յարակայական 'ի հոգւոջ իւրում, որ է երջանկութիւն, և երանութիւն այն, զոր վայելեն աստ մեծագոյն ծառայքն այ̄ : Վս̄ զի որ̄ ասէ առաքեալն, Հռոմ. 14. 17: Ո՛չ է արքայութիւն այ̄ կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն, և խնդութիւն, և խաղաղութիւն 'ի Հոգին սբ̄ : Այս է արքայութիւն երկնից 'ի յերկրի աստ, և դրախտ փափկութե̄, որով կարեմք զմայլիլ աստ : Եւ մեծաւ պատճառաւ կոչի այս երանութիւն, զի առնէ զմեզ կերպիւ իմիք նմանս երանեցելոց : Վս̄ զի որ̄ 'ի յերկինս ոչ գոն փոփոխութիւնք, և ոչ երթևեկ իմն, այլ միշտ կան հաստատուն և կայուն երանեցեալքն 'ի միում կացութե̄՝ զմայլելով այ̄ով. այսոր̄ ես աստ նոքա, որք ժամանեալ են առ այս ամբողջ և կատարեալ համակերպութիւն, որոց բովանդակ ախորժումն և մխիթարութիւն է հաճոյն և կամքն այ̄, ոչ վրդովին և ոչ աղմկին փոփոխութը̄ այսօրինակ կենցաղոյս, և ոչ զանազան պատահմամբք : Քանզի կամք և սիրտ նց̄ է այնքան միաւորեցեալ, և համակերպեցեալ ընդ կամացն այ̄, մինչզի տեսանելով

զի այնոքիկ ընտրեալք գան 'ի ձեռանէն Այ. և կատարի նոքօք հաճութիւն, և կամքն նյ, գտանան վիշտք նց 'ի յուրախութիւն. զի կամին մանաւանդ, և սիրեն զկամս սիրեցելոյն իւրեանց՝ քան զիւրեանցն: Ուստի ոչ գոյ այնպիսի իր, որ կարիցէ վրդովել զնս. քանզի եթէ իրքն այնք, որք կարէին աղմկել, և տրտմեցուցանել զնոսա, որք են վիշտք, ձախորդութիւնք, և նախատինք, ընկալեալ լինին, և համարին 'ի նոցանէ մխիթարութիւնք, և բարերարութիւնք յատուկք յաղագս գալոյ նց 'ի ձեռանէ Այ, և վս լինելոյ 'ի նս կամքն Այ. ապա այլ որպիսի իր մնայ, որ կարիցէ խռովեցուցանել զնս, կամ բառնալ զխաղաղութիւն և զանդորրութիւն հոգւոց նց:

Այս էր պատճառ խաղաղութեան այնորիկ, և ուրախութեան յարակայականի, որով կեային հին սրբքն այնոքիկ, ք. տրն Անտոնիոս, տրն Դոմինիկոս, տրն Ֆրանչիսկոս, և այլք նմանք նոցին: Եւ զայնս ընթեռնումք զերանելւոյ հօրէն մերմէ Իգնատիոսէ. և տեսանեմք զայս հանապազ 'ի մեծամեծ ծառայսն նյ: Միթէ պակասէին վիշտք սրբոցն այնոցիկ: Միթէ ոչ ունէին զփորձութիւն, և զտկարութիւն, ոպ ունիմք մեք: Միթէ ոչ գային նց զանազան և պէսպ պատահմունք: Այո՛ իրաւի, և առաւել դժուարագոյնք քան զմերս գային նց, զի նոքա, որք էին մեծագոյն սրբք, սովորք էին առաւել փորձիլ յԱյ, և կրթիլ 'ի նմանէ այսպիսի իրօք: Այլ սակայն ոպ կային միշտ 'ի մի և 'ի նոյն կացութն, մի և նոյն կերպարանօք, ուրախութբ, և զուարճադէմք ներքուստ, և արտաքուստ. մինչ զի թուէր, թէ միշտ զատիկ լինէր վս նց: Պատճառ սորին էր այս, զորմէ խօսիմք աստ, զի ժամանեալք էին առ ամբողջ համակերպութիւն ընդ կամացն նյ, և

զետե-

զխաւեղեալք էին զամ հաճութիւնս խորհրդոց ՚ի կատարել զկամս այ. վասն որոյ ամ ինչ դառնայր նմ ՚ի բարեկրութիւն: Որոց սիրեն զԱծ, ամ ինչ գործակից լինի ՚ի բարիս, առ առաքեալն: Հռոմ. 8. 28: և իմաստունն ա_սէ. Առակ. 12. 21: Ո՛չ ոչ տրտմեցուսցէ զար_դարն, որ ինչ պատահեսցէ նմա: Վիշտն, փոր_ձութիւն, և մաճացուցումն, և այլն ամ դառ_նայր նմ ՚ի յուրախութիւն, զի ճանաչէին, թէ այն էր կամքն այ, և այս էր ամ մխիթարու_թիւն նմ: Արդէն առացեալք էին զեր_ջանկութիւն, և զերանութիւն, որով ՚ի կեանս յայս կարելի է ուրախանալ. ուստի կային իբրև ՚ի փառս: Յայժ բարւոք ասէ յաղագս այսորիկ սրբուհին Կատարինէ սենացին, թէ արդարքն են ողջ Քս փրկիչն մեր, որ ոչ երբէք կորոյս զերանութիւն հոգւոյն իւ_րոյ, թէպէտ կրէր զբազում ցաւս և զտան_ջանս. այսպէս արդարքն ոչ երբէք կորուսանեն զերանութիւն, որ կայանայ ՚ի համակերպու_թիւն ընդ կամացն այ, թէպէտ ունիցին զբա_զում ձախորդութիւնս, զի միշտ մնայ և յարա_տևէ ՚ի նս ուրախութիւն և բարեկրութիւն կա_մացն, և հաճութեան այ, որ կատարի ՚ի յոյնս իւս:

Ո՛հ այս է կատարելութիւն մի այնքան վեհա_գոյն, և բարձրագոյն, մինչ զի սրբ առա_քեալն Պօղոս ասէ, թէ գերազանցէ քան զամ միտս. Ո՛հ խաղաղութիւն այ որ ՚ի վեր է քան զամ միտս, պահեսցէ զսիրտս ձեր և զմիտս ՚ի Քս Յս. Փիլիպ. 4. 7: Ասէ՝ թէ խաղաղութիւն այս գերազանցէ քան զամ միտս. զի է պար_գև մի այ այնքան բարձր և գերբնական, մինչ զի իմացութիւն մարդկային ոչ կարէ զն ինքեան ըմբռնել, թէ ողջ կարելի է, զի սիրտ մի մանեղէն լցէ հանդիստ՝ հանդարտ, և մխիթարեցեալ ՚ի մէջ մրրկաց, աշխատու_թեանց, փորձութեանց, և վշտաց այսր կենցա_

զդյս : Նմանի ևս այս սքանչելեաց մորեն- ւոյն, զոր ետես Մովսէս, զի վառէր, և ոչ այրէր : Եւ հրաշից երից մանկանցն այնո- ցիկ, որք կային 'ի հնոցին բաբելոնի, և 'ի մէջ հրոյն պահեցան առողջք և անմխաք օրհնելով զԱծ : Այս է այն՝ զոր ասէր Տրն յոբ խօսելով ընդ Այ. Զարմանաբար չարչա- րես զիս : Յոբ. 10. 16. ցուցանելով 'ի միոյ կողմանէ զվիշտս և զցաւս մեծամեծս, զորս կրէր, և 'ի միւս կողմանէ զբերկրութին և զհաճութին մեծ, զոր զգայր 'ի չարչարին- մն գոլոյն այնորիկ կամքն և հաճութիւնն Այ:

Կասխանոս պատմէ, թէ Տր. ծեր ոմն յԱզնէք սանդրիայ գոլով պաշարեցեալ 'ի մեծ բազ- մութէ անհաւատից, որք ասէին առ նա ըզ բազում բանս անիծից, նա կայր 'ի միջի նց խորև զգաստն անմռունչ մեծաւ համբերու- թբ և խաղաղ սրտիւ : Կատակէին զնա, և հարկանէին, կոփէին, և զայլ բազում ա- նարգանս առնէին նմա. և 'ի վր ամի յաւե- լին ասել այսպէս առնելով զնա. զինչ սքան- չելիս արար Յս Քս : Առ որս նա պատաս- խանի ետ, և ասէ : Սքանչելիքն՝ զորս արար, են՝ զի որովհետև կրեմ ես զանարգանս, զորս դուք առնէք ինձ, պատրաստեցայց կրել զայլ ևս մեծամեծս. և մի բարկացայց, կամ սրտմտեցայց 'ի վր ձեր, և մի ինչ խռովեցայց սրտիւ : Այս է մեծ սքան- չելիք, և կատարելութ մի յոյժ բարձր և գե- րազանց :

Ասեն նախնիքն յաղագս լերինն մակեդո- նիոյ կոչեցելոյ Ողիմպոս, զոր և աւբերէ Տրն Օգոստինոս 'ի բազում տեղիս, թէ է այնքան բարձրագոյն, մինչ զի ոչ ժամանեն 'ի գագաթն նր ոչ հողմ, ոչ անձրև, և ոչ ձիւն : * Զամպովք գերազանցէ Ողիմպոս ||։ Եւ ոչ ինկ թռչունք կարեն ունել անդ զդա- դար.

դար ․ զի է այնքան բարձր, մինչ զի է 'ի վեր քան զայս նախկին սահմանս օդոյ, և հասանի 'ի յերկրորդն ․ և օդն է անդ այնքան մաքուր և պարզ, մինչ զի ոչ կարեն կալ և մնալ անդ մարդիկ, և ոչ կարեն ծնանիլ ամպք, որոց պիտոյ է օդ թանձրագոյն, և վն սոյն պատճառիս ոչ կարեն ապրիլ անդ թռչունք, և մարդիկք ․ զի գոլով օդն կարի նուրբ և մաքուր ոչ է բաւական առևտրութե շնչոյ ։ Եւ զայս ծանուցին ոմանք յայնցանէ, որք ամ յամէ ելանէին անդր առ 'ի զոհել ․ որք և տանէին ընդ ինքեանս զսպունգ թացեալ ջրով, ոպ̄ զի դնելով զայն յռնգունսն՝ կարիցեն թանձրացուցանել զօդն առ 'ի տալ և առնուլ զշունչ ։ Սոքա գրէին անդ 'ի վր փոշւոյ զտառս ինչ, և 'ի յետագայ տարւոջ գտանէին զայնս ամբողջս և բարւոք ձևացեալս, ըստ որում թողեալք էին ․ իսկ այս ոչ կարէր լինիլ, եթէ հասանիցէր անդր հողմ, կամ անձրև ։ Արդ՝ այս է կացութեն կատարելութե, առ որ են ելեալք և ժամանեալք նոքա, որք ունէին զայս ամբողջ համակերպութիւն ընդ կամացն Այ ։ * Զամպովք գերազանցէ Ոլիմպոս, և զծայրագոյն խաղաղութի ունի ‖ ։ Զի են այնքան ելեալք և բարձրացեալք, մինչ զի արդէն ստացեալք են զխաղաղութին մեծ ․ զի ոչ գոյ ամպ, ոչ հողմ, և ոչ անձրև, որք կարիցեն ժամանել անդր ․ և ոչ թռչունք յափշտակիչք գոն անդ, զի յարձակիցեն 'ի վր, և կողոպտիցեն զխաղաղութեն և զուրախութի սրտից նց ։

Սբն Օգոստինոս 'ի վերայ այսց բանիցն ․ Մատ․ 5․ 9․ Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք այ կոչեսցին, ասէ, թէ վասն այսորիկ Քս փրկիչն մեր կոչէ զխաղաղարարս երանելիս, և որդիս այ, զի ոչ գոյ 'ի նս այնպիսի իր, որ հակառակ լիցի կամացն այ, այլ յամ իրս

համակերպելն ընդ նմա, ոպ զբարի որդիս, որք 'ի յամ իւր ջանան նմանիլ հօրն ոչ ունելով զայլ կամիլ, և զայլ ոչ կամիլ բաց յայնմանէ, զոր կամի, կամ ոչ կամի հայրն իւրեանց: Այս է կէտ մի յոյժ գլխաւոր, և յոյժ հոգևոր 'ի մէջ հոգևորական վարուց: Ուրեմն որ ոք ժամանեսցէ յայնպիսի աստիճան, զի ընդունիցի զամ ինչ, որ պատահի նմա՝ թէ մեծ իցէ, և թէ փոքր՝ ոպ եկեալ 'ի ձեռանէ քո, և համակերպիցի 'ի նմ ընդ կամացն քո այնպ, զի բոլոր բերկրութիւն իւր իցէ բերկրութիւն քո, և կատարելն զամենայն կամս նորին, այնպիսին եգիտ արդէն զդրախտն 'ի յերկրի աստ: Եղև 'ի խաղաղութե տեղի նր, և բնակութի նր 'ի սիոն: Սաղ. 75. 3: Նաև մեծն Բեռնարդոս, թէ այսպիսիս կարէ երգել զամ համարձակութ, և ապահովութե զայն երգն իմաստնոյն, որ ասէ, 'Ի յամ իբր յայսոսիկ հանգիստ խնդրեցի, և 'ի ժառանգութե տն բնակեցայց: Սիրաք 24. 11: Զի եգիտ զճշմարիտ հանգիստ, և զլիակատար և զճշմարիտ խնդութիւն, որ յոչ ումեքէ կարէ 'ի բաց բառնիլ: Զի ուրախութի ձեր լցեալ իցէ, և ուրախութե ձեր ոչ ոք հանիցէ 'ի ձէնջ: Յոհ. 16. 22: Ո՛հ եթէ դիցէաք միանգամ զամ հաճութի մեր 'ի կատարել զկամս քո, ոպ զի մինչ կամք մեր լիցեր կամքն նր, և ախորժումն մեր լիցէր ախորժումն նորա: Ո՛հ երանի թէ ոչ ունիցէի Տր իմ զայլ կամիլ, և զայլ ոչ կամիլ, եթէ ոչ զայն, զոր կամիս, կամ ոչ կամիս դու, և այս միայն լիցէր մխիթարութի իմ յամ իրս: Իսկ ինձ մերձենալ առ Այ բարի է, և դնել առ Տր զյոյս իմ: Սաղմ. 72. 29: Ո՛հ թէ որքան բարի լիցէր վս հաւուց իմոց միաւորելն զիս ընդ քո յայսմ աշխարհի: Ո՛հ թէ որքան երջանիկ լինիցէաք, եթէ լիցէաք այնքան միաւորեցեալք ընդ նմա, մինչ զի զամ զոր առնեմք, զայլ

ոչինչ

այլինչ նկատեսցէաք 'ի նմ, եթէ ոչ կատարել
զկամս Այ, և այս լիցի բոլոր հաճութին,
և սփոփումն մեր: Նա՛ որում ամ երբ եղե
ցին մի էր, և զամ իւր քարշեաց առ մի էր.
և զամ իւր ետեսցէ 'ի միում իրի, այնպիսին
կարասցէ գոլ կայուն ոգւոյն, և լինել միշտ
խաղաղ ը Այ:

## Գ Լ Ո Ւ Խ Խ. Ե:

Թէ 'ի յԱծ միայն գտանի հանգստութիւն, և որ
ոչ դնիցէ զայն յայլս իրս, ոչ կարասցէ ունել
զճշմարիտ հանգստութիւն:

ՆՈքա, որք դնեն զբերկրութիւնս իւ-
րեանց յԱծ, և յԱծային կամս նր,
զմիայլին բերկրութի, և ուրախութի յա-
րակայականն. քանզի գոլով յեցեալք առ
հաստատուն սիւնն այն կամացն Այ, մաս-
նակցին անփոփոխութե կամացն Այ, և միշտ
կան հաստատունք, և անշարժք 'ի մի և 'ի
նոյն կացութե: Բայց նոքա, որք կան յե-
ցեալք 'ի վր իրաց ձիս, և 'ի նմին եդեալք
ունին զսիրտն և զբերկրութի իւրեանց, ոչ
կարեն ունել զճշմարիտ, և զմնացական բեր-
կրութի. քանզի շրջին ընդ իրաց, և կախին
'ի նոցանէ, որք են փոփոխականք: Ուստի 'ի
հարկէ պարտին փոփոխել ընդ նմ: Փառա-
ւոր սրբն Օգոստինոս պարզաբանելով զայս
յոյժ բարւոք 'ի վր այնց բանիցն մարգա-
րէին Դաւթի, որ ասէ, Սաղմ. 7. 15. Յղա-
ցաւ ցաւս, և ծնաւ զանօրէնութիւն: ասէ, Ո՛չ
կարէ զվախճան առնուլ աշխատանքն, եթէ
ոչ սիրիցէ ոք զայն, որ ակամայ 'ի բաց բառ-
նիլ ոչ կարէ:

Ընթեռնումք վր հօրն մերոյ Ֆրանչիսկոսի
Բօրճեան, թէ յորժամ եհաս 'ի քաղաքն
Կռանատոյ ընդ մարմնոյ կայսերուհւոյն, և

երբ և կամեցան թողուլ զնա, և բացին զտապանն արձձեայ, յորում կայր դի նր, անսին զերեսս նր յոյժ աղեղացեալ. և փոփոխեցեալ, որ և պատճառեաց զմեծ սարսափումն 'ի տեսօղսն ։ Իբրև այս պատճառեաց նաև 'ի նմա զայնքան փղձկումն, մինչզի շարժելով Այծ զսիրտ նր այնու հայեցարանաւ նանրութե աշխարհիս, արար զայս հաստատուն առաջադրութիւն ասելով ։ Խոստանամ քեզ Այծ իմ, այլ ոչեւս ծառայել այնպիսւոյ Տն, որ կարիցէ մեռանիլ ։ Արդ՝ արասցուք և մեք զառաջադրութիւն զայս հաստատուն, որ է յոյժ բարի, և ասասցուք. առնեմ զայս առաջադրութիւն Տր իմ, ոչ դնել զսիրտ իմ յայնպիսի իր, որ կարիցէ մեռանիլ, յայնպիսի իրս, որք կարիցեն ունիլ զփախճան, և ոչ յայնպիսի իրս, որք յայլոց կարիցեն բառնիլ ընդդէմ կամաց իմոց ։ Ապա թէ ոչ՝ ոչ կարեմք ունիլ զճշմարիտ անդորրութի ։ Ուստի ասէ սբն Օգոստինոս, " Յորժամ սիրեն իրքն այնոքիկ, զորս կարեմք ակամայ կորուսանել, հարկ է ասել, թէ վասն նց թշուառաբար աշխատիմք" ։ Քանզի եթէ ունիս դու եդեալ զսէր և զսիրտ քո յիրի իմիք, որ կարէ բառնիլ 'ի քէն ընդդէմ կամաց քոց, առանց կարծեաց հարկ է քեզ զգալ զցաւ, յորժամ բառնի այն 'ի քէն ։ Այս է իր բնական, զի ոչ կարէ առանց ցաւոյ թողանիլ այն, որ առացեալ լինի սիրով. և որքան մեծ եղիցի սէրն, այնքան մեծ եղիցի և ցաւն ։ Եւ հաստատելով զայնս յայլում տեղւոջ նոյն սբն, ասէ, " Որ կամի ունայնանալ զանձնէ իւրմէ, որտմեսցի" ։ Եթէ դու կամիս դնել զհաճութի քո յայս ինչ պաշտօնի, կամ յայն ինչ գործառութե, կամ կալ յայս ինչ տեղւոջ, և կամ յայլ ինչ աշխատանի. կարէ բառնիլ 'ի քէն հաճունդ այդ 'ի մեծաւորէն, և եղի-

ցի

ցիս տրտում, և տխուր։ Սոյնպէս է, եթէ գտցես զինչ քո 'ի յիրս, որք են ըստ կամաց քոց, կամ 'ի կատարելդ զայնս, զի կարե դիւրաւ փոփոխելն, և կամ թէև ոչ փոփոխիցին այնոքիկ, դու կարես փոփոխիլ. քանզի այն, որ այսօր քեզ հաճոյ է, և բերկրալի, նոյնն 'ի վաղիւն ոչ թուի քեզ հաճոյ, և ոչ բերկրեցուցանէ զքեզ։ Եթէ ոչ հաճատաս ինձ, հայեաց 'ի ժողովուրդն իսրայելեան, որք ունելով զմանանայն՝ զզուէին յոյնմանէ, և խնդրէին զայլ կերակուր. և տեսանելով զինքեանս յազատութեան, դառնային խակոյն, և ցանկային ծառայութեան, և ճառաչէին առ եգիպտոս վն խստորից, և սոխից, զորս անդ ուտէին. և բազում անգամ ցանկացան դառնալ անդր։ Ո՛չ երբէք ունիցիս զբերկրութիւն, եթէ գտցես զայն յայսպիսի իրս։ *Որ կամի ճվ ուրախանալ միշտ ուրախ եղիցի, զի Այ մշտնջենական է։ Արդ՝ կամիս զուրախութիւն մշտնջենական. յեցիր 'ի նա, որ մշտնջենական է ‖, ասէ սբն Օգոստինոս։ Հոգին սբ գնէ զայս տարբերութիւն 'ի մէջ անմիտ մարդոյ, և 'ի մէջ իմաստուն և սբ մարդոյ՝ ասելով. Յիմարն որպէս լուսին փոփոխի, իսկ մարդ սբ 'ի յիմաստութեան հաստ որպէս արեգակն։ Սիրաք. 27. 12. Անմիտն հանգոյն լուսնի փոփոխի, այսօր աճի, և 'ի վաղիւն նուազի. այսօր երևի ուրախ, և 'ի վաղիւն տրտում, մերթ միով կերպարանաւ, և մերթ միւսով։ Քանզի ունի եդեալ զհաճոյութիւն իւր 'ի յիրս աշխարհի, որք են փոփոխականք, և անցաւորք. և այսմ շարժի ըստ հնչման նց, և փոփոխի ըստ փոփոխման նց։ Երթայ ը լուսնի ընդ զծով, և ընդ զլուսնաւ։ Բայց մարդ արդար և սբ է կայուն ընդ արեգական, միշտ մի և նոյն կերպիւ, և մի և նոյն կացութ, զի ոչ գոյ 'ի նմա աճումն, և նուազումն։

[illegible]

Ճշմարիտ ծառայն Այ միշտ կայ ուրախ, և շատացեալ, զի եդեալ ունի զհանգստութի իւր 'ի յԱծ, և 'ի կատարել զամենայնը կամս նորին, որ ոչ կարէ պակասիլ, և ոչ բառնիլ յումեքէ.

Ասի զորոյ ասացաք Գէնիկոլա կոչեցելոյ, թէ միշտ ծիծաղէր. և մինչ հարցանէին ցնա, թէ վա՞ էր ծիծաղիս միշտ, պատասխանէր ասելով, ծիծաղիմ, զի զԲն ոչ ոք կարէ բառնալ յինէն: Արդարև գտեալ էր սա զճշմարիտ բերկրութիւն, զի եդեալ էր յայն պխտուում իւրի, որ ոչ երբէք կարէր պակասիլ, կամ յումեքէ բառնիլ: Նմանապէս և մեք այսպէս, որպ ասէ մարգարէն Դաւիթ, Սաղմ. 32. 1: Ցնծացէք արդարք 'ի Տր: 'Ի վր որոյ ասէ Սբն Բարսեղ. Տեսէք զի մարգարէն ո՛չ ասէ՝ ցնծացէք ընդ առատութի իւրոց ժամանակաւորաց. ոչ ընդ բազում ընդունակութիւն և ընդ ուշիմութիւն ձեր, ո՛չ ընդ բազում զօրութիւնն և ընդ մեծագոյն քանքարն ձեր, զոր ունիք, ո՛չ ընդ առողջութիւնն, և ընդ ուժեղութիւն մարմնաւոր, և ոչ զի մեծ համարիք և վարկանիք առ մարդիկս, այլ ցնծացէք 'ի Տր. և դիք զամ բերկրութի ձեր յԱծ, և 'ի կատարել զամենայնը կամս նորին, զի սա է միայն, որ յաղեցուցանէ, և բաց 'ի սմանէ այլ ոչինչ իր կարէ տալ զհաճութի, և զճշմարիտ բերկրութի:

Սբն Բեռնարդոս 'ի խօսակցութե միում, զոր առնէ 'ի վր այնորիկ բանի սրբոյն Պետրոսի, որ ասաց: Ահաւասիկ մեք թողաք զամ: Մատ. 19. 27: պարզաբանէ, և ցուցանէ զայս յոյժ բարւոք ասելով. * Հոգին բանական այլովք իրօք զբաղիլ կարէ, բայց լնանիլ ո՛չ կարէ ||: Այլ ամ իրք բաց 'ի յԱյ կարեն լուցանել, և զարթուցանել զքաղց, բայց ո՛չ կարեն բառնալ զայն, որպ զագահաց ասէ

խմաս

իմաստութիւնն. Աստուածն ու յոգնոյն արծաթով։
Ժողով. 5. 9։ Այսպէս են և ամ իրք աշխար-
հիս, որք ոչ երբէք կարեն յագեցուցանել
զհոգիս մեր ։ Եւ զպատճառ սորին ցուցա-
նէ մեզ Բեռնարդոս ասելով,. * Գիտեմ,
ընդէր հաստատութիւք, և ամ իրք ծիս ոչ
կարեն յագեցուցանել զմեզ ։ Քանզի ոչ են
բնական կերակուրք հոգւոյ ‖ ։ Զի որպէս օդն
և հողմն ոչ են բնական, և համեմատ կերա-
կուրք մարմնոյ մերոյ. և ծիծաղէիր եթէ
տեսանիցէիր զմարդ մի ասելով, որ բանայ-
ցէր զբերանն առ օդն համբոյն զետարծու-
ոյ կարծելով յագել այնու, և պահպանել.
նաև համարէիր զնա խելագար. այսպէս և
ոչ է պակաս խելագարութեան (ասէ սբն Բեռ-
նարդոս) կարծելն, թէ բանական հոգին
մարդոյ, որ է անմարմին, կարիցէ յագել
իրօք մարմնականօք, և ժամանակաւորօք ։
Իրաւէ կարէ ուռնուլ, և լնանել փքով որպէս
ուռկ մի, բայց անկարելի է յագել. զի այն
ոչ է կերակուր նմա ։ Տուր իւրաքանչիւր ու-
մեք զհամեմատ կերակուրն իւր, որ մարմնոյն
զկերակուր մարմնաւոր, և հոգւոյն զկերա-
կուր հոգևոր ։ * Զի հաց հոգւոյ է արդա-
րութիւն, և միայն երանեցեալքն են, որք
քաղցնուն նմա, զի նոքա յագեսցին ‖ ։
Եւ երանելի սբն Օգոստինոս պարզաբա-
նելով զայս առածելաբար ասէ 'ի յառանձ-
նախօսութեան. * Եղև հոգին ընդունակ մե-
ծութեան քում Այ, որպէս զի միայն քեւ, և ոչ
այլով իրօք կարիցէ լնանել ‖ ։ Յորժամ
փորուածն մատանւոյ միոյ է արարեցեալ ի
չափու ական պատուականի միոյ, ոչ այլ ինչ
կարէ յարմարել այնմիկ, բայց 'ի յականէ յայն
մանէ, վո որոյ եղև ։ Եւ եթէ փորուածն
է եռանկիւնի, ոչ ինչ իր այլաձև, որ բոլո-
րակ, կամ քառանկիւնի կարէ լնուլ զնա ։
Արդ՝ հոգին մեր առեղծեալ եղև 'ի պատկեր
և 'ի

և 'ի նմանութեն ամենասրբ Երրորդութե, այնպիսեաւ քանդակմամբ 'ի սրտի մերում, որով է ընդունակ, և յարմար ընդունելոյ յինքեան զնոյն ինքն զԱծ միայն: Վա̃ որոյ անկարելի է, թէ այլ ինչ իր կարասցէ լնուլ զթափուր տեղին զայն, եթէ ոչ նոյն ինքն Ած: Բոլոր գունտ երկրի ոչ է բաւական լնլոյ զնա: Ուստի ս̃րբն Օգոստինոս ասէ, *Արարեր զմեզ Տր̃ վա̃ քոյ, և անհանգիստ է սիրտ մեր, մինչև հանգիցէ 'ի քեզ:

Յոյժ ազնիւ օրինակ է այն, զոր աւբերեն հաստատակաբար յաղագս ծայրի, կամ ալաքի կողմնացուցին, (զոր ռամկօրէն պուսուլայ կոչեն) որով վարին նաւավարքն, Զի ծայրն այն գոլով մածեցեալ մագնիս քարամբ՝ բնականաբար դառնայ միշտ առ հիւսիս. զի Ած ետ նմա զբնութիւն և զհակումն զայն. և է յոյժ անհանգիստ ծայրն այն, մինչև ոչ ուղղեսցի առ հիւսիս, և իբրև ուղղի, խաղոյն դադարի: Արդ՝ այսպ̃ Ած ստեղծ զմարդն այսու բնականաւ հակմամբ, և յօժարութե առ ինքն, որպէս առ հիւսիս, զի առ վերջին վախճան իւր: Ուստի ցորչափ ոչ եմք եդեալ զսիրտն մեր յԱծ, եմք կարի անհանգիստ ոպ̃ զծայրն զայն ալաքին, որ է մածեցեալ մագնիս քարամբ: Զի ոպ̃ նա ոչ բնաւ դադարի՝ ցորչափ հայի առ շարժելի մասունս երկնից. բայց մինչ հայի առ մի անշարժ կէտն հիւսիսային բեւեռին, խաղոյն և ինքն մնայ անշարժ: Այսպ̃ և դու մինչ գնես զաշխ, և զսիրտդ 'ի փոփոխական և 'ի յանցաւոր իրս աշխարհի, ոչ կարես ունիլ զհանգիստ, և զբերկրութի: Դի՛ր ուրեմն զայն 'ի յԱծ, և ունիցիս ըզ հանգիստ:

Այս պարտէր շարժել զմեզ սաստկապէս առ 'ի խնդրել զԱծ, թէև ոչ ունիցեաք զայլ օգուտ,

օգուտ, եթէ ոչ զըղձասխրութիւն մեր. զի ամենեքեան ցանկամք ունել զուրախութիւն, որպէս ասէ սուրբն Օգոստինոս. * Եղբարք, գիտեմ, զի ամ մարդ ցանկայ խնդալ. բայց ոչ ամենեքեան խնդրեն անդ զխնդութիւն, ուր պիտոյ է խնդրել ||: Ագահն, բղջախոհն, հպարտն, փառասէրն, որկրամոլն, ամենեքեան սոքա ցանկան ունել զերկրութիւն և զուրախութիւն. բայց մինն գնէ զերկրութիւն իւր 'ի ստանալ զհարստութիւն. միւսն 'ի պատուսի, և 'ի յարժանապատուութիւն. այն 'ի յուտել, և 'ի խրախճանալ. և ոմն 'ի յանհամեստ հեշտութիւնս, զի ոչ յօժարեցան գնել զերկրուն իւրեանց անդ, ուր գնել պարտէին. վա որոյ ոչ երբէք գտցեն զայն. վասն զի ամ հեշտալիքս այսոքիկ, և այլք բնաւք, որք կան յաշխարհի, ոչ են բաւականք յագեցուցանելոյ զհոգին, և բերկրեցուցանելոյ զնա: Ուստի ասէ սուրբն Օգոստինոս. * Զի ընդ բաղում իրս թափառական շրջիս ով մարդ, խնդրելով զբարիս հոգւոյ և մարմնոյ քո: Սիրեա զմի բարին, յորում գոն ամ բարիք, և բաւական է. Ցանկա պարզ և զուտ բարւոյն, որ է ամ բարի, և շատ է ||: Օրհնեա անձն իմ զՏր, որ լնու 'ի բարութիւն զցանկանս քո: Սաղմ. 102. 1. և 5: Օրհնեալ, գովեալ, և փառաւորեալ եղիցի 'ի յաւիտեան. Ամէն:



# ԳԼՈՒԽ. Զ:

Պարզաբանի այսմ նիւթոյ. Թէ որպէս համա-
ձայնելով ընդ կամաց այլ ինչ մեզ
պահանջէ նախախնամութիւն, և
զհանգիստ:

Փ Առաւօտ սրբն Օգոստինոս 'ի վր այնր բանի փրկչին, որ ասէ, Զոր ինչ խնդրեսջիք յանուն իմ, արարից զայն: Յով. 14. 13: ասէ, Թէ ոչ պարտի ոք խնդրել զխաղաղութի և զհանգիստ ժամանակաւ առանց ըղկամս իւր, և ստանալոյ զայն, զոր ախորժէ. զի այս ոչ է բարի, և ոչ վայելչէ նմա. մանաւանդ գուցէ չար իցէ այս վասն իւր, այլ պարտի միշտ յարել միամտաբար 'ի բարիս, կամ 'ի բարեգոյն իրս, որ նմա պատահիցի. և այս է այն, որ պարտի խնդրել յԱՅ: * Զի յորժամ բերկրեցուցանեն զմեզ չարիքն, և ոչ բերկրեցուցանեն բարիքն, պարտիմք աղաչել մանաւանդ զԱծ, զի բերկրեցուսցեն զմեզ բարիքն, քան Թէ շնորհեսցին մեզ չարիքն ||: Այսինքն, եԹէ ոչ ախորժիս կատարել զկամս ԱՅ, որ է բարին, այլ ախորժն քո և ցանկութին քորշէ զքեզ առ 'ի կատարել զկամս քո, պարտիս աղաչել զԱծ, և հայցել 'ի նմանէ, զի մի տայցէ քեզ զայն, զոր դու կամիս, այլ զի տայցէ քեզ զբերկրութի 'ի կատարելն քո զԱծային կամս նր, որ է բարի, և վայելուչ քեզ: Իմա ասացեալ յաղագս այսորիկ զեղեալն զայն, որ պատմի 'ի գիրս Թուոց. յորժամ որդիքն Իսրայէլի տաղտկացան 'ի մանանայէն, զոր ԱԾ առաքէր նց յերկնից. և ցանկացան մսոյ, և խնդրեցին զայն. և ԱԾ ետ նց զցանկութիւն նց, բայց յոյժ Թանկագին գնեցին զայն: Քանզի Մինչե-

նէրս-

կերակուրք 'ի բերանս իւրեանց էին, բարկութիւն այ ել 'ի վր նոցա. սպան զբազումս 'ի նոցանէ, եւ զըն տիր ընտիրս իէլի սատակեաց ։ Սաղմ. 77. 30։

Յայտնի իմն է, թէ բարեգոյն էր մանանայն, զոր Աձ առաքէր նց, քան զմիսն որում նոքա ցանկացան. եւ քան զսոխն, եւ զսխտորն եգիպտոսի, վն որոյ հառաչէին. Աստի ոչ պարտէին հայցել զայսոսիկ յԱյ, (ասէ իմաստունն) այլ զի դարմանիցէր ըզ քիմս նոցա, որպէս զի կարիցէին ունիլ զբարե ճաշակ երկնային կերակրոյն, եւ այսպէս ոչ խնդրիցէին զայլ կերակուր. որովհետեւ 'ի մանանային ունէին զամ ինչ, եւ զամ համս, որոց կարէին ցանկալ։ Այլ յամ եւ դու յորժամ կաս պաշարեցեալ 'ի փորձութէ, եւ ունիս անէր, եւ տրտմեալ զախորժակդ. եւ ոչ հաճիս ընդ առաքինութիս, եւ ոչ ընդ բարիս. այլ որպէս զհիւանդ ախորժես զչար վատթարս, եւ զվնասակարս, ոչ պարտիս կառավարիլ ըստ ախորժման քոյ, եւ ոչ կամիլ, զի լինիցի այն, որում ցանկաս դու. զի այս ոչ եղիցի միջոց ունելոյ զխաղաղութի, եւ զհաճութի յամի. այլ ունելոյ յետոյ զմեծ տհաճութի, եւ զմեծագոյն անհանգստութի։ Այլ որում պարտիս ցանկալ, եւ խնդրել զայն յԱյ, է զի առողջացուսցէ զքիմս քո, եւ տայցէ քեզ զճաշակ բարի, որպէս զի բարեպէս զգայցես զհամն կատարելոյ զԱծային կամն նր. որ է բարին, եւ որ վայելէ քեզ. եւ այսպիսաբար կարասցես ստանալ զճշմարիտ խաղաղութիւն, եւ զանդորրութի։

Մէն Տորոթէոս շիջի յայսմիկ այլ ճանապարհաւ, կամ առ'ի բարւոք ասել. պարզաբանէ զայս այլով կերպիւ, եւ ասէ, թէ նա որ համակերպէ զկամս իւր յամ իրս ընդ կամացն այ, եւ ոչ ունի զայլ կամիլ, եւ զայլ ոչ կամիլ, եթէ ոչ զայն, զոր Աձ կամի.

կամ

կամ ոչ կամի, այնպիսին զայս առնելով միշտ առնէ զկամս իւր, և ունի զբաղում խաղաղութիւն, և զհանգիստ։ Առցուք 'ի մէջ զօրինակ մի հնազանդութեան, և այսու պարզաբանեսցի այն, զոր կամիմք ասել, և տրասցուք միով ճանապարհաւ զերկուս գործողութիւնս։ Նոցա՝ որք կամին լինել կրօնաւոր, և երթալ ընդ ճանապարհն հնազանդութեան, ասեմք հասարակաբար. զգո՛յշ լերուք, զի 'ի կրօնի աստ ոչ պարտիք առնել զկամս ձեր յիրի իմիք։ Եւ Տէրն Տորոթէոս ասէ, այո՛ բարւոք կարէք առնել զկամս ձեր. և ես տաց ձեզ զմիջոց մի, որով զօրհանապազ կարիցէք առնել զկամս ձեր՝ ո՛չ միայն պատշաճաբար, այլև սրբաբար, և մեծաւ կատարելութեամբ։ Գիտէ՞ք որպ։ * Որ ոչ ունի զյատուկ կամս, միշտ արասցէ զկամս իւր ‖։ Քանզի այսպիսին առնէ, զի կամքն այլոց իցէ կամք իւր։ Եւ այսպ ոչ կամելով լնուլ զկամս մեր, զայն միշտ լցեալ գտանեմք ‖. Արդ՝ ջանա՛ դու, զի կամք քո ոչ այլ ինչ իցէ, եթէ ոչ կամք մեծաւորին քո, և յայն ժամ զօրհանապազ կատարեսցես զկամս քո մեծաւ կատարելութեամբ, և արդեամբ։ Քանզի այսու կերպիւ ես ննջեմ, որչափ կամիմ, զի ոչ կամիմ ննջել աւելի քան զայն, որ կարգեցեալ է 'ի հնազանդութենէ։ Ուտեմ զայն, զոր կամիմ. զի ոչ կամիմ ուտել աւելի քան զայն, զոր տան ինձ։ Եւ աղօթեմ, ընթեռնում զհոգևոր գրեանս, և աշխատեմ, որքան կամիմ, զի 'ի յամ իրս յայսոսիկ ոչ զայլ ինչ կամիմ, եթէ ոչ զայն, որ 'ի հնազանդութենէ է կանոնաւորեցեալ, և պատուիրեցեալ. այսպ և 'ի յայլս բնաւս։ Ուստի բարի կրօնաւորն ոչ կամելով առնել զիւր կամս իւր, միշտ առնէ զկամս իւր։ Եւ վա այսորիկ բարի կրօնաւորքն կան միշտ յոյժ հաճեալք, և ուրախ. զի այն առնելն զկամս

Հնազանդութիւն կամք իւրեանց , առնէ զնս
միշտ հաճնալս , և ուրախս:

Յայտնիկ կայանայ բոլոր կէտն դիւրութե՟ , կամ դժուարութե՟ կրօնի , և յայսմանէ կախի ուրախութիւն , և խաղաղութիւն կրօնաւորին : Եթէ յօժարիցիս դու միանգամ թողուլ զկամս քո , և առնուլ զկամս մեծաւորին փոխանակ կամաց քոց , այս առնէ քեզ յոյժ դիւրագոյն , և հաճեղ զկրօնն , և կայցես յոյժ անդորր , և ուրախ : Բայց եթէ ունիս զայլ կամս տարբեր 'ի կամաց մեծաւորին , ոչ կարասցես կեալ 'ի կրօնի . զի երկու տարբեր կամք ոչ կարեն համաձայնիլ 'ի միում : Դարձեալ և մեք եթէ ոչ ունիցիմք զմի կամք միայն , ոչ կարեմք կեալ խաղաղ . քանզի ունիմք նաև զզգայական բաղձանս , որ միշտ հակառակի կամաց , և բանականութե՟ , թէպէտ զգայական բաղձանքն մեր է ստորին , և ստորակարգեցեալ 'ի ներքոյ կամաց մերոց . արդ զինչ լինիցէր , եթէ իցէին 'ի մեզ երկու կամք , որոց իւրաքանչիւրն կամիցէր գոլ իշխող . արդարև մեծ խռովութե՟ : Ուստի ասաց Քն . Մատ . 6 . 24 : Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել : Դժուարութի կրօնի ոչ կայանայ այնքան 'ի յիրս , և 'ի յաշխատանս , որք են 'ի նմին , որքան 'ի յընդդիմութե՟ կամաց մերոց , և 'ի յըմբռնման պատկերակերպութե՟ մերոյ . այս է որ առնէ 'ի մեզ ծանունս , և դժուարինս զիրս հասարակս : Զայս բարւոք կարեմք ճանաչել տարբերութե՟ , զորմէ զփորձառնումք 'ի մեզ՝ երբ ունիմք զփորձութի , և երբ ոչ ունիմք զայն : Զի յորժամ կամք առանց փորձութե՟ , տեսանեմք , զի իրքն եղանին մեզ դիւրինք , և թեթևք . բայց եթէ գայ 'ի մեզ փորձութի ինչ , և յարուցանէ 'ի մի̃ մեր զտրտմութի , կամ զուրախութի . յայնժամ այն , որ երևէր մեզ դիւրին , եղանի

յոյժ

յոյժ դժուարին. և թուի մեզ, թէ ոչ կարեմք կրել զմեծ ծանրութիւն, և կամ թէ առ՚ի առնել զայն, պիտոյ է, զի երկինն կցիցի ընդ երկրի։ Ո՛չ գոյ դժուարութի՛ւն ՚ի յէրս առնելիս, որովհետև են նոյնք, որք էին յառաջին, այլ ՚ի վատթար տրամադրութե՛ն մերում. ոպ̃ յորժամ հիւանդն դարձի ՚ի կերակրոյ, ո՛չ է վատթարութիւն ՚ի կերակուրն, որ է ազնիւ, և բարւոք կազմեցեալ, այլ ՚ի վատթար մաղձն հիւանդին, որ առնէ զզուելի, և դարշահամ զկերակուրն. այսպ̃ է և աստէն։

Այս է շնորհն, զոր Ած առնէ նմ̃, զորս կոչէ ՚ի կրօնն, տալով նմ̃ զախորժ. և զհամ հետևելոյ կամացն այլոց։ Այս է շնորհն կոչման, որով Տր̃ արար առաւել բարեգոյն զվիճակն մեր, քան զվիճակն եղբարց մերոց։ Ո՞ ետ քեզ զդիւրութիւնդ զայդ թողլոյ զկամս քո, և հետևելոյ կամացն այլոց։ Ո՞ ետ քեզ զոյժ նոր՝ առ՚ի դարձիլ այնու յիրաց աշխարհի, և առ՚ի հաճիլ առանձնանալ, աղօթել, և մահացուցանել զքեզ։ Ո՛չ ծնար դու այսու, խրաճի ոչ ծնար այսու, այլ մանաւանդ ներհակաւն սմին։ Զի միտք մարդոյ հաստատեալ էն ՚ի խնամս չարէն ՚ի մանկութէ իւրմէ։ Ծննդ. 8. 21։ Այս եղև շնորհ, և պարգև հոգւոյն սրբոյ. նա է որ ոպ̃ ընդ գթած մայր եդ զաստպ դառն ՚ի ստինս աշխարհի, ոպ̃ զի եղանիցիւր դառն վ̃ քոյ այն, որ յառաջն թուէիւր քեզ քաղցր. և եդ զքաղցրագոյն մեղր ՚ի յիրս առաքինութե, և կրօնի, ոպ̃ զի եղանիցէր քեզ համեղագոյն, որ յառաջն թուէիւր դառն, և վատահամ։ Ուստի ոմն սրբուհի ասէր, * Զանչափ գոհութիւնս մատուցանեմ քեզ Տր̃, զի պահեցեր զիս ՚ի մանկութե, և բարձեր յինէն զսէրն աշխարհի ‖։ Ո՛չ է մեծ իմն, զոր առնեմք մեք ՚ի լինիլն մեր կրօնաւոր, այլ

է

է յոյժ բազում, և մեծագոյն շնորհն, զոր արար մեզ Ած քարշելով զմեզ առ կրօնն. և արար՝ զի ճաշակեսցեմք զմանանայն երկնից, մինչ այլք ճաշակեն զխստորս, և զսոխս եգիպտոսի։ Երբեմն սկսիմ ես խորհիլ զաշխարհականս, թէ ոչ յետադրելով զկամս իւրեանց, առնեն զկամս այլոց վս օգտի և շահասիրութե իւրեանց, սկսեալ 'ի մեծէն, որ կայ մերձ թագաւորին մինչև ցպաշտօնեայն ծխատանն։ Ուտեն ( ոչ ասեն ) ըստ քաղցուն այլոց. ( զի յորժամ վերնագոյնն ուտէ, ապա ուտեն և ինքեանք ) ննջեն ըստ քնոյն այլոց, ( զի յորժամ վերնագոյնն ննջէ, ապա և ինքեանք ննջեն ). և արարեալք են յայսմիկ զայնպիսի սովորութի, մինչզի բոլորովին արարեալք են զկամս այլոց կամք իւրեանց. հաճին ը̄ այն, և ունին զայն 'ի տեղի զբօսանաց։ Նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն, և մեք զանեղծութիւնն։ 1. Կորն. 9. 25։ Արդ՝ զինչ մեծ է, զի և մեք հաճիցիմք կեալ այսպիսի բարի կերպիւ, որ պիտի է կերպն կրօնի, և առնիցեմք կամք մեր զկամս մեծաւորին մերոյ, որ է բարեգոյն քան զմերն։ Եթէ նոքա վասն սակաւ մի պատուոյ, և շահասիրութե ժամանակաւորի առնեն զկամս այլոց յատուկ կամք իւրեանց, մինչզի բերկրութի և զբօսանս համարին զառնելն զկամս այլոց, և առնեն ըզգիշերն տիւ, և զտիւն գիշեր. ապա զինչ մեծ իմն է, զի և մեք առնիցեմք վս սիրոյն Այ, և առ 'ի ստանալ զյաւիտենական կեանս։ Ջանասցուք և սկսեսցուք ուրեմն յայսմհետէ առնել մեր զկամս մեծաւորին մերոյ, և այսու կերպիւ արասցուք միշտ ըզկամս մեր, և մնասցուք միշտ յոյժ հաճեալ և ուրախ 'ի կրօնի. և եղիցի ուրախութի մեր յոյժ հոգևոր։

Արդ՝ դարձցուք այժմ առ դիտաւորութի մեր,

մեր, և առաւելեցուցուք զայս առաջադրութեն մերում: Արասցուք մեր զկամս ԱՅ, համակերպելով զմեզ յամ իրս ընդ նմին, և ոչ ունելով զայլ կամիլ, կամ զոչ կամիլ, եթէ ոչ զայն, զոր կամի, կամ ոչ կամի ԱԾ: Եւ այսու կերպիւ արասցուք միշտ զկամս մեր, և լիցուք միշտ հաճեալք և ուրախք: Յայտնի իմն է այս, զի եթէ դու ոչ կամիս զայլ ինչ, եթէ ոչ զայն, զոր կամի ԱԾ, կատարի կամք քո այնու, զի կատարի կամքն ԱՅ, զոր դու կամիս, և ցանկաս, զի կատարեսցի. ուստի մինչ կատարի կամքն ԱՅ, կատարի նաև կամք և ցանկումն քո: Զայս և Սենեքա փիլիսոփայն գիտաց ասել. զի ասէ. Առաւել բարձրագոյն, և առաւել կատարելագոյն իրն, որ կարէ գտանիլ 'ի մարդն, է գիտել համբերաբար և ուրախութբ կրել զամ վիշտս, և զձախորդութիս. և տանիլ զայն ամ որպէս թէ կամաւ իւրով պատահիցէր. զի պարաւանդեցեալ է մարդն այսպ կամիլ, գիտելով թէ այն է կամքն ԱՅ: Ո՜հ թէ որքան հաճեալ մնայաք մեք, եթէ սովորիցէաք առնել մեր ընդ կամս ԱՅ, և ոչ երբէք կամիլ զայլ ինչ, եթէ ոչ զոր կամի նա. ոչ միայն վս այսորիկ, զի կատարի կամքն մեր, այլև նախապետաբար վս այսորիկ, զի կատարի կամքն ԱՅ, զոր մեք այնքան սիրեմք: Եւ թէպէտ պիտոյ իցէ մեզ այն, զոր ասացաք, սակայն այսու ամի յայսմիկ պարտիմք դադարել. և յայսմիկ պարտիմք զետեղել զամ բերկրութի մեր, զի 'ի հաճութե և 'ի կատարման ամենասուրբ կամացն ԱՅ: Զամ զոր ինչ կամեցաւ և արար Տր, յերկինս և յերկրի, և յամ ծովս: Սաղմ. 134. 6: Քանզի լինի այն ամ, զոր նա կամիցի. և կարէ առնել, զորքան կարէ կամիլ. ոպ ասէ իմաստունն. Քանզի հօր է 'ի քեզ յորժամ կամիս՝ կարօղ լինիլ: Իմաստ. 12. 18:

Եւ Եսայեր · 13 · 9 · ասի · Զի քում հրամանիք ողորմ ած · ոչ ոք է՝ որ ընդդէմ կայ քեզ ։ Եւ Հռոմ · 9 · 19 · կամաց նր ոչ ոք կայ հակառակ ։

# Գ Լ Ո Ւ Խ · Ե ։

## Յաղագս այլոց բարեաց և օգտութեանց՝ որք գան յայսմիկ համաձայնութենէ ընդ կամացն Այ ։

ՕԱյլ մեծագոյն բարի, և զմեծագոյն օգուտ հասուցանէ այս կըրթութիւն. և է այս. զի համաձայնութիւնս այս՝ և ամբողջ հնազանդութիւնս ՚ի կամս Այ է բարեգոյն և առաւել նախապատուական առաքինութիւն, զոր ՚ի կողմանէ մերմէ կարեմք ունել, որպէս զի Տր առնիցէ մեզ զշնորհս, և լնուցու զմեզ բարեօք ։ Վասն յորժամ Այ Տրն մեր կամեցաւ առնել զՊօղոս ՚ի հալածողէ՝ քարոզող և առաքեալ իւր, կանխեաց այսու առաքինութեամբ ։ Զի առաքեաց նմա զմեծ լոյս ՚ի յերկնից, որ ՚ի վայր ընկեց զնա ՚ի ձիոյն. և եբաց զաչս հոգւոյ նր, և ետ ասել Տէ, զինչ կամիս առնել ։ Գործ · 9 · 6 ։ Ահա կամ սաս որպէս ամկաւ մի կաւ ՚ի ձեռս քո, որպէս զի առնիցես զիս այն, զոր կամիս առնել ։ Եւ այսպէս Այ արար զնա անօթ մի ընտիր՝ կրել և տարածել զանուն նր ը՛ ամ երկիր ։ Անօթ ընտրութե է ինձ, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց, և թագաւորաց, և որդւոց Իսրլի ։ Գործ · 9 · 15 ։ Ընթեռնանի զսր բուհւոյ կուսէն Գերթրուտայէ, թէ Այ ասաց նմա · որ ոք ցանկայ, զի ես եկեալ ազատաբար բնակեցից ՚ի նմա, պարտի յանձնել ինձ զբանալին յատուկ կամաց իւրոց՝ առանց վերադարձին խնդրելոյ զայն յինէն ։ Վս որոյ հայրն մեր դնէ մեզ զհնազանդութիւնս և զանտարբերութիւնս զայս որպէս զնախապատուական

տրամադրութին առ'ի ընդունիլ զմեծագոյն շնորհս յԱՅ ․ և կամի զի այսու մտանիցէ դք 'ի հոգևոր կրթութիս ․ և այս է հիմն , զոր առաջադրէ 'ի սկզբան կրթութեց , զի իցեմք անտարբերք , և անջատեցեալք յամ իրաց աշխարհի ոչ ցանկալով մանաւանդ այսմիկ , քան թէ այնմիկ , այլ ցանկութի մեր լիցի, զի յամ իրս եղիցի և կատարեսցի կամքն ԱՅ ։ Եւ 'ի կանոնի , կամ 'ի ծանուցման , զոր դնէ առ'ի օգնել մեծամ նց , որք առաջադրեն այլոց զհոգևոր կրթութիս , և նց , որք առնեն զնոյնն , ասէ ։ Եղիցի մեծ օգուտ նմա , որ առնէ զկրթութիս , զի ընծայեսցէ զինքն ազատաբար , և դիցէ 'ի ձեռս ԱՅ ․ տմ զի զոր կամի , առնիցէ զնմանէ և զիրաց նր ։ Եւ պատճառն լինելոյ սորա մեծ տրամադրութե , և միջոց ընդունելոյ զշնորհս յԱՅ , է զի 'ի միոյ կողմանէ բառնին այսու արգելմունքն վատթար ըղձաձգտութեց , և յօժարութեց մերոց , որք կարեն գոլ 'ի մեզ ․ և 'ի միւս կողմանէ որքան առաւել ոք ապաւինի յԱծ դնելով զինքն բոլորովին 'ի ձեռս նորա , ոչ կամելով զայլ ինչ , եթէ ոչ զայն , զոր կամի նա , այնքան առաւել պարտաւորէ զԱծ , զի ունիցի զփոյթ զնմանէ , և նախախնամեսցէ զամ պիտոյս նր ։

Նաև յայլմէ կողմանէ համակերպութիս այս ընդ կամացն ԱՅ է կարի զօրեղ միջոց ստանալոյ զամ առաքինութիս ․ քանզի առաքինութիքն ստացեալք լինին կրթութբ ներգործութեց իւրեանց ․ որ է բնական եղանակ ստանալոյ զունակութիւնս ․ այլև Ած կամի այսու կերպիւ տալ մեզ զառաքինութիս ․ վասն զի կամի 'ի գործածել զգործս շնորհաց , որպէս զգործս բնութե ։ Արդ կրթեալ դու զքեզ յայսմիկ տնադրութե , և համակերպութե ընդ կամացն ԱՅ ․ և այսու կերպիւ կրթեսցես զքեզ յամ առաքի-

նու

նութե՛, և այսպ՛ ժառանգեսցես զայնս ։ Զի երբեմն տացի քեզ տուիթ խոնարհութե, և երբեմն հնազանդութե. երբեմն աղքատութե, և երբեմն համբերութե, ըստ այսմ և այլոց առաքինութեց ։ Եւ որքան առաւել կրթեսցես զքեզ այսու ա՛նադրութե՛, և համակերպութե՛ ընդ կամացն ԱՅ. և առաւել անձնեսցիս, և եղիցիս կատարեալ 'ի նմին, այնքան առաւել անձնեսցիս, և եղիցիս կատարեալ յա՛մ առաքինութիս. Համակցեա՛ կցեալ ընդ ա՛յ, և համբերեա՛, զի աճեսցես 'ի վախճանի կենաց քո ։ Սիրաք. 2. 3։ Իսկ այլ թարգմանութի ասէ, Մերձեցո՛ և միաւորեա՛ կցեալ ընդ նմա, և այսպէս աճեսցես, և զարգասցես յոյժ ։ Վ՛ն այսորիկ ուսուցիչքն վարուց հոգևորաց խրատեն, (և է զարմանալի խրատ,) զի դիցուք զաչս մեր 'ի բարձրագոյն առաքինութի մի, որ պարունակեսցէ յինքեան զայլս առաքինութիս, և առ այն ջանասցուք նախապետաբար 'ի յաղօթս, և առ այն ուղղեսցուք զքննութիւն, և զայլ ա՛մ կրթութիս մեր. զի դնելով զաչս 'ի միում իրի, առաւել դիւրին է երթալ զհետ նը, զոր ընդտանեալն, տանամք զա՛մ ինչ ։ Արդ՝ 'ի մէջ այլոց իրաց նախապետականաց, յորս կարեմք դնել զաչս, մինն է ա՛նադրութիս, և ամբողջ համակերպութիս այս ընդ կամացն ԱՅ ։ Յորում բարւոք համարի ծախեցեալ աղօթքն, և քննութին, թէև ծախիցեմք յայնմիկ զամս բազումս, և զա՛մ կեանս մեր ։ Քանզի եթէ ստանայցեմք զայս, ստանայցեմք զա՛մ առաքինութիս ։

Սբ՛ն Բեռնարդոս 'ի վ՛ր այնց բանից սըրբոյն Պօղոսի, Տ՛ր, զիս զի՞նչ կամիս առնել ։ Գործ. 9. 6։ ասէ. Ո՛ բան կարճառօտ, բայց լի և կենսատու, և գործունեայ, և արժանի ա՛մ ընդունելութե ։ Եթէ կամիս ուրեմն զխրատ մի կարճառօտ, և համառօտ

առ'ի ստանալ զկատարելութիւն, ահաւասիկ է այս։ Ասա միշտ ընդ այն առաքելոյն Պօղոսի. Տէր զինչ կամիս, զի արարից։ Եւ ընդ մարգարէին Դաւթի. Պատրաստ է սիրտ իմ, և տրամադրեցեալ առ ամ ինչ, զոր կամիս յինէն։ Կրեա զայս միշտ 'ի բերանի, և 'ի սրտի քում, և այնու քայլիւ, որով երթաս աճելով յայսմիկ, նովիմբ քայլիւ երթիցես աճելով 'ի կատարելութե։

Նաև յայսմանէ ունիմք զայլ բարի, և զայլ օգուտ մի յայսմիկ կրթութե, և է այս, զի կարեմք արտահանել յայսմանէ զդեղ մի յոյժ բարի վս ամնց փորձութեց, որք սովորք են գալ մեզ։ Դևն ջանայ երբեմն անհանգիստ առնել զմեզ ոմամբք փորձութք խորհրդոց թէականաց, և հարցմանց, այսպ։ Եթէ ոք ասիցէր քեզ զայսպիսի, կամ զայնպիսի բան, զինչ պարտէիր պատասխանել նմա. եթէ պատահիցէր քեզ այս ինչ իր, զինչ առնէիր. կամ 'ի յայսպիսի դիպուածոջ զինչ կամիցէիր առնել։ Եւ զի նա է նրբամիտ, ներկայացուցանէ մեզ զիրս այնպիսի կերպիւ, մինչ զի յամ կողմանէ թուի մեզ, թէ մնամք պաշարեցեալք, և երկմիտք. և ոչ գտանեմք ելանել անտի. զի անդ կայ ոտնդայթն նր լարեցեալ։ Դիւին ոչ է փոյթ, թէ իցէ ճշմարիտ, կամ վերաբերեալ և կեղծեալ այն, որով զմեզ խաբէ, միայն թէ կատարեսցէ զկամս իւր ձգելով զմարդն առ վատթար հաւանութի։ Յաղագս այսպիսւոյ փորձութե ասեն հասարակաբար, թէ ոչ է պարտական ոք պատասխանել նմա՝ այո, կամ ոչ. մանաւանդ լաւագոյն է զոչինչ պատասխանել։ Եւ այս նախապատուաբար վայելէ խղճահարաց. քանզի եթէ սկսանիցին տրամաբանել և վիճել ընդ դիւին, և մտանել 'ի հարցումն, և 'ի պատասխանիս ընդ նմա, այս է՝ զոր նա կամի.

կամի • զի ոչ պակասի նմա վերակրկնումն • և ոչ իսկ եղանեն 'ի միջմանէ նորա աւանց պատուոման գլխոյ, որք կամին վիճիլ ընդ-նմա ։ Բայց ես գտանեմ զբարի պատասխանի մի, և օգտակար, և առնել զայս բարեգոյն համարիմ, քան զոչ պատասխանելն, և է այս, զորմէ խօսիմս, թէ ո՞վ ոք կարէ դիւրաւ պատասխանել նմա, և ասել ։ Եթէ այս է կամքն ԱՅ, կամիմ և ես զայն ։ Եթէ ԱԾ կամի զայս, և ես կամիմ ։ Ես կամիմ զայն, զոր կամի ԱԾ ։ 'Ի յոմ իրս յանձնեմ զիս կամացն ԱՅ ։ Ես առնեմ զայն, զոր պարտէի առնել, և հաւատամ, զի Տր տայր ինձ զշնորհ, ոմ զի մի վշտացուցանիցէի զնա, այլ առնիցէի զայն, զոր նա կամէր ։ Այս է պատասխանի մի ընդհանրական, որ բաւական է առ ամ ինչ • և ոչ ունի զդժուարութի այսպ ընդհանրաբար պատասխանելն, այլ ունի զբազում դիւրութի • քանզի եթէ է կամքն ԱՅ, է բարի, և բարեգոյն, և է այն, որ ինձ առաւել վայելէ ։ Կարեմք անկասկածօրէն ընկենուլ զմեզ 'ի կամս ԱՅ, և ասել զայս ամ • և այսու մնասցէ դևն ծաղր եղեալ, և ամաչեցեալ • իսկ մեք մնամք յոյժ հաճեալք, և զօրացեալք յաղթութբ ։ Զի ոպ 'ի փորձութե հաւատոյ տան զխրատ՝ յատկապ խղճահարաց, զի մի պատասխանեսցեն այնմ մասնաւորաբար, այլ ասիցեն ընդհանրապ և 'ի հասարակի • ես հաւատամ և ընդունիմ զայն, զոր ընդունի և հաւատայ մայրն մեր սբ եկեղեցի • այսպ և յայսմիկ փորձութես է յոյժ բարի դեղ ոչ պատասխանելն մասնաւորաբար, այլ դնել առ կամս ԱՅ, որ է ծայրագոյն, և կատարեալ բարի ։

## ԳԼՈՒԽ. Բ։

Հաստատի ոմամբք օրինակօք, թէ որքան հաճոյ է այ կրթութիւնս այս համակերպութե ընդ կամաց նր, և կատարելութիւնն, որ գոյ 'ի սմին ։

Պատմէ Կեսարիոս, թէ էր ոմն միայ-նակեաց 'ի մենարանի միում, որում տուեալ էր Այ զայնքան մեծ շնորհ սքան-չելագործութե, մինչ զի հիւանդքն միայն մերձենալով 'ի հանդերձս նր, կամ 'ի գօ-տին, բժշկէին ։ Աբբայն նկատելով զայս իրս 'ի միոյ կողմանէ, և 'ի միւս կողմանէ ոչ տեսանելով 'ի կրօնաւորն յայն զպատուակ իր-քին, որ ցուցանիցէր զնշան սրբութե, կո-չեաց զնա առանձին, և եհարց ցնա զպատ-ճառն, թէ վասն ո՞յր Այ առնէ զայսքան հրաշս 'ի ձեռն քո ։ Եւ նա պատասխանեալ ասաց ցնա, թէ ոչ գիտեմ զպատճառն. քանզի ( ասէ ) ես ոչ պահեմ աւելի քան զայլս, ոչ 'ի գործածեմ զխարազան աւելի քան զայլս, ոչ ապաշխարեմ աւելի, և ոչ իսկ առաւել երկար աղօթեմ, կամ վաստա-կիմ, և կամ հսկեմ աւելի քան զայլս ։ Այն զոր կարեմ ասել ես զինէն, է այս, զի ո՛չ 'ի յաջողութե բարձրամտեցայ, և ո՛չ ձա-խորդութեքն զիս վհատեցուցին ։ Ոչ ինչ իր՝ որ պատահի ինձ, այլմէ զիս, և կամ ան-հանգիստ առնէ. հոգի իմ միշտ կայ նովիմբ խաղաղութբ և անդորրութբ յամ դիպուածս, թէպէտ լիցեն կարի բազումք, և զանազանք. Յայնժամ ասաց ցնա աբբայն. Ո՞չ այլմե-ցար թերևս, կամ ո՞չ խռովեցար յեռանդն, յորժամ ազնուականն այն, որ էր ներհակ մեզ, հրկեզ արար զշտեմարանն մեր հրով, և այրեաց զայն ։ Ասաց կրօնաւորն, ես ո՞չ խռո-վեցայ.

վեցայ, և ոչ աղմկեցայ, զի թողի զամ ինչ 'ի ձեռս Այ. և այսպ ամ իրք թէ յաջողականք, և թէ ձախորդականք, թէ բազումք, և թէ սակաւք հանգիստաբար ընկալեալք լինին յինէն միշտ գոհանալով զԱյ, որպ եկեալք 'ի ձեռանէ նր։ Յայնժամ ծանեաւ աբբայն, թէ այն էր պատճառն մեծի զօրութեն այնորիկ սքանչելագործութե։

Պատմէ պլօսիոս, թէ աղքատ ոմն կատարեալ վարուք եղև հարցեալ 'ի յամծաւանէ ումեքէ, թէ որպ ստացար զկատարելութի. իսկ նա պատասխանեաց նմա այսպիսաբար, և ասաց. Ես բացորոշեցի մերձենալ առ կամս Այ, և այնպիսաբար համակերպեցի զկամս իմ ընդ նմա, մինչ զի զորքան կամի նա, զայնքան կամիմ և ես։ Յորժամ քաղցն նեղէ, և ցուրտն վշտագնէ զիս, ես օրհնեմ զԱծ. եթէ տեսանեմ զօդն պարզ կամ խռովեալ, օրհնեմ զԱծ։ Զոր ինչ նա տայ ինձ, կամ թոյլ տայ գալ 'ի վր իմ, թէ լցէ իր յաջողութե, և թէ ձախորդութե, թէ քաղցր, և թէ դառն, և անհաճոյ, ընդունիմ զայն 'ի ձեռանէ նր մեծաւ ուրախութբ, որպ զիր իմն յոյժ բարեգոյն՝ ոնագրելով զիս բոլորովին նմա խոնարհաբար. Ոչ երբէք կարացի գտանել զայնպիսի իր, ուր ոչ լցէր Ած. և արդէն գտի զԱծն իմ, յորում հանգչիմ, և ունիմ զխաղաղութի յաւիտենական։

Պատմէ նոյն պլօսիոս զորբուհւոյ կուսէ միոյ, թէ գոլով հարցեալ, թէ որպ ստացար զկատարելութի, պատասխանեաց ասելով. ընկալայ ես զամ վիշտս, և զձախորդութիս մեծաւ համակերպութբ ը կամացն Այ, և որպ եկեալ 'ի ձեռանէ նր. և որ ոք առնէր ինձ զանիրաւութի իմն, և վշտացուցանէր զիս, ջանայի հատուցանել նմա զմասնաւոր բարերարութի ինչ. ոչ երբէք գտն-

գտանեցի ումեք զվշտաց իմոց , այլ միայն դի-
մեցի առ ԱԾ . յորմէ իսկոյն ընկալայ զա-
րիութն և զմխիթարութն :

Պատմէ Թաւլերիոս , թէ պանտաղան անձինք յանձնէին զինքեանս ումեմն աղախնոյ ԱՅ , որ բոլորովիմբ ՚նուագրեալ էր զինքն ԱՅ , ոպ զի աղօթս առնիցէր վս ոմանց իրակութեց նց . և նա պատասխանէր նց առնել զայն : Բայց երբեմն մոռանայր . սակայն նոքա որք յանձնէին զինքեանս նմա , առնուին զայն , զոր խնդրէին , թէպէտ աղախինն ԱՅ ոչ աղօթէր վս մոռանալոյն : Յուսալ դառնային առ նա , և շնորհակալ լինէին ըզնմանէ , ոպ թէ աղօթիւք նր ժամանեալք էին զխտաւորութե իւրեանց . բայց նա ամաչէր և ասէր . շնորհակալ լերուք զԱՅ , և ոչ զինէն , զի ես զոչինչ ունիմ եդեալ յիմոցս այդր : Եւ քանզի բազումք ընթանային առ նա այսու կերպիւ , նա գնաց առ ԱԾ , և սկսաւ սիրով գանգատիլ զնմանէ , և ասէ . Տր վս էր պատճառի կատարես լիաէ զնոմ իրակութիս նց , զորս ինձ յանձնեն , և յետոյ գան առ՚ի շնորհակալ լինիլ զինէն , զի ես ոչ աղօթեցի վս նց : Առ որ պատասխանեաց Տր ասաց . Տես դուստր իմ , յայնմիկ աւուր , յորում ետուր դու զկամս քո ինձ , ես ևս ետու զկամս իմ քեզ . վս որոյ թէև դու ոչ հայցես զիր ինչ մասնաւորաբար , սակայն գիտելով իմ , թէ դու հաճիս ընդ այն , ես առնեմ զայն , ոպ թէ հայցեալ իցես յինէն :

Պատմի ՚ի վարս հարանց զառնէ միոջէ դիղականէ , թէ ագարակք , և այգիք նր առաւել պտղաբերք էին քան զայլոցն : Սա հարցեալ եղև յոմանց , թէ զի՞նչ է , զի քոյքն պտղաբերք են քան զայլոցն . նա պատասխանեաց նոցա , և ասէ . Մի՛ զարմանայք , եթէ բարեգոյն և առատագոյն իցեն պտ

ուղքն իմ քան զձերն. զի ես ունիմ զայն-
պիսի ժամանակս, զորպիսիս ես կամիմ։ Եւ
նոքա առաւել զարմացեալ ընդ բանս նր,
հարցին ցնա, թէ որպէս կարելի է այդմ
լինել. առ որս պատասխանեալ ասաց։ Ես
ոչ երբէք կամիմ զայլ ժամանակ, եթէ ոչ
զայն, զոր Ած կամի. վասն այսորիկ նաև
Ած տայ ինձ զպտուղ այնպիսի, որպէս ես
կամիմ։

Պատմէ սեվերիոս 'ի վարս երանելւոյ սրբոյն
Մարտինոսի եպիսկոպոսին, թէ ընդ այն
ամ ժամանակն, յորում կենցաղավարեցայ
ընդ նմա, ոչ երբէք տեսի զնա բարկացեալ,
և տրտում. այլ միշտ մեծաւ խաղաղութբ,
և ուրախութբ։ Եւ ասէ, թէ պատճառ
սորա էր, զի զամ ինչ, որ պատահէր նմա,
առնոյր ոպ իբր եկեալ 'ի ձեռանէ Այ. և
համակերպիւր ընդ կամաց նր մեծաւ հան-
գստութբ, հաճութբ սրտի. և ուրախութբ։

## Գ Լ ՈՒ Խ. Թ։

### Ցուցակս ոմանց իրաց, որք առնեն դիւրին, և համեղ զկրթութին համակերպութն ընդ կամացն այ։

ՈՐպէս զի կրթութիս այս համակերպու-
թն ընդ կամացն Այ լիցի մեզ դիւ-
րին, և համեղ, նախ պիտոյ է, զի ունի-
ցիմք միշտ առաջի աչաց զհիմն զայն, զոր
եդաք 'ի սկզբանն, իբր թէ ոչինչ ձախորդու-
թի, կամ վիշտ կարէ գալ, կամ պատա-
հիլ մեզ, որ ոչ անցանիցէ 'ի ձեռանէն այ,
և ոչ լիցի նախակարգեալ կամաւ նր։ Զայս
ճշմարտութիս ուսուցանէ մեզ քս փրկիչն
մեր ոչ միայն բանիւ, այլև օրինակաւ իւ-
րով։ Յորժամ հրամայեաց պետրոսի 'ի գի-
շերի չարչարանաց իւրոց դնել զսուրն 'ի

պատուեանն, յաճել ասել: Զբաժակն զոր ետ
ինձ Հայր, ո՛չ ըմպիցեմ զնա: Յոհ. 18.
11: Ո՛չ ասէ, զբաժակն, զոր պատրաստեաց
յուդա, կամ դպիրքն, և փարիսեցիքն, զի
բարուք գիտէր, Թէ նոքա ամենեքեան ոչ
այլ ինչ էին, եթէ ոչ մատուռակք, որք մա-
տուցանէին նմա զբաժակն Հօր. և զայն,
զոր նոքա առնէին չարութբ և նախանձու,
Հայրն երկնաւոր անհուն բարութբ, և իմաս-
տութբ իւրով կարգադրէր 'ի դեղ ազգի
մարդկան: Եւ այսպէս ասաց յետոյ նաև ցպի-
ղատոս, որ ասէր ունիլ զկարողութիւն խա-
չելոյ, և արձակելոյ զնա: Ոչ ունէիր դու իշ-
խանութիւն 'ի վերայ իմ, և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ
'ի վերուստ: Յոհ. 19. 11: Զոր մեկնելով սբքն
ասեն, *Եթէ ոչ իցէր եղեալ տրամադրու-
Թբ և կարգադրութբն Այ:

Յորժ հիանալի կերպիւ ասաց զայս մեծն պե-
տրոս (որպէս ասի 'ի դ. գլխ. գործոց առաքելոց)
պարզաբանելով զայն, զոր մարգարէն ասաց՝
Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խոր-
հեցան 'ի ունայնս: Յարեան թագաւորք եր-
կրի, և իշխանք ժողովեցան 'ի միասին վասն Տն, և
վասն օծելոյ նր: Եւ ասէ այսպէս: Ժողովեցան
արդարև 'ի քաղաքիս յայսմիկ 'ի վերայ սրբոյ որդւոյ քոյ
Յի, զոր օծեր, Հերովդէս, և պոնտացի պիղատոս,
ազգօք և ժողովրդովք Իէլի, առնել որչափ ձեռն քո
և խորհ յառաջագոյն սահմանեցեր լինել: Եւ այս
պէս տեսանեմք, զի յորժամ Այ ոչ կամե-
ցաւ, ոչ եղև բաւական ամ կարողութիւն
հերովդէի Թագաւորին զրկել զնա 'ի կե-
նաց, մինչ էր տակաւին մատաղ մանուկ. և
Թէպէտ եւ սպանանել զամ մանկունս մեր-
ձակայ գաւառին այնորիկ յերկեմենից և 'ի
խոնարհ, սակայն ո՛չ կարաց առնել ինչ նմա,
զոր խնդրէր. զի ո՛չ կամէր մեռանիլ յայն-
ժամ: Եւ հրէայքն, և փարիսեցիքն բա-
զում անգամ կամեցան ըմբռնել զՔս, և սպա-

նանելը

նանել ։ Անգամ մի ածին զնա 'ի գագաթն լերինն, յորոյ վր՟ քաղաքն նոցա շինեալ էր՝ գահավէժ առնել զնա, և ասէ սրբազան աւետարանն ։ Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա, գնայր ։ Ղուկ. 3. 30։ զի չէր ընտրեալ զժամն այնու կերպիւ. վս՟ որոյ նոքա ոչ կարէին տալ նմա զայնպիսի մահ ։ Այլ անգամ կամեցան քարկոծ առնել զնա. և արդէն վերացուցեալք էին զձեռս իւրեանց առ'ի ընկենուլ զքարինս 'ի վր՟ նր՟. և ք՟ս փրկիչն մեր սկսաւ խօսիլ ընդ նս՟ մեծաւ խաղաղութբ՟, և հարցանել ցնս՟ ։ Բազում գործս բարիս ցուցի ձեզ 'ի հօրէ իմմէ, վասն որո՞յ գործոյ 'ի նոցանէ քարկոծ առնէք զիս ։ Յովհ. 10. 30։ Ո՛չ թոյլ ետ նց՟, և ո՛չ ետ զհրաման ձգելոյ ըզքարինս ։ Զի չևևս հասեալ էր ժամ նր՟ ։ Յովհ. 8. 20։ Բայց յորժամ եհաս ժամն, յորում սահմանեալ էր նա մեռանիլ, յայնժամ կարացին առնել զայն, զոր Տր՟ն սահմանեալ էր կրել ։ Զի յայնժամ կամեցաւ նա, և ետ նց՟ զհրաման ։ Այս է ձեր ժամ, և իշխանութիւն խաւարի ։ Զայս ասաց նց՟, յորժամ չոգան ըմբռնել զնա ։ Ղուկ. 22. 53։ Հանապազ ընդ ձեզ էի 'ի տաճարին, և ոչ կալայք զիս, զի չևևս էր հասեալ ժամն. բայց այժմ եհաս ժամն, (ասէ) ահաւասիկ կամ աստ ։ Որքան ջանաց սաւուղ, որ էր տիպ, և օրինակ հրէից, և զորքան հնարս 'ի գործ էած առ'ի կալնուլ զԴաւիթ ։ Թագաւոր մի իշխլի ելեալ էր ընդդէմ առանձին մարդոյ միոյ ։ Խնդրէր զլու մի, որպ՟ ասէ նոյն ինքն Դաւիթ. բայց սակայն ոչ երբէք կարաց հասանիլ դիտաւորութե՟ իւրում ։ Ա՟ծաշունչն բարւոք ծանուցանէ, և տայ զպատճառն ասելով ։ Ո՛չ մատնեաց զնա Տր՟ 'ի ձեռս նր՟ ։ 1. Թագ. 23. 14։ Ահա սա է բոլոր կէտն ։ Եւ այսպէս յոյժ բարւոք ծանուցանէ Սր՟ն Կիպրիանոս 'ի վր՟ բանին այնորիկ ։ Եւ մի-

պահէր զմեզ 'ի խոնարհութեան : և ասէ, թէ ամ երկիւղ, ամ ջերմեռանդութն, և ամ մտադրութն մեր 'ի փորձութիւս և 'ի վիշտս գտանելոց են յԱԾ . զի ոչ դեւն, և ոչ այլ ինչ կարէ վնասել մեզ, եթէ ԱԾ ոչ տայ նմ զիշխանութն :

Երկրորդ՝ թէպէտ ճշմարտութիւնս այս բարւոք իմացեալ՝ իցէ յոյժ բաւական, և մեծապ գործունեայ առ'ի համակերպել զմեզ յամ իրս ընդ կամացն ԱԾՅ . բայց սակայն ոչ պարտիմք աստ դադարել, այլ յառաջ ընթանալ առ այլ իր մի, որ հետևի սմա, զոր և ծանուցանեն ՍՐՔՆ, և է այս, թէ այնոքիկ՝ որք գան մեզ 'ի ձեռացն այլ, պարտիմք 'ի միասին հաւանեալք լինել, և հաւատալ, թէ գան համայնքն 'ի բարին, և 'ի յօգուտն մեր : Քանզի նաև պատիժք դատապարտելոց գան յԱԾՅ, բայց ոչ 'ի յօգուտ նց, և'ի դեղ, այլ միայն 'ի պատիժ : Սակայն պատիժք, և վիշտք, զորս ԱԾ առաքէ մարդկան 'ի կենցաղս յայս, թէ արդարոց, և թէ մեղաւորաց, միշտ պարտիմք յուսալ 'ի յանհուն ողորմութն և բարութն նր, և հաւատալ, թէ գան այնոքիկ վս մեծագունի բարւոյ մերոյ . և թէ այն առաքել վայելուչ է փրկութն մերոյ հոգւոյն : Այսպէս ասաց սրբուհին Յուդիթ ժողովրդեան իւրում, յորժամ կային 'ի յայնմիկ նեղութն, և 'ի մեծի անձկութն պաշարեցեալք 'ի թշնամեաց : 'Ի յուղղութիւն, այլ ոչ 'ի կորուստ մեզ պատահեալ համարեսցուք : Յուդ. 8. 27: 'Ի կամացն ԱԾՅ, որ է այնքան բարի, որ և այնքան սիրէ զմեզ, բարւոք կարեմք հաւատալ, և համարել, թէ ոչ այլ ինչ յառաջ գայ, եթէ ոչ բարին, և բարեգոյն իրն, որ առաքել վայելէ մեզ : Եւ զայս յետոյ պարզաբանեսցուք առաւել լիապ :

Երրորդ առ'ի արտահանել զմեծագոյն պտուղ

յայս-

յայտմանէ ճշմարտութէ, և ոչ զի միջոցս այս լիցէ առաւել գործունեայ առ՚ի սատանալ զկատարեալ համակերպութեն ընդ կամացն Այ, ոչ եւս շատանալոցք ճանաչել և հաճոյանալ հայեցողաբար, թէ զամ իրք գան 'ի ձեռացն Այ, կամ հաճոյանալ 'ի հասարակի վն ազատելի միայն, զի այսպ ասէ մեզ հաճոյն, կամ զի այսպ ընթերցաք 'ի գիրս, և կամ լուաք · այլ պիտոյ է ունակացուցանել, և զարթուցանել զհաճոյս զայս՝ ջանալով ճանաչել և զգալ զիւրն գործնականաբար, մինչզի ընկալցուք զամ ինչ, որ պատահի մեզ, ոչ թէ զՔն զգալիաբար, և դէմ յանդիման տեսանիցեմք, որ ասիցէր ցմեզ · Ա՛ռ զայս որդեակ, զի ես առաքեմ քեզ, և կամիմ, զի առնիցես, կամ կրիցես զայս, կամ զայն իրն այժմիկ : Քանզի այսպիսաբար եղանի յոյժ դիւրին, և համեղ համակերպութենն ընդ կամացն Այ 'ի յամ իրս : Զի եթէ երևիցէր քեզ նոյն ինքն Քն անձամբ իւրով, և ասիցէր քեզ, տե՛ս որդեակ իմ, զի այս է, զոր ես կամիմ 'ի քէն · զայս վիշտ, և զայս հիւանդութիւ կամիմ, զի դու կրիցես այժմիկ վասն իմ · կամիմ զի յայտնիկ պաշտօնի, կամ աղատաւորութե ծառայիցես ինձ, յայտնի իմն է այս, զի թէև լինէր յոյժ դժուարին իրն այն, քան զամ դժուարին իրս աշխարհի, դու առնէիր զայն կարի յօժարաբար զամ աւուրս կենաց քոց · և համարէիր զքեզ երջանիկ, որովհետև Այ կամէր 'ի գործածել զքեզ յայնմ իրի · և զոր հրամայէր քեզ առնել. հաճայէիր թէ այն լինէր առաւել բարեգոյն, և առաւել վայելուչ քեզ վն փրկութե քոյ յաւիտենականի · և ոչ երկրայէիր ամենևին, և ոչ իսկ գայր քեզ նախկին շարժումն ներհակ սմին :

Պիտոյ է, զի յաճախ կրթեսցիմք 'ի յաղօթս,

և

և ստէպ վարժեսցիմք յայսմիկ կրթութեն փորելով զմտատալահանս զայս հաստատագունեղ, և բարւոք ընկղմելով 'ի նմին, որ է գանձ նախատեսչութե հայրականի, որով մասնաւորաբար խնամէ զմեզ ԱԾ. ապա զի այսպէս առնելով պատահեսցուք գանձուս այսմիկ, զոր երթամք պարզաբանելով 'ի հետեւեալ գլուխն։

## ԳԼՈՒԽ. Ժ։

Յաղագս հայրականի և մասնաւորի նախախնամութե, և նախատեսութեն, զոր ԱԾ առնէ առ մեզ, և յաղագս որդիական համարձակութե, զոր առնիլ պարտիմք առ նա։

ՅՄԷՋ այլոց մեծագունից հաստատութեց և գանձուց, զորս վայելեմք մեք քրիստոնեայքս, որք ունիմք զհաճատ, մին է նախախնամութին հայրական, և մասնաւոր, զոր ԱԾ ունի առ մեզ, որք հաճատեալ գիտեմք, թէ ոչ կարէ գալ, կամ պատահել մեզ իր ինն, որ ոչ ելեւցէ նշանեցեալ, և կարգադրեցեալ ձեռամբն ԱԾ. Այսպէս ասաց մարգարէն Դաւիթ. Սաղմ. 5. 13։ Տր որպէս զինու հաճութե թագ պսակեցեր զմեզ։ Կամք շրջապատեցեալք յամ կողմանէ ամենաբարի կամօք, և հաճութբն ԱԾ. ուստի ոչ կարէ մտանել 'ի մեզ իր ինն, եթէ ոչ 'ի ձեռն նր։ Վս որոյ ոչ պարտիմք երկնչել յումեքէ, զի նա ոչ թողու իրի իմիք մտանել, կամ անցանել 'ի մեզ, եթէ ոչ իցէ մեծագոյն բարի և օգուտ վն մեր. Ծածկեաց զիս 'ի խորանի իւրում յաւուր չարի ընդ ցուցակ արար զիս 'ի ծածկոյթ խորանի իւրում. Սաղմ. 26. 5։ Դարձեալ ասէ. Ծածկեսցես զնոսա 'ի ծածկոյթ երեսաց քոց. Սաղմ. 30. 21։ Եւ

յայս.

յայլում տեղւոջ ասէ . Պահեա՛ զիս որպէս բիբ ական ։ Սաղմ. 16. 8։ Եւ Զաքարիա 2. 8. ասէ Որ մերձենայն 'ի ձեզ, որպէս որ ընդհարկանիցի 'ի բիբ ական նմա ։ Ո՛չ գոյ իր այնքան հարուստ, այնքան պատուական, և այնքան մեծ հա-մարելի, որքան է այս ։

Ո՛հ եթէ կարիցէաք ճանաչել միանգամ, և իմանալ բարւոք զայս իրս, որքան տեսա-նէաք զմեզ նպաստաւորեցեալ և օգնեցեալ յԱ՟Յ, և որքան մնայաք յուսացեալք, և մխիթարեցեալք յա՟մ վիշտս, և 'ի հարկաւո րութիւնս մեր ։ Եթէ յաշխարհի աստ որդի ոք ունիցէր զհայր մի յոյժ հարուստ, և կա րող, և յոյժ սիրեցեալ և հովանաւորեցեալ 'ի թագաւորէ, որքան անհոգ և լի յուսով մնայր յա՟մի, որովհետև 'ի յա՟մ գործողութիւ պատահելս նմա, ոչ էր պակասելոց նմա նպաստ, և հովանաւորութիւն հօրն իւրոյ ։ Արդ՝ ապա որքան մեծաւ պատճառաւ պար տիմք ունիլ մեք զհամարձակութիւս, և զանկա կածութիւս զայս, խոկալով թէ ունիմք փո-խանակ հօր զնա, որոյ 'ի ձեռսն կայ ա՟մ իշ խանութի երկնի, և երկրի. և ոչ կարէ գալ մեզ իր իմն, որ ոչ անցանիցէ 'ի ձեռաց նո՟ր. Եթէ այսպիսեաւ համարձակութ՟բ, զոր ունի որդի ոք առ հայր իւր, ննջէ անհոգ, ապա որքան առաւել պարտիմք մեք ունիլ զայս համարձակութիւս առ նա, որ է ծայրագոյն հայր, քան զայլ ա՟մ հարս, որոյ բաղդատու՟թ այլք հարք ո՛չ են արժանի կոչիլ հարք ։ Քան զի ո՛չ գոն 'ի նո՟ա այնքան գութք սիրոյ, որք կարիցեն բաղդատիլ գթոյն Ա՟Յ առ մեզ, որ անհնարի գերազանցէ քան զա՟մ սէր, որ կարէ գոլ յա՟մ երկրաւոր հարս ։ Կարեմք բա րւոք յուսալ և ապաւինել 'ի յայնպիսի հայր և 'ի Տ՟ր, որ զորինչ առաքէ մեզ, լինի մեծագոյն բարի և օգուտ մեր. զի սէրն այն, զոր ունի առ մեզ 'ի ձեռն միածնի որդւոյ

իւրոյ

իւրոյ՝ ո՛չ թողու անկեալ զայլ ինչ, եթէ ոչ զբարի այնոցիկ, վն որոց եւ զիսկական որդին իւր 'ի չարչարանս եւ 'ի մահ խաչին: Որ զիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զա՛մ շնորհեսցէ մեզ: Հռոմ. 8. 32: Իսկ եթէ ամենեցունց արժան է ունիլ զայսս զայս առ Այ, ապա որքան առաւել եւ կրօնաւորաց · զորս նա ընկալաւ մասնաւորապէս վն իւր, եւ ետ նմա զոգի, եւ զսիրտ որդիական, եւ արար, զի ուրացեալ թողուցուն զմարմնաւոր հարս իւրեանց, եւ ունիցին հայր զնա: Զո՞րպիսի սիրտ, զո՞րպիսի սէր, կամ զո՞րպիսի հոգի հայրական, եւ զնախախնամութիւն ունելոց է Այ վն նր: Հայր իմ և մայր իմ թողին զիս և Տր ընկալաւ զիս: Սաղմ. 16. 10: Ո՜հ թէ որքան բարի է հայրն, զոր ընկալար փոխանակ նր, զոր թողեր · մեծաւ խրախճանք, եւ մեծաւ համարձակութբ կարես ասել: Տր հովուեսցէ զիս, և ինչ ինչ ոչ պակասեսցէ: Սաղմ. 22. 1: Աղքատ և տնանկ եմ ես · Տր հոգայ զիս: Սաղմ. 39. 18: Ո՛չ մխիթարեսցի այսու, եւ ոչ հալեսցի սիրովն Այ · Զինչ է այս Տր իմ, զի ընկալար զհոգս իմ, եւ ունիս զինէն զայսպիսի փոյթ, որչ թէ յերկինս, եւ յերկրի ոչ ունիցիս զայլ ստեղծուած, եթէ ոչ զիս միայն: Երանի թէ բարւոք փորձիցեաք մտօք զսէրս զայս, եւ ընկղմիցեաք 'ի նմին, եւ 'ի նախախնամութեան Այ, նաեւ 'ի յայսքան հայրականի եւ 'ի մասնաւորի պաշտպանութե, զոր Այ ունի առ մեզ:

Աստուստ ծնանի 'ի ծառայս Այ ընտելական, եւ որդիական համարձակութի առ Այ · որ 'ի յոմանս է այնքան մեծագոյն, մինչզի ոչ գոյ այնպիսի որդի յաշխարհի, որ այնքան յուսայցէ յամ իրս իւր 'ի պաշտպանութի հօրն իւրոյ, որքան յուսան նոքա 'ի յԱյ: Զի գիտեն հաւաստեաւ, թէ ունի զգութ

առ

առ նմ առաւել քան զհայր · նաև առաւել քան զմայր , որ սովոր է լինել առաւել գթած , որպ նոյն ինքն ասէ 'ի ձեռն Եսայեայ · 49· 15: Միթէ մոռանայցէ կին զմանուկ իւր, կամ ո՛չ գթասցի 'ի ծնունդս որովայնի իւրոյ · և եթէ մոռանայցէ զայս կին , սակայն ես ո՛չ մոռացայց ըզքեզ: Ահաւասիկ 'ի վերայ ձեռաց իմոց նկարեցի ըզպարիսպս քո , և առաջի իմ ես դու յամ ժամ: Ես, ես զքեզ կրեմ 'ի վր ձեռաց իմոց , և միշտ ունիմ զքեզ առաջի աչաց իմոց առ 'ի պաշտպանել և պատսպարել զքեզ : Եւ 'ի ձեռն նոյնոյ մարգարէի պարզաբանէ զայս այլով քաղցրութեամբ , որ է յոյժ գգուանական , և պահպանողական , և ասէ · Որք կրիք յարգանդէ իմմէ : Եսայ· 46· 3: Զի ոչ կինն յորժամ յղանայ , կրէ զմանուկն յարգանդի իւրում, և եղանի այն առն , և պարկաս , և բարձող նր , որով պահպանի ինքն , և ամ ինչ , որ իւր է · Այսպէս ասէ Ած , թէ ինքն կրէ զմեզ յարգանդի գթութեան իւրոյ : Այսու ծառայքն Այ կեան ամ համարձակութեամբ , և են պաշտպանեցեալք և օգնեցեալք այնքան յամ խրախութիւն իւրեանց , մինչզի ոչ խռովին , և ոչ աղմկին պէսպէս պատահմամբ աշխարհիս : Եւ մի՛ երկիցէ , յորժամ հասանիցէ տօթ : Երեմ· 17· 8: Ասէ մարգարէն Երեմիա, թէ սիրտ արդարոց ոչ կրեսցէ զաղմուկ , և ոչ կորուսցէ զհանդիստ և զանդորրութիւն վն զանազան պատահմանց և դիպուածոց · քանզի գիտեն զայս , թէ ոչինչ իր կարէ գալ առանց կամաց հօրն իւրեանց · և կան յոյժ հաճեալք , և յուսացեալք 'ի մեծ սէրն , և 'ի բարութիւն նր , որ զամ առնէ 'ի մեծագոյն բարիս նց , և զայն ամ , զոր 'ի միոյ կողմանէ բառնայ 'ի նոցանէ , 'ի միւսոյ կողմանէ հատուցէ նց փոխանակ այնց զայնպիսի իր , որ առաւել արժիցէ քան զայնս, զորս եբարձ :

Ոյսմանէ յուսոյ, որ է այսքան օրհնական, և ընտանի, զոր ունին արդարքն 'ի յԱծ, ծնանի 'ի հոգիս նց խաղաղութի, և անդորրութի, և ապահովութի մեծ, զոր ժառանգեն, ըստ այնմ, որ ընթեռնանի յԻսայեայ. 32. 18: Եւ նստցի ժողովուրդ իմ 'ի գեղեցկութեն խաղաղութե, և 'ի յարկս յուսոյ, և 'ի հանգստեան մեծութե: Ուստի մարգարէն շարակցեաց յոյժ բարեպէս զխաղաղութիւն ընդ յուսոյ. զի 'ի միոյն հետևի միւսն, ոք 'ի յուսոյ հետևի խաղաղութիւն: Զի որ առաւել յուսայ յԱծ, ոչ պարտի երկնչել յիմեքէ, և կամ աղմկել, որովհետև ունի զԱծ օգնական իւրեան, որ հասանի նմա 'ի թիկունս յամի. վասն որոյ ասէր մարգարէն. Սաղմ. 4. 9: Խաղաղութբ յայս և 'ի սոյն ննջեսցուք, և հանգիցուք. զի դու Տր միայն առանձին յուսով բնակեցուցեր զմեզ: Խաղաղութբ ննջեցից Տր, և հանգեայց, զի դու Տր ապահով արարեր զկեանս իմ յուսով ողորմութե քո:

Կարծեալ ոչ միայն պատճառէ զմեծ խաղաղութի յոյսս այս օրհնական, այլև պատճառէ զմեծ խնդութի, և զուրախութի: Եւ Ած յուսոյ (ասէ մբ առաքեալն Պօղոս. Հռոմ. 15. 13:) լցէ զձեզ ամ խնդութբ, և խաղաղութբ, առաւելուլ ձեզ յուսով, և զօրութբ հոգւոյն սրբոյ: Հաւատալն այն, թէ Ած գիտէ զայն, զոր առնէ, և թէ առնէ զայն վն բարեաց մերոց, գործէ 'ի մեզ, զի մի զգայցեմք զաղմուկս, զտրտմութիւնս, և զանհանգստութիւնս զայնոսիկ, զորս զգան նոքա, որք հային 'ի յերս մարմնական աչօք. մանաւանդ առնէ, զի կայցեմք մեծաւ ուրախութբ 'ի յամ պատահմունս: Եւ որքան ոք առաւել առատանայցէ այսու յուսով, այնքան առաւել առատանայցէ հոգևոր խնդութբ, և ուրախութբ. վասն զի որքան

առա

առաւել հաճոյ և սիրէ, այնքան առա_
ւել մնայ հանգիստ և ապահով · զի զմ
ինչ դառնալի է 'ի բարին · զի հաճոյ,
և յուսայ 'ի բարութեն այ, և 'ի սէր նորա
անհուն ։

Այս է, որ այնքան հանգիստ, և ապահով առնէր զսոսա 'ի մէջ վշտաց, և վտանգաց ևս_րեանց, որք ոչ երկնչէին 'ի մարդկանէ, ոչ 'ի գինեաց, ոչ 'ի գազանաց, և ոչ յայլոց տեղծուածոց անբանից, զի գիտէին, թէ նոքա առանց հրամանի և կամացն Այ ոչ կարէին մերձենալ առ նս ։ Եւ այսպէս որն Աթանասիոս պատմէ զերանելոյն Անտո_նիոսէ, թէ անգամ մի երևեցան նմա դևքն զանազան կերպարանօք ահարկու գազանաց, զի առիւծուց, ընձուց, ցլուց, վիշապաց, օձից, և կարճից՝ շրջապատելով զնա, և սպառնալով նմա մոգլաճ, ատամամբ, գոչ_մամբ, և շչմամբ, և թուէին թէ կամէին խայթել զնա ։ Իսկ որն ծաղր առնէր զնս, և ասէր, եթէ ունիցէիք դուք զկարո_ղութի ինձ, միայն միայն 'ի ձէնջ բաւական էր պատերազմիլ ը իս, որ եմ միայն · բայց քանզի էք դուք տկարք, զի Այ եբարձ 'ի ձէնջ զզօրութի ձեր, ջանայք առնել զմեծ ժողով խուժադուժից առ 'ի ահացուցանել զիս ։ Եթէ Տր ետ ձեզ զիշխանութի 'ի վր իմ, ահաւասիկ կամ աստ, կլարուք զիս, բայց եթէ ոչ ետ ձեզ զիշխանութիւն, և զհրաման, ընդէր աշխատիք 'ի զուր ։ Այս_սու բարւոք երևի խաղաղութիւն, և արիու_թիւն մեծ, որ պատճառէր 'ի սբս յոյս դի_տել, թէ ոչ կարէին նոքա առնել զեր իմն նմա առանց կամացն Այ, որում այնքան համակերպեալ էր զինքն ։ Եւ ունիմք զբա_զում օրինակս այսպիսիս 'ի յեկեղեցական պատմութիս ։ Ընթեռնումք զերանելոյ հօ_րէն մերմէ Իգնատիոսէ զօրինակ մի նման

սմին 'ի հինգերորդ գիրքն վարուց նր. և 'ի յերկրորդ գիրքն Ճառի զնմանէ, թէ անդամ մի նաւելով նա 'ի հռօմ, յարեաւ ալէ կոծութին այնքան մեծ, մինչզի ընկաւ կայմն նաւին բռնութ՟ հողմոյն, և կորուսեալք զյոյս դեղ և զդարման զայլ ոչինչ առնէին, եթէ ոչ պատրաստել առ 'ի մեռանել, զի թուէր, թէ արդէն հասեալ լինէր ժամ մահուան նր։ Իսկ յայսմիկ ժամու, որ էր այսքան երկիւղալի, մինչ գրեթէ ամենեքեան դողային ահիւ մահուան, նա ոչ զգայր զերկիւղ իմն. միայն վն այսորիկ հոգայր, զի թուէր ինքեան, թէ ոչ ծառայեաց Այ, որքան պարտէր ծառայել. իսկ վն այլս իրիք ոչ գտանէր զաւիթ երկնչելոյ։ Զի հողմք, և ծով հնազանդին սմա։ Մատթ. 8. 27։ Արդ և մեք շնորհօք Տն պարտիմք ժամանել առ այս ընտանի, և յորդիական յոյս 'ի յԱծ, և առ այս անդորրութիւն և ապահովութիւն 'ի ձեռն կրթութեան այսորիկ համակերպութեն ընդ կամացն Այ փորելով աղօթիւք և խոկմամբ զամենահարուստ մեծալահանքն հայրականի նախախնամութե նր, զոր ունի մասնաւորաբար առ մեզ, և ընկղմել 'ի նմին։ Հաւատացեալ գիտեմ, զի ոչինչ իր կարէ պատահել ինձ, և զոչինչ կարեն առնել ինձ մարդիկք, ոչ դեք, և ոչ այլ ստեղծուած ոք աւելի քան զայն, զոր Աճ կամի, և տայ նը զհրաման։ Արդ՝ արասցէ զայն, զոր կամի ինձ առնել, զի ես ոչ հրաժարիմ, և ոչ կամիմ զայլ ինչ, եթէ ոչ զկամս նր։

Ընթեռնումք զորբուհւոյ կուսէն Ճելթրուտայէ, թէ ոչ երբէք կասկած իմն կարաց մթացուցանել զհաստատուն կալն, և զապահովլ յոյսն նորա, զոր ունէր առ ամենադութ ողորմութին Այ, նաև ոչ վիշտ, ոչ կորուստ իրի ուրուք, և ոչ մեղքն այլոց, կամ պակասութիւնք իւր կարացին դրդուել զայն։

զայն: Քանզի հաստատապէս յուսայր, թէ ամ իւրք յաջողականք, և ձախորդականք նախախնամութեան Այ դառնալոցք էին 'ի բարին իւր: Եւ անգամ մի ասաց Տր ցսրբուհի կոյսս այս, հաւատալ յայսն այն, զոր մարդն ունի 'ի յիս, և հաւատայ, թէ խակամ կարեմ, գիտեմ, և կամիմ հաւատարմաբար օգնել նմա 'ի յամ իրս, շարժէ զսիրտ իմ, և այնքան բռնադատէ զգթութիւն իմ, մինչ զի կերպիւ իմիք ոչ կարեմ ոչ օգնել և բարերարել այնպիսւոյ մարդոյն՝ յաղագս հաճութեան զոր զգամ տեսանելով զնա կախեցեալ զինէն. նաև յաճելում զարդիւնսն, և ոչ կարեմ թողուլ զնա առանց պաշտպանելոյ զնա՝ առ'ի հաճեցուցանել զիս, և զմեծագոյն սէրն իմ, զոր ունիմ առ նա: Խօսէր Տրն մեր ըստ կերպի մերոյ խօսակցութեան, ոմ թէ կախեցեալ կայր զսիրոյ:

Պատմի զսրբուհւոյ կուսէն Մեքթիլտայէ, թէ Տր ասաց ցնա. ես յոյժ հաճիմ, զի մարդիկ ապաւինիցին 'ի բարութիւն իմ, և համարձակիցին առ իս. զի որ ոք խոնարհաբար ապաւինի, և ըստ արժանւոյն յուսայ 'ի յիս, երկիցի պաշտպանեցեալ յինէն 'ի յայս կեանս, և 'ի հանդերձեալ կեանսն առաւել նմա շնորհս առաւել քան զայն, որում արժանաւորն: Որքան ոք առաւել յուսայ, և ապաւինի 'ի բարութիւն իմ, զայնքան առաւել բարիս առնուլ, և ընկալնու յինէն: Զի անկարելի է, թէ մարդն ոչ ընկալնուցու յինէն զայն, զոր սրբաբար հաւատաց, և յուսացաւ ընկալնուլ յինէն, որովհետև ես խոստացայ: Եւ յաղագս այսորիկ օգուտ է մարդոյ, զի յուսալով և ակնունելով յինէն իրաց մեծամեծաց, բարւոք ապաւինիցի 'ի յիս: Եւ նոյն մեքթիլտայն հարցեալ ցՏր ասաց, թէ որպիսի ինչ է նախապատուական վարձն, զոր ընդունելոց եմ 'ի քէն՝ վս հա

ճատա-

Հաստատեցյս իմոյ 'ի յանձառ բարութեն քո ։ Պատասխանեաց նմա Տր , և ասէ • ես ընկալայց զքեզ զկնի մահուան քոյ այնու կերպիւ , որով հայր ոք ընդունի զսիրական որդին իւր • և ոչ երբէք դատէ այնպիսի հայր , որ այնքան հաւատարմաբար հաղորդեալ լիցէ զինչս իւր միակի որդւոյ իւրոյ , ոպ ես հաղորդեցից քեզ զիս , և զամ բարիս իմ ։ Որ ոք հաստատապ և խոնարհ սրտով հաճոյացէ զայս 'ի բարութէ իմմէ , լիցի երանելի ։

## Գ Լ Ո Ւ Խ • ԺԱ ։

Յաղագս ոմանց փեղեաց և օրինակաց ԱԾաշունչ գրոց , որք օգնեսցեն մեզ առ'ի սպանել զայս ընփեղսին , և որդիսին համարձակութիս առ ԱԾ ։

ՅԱղագս առաջնոյն բարի վարկայ տեսանել զբարուոք սովորութեն , զոր ունէին նախահարքն այնք առաջինք ընձեռելով ԱՅ զամ պատահմունս եկեալս որով և լիցէ ձանապարհաւ , կամ միջոցիւ ։ Պատմէ ածաշունչն 'ի քառասներորդ երկրորդ գլուխն ծննդոց , թէ յորժամ չուեցին եղբարքն Յովսեփու յեգիպտոսէ հանդերձ ցորենովն , զոր գնեցին , պատահեաց յովսէփ վերակացուի տանն իւրոյ , զի 'ի բեռան քրձի իւրաքանչիւրոյ նց դիցէ զարծաթն , որ էր գին ցորենոյն այնու կերպիւ , որով նոքա բերին ընդ իւքեանց ։ Արդ՝ մինչդեռ նոքա գնային զձանապարհն իւրեանց , իջեւանեցան 'ի պանդոկի միում • և իբրև կամեցան տալ կերակուր գրաստուցն 'ի հասից զորս տանէին , առաջինն 'ի նոցանէ լուծեալ զքուրձն , ետես զծրար արծաթոյն իւրոյ • և զայն ծանոյց այլոց , որոց իւրաքանչիւրն լուծեալ զքուրձն ցորենոյ , գտին զարծաթն

իւ_

խորհեանց նմանաստ̄ղ: Եւ ասէ մեր գիրն, թէ
Զարմացան սիրտ նոցա, խռովեցան ընդ միմեանս,
և ասեն. Զինչ է այս, զոր արար ընդ մեզ Ա̄ծ:
Արժանի է մեծի նկատման այս, զի ոչ ա-
սացին, թէ այս է պատճառք իմն, որ մեզ
լարեցաւ, կամ գոյ զրպարտութիւն ինչ ասա
թագուցեալ: Այլև ոչ ասացին, թէ վե-
րակացու ամին Յովսեփայ անհոգութեամբ եթող
զարծաթան ՚ի քրձի խուրջանցուր ուրուք.
Նաև ոչ ասացին, թէ կամեցաւ առնել մեզ
զողորմութիւն, այլ ընձեռելով զայն Այ՝ ա-
սացին, զինչ է այս, զոր արար ընդ մեզ
Ա̄ծ: Խոստովանելով, թէ որովհետև նաև
տերև մի ծառոյ ոչ շարժի առանց կամացն
Այ, այն իրն ևս ոչ պատահեցաւ ն̄ց ա-
ռանց կամացն Այ: Իսկ և Յակոբ յոր-
ժամ գնաց յեգիպտոս, և ել յովսէփ որ-
դւովք իւրովք հանդերձ այց առնել նմա,
եհարց ցնա ծերունին, թէ զինչ են սոքա
քո. պատասխանի ետ յովսէփ, և ասէ ցնա,
Որդիք իմ են, զոր ետ ինձ Ա̄ծ աստ. Ծննդ.
48.9: Զայն պատասխանեաց յակոբ եղբօրն
իւրում եսաւայ, յորժամ ել ընդ առաջ
նր, և եհարց, թէ զինչ են մանկունքդ
այդոքիկ, որք ընդ քեզ են. ասաց նմա,
Մանկունք իմ են, զորս պարգևեաց ինձ Ա̄ծ:
Եւ կարկառելով նմա զընծայսն իւր, ասաց
ցնա. Ա̄ծ ողորմութիւն իմ, զոր մատուցի քեզ,
և զոր պարգևեաց ինձ Ա̄ծ փառօքն իմ, Ծննդ.
33.11: Եւ ևս յորժամ երթայր Դաւիթ ՚ի
կործանել զառանն նաբաղու, և աբիգեա կին
նր ել ընդառաջ նորա ընծայիւք առ ՚ի խա-
ղաղացուցանել զնա, ասաց դաւիթ ցնա,
Օրհնեալ Տր Ա̄ծ Իսրայէլի, որ առաքեաց զքեզ այ-
սօր ընդ առաջ իմ, օրհնեալ ինձ յարլեան: Ա.Թագ.
25.32: Իբ ոչ թէ դու ինքնին եկիր, այլ
Ա̄ծ առաքեաց զքեզ, որ̄ զի մի մեղիցեմ.
Այ եմ պարտական յաղագս շնորհիս այսո-

ընկ,

րին, և նա եղիցի օրհնեալ: Այս էր հաստատեալ բարբառն որոցն այնոցիկ. և այսպէս պարտի լինել և մերն:

Բայց գալով առաւել առ առաջադրութիւն մեր, զարմանալի է յաղագս այսորիկ պատմութիւն, որ ընթերցեալ լինի վասն որդոյն Յովսեփայ վերոյասացելոյ, որ վաճառեցաւ այլ զգերի սմանց վաճառականաց իսմայելացւոց ՚ի յեղբարց իւրոց շարժեցելոց ՚ի նախանձու, այլ զի մի լինիցէր հրամանատու և իշխող նց, ըստ որում յովսէփ տեսեալ էր զերազն: Բայց այնու միջոցաւ, որով նոքա կամէյան խափանել, զի մի լինիցէր իշխող նոցա, Այ կատարեաց զգիտաւորութն նախատեսութե իւրոյ. առնելով, զի այնու լինիցէր իշխող նց, և ամ երկրին եգիպտոսի: Եւ այսպէս առաց նոյն ինքն յովսէփ եղբարց իւրոց, յորժամ յայտնեաց զինքն նց, որք մնացին ահարեկք վս սքանչմաննն այնորիկ: Մէ ինճինմէք, և մէ խիտդէթ թութմայըն զէզ, զի ղուրտարմագըչիւն զիզի պուր• թաղը ՚ի ճըխարթըն առաջըմըզա զիզի Այ աստըմ զէզ, առ՚ի կէրօշիրէն զէօզ: Եւ ... ... ... առաջըզդըն զիզի պուր, այլ Այ: Ծննդ. 45. 5. Մի թէ գօրքմէք ընտէրինմանըզ ... ,... պուր հէօմայդ ըլինմէն ՚ի ըլըրաթէրան, և Այ խայրինէյա ... ինձ ՚ի ... . ... ... ..., զի կէրաքէրէզի ... Ծննդ. 50. 19: Արդ՝ ո՞ է նա, որ այսու օրինակաւ ոչ ապաւինիցի յԱծ: Ո՞ է նա, որ երկիցէ ՚ի մարդկային խորհրդոց, և ՚ի ձախորդութեց աշխարհիս. որովհետև տեսանեմք, զի պատրաստեցեալք են բարութք, և գան ՚ի ձեռանէն Այ: Զի զայն միջոցն, որով նոքա կամին զմեզ հալածել, և առնել մեզ զչար, Այ առնէ բարի մեզ, և նովաւ զարդարութանէ զմեզ: Այ խորհուրդք իմ հաստատեսցին, և զամ զոր կամիմ, արարից: Եսայ. 46. 10:

Սբ Ոսկեբերանն խորհի զայլ մանաւոր իր մի 'ի պատմութենէ Յովսեփայ յարմար ասացելոյն մերոյ, 'ի խօսիլն, թէ ոչ մատռուակն փարաւոնի հաստատեցեալ 'ի պաշտօնի իւրում մոռացաւ զյովսէփ զմեկնօղն երազոց իւրոց զամս երկուս, որ այնքան փափաքանօք խնդրեաց 'ի նմանէ յիշել զնա առաջի փարաւոնի արքային, և միջնորդել վն նր: Մի կարծեր (ասէ սբ Ոսկեբերանն) թէ պատահմամբ եղև մոռացումն այն, ոչ եղև պատահմամբ, այլ խորհրդով և խնամօքն ԱՅ, որ կամեցաւ սպասել դիպող ժամանակի, և պատշաճաւոր ժամու՝ առ'ի հանել զյովսէփ 'ի բանտէ մեծաւ պատուով, և փառօք: Քանզի եթէ մատռուակն յիշէցէր զնա վաղվաղակի, գուցէ հրամանաւ իւրով կարէր ազատել լոկոյն տանից տեսանելոյ յովսեփայ զփարաւոն, և խօսելոյ ընդ նմա. և զի կամէր ԱԾ, զի մի ելցէ այսու կերպիւ 'ի բանտէ, այլ մեծաւ պատուով, և իշխանութբ. վն որոյ թոյլ ետ, զի մոռասցի զնա զամս երկուս՝ մինչև հասնիցէր ժամանակ երազոյն փարաւոնի. և յայնժամ կամօք փարաւոնի բռնադատեցելոյ հարկաւորութբ, ելցէ մեծութբ և փառօք, ոչ և լոկ ել անտի առ'ի լինել իշխօղ ամ երկրին եգիպտոսի: Բարւոք գիտէ ԱԾ (ասէ սբ Ոսկեբերանն) ոչ ամենիմաստ արհեստագործ, թէ զորչափ ժամանակ պիտոյ է ոսկւոյն կալ 'ի մէջ հրոյ. և երբ իցէ ժամանակ հանելոյ զայն անտի արտաքս:

Ի յառաջին գիրս Թագաւորաց ունիմք զայլ պատմութիւն մի, յորում մեծապ փայլէ նախատեսչութիւն ԱՅ 'ի յիրս յոյժ մանաւորս, և մանունս, և է այս: Ասաց ԱԾ ցՍամուէլ մարգարէն, թէ Վաղիւ 'ի սոյն ժամու առաքեցից առ քեզ այր յերկրէն Բենիամենի. և օծցես զնա իշխան 'ի վր. ժողովրդեան իմոյ Իէլի:

1. Թագ. 9. 16։ և այն էր սաւուղ: Բայց
կերպն, որով առաքեաց Ած զսաւուղ առ
սամուէլ, եղև այսպէս: Կորեան էշք հօրն
սաւուղայ, և ասէ կիս ցսաւուղ ցորդի իւր,
երթայք և խնդրեցէք զէշսն: Եւ առեալ
սաւուղայ ընդ իւր զծառայ մի, գնացին 'ի
դաշտս, և 'ի բլուրս. բայց ոչ գտին զէշսն
իմն, և ոչ զշաւիղս իշոցն. վն որոյ սաւուղ
կամեցաւ դառնալ յետս, զի թուեցաւ ին-
քեան, թէ յոյժ յամեցին, և գուցէ հայրն
իւր վշտանայր վն յամելոյ նց: Սակայն ծա-
ռայն ասաց ցնա, թէ ոչ դարձցուք առանց
իշոց 'ի տունն. զի յայսմիկ տեղւոջ կայ այր
մի ԱՅ, (և այն էր սամուէլ) երթիցուք
առ նա, զի պատմեսցէ մեզ վն իշոցն: Այ-
սու պատճառաւ գնացեալ գտին զսամուէլ
մարգարէն. առ որ իբրև ժամանեցին, ա-
սաց Ած ցսամուէլ. Ահաւասիկ այրն, զորմէ
ասացի քեզ, սա իշխեսցէ ժողովրդեան իմում:
Ո՜վ խոր և գաղտնի դատաստանք ԱՅ:
Հայրն սաւուղայ առաքէր զնա խնդրել
զէշսն. բայց Ած առաքէր զնա առ սամուէլ,
զի օծցի թագաւոր: Ո՜ թէ որքան տարբե-
րի դիտաւորութն մարդկան 'ի դիտաւորու-
թէն ԱՅ: Որքան հեռի էր սաւուղ և հայրն
իւր 'ի խորհելոյ, թէ երթայ առ 'ի օծանիլ
թագաւոր: Ո՜ թէ որչափ հեռի ես և դու
բազում անգամ, և հայրն քո, նաև մեծա-
ւորն քո յայնմանէ, զոր Ած կամի առնել
քեզ: Յայնմանէ, զոր դու փոքր համարիս,
Ած արտահանէ զայն, զոր կամի: Ո՛չ կո-
րեան էշքն այնոքիկ առանց կամացն ԱՅ,
և ո՛չ եղև պատահմամբ, զի հայրն առա-
քեաց զսաւուղ վն նց. և ոչ իսկ եղև պա-
տահմամբ ոչ կարելն սաւուղայ դառնալ 'ի
տուն, և խրատն, զոր ծառայն ետ նմա եր-
թալ առ 'ի հարցանել զնոցանէ ցմարգարէն.
այլ Ամ ինչ եղև կարգեցեալ, և նկատե-
ցեալ

ցեալ յԱյ, որ էառ զմիջոցն զայն առ՚ի առաքել զՍաւուղ առ Սամուէլ, զի օծցէ զնա թագաւոր, ոպ ասացեալ էր նմա ։ Խորհեցան հայրն քո առաքել զքեզ ՚ի Սիկիլիա, կամ ՚ի Սալամանքա քաղաքն, զի ուսանիցեիր անդ զդպրութիւն, և եղանիցեիր մեծ իմաստուն, և ապա ժամանիցեիր պաշտօնի միոյ, որով կարիցեիր ապրիլ պատուաւորապէս . բայց ոչ եղև այսպ, այլ Ած առաքեաց ըզքեզ անդր՝ առ ՚ի ընդունիլ զքեզ ՚ի տուն իւր, և առնել զքեզ կրօնաւոր ։ Խորհէր սրն Օգոստինոս, յորժամ երթայր ՚ի Հռոմայ ՚ի Միլան, և ունէր զխոսումն ընթեռնլոյ և ուսանելոյ անդ զճարտասանութիւն . այսպ խորհէր նա սխալքս վերակացու քաղաքին, որ առաքէր զնա . բայց ոչ էր այսպէս, այլ Ած առաքէր զնա առ սրն Ամբրոսիոս, ոպ զի դարձուցանիցէր զնա . (և ոպ զի լուսաւորիցէր զնա հաւատով ։)

Արդ՝ նկատեսցուք այժմ զորպէս կոչմունս, և զմիջոցս այնքան մանունս, և մասնաւորս. որք ըստ կարծեաց մերոց յոյժ հեռի թուէին, որովք Ած կոչեաց զայս ոք, և զայն ոք ՚ի կրօն, որ իրաւի պատճառէ զմեծ զարմացումն ։ Զի եթէ ոչ լինէր եղեալ պատահումն իրի ուրուք փոքրագունի և ոչինչ, դու ոչ եղանէիր կրօնաւոր . բայց սակայն այն էր եղև թելադրութիւն, և հնարագըտութիւն այ քարշելոյ զքեզ ՚ի կրօն ։ Եւ ծանիցեն զայս անցողաբար, որոց սովոր է դալ երբեմն փորձութիւն, թէ կոչումն իւրեանց չիցէ յայ՝ յաղագս լինելոյ այնորիկ ՚ի ձեռն միջոցաց փոքրագունից ։ Այս է պատրանք դիւին թշնամւոյ քո, որ նախանձի ընդ կացութիւն, յորում գտանիս ։ Քանզի սովորութիւն է այ ՚ի գործածել զմիջոցս զայսոսիկ վն վախճանին, զոր նա կամի ՚ի մեծագոյն փառս իւր, և ՚ի մեծագոյն օգուտն և բարին քո ։

Ո՛չ հաճէր ԱԾ զսաւուղ վն իւրոց, այլ զի թագաւորեսցէ։ Մի թէ զեզանց ինչ փոյթ է այ։ 1. Կորն. 9. 9։ Այլ յաղ կամի ԱԾ, զի այսպիսի միջոցիւք թագաւորեսցես և դու ոպ զսաւուղ ծառայելով նմա։ զի * ծառայելն այ է թագաւորել։

Իսկ ապա յորժամ գնաց մարգարէն Սամուէլ 'ի կողմանէ այ յանդիմանել զսաւուղ վն անհնազանդութեն այնորիկ՝ զոր գործեաց ոչ կործանելով զամաղէկ, որպ հրաման էր նմա ԱԾ. զկնի յանդիմանելոյն զնա՝ դարձոյց զերեսս իւր 'ի գնալ, և բուռն եհար սաւուղ զատանոյ կրկնոցի նր, զի մի երթիցէ, այլ օգնեսցէ նմա առ ԱԾ, առէ սկզբնագիրն, թէ պատառեալ կրկնոցին սամուէլի, մնաց կտորն 'ի ձեռին սաւուղայ։ Արդ՝ ո՛ ոչ խորհեսցի, թէ պատառելն հանդերձի մարգարէին, և մնալն կտորին նր 'ի ձեռին սաւուղայ, եղև պատահմամբ. որովհետև սաւուղ քարշեաց զայն, և դուցէ թէ հին լինէր զգեստն այն. բայց սակայն այն եղև մասնաւոր նախախնամութբ, և տրամադրութբ այ, առ'ի ցուցանել, թէ սաւուղ բաժանեցեալ, և զրկեցեալ էր 'ի թագաւորութէ վն մեղաց իւրոց։ Ուստի և սամուէլ ասեաց զայն, ասաց ցսաւուղ։ Պատառեաց Տր զթագաւորութիւն 'ի յԻսրայէլէ այսօր, և տացէ զդա ընկերի քում լաւագունի քան զքեզ։ 1. Թագ. 15. 28։

'Ի նոյն առաջին գիրս թագաւորաց ասի, թէ սաւուղ և արք իւր պատեցան զդաւթիւ և զարամբք նր 'ի կերպ պսակի՝ ունել զնա, մինչ զի դաւիթ չունէր զյոյս ինչ զերծանելոյ։ Եւ մինչ էր դաւիթ յայսմիկ անձկութե, եհաս առ սաւուղ սուրհանդակ մի վազվազելով, և ազդեաց նմա, թէ փղշտացիքն մտին յերկիր նր, և աւար հարկանելով աւերէին զամ։ Ուստի հարկ եղև առ-

նու-

ճաւզեայ դտանել 'ի դաւիթէ, և երթալ հա-
տանիլ 'ի Թիկունս, ուր տանէր հարկաւոր
էր, և այսպէս զերծաւ դաւիթ ։ Այս ոչ
եղև պատահմամբ, զի փախստացիք անհրի-
ցելին զերկիրն, այլ կարգաւորմամբն այ ա-
'ի ազատել այնու կերպիւ զդաւիթ ։ Յայ-
լում նուագի ևս նախարարքն փղշտացւոց
արտաքսեցին զդաւիթ 'ի բանակէ զօրաց իւ-
րեանց՝ առնելով զարքայն Անքուս դարձու-
ցանել զդաւիթ 'ի տեղի իւր ․ քանզի Ան-
քուս տանէր զնա ընդ ինքեան յոյժ կամա-
ւորաց, և յոյժ հաւատայր նմա ․ Բայց
յաչս նախարարաց ( ասէ ) ոչ հաճոյ դու ես բարւոք ։
1․ Թագ․ 29․ 6։ Թուի թէ պատահմամբ եղև
խորհուրդն նախարարաց, բայց ոչ եղև պա-
տահմամբ, և ոչ վն այնր վախճանին, զոր
նոքա խորհէին, այլ եղև յառաջ նախատես
չութեն այ ։ Քանզի իբրև դարձաւ դաւիթ
եգիտ զսիկղակ այրեցեալ յամաղեկացւոց ․
և գերեվարեալ 'ի նոցանէ զամ կանայս և ըզ
մանկունս իւր, և զայլոց 'ի փոքուէ մինչև
ցմեծամեծս ․ և զհետ պնդեալ նց, կոտո-
րեաց զնս, և զերծոյց զամ աւարն, և զգե-
րին՝ առանց պակասելոյ միոյ 'ի նոցանէ ․ զոր
ոչ կարէր առնել, եթէ նախարարքն փղշտա
ցւոց չհցէին արտաքսեալ զնա 'ի բանակէ
իւրեանց ։ Ած առ այս վախճան կարգաւո-
րեաց զխորհուրդն նախարարաց, թէպէտ
նոքա կարգաւորէին առ այլ վախճան ։

Այլև 'ի պատմութեն եսթերայ յոյժ փայ-
լէ յառաջ, և մասնաւոր նախախնամութին
այ 'ի յիրս կարի փոքունս, և մասնաւորս ․
Որքան գաղտնիք էին միջոցքն այնք, զորս
ած էառ 'ի ձեռն առ 'ի ազատել զժողովուրդն
եբրայեցւոց 'ի յանողորմ վճռոյ Արտաշէսի
արքային ․ և որպիսի միջոցիւ ընտրեաց զես
թեր թագուհի 'ի բաց հանելով զասթինէ
թագուհին ․ և կամեցաւ, զի եսթեր լիցէր

ի ժողովրդենէն հրէից, որպէս զի յետոյ միջնորդ լիցէր վն նց : Թուէր թէ պատահմամբ եղև իմանալն Մուրթքէի զնենգութիւն, զոր այլք խորհէին զարտաշխտէ արքային, զոր և յայտնեաց Մուրթքէ արքային : Թուէր թէ պատահմամբ եղև, զի թագաւորն ոչ կարաց ննջել, և եկաց արթուն զգիշերն զայն. և խնդրեաց զպատմութի ժամանակին իւրոյ առ 'ի անցուցանել այնու զգիշերն, և պատահեցաւ ընթեռնուլ զայն, զոր արարեալ էր Մուրթքէ : Բայց ոչինչ յիրացս յայսցանէ եղև պատահմամբ, այլ բարձրագոյն խորհրդոյն այ, և յատուկ նախախնամութբ նր. որ կամեցաւ այնու միջոցիւ ազատել զժողովուրդն իւր : Որպէս և Մուրթքէ ասաց զայս ցեսթեր, յորժամ նա ոչ իշխէր մտանել առ թագաւորն, և խօսիլ ընդ նմա, և անմեղադիր լինէր, թէ չէմ կոչեցեալ 'ի թագաւորէն : Ուստի ասաց ցնա Մուրթքէ : Ո՞ գիտէ, եթէ ոչ վասն այսորիկ եկիր 'ի թագաւորութի, զի յայսպիսի ժամանակի պատրաստեսցիս : Եսթեր. 4. 14:

Ածաշունչն, և եկեղեցական պատմութիւնք լի են այսպիսի օրինակօք, որպէս զի ուսանիցիմք ընձեռել այ զամ պատահմունս, և ընդունիլ որպէս եկեալս 'ի ձեռաց նր 'ի մեծագոյն օգուտ, և 'ի բարին մեր : 'Ի գիրն վերածանուցման սրբոյն կղեմէսի պատմի իր մի նշանաւոր վն այսր առաջադրութես : Սիմոն մոգն էր յոյժ կշտամբեցեալ 'ի սրբոյն Պետրոսէ. և սբն Բառնաբաս դարձոյց 'ի հռոմ զսբն Կղէմէս, որ գնացեալ առ սբն Պետրոս, պատմեաց նմա զդարձումն իւր 'ի սբ հաւատն, և խնդրեաց 'ի նմանէ կրթել զնա 'ի բանս հաւատոյ : Իսկ սբն Պետրոս ասաց ցնա. 'ի դիպօղ ժամանակի հասեր այսր, զի 'ի վաղիւն լինելոց է 'ի մէջ իմ, և սիմոնի մոգին վիճաբանութի հրապարակաւ, անդ

տես.

տեսցես, և իմասցիս զայն, զոր խնդրես ։
Յայնժամ միջոցի մտին երկու աշակերտք առ
տէրն Պետրոս, և ասացին ցնա, թէ սիմոն
մոգն առաքեաց առ քեզ, պատահեցաւ
ինձ գործողութիւն իմն, վասն որոյ յապաղելոց
է միաբանութիւնն այլ ևս երիս աւուրս,
և ընդ այս հաճեցաւ տէրն Պետրոս ։ Արդ՝
մինչև գնացին նոքա անտի, սկսաւ տէրն Կղէ
մէս տրտմիլ յոյժ. և տեսեալ զնա տէրն Պետ
րոս տրտում, ասէ ցնա, զի՞ է քեզ որդեակ
իմ, զի տեսանեմ զքեզ տրտում ։ Եւ տէրն
Կղէմէս պատասխանեալ ասաց ցնա. Գի-
տես հայր, զի մեծապէս տրտմեցայ վասն յամե-
լոյ միաբանութեան, որում ցանկայի, զի լի-
նիցէր առ վաղիւն ։ Արդ՝ ասա նկատելի է
բարւոք, զի 'ի յիրի միում, որ ոչ է յոյժ
մեծ վարկանելի, կամեցաւ տէրն Պետրոս առ-
նել զմեծ խօսակցութիւն մի ասելով ցԿղէմէս ։
Տե՛ս որդեակ իմ, զի յորժամ ոչ լինի կամքն
հեթանոսաց 'ի յայնս իրս, զորս կամին, սկսա
նին խռովիլ մեծապէս. բայց մեք որք գի-
տեմք, թէ ԱԾ առաջնորդէ, և կառավարէ
զամ, պարտիմք ունիլ զմեծ մխիթարութիւն,
և զխաղաղութիւն ։ Ծանի՛ր որդեակ, զի պա
տահեցաւ այս վասն մեծագունի բարւոյ քոյ.
քանզի եթէ միաբանութիւն եղեալ իցէր
այժմ, դու ոչ կարէիր իմանալ այնքան բա-
րեաց, բայց յայնժամ իմանայցես բարեաց,
զի յայսմիկ միջոցի ես ուսուցից քեզ. և այս
պէս առաւել բարւոք ախորժեսցիս, և հան
ցես անտի զմեծագոյն պտուղ ։

Կամիմ եզրափակել զայս օրինակաւ միով,
զոր մեք ունիմք 'ի վարս երանելւոյ հօրն մե-
րոյ Իգնատիոսի, յորում խիկ փայլի մեծապ
տոյն իրս, և է վասն գնալոյ հօրն Փրանչիսկո-
սի քսաւերեան 'ի Հնդստան ։ Արդարև էն
արժանի մտածութեան միջոցքն, որոց վասն
դէպ եղև այսմիկ սրբոյ առն երթալ 'ի Հնդս-
տան ։

տան : Քանզի հայրն մեր Իգնատիոս բացորոշեաց վն այսր առաքելութեան զհայրն սիմոն ռոտրիկվէց , և զհայրն նիկողայոս բովադիլլեայ : Հայրն սիմոն կայր հիւանդ չորրորդական ջերմամբ , բայց սակայն նաւեաց վաղվաղակի 'ի փոքրթուկալ : Իսկ առ հայրն բովադիլլեայ գրեցաւ գալ 'ի կոլոմբիոյ 'ի հռոմ , և եկն , բայց կարի ակարացեալ յաղքատուէ , և 'ի վշտաց , նաև յաշխատանաց ճանապարհին . և էր այնքան հիւանդագին , և չարաչար հարեալ ցաւով միոյ քարձին , մինչ զի յորժամ եհաս 'ի հռոմ , և գոլով 'ի նոյն ժամանակի դեսպան պարոն Պետրոս մասկարեգնաս՝ որ էր 'ի պատրաստի առ'ի դառնալ 'ի փորթուկալ , հարկ եղև , զի փոխանակ հօրն բովադիլլեայ յաջորդեսցէ հայրն Ֆրանչիսկոս քսաւերեան երջանիկ վիճակաւ . քանզի դեսպանն ոչ կամէր սպասել առողջութեան բովադիլլեայ , և ոչ իսկ կամէր չուել առանց այլում հօր , որ դնալոց էր 'ի հնդստան : Վասն որոյ հայրն Ֆրանչիսկոս չուեաց վաղվաղակի ընդ դեսպանին 'ի փորթուկալ : Արդ՝ այս զի ոչ անուանեցաւ հայրն Ֆրանչիսկոս քսաւերեան , այլ հայրն բովադիլլեայ , և այն զի այնքան վաղվաղակի եղև չուումն դեսպանին , և վն այնորիկ յաջորդեաց հայրն Ֆրան չիսկոս , թուի թէ պատահմամբ եղև , բայց ոչ եղև պատահմամբ , այլ բարձրագոյն խորհրդովն Այ , որ արդէն սահմանեալ էր առնել զնա առաքեալ այնր երկրին : Եւ դարձեալ , իբրև հասին 'ի փորթուկալ , տեսեալ անդ զմեծ պտուղն , զոր առնէին նոքա , կամեցաւ նա արգելուլ զնա անդ , և վերջապէս վճռեցաւ միում 'ի նոցանէ մնալ անդ , և միւսոյն երթալ 'ի հնդստան : Ահաւասիկ աստ ևս նոր պատահումն երևի . բայց առ Այ ոչ գոյ պատահումն : Ապա դէպ եղև

հօրն

հօրն Ֆրանչիսկոսի քամերեան անցանել 'ի հնդաստան. քանզի այս էր կամքն ԱՅ. և այսմ՟ սահմանեալ էր մեծ վայելչութ՟ն նր՟. որովհետև այս էր օգտակար վս՟ հոգւոց, և վասն մեծագոյն փառացն ԱՅ։ Խորհեսցին մարդիկ զայն, զոր կամին, և առաջնորդեսցեն այլոց ընդ այն ճանապարհ, ընդ որ հաճին. իսկ ԱԾ տացէ զայն որ՟ զմիջոց առ 'ի կատարել զխորհուրդ իւր, և առնել զայն, որ առաւել վայելէ քեզ, և սմա, և նմա, և մեծի փառաց իւրոց։

Այսոքիւք և այլովք օրինակօք ա՟ծաշունչ գրոց, նաև այնու, զոր հանապազ տեսանեմք, և տեղեկանամք թէ 'ի մեզ, և թէ 'ի յայլս, պարտիմք ջանալ 'ի ձեռն աղօթից և խոկմանց տալ 'ի սրտի մերում զյոյս զայս։ Եւ այնչափ պարտիմք զկայ առնուլ յայսմիկ կրթութե, մինչև զգայցեմք 'ի սրտի մերում զյոյս իմն կարի ընտելական և որդիական առ ԱԾ։ Լեր հաստատի, թէ որքան մեծաւ յուսով արկցես զքեզ 'ի գիրկս ԱՅ, այնքան առաւել ապահով եղիցիս. Եւ հակադարձաբար մինչև ոչ ժամանեսցես առ որդիական յոյս այս, ոչ երբէք գտցես զխաղաղութիւն և զհանդարտութիւն սրտի. զի առանց սորա ամ՟ ինչ աղմկեսցէ զքեզ, և նուաղեցուսցէ։ Արդ՝ մի ևս յապաղեսցուք դնել, և ընկենուլ զմեզ բոլորովին 'ի ձեռս ԱՅ, և ապաւինիլ 'ի նա, որ՟ խրատէ զմեզ ս՟բ առաքեալն Պետրոս, ասելով. Զա՟ն հոգս ձեր ընկեցէ՛ք 'ի նա, զի նա է, որ հոգայ վասն ձեր. 1. Պետր. 5. 7։ Եւ մարգարէն ասէ. Սաղմ. 54. 23։ Ընկեա՛ 'ի Տր՟ զհոգս քո, և նա կերակրեսցէ զքեզ։ Դու Տր՟ այնքան սիրեցեր զիս, մինչև ետուր զքեզ վս՟ իմ բոլորովին 'ի յանօրէն ձեռս դահճաց. որ՟ զի զոր կամին, արասցեն քեզ։ Մատնեաց զՅս՟ կամաց նոցա։ Ղուկ. 23. 25։ Արդ զինչ մեծ է, զի և ես

եդից և տաց զնա բոլորովին 'ի ձեռս, ոչ ան ողորմս, այլ 'ի գթածագոյն ձեռս քոյս. առ զի զոր հաճիս, արասցես ինձ. քանզի համառատեալ գիտեմ, թէ եղիցի վասն իմ բարեգոյն, և այն, որ առաւել վայելուչ է ինձ: Ընկալցուք զայն պայմանն, և զդաշն, զոր արար Քս Տրն մեր ԷԲ որբուհւոյն Կատարինէի սէնացւոյն: Տրն մեր յոյժ գգուէր, և նպաստաւորէր զորբուհին զայս, և 'ի մէջ այլոց` արար նմա և զմի նպաստս զայս յոյժ մասնաւոր, զի երևելով յաճախ միում նմա ասաց. * Դուստր իմ, դու խորհեաց զինէն, և ես խորհեցայց միշտ զքէն ‖ : Ո՜ թէ որպիսի բարի դաշնակցութի է այս, և որպիսի փոփոխումն է այս : Ո՜ թէ որքան մեծ շահ լինէր այս վասն հոգւոց մերոց: Արդ` զայս դաշինս առնէ Տր ընդ իւրաքանչիւր ումեք: Մոռասցիր դու զքեզ, և թող 'ի նա զհոգս քո. զի որքան առաւել մոռանաս դու զքեզ, և յիշես զԱծ ապաւինելով 'ի նա, այնքան առաւել հոգայ նա զքեզ: Արդ` ո՞ է նա, որ ոչ ընդունիցի զդաշն մի այսքան սիրալիրական, և շահաւէտ, որ է այն, զոր հարսն արար ընդ փեսային իւրում, ով ինքն ասէ, Ես եղբօրորդւոյ իմոյ, և նա իմ դարձ նր: Երգ. 7. 10:

ԳԼՈՒԽ

## ԳԼՈՒԽ. ԺԲ:

Թէ յոյժ օգուտ է, և մեծ կատարելութիւն առաջջել ըղձական ընդ այսմիկ կրթութեան համաձայնութեան ընդ կամացն այ. և թէ որպէս խնամելոյ էմք առ իւր մասնաւորս, մինչև ժամանեսցուք առ երրորդ աստիճանն համաձայնութեան:

Յոհաննէս Թաւսպրոքեան այր համբաւեալ, և յոյժ հոգևոր՝ պատմէ զորբուհւոյ կուսէ միոյ, թէ տալով նա զհամարս աղօթից իւրոց խոստովանահօրն իւրում, և հօրն հոգևորի, (որ էր մեծ ծառայ Այ, և յոյժ աղօթասէր) և կամելով կրթիլ 'ի նմանէ, ասաց ցնա: Աղօթք իմ հայր որ է շուրջ զվարուք, և զչարչարանօք Քի փրկչին մերոյ. և այն, զոր արտահանեմ անտի, է ճանաչել զիս, և զմոլորութիւն, և զկիրս իմ, այլև ցաւակցութիւն վշտացն Քի: Ասէ որ ասաց խոստովանահայրն. յոյժ բարի է այդ, սակայն կարէ ոք առանց մեծի առաքինութեան արտահանել զցաւակցութն չարչարանացն Քի, ով նա, որ սիրէ զբարեկամն իւր միայն բնական սիրով, կարէ արտահանել զցաւակցութն 'ի վշտաց նր: Եհարց ցնա կրկին, եթէ ոք լացցէ զօրհանապազ զմեղս իւր, իցէ՞ այս ճշմարիտ ջերմեռանդութն: Ասէ խոստովանահայրն, նմանապէս բարի է այդ, բայց չէ այնքան գերազանցագոյն իմն, քանզի իրն վատթար բնականաբար պատճառէ զզղջումն, և զտհաճութն: Դարձեալ եհարց ցնա կրկին, եթէ իցէ՞ ճշմարիտ ջերմեռանդութն խոկալն զտանջանս դժոխոց, և զփառս արքայութեան, զոր ունին երանեցեալքն: Ասէ խոստովանահայրն, նաև այդ չէ իր իմն յոյժ բարձր, և գերազանց, զի նոյն ինքն բնութիւն գարշի,

և հրաժարել յայնմանէ, որ է զզուելի. և յաւելցուցէք, և սիրէ, և խնդրէ զայն, որ է ախորժելի և փառաւոր: Ասուի եթէ նկարեցի քաղաք մի լի ամ՟ բերկրալի, և ախորժելի իրօք, ամ՟ ոք ցանկայ նմա: Զայս քննեալ սրբուհի կոյսն, գնաց յոյժ անմխիթար, և վշտագնեալ, վ͞ն ոչ գիտելոյն, թէ որում իրի պարտէր առաւելել զաղօթս իւր, որ լցէր առաւել հաճոյ Ա͞Յ: Եւ զկնի սակաւուց երևեցաւ նմա մանուկ մի կարի գեղեցիկ, որում պատմեաց նա զվիշտն իւր անտանելի, զի թուէր ինքեան, թէ ոչ ոք կարէր մխիթարել զինքն: Առ որ պատասխանեաց մանուկն, և ասէ, մի տար այդպ͞դ, զի ես կարեմ, և կամիմ մխիթարել զքեզ: Եւ ապա ասաց ցնա. Երթ առ հոգևոր հայրն քո, և ասա ցնա, թէ ճշմարիտ ջերմեռանդութիւն կայանայ 'ի յուրանալն զանձն, և 'ի յարհամարհելն զինքն. նաև 'ի տնագրելն զինքն ամբողջապէս 'ի ձեռս Ա͞Յ, թէ 'ի յաջողութիւնս, և թէ 'ի ձախորդութիւնս, և միաւորել հաստատապ͞տ ընդ Ա͞Յ սիրով, և համակերպելով յամ՟ իւս զկամս իւր ընդ կամացն Ա͞Յ: Գնացեալ կոյսն յոյժ ուրախ առ հոգևոր հայրն իւր, ասաց նմա զայս ամ՟. և նա պատասխանի տուեալ ասէ ցնա, իրաւի յայսմիկ կայանայ ամ՟. և այսմիկ է առաւելլի աղօթքն, զի յայսմիկ կայանայ ճշմարիտ սէրն այ, և հետեւաբար օգուտն, և կատարելութիւն մեր:

Ասի նաև զայլմէ ումեմնէ սրբոյ կուսէ, թէ ուսաւ յԱ͞Յ կալ և մնալ երկարապ͞տ 'ի բանն յայն տրտմականն աղօթից: Եւ [illegible], և [illegible]: Եւ զսրբուհւոյ կուսէն ճշմարտութէ պատմի, թէ ներշնչմամբն Ա͞Յ ասաց 'ի միում նուագի երեք հարիւր վաթսուն և հինգ անգամ զայն բանն ԺԲ՟ի: [illegible]

դաւ : Զի ծանեաւ, թէ այն էր յոյժ հաճոյ ԱՅ : Արդ՝ և մեք հետևեսցուք օրինակացս այսոցիկ, և ամին առաւելեսցուք զաղօթս մեր, և յարատևեսցուք երկրպագութեն յայսմիկ

կրթութեն :

Ոչ զի ըստ արժանեայն, և մեծապատուելն պաղով կարասցուք առնել մեք զայս, հարկ է 'ի միտ առնուլ, և ընթադրել զերկուս իրս : Նախկինն է, թէ հարկաւոր է կրթութեւս այս մանաւանդ վն ժամանակի ձախողդութե, և դժուարութեց, որք պատահին, և հակառակին մարմնաւորութե մերում, որովհետև առաւել հարկաւոր է առաքինութեան 'ի յաղթս այսպիսիս, զի յայնժամ առաւել բարութ ցուցանի սէրն, զոր իւրաքանչիւրոք ունի առ ԱԾ : Քանզի ոչ 'ի ժամանակի խաղաղութե թագաւորն ցուցանէ զբարեկամութի իւր առ զինուորսն 'ի վարձատրելն, և 'ի առնելն նշ զշնորհս, և նոքա 'ի ժամանակի պատերազմի 'ի մարտնչելն, և 'ի մեռանելն վն նր ցուցանեն, թէ որքան սիրեն, և համարին զնա · այսպ և 'ի ժամանակի մխիթարութե, և շնորհաց՝ երկնաւոր թագաւորն ծանուցանէ մեզ, թէ որքան սիրէ զմեզ · իսկ մեք 'ի ժամանակի նեղութե մանաւանդ, քան թէ 'ի ժամանակի յաջողութե և մխիթարութե ցուցանեմք նմա, թէ որքան սիրեմք զնա : Յոյժ բարւոք ասէ հայր վարդապետն Աւիլա, թէ գոհանալն զԱյ 'ի ժամանակի մխիթարութե է գործ ամենեցուն, բայց գոհանալ զնմանէ 'ի ժամանակի նեղութե, և ձախորդութե, է յատուկ բարեաց, և կատարելոց : Ուստի այս է երաժշտութի մի յոյժ քաղցր և համեղ յականջս ԱՅ : Առաւել արժէ (ասէ նա) ասելն 'ի ձախորդութե միանգամ, փառք քեզ ԱԾ, կամ օրհնեալ է ԱԾ · քան ասել զայն հազար անգամ 'ի յաջողութե : Վասն

որոյ

որոյ Աստուածն նմանեցուցանէ զարդարն կարկեհանի առելով․ Աչնիւք նորէնեհանի 'ի վերջ ոսկւոյն: Սիրաք. 32. 7: զի պատուական քարս այս առաւել փայլէ, և ճառագայթէ 'ի գիշերի, քան թէ 'ի տուընջեան: Այսպէս արդարն, և ճշմարիտ ծառայն Այ առաւել փայլէ, և լուսաւորէ, և ցուցանէ զինքն 'ի վիշտս, և 'ի նեղութիս, քան թէ 'ի յաջողութիս: Այս է պատճառն, զի յոյժ գովէ Աստուածն զմին Տոբիթ. քանզի յորժամ թոյլ ետ Տր̃, զի զկնի բազմաց վշտաց կորուսանիցէր և զտեսութի աչաց, ոչ վշտացաւ վն այսորիկ ընդդէմ Այ, և ոչ կորոյս զհամբերութիւն, և զհնազանդութիւն, այլ պահեցաւ անշարժ, և ամբողջ գոհանալով զԱյ զամ աւուրս կենաց իւրոց հանդիստաբար վն կուրութե, և վասն տեսութե իւրոյ, որպ արար նաև երանելին Յոբ 'ի նեղութե իւրում: Ասէ Տրն Օգոստինոս, թէ այսմիկ պարտիմք ջանալ հետևիլ. * Զի 'ի համայնս լիցես նոյն, թէ 'ի յաջողութե, և թէ 'ի ձախորդութե, որպ և ձեռն նոյն է՝ մինչ տարածէ զբուռն, և մինչ համաքէ ըզբուռն ‖: Այսպիսի պարտի գոլ ծառայն Այ, զի ըստ ներքին կողմանն հոգւոյ իւրոյ լիցէ մի և նոյն, թէև արտաքուստ երևեսցի անձկացեալ և ցաւագնեալ: Պատմի զսոկրատէս փիլիսոփայէ, թէ 'ի յամ դիպուածս, որք պատահէին նմա, կայր միշտ 'ի մի, և 'ի նոյն կացութե, թէև լիցէին յոյժ մեծ ձախորդութիւնք և նեղութիւնք իւր: * Ո՛չ ուրախ, և ոչ տրտում եւես ոք զսոկրատէս: Եղև հանդիստ 'ի մէջ այնքան անհանդէտ պատահմանց մինչև 'ի կատարած կենացն ‖: Ուրեմն ոչ է մեծ ինն, զի և մեք քրիստոնեայքս և կրօնաւորքս ջանասցուք ժամանել առ այն, առ որ ժամանեաց հեթանոս մի:

Երկրորդ իրն, զոր պարտիմք նկատել, է այս.

այս, թէ ոչ է բաւական ունել ընդհանրա-
պէս, կամ 'ի հասարակի զայս համակերպու-
թիւն ընդ կամացն ԱՅ, զի այս այսպ̃ ընդ-
հանրաբար է դիւրին ։ Ո՞վ է նա, որ ոչ ա-
սիցէ, թէ կամիմ, զի լինիցի կամքն ԱՅ 'ի
յիմ իրս ։ Բարիք և չարք ամենեքեան ա-
սեն զօրհանապազ զայս 'ի տ̃րունական ա-
ղօթսն ․ Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի ։
Աւելի քան զայս պիտոյ է և հարկաւոր ման
րամասնել զայն իջանելով 'ի մասնաւոր իրս
յայնոսիկ, որք թուին թէ կարեն հասու-
ցանել մեզ զցաւ իմն, եթէ պատահիցին ։
Եւ ոչ պարտիմք դադարել, մինչև յաղթես-
ցուք ամենից դժուարութեանց այսոցիկ, և
դիւրեսցուք զայնս ․ և վերջապ̃ մինչև բարձ-
ցին իրքն այնոքիկ, որք միջադրին, և խա-
փանեն զհամակերպելն մեր յիմ իրս զմեզ
ընդ կամացն ԱՅ, և զմիաբանելն մեր ընդ
նմա ։ Եւ պարտիմք ընդդիմանալ ամենից
իրաց, որք կարեն պատահել մեզ ։

Նաև ոչ այսու պարտիմք շատանալ, այլ
ջանալոց եմք առաւել յառաջադիմել, և ոչ
բնաւ դադարել, մինչև գտցուք զներքին ա-
խորժութիւն, և զգնծալի ուրախութիւն 'ի կա-
տարել կամացն ԱՅ 'ի մեզ, թէև իցէ լի
վշտօք, և ցաւօք, և արհամարհանօք, որ է
երրորդ աստիճանն համակերպութեան ․ քան-
զի և յայսմիկ գտանին զանազան աստիճանք
բարձրագոյնք, և ցածունք, որք կարեն վե-
րածիլ առ երիս գլխաւոր աստիճանս, ըստ
այնմ կերպի, զոր առնեն մ̃րդքն զառաքինու-
թիւն համակերպութեան ։ Նախկինն է, յորժամ
մարդն թէպէտ ոչ ցանկայ, և ոչ սիրէ զիրս
վշտալիս, որք պատահին նմա, այլ մանաւանդ
փախչի 'ի նոցանէ, սակայն կամի տանիլ այնց
մանաւանդ, քան թէ մեղանչել փախչե-
լովն ։ Այս աստիճանս է ցածագոյն, և հրա-
մայեցեալ ։ Ուստի թէպէտ մարդն զգայ
զցաւ,

զցաւս, և զտրտմութիւն 'ի ձեռն վտանգաց, որք նմա պատահին. և թէպէտ կոծի հիւանդ, հեծէ, և հառաչէ վն̃ սաստկութեան ցաւոյն. և թէպէտ լայ վն̃ մահու ազգականաց, սակայն կարէ այսու ամ՛ն ունել զայս համբերութիւն ընդ կամացն Այ: Երկրորդ աստիճանն է, յորժամ մարդն թէև ոչ ցանկայ վշտաց, որք նմա պատահին, և ոչ ընտրէ զայնս, սակայն յորժամ գան, ընդունի և տանի զայնս կամաւորաբար՝ վն̃ լինելոյն այնց կամքն, և բարեհաճութիւնն Այ. ուստի երկրորդ աստիճանս այս յաւելու 'ի վր̃ առաջնոյն զկերպարկումն բարի կամաց, և սիրոյ առ իրս վշտալիս վասն սիրոյն Այ. և զայնս տանելոյ ոչ միայն վն̃ այսորիկ, զի պարտաւորի հրամանաւ, այլև վն̃ այսորիկ, զի առաւել հաճոյ է այն Այ: Առաջին աստիճանն տանի համբերութբ̃, և երկրորդս այս առաւելէ զտանիլն յօժարապէս, և դիւրաբար: Երրորդ աստիճանն է, յորժամ ծառայն Այ վն̃ մեծի սիրոյն, զոր ունի առ Տր̃ն, ոչ միայն տանի, և ընդունի բարի կամօք զնեղութիւս, և զիրս վշտալիս, զորս նմա առաքէ, այլև ցանկայ նց̃, և ուրախանայ նոքօք վասն լինելոյ այնց կամքն Այ, որպ̃ ասէ Տր̃ն Ղուկաս. Գործ. 5. 41. զառաքելոց: Գնային խնդալով յերեսաց ատենին, զի վն̃ անուան նր̃ա արժանի եղեն անարգելոյ: Եւ որ զառաքեալն Պօղոս ասէ, 2. Կորն. 7. 4. Լի եմ մխիթարութեամբ, առաւելեալ եմ ուրախութեամբ յամ̃ նեղութիւնս իմ: Եւ զայս գրելով առ եբրայեցիսն, գովէ զնս̃ ասելով. 10. 34: Եւ զյափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալայք, ծանուցեալ գիտէիք եթէ լաւագոյն ևս պատրաստական ունիք անձանց յերկինս, որ կայ և մնայ: Արդ՝ պարտիմք ջանալ առ այս ժամանել շնորհօք Տն̃, զի խնդութբ̃ և ուրախութբ̃ տարցուք զամ̃ վշտս, և զձախորդութիւնս, որք գան մեզ.

որ

ո՛պ ասէ Տր առաքեալն Յակոբոս, 1. 2. Ա՛մ
ուրախութե՛ արժանի համարիջիք եղբարք, յորժամ
'ի պէսպէս փորձութե՛ 'ի մէջ անկանիցիք ։ Այնքան
մեծագին, և քաղցրագոյն պարտի լինիլ մեզ
կամքն և հաճութիւն ա՛յ, մինչ զի համով սո-
րին կարիցեմք քաղցրացուցանել զա՛մ դառ-
նութիւն վշտաց, որք կարեն հանդիպիլ մեզ ։
Ա՛մ վիշտք, և ձախորդութիւնք ձիս եղանե-
լոց են մեզ քաղցունք և համեղք՝ վ՛ն լինե-
լոյ այնց կամքն, և հաճութիւն ա՛յ ։ Եւ այս
է այն, զոր ասէ Տըն Գրիգորիոս ․ * Եթէ
միտք մարդոյ զօրեղ գիտաճորուք առ Ած
ուղղեսցի, որ ինչ 'ի կեանս յայս նմա դառն
իցէ, զայն քաղցր համարի ․ զա՛մ որ վշտա-
ցուցանէ, հանդիստ վարկանի ․ և ցանկայ
մեռանիլ, զի կարասցէ ունիլ զկեանս լիա-
կատար ‖ ։

Սրբուհին Կատարինէ սենացին 'ի տրամա-
խոսութե՛ միում, զոր գրեաց զկատարածէ
կատարելութե՛ քրիստոնէից, ասէ, թէ 'ի
մէջ այլոց իրաց ․ զորս ամենաօրհնելի փե-
սայն իմ՛ Քս Տրն մեր ուսոյց ինձ, մինն էր
այս, զի մարդն շինեսցէ զբնակարան մի ա-
մուր և կամրակալ՝ որ է կամքն ա՛յ, և ներ
փակեսցի, և բնակեսցի յարաժամ 'ի նմին ․
և ոչ երբէք հանցէ անտի զաչս, զոտս, և
զձեռս իւր, այլ միշտ առանձնասցի 'ի նմին
ո՛պ մեղու, որ կայ 'ի փեթակի իւրում,
կամ ո՛պ մարգարիտ, որ կայ 'ի մէջ սատա-
ֆի ։ Զի թէպէտ 'ի սկզբանն դուցէ երևե
ցի նմա անձուկ կայարանն այն, սակայն յե-
տոյ գտցէ զնա լայն և ընդարձակ ․ և ա-
ռանց երանելւոյ անտի ժամանեսցէ առ յաւէ
տենական օթևանն ․ ուր 'ի սակաւ ժամա
նակի ստասցի զայն, զոր 'ի բազում ժամա-
նակս ոչ կարայ ստանալ արտաքոյ նորին ։
Արդ՝ արասցուք և մեք այսպ, և եղիցի այս
յարակայական կրթութիւն մեր ։ Միշելն իմ

ինչ

ինչ և ես նմա ։ 2. 16։ 'Ի յայսոսիկ երկուս բանս բովանդակի կրթութիւն վն ամ կենաց ։ Եւ մեք պարտիմք ունել զայն միշտ 'ի բերանի, և 'ի սրտի ։

## Գ Լ Ո Ւ Խ . Ժ Գ ։

Յաղագս անտարբերութե՛ , և համակերպութե՛ ընդ կամացն Այ , զոր պարտի ունել կրօնաւորն առ 'ի ներթաւ . և կալ յա՛ և իջէ կողմն աշխարհիս , ուր հնազանդութեն առաքելոյ ։

Որպէս զի կարասցուք արտահանել զմեծագոյն պտուղ յայսմանէ կրթութէ համակերպութեն ընդ կամացն Այ , կամ 'ի գործածել զայն , զոր ասացաք , երթիցուք պարզաբանելով զոմանս իրս գլխաւորս , յորս պարտիմք կրթել զմեզ , և յետոյ իջցուք առ այլ իրս ընդհանրականս , որք պատկանին առ ամենեսեան ։ Արդ՝ սկզբն արասցուք այժմ յոմանց մասնաւորաց , զորս ունիմք 'ի կացուցմունս մեր , որովհետև իրաւունքն պահանջէ , զի կրօնաւորն նախապէսաբար նոքօք ցուցանիցէ զառաքինութիւն իւր , և զկրօնն ։ Եւ իւրաքանչիւրոք կարէ առակցել զվարդապետութիս զայս այլոց իրաց , ևս որք են 'ի կրօնի , կամ 'ի կացութե իւրում ։

'Ի յեօթներորդ մասին կացուցմանց խօսելով հայրն մեր զառաքելութենց , որք են նախապէտական ձեռնամխութիք մերոյ կացուցման , ասէ , թէ անձինքն ընկերութե մերոյ պարտին լինել անտարբերք առ 'ի երթալ , և մնալ յն և իջէ կողմն աշխարհիս , ուր հնազանդութին առաքեսցէ զնս , ցո թէ 'ի մէջ անհաւատից , և թէ հաւատացելոց , թէ 'ի հնդստան , և թէ 'ի մէջ հերետիկոսաց ։ Եւ յաղագս այսորիկ ուխտեմք զոր_

բորդ

որդ ուխտն հանդերձ ծայրագոյն քահանայապետին, պարտաւանդելով զմեզ առ՚ի դնել յօժարութ՟ք և կամօք առանց հրաժարելոյ յանկեցէ կողմն Քսի, ուր սրբութի նր առաքեսցէ զմեզ՝ առանց հայցելոյ զիր ինն ժամանակաւոր, ոչ վն մեր, ոչ վն այլոց, և ոչ վն կալոյ անդ, այլ երթալ հետևոտ, կամ ձիով, դրամօք, կամ առանց դրամոյ խնդրելով զողորմութի, ուր և հաճոյ թուեսցի սրբութե նր, այնր արասցէ: Եւ ասէ անդ հայրն մեր, թէ վախճանն և գխաւորութն առնելոյ զայս ուխտ՝ եղև առ՚ի մարզել բարւոք առնելոյ, և կատարելոյ զկամս Այ: Վն զի առաջին հարքն ընկերութե մերոյ գոլով ՚ի զանազան գաւառաց, և թագաւորութեց, և ոչ գիտելով, թէ առ որ կողմն Քսի հաճոյ թուէր Այ առաքել զնս, արդեօք ՚ի մէջ հաւատացելոց, թէ ՚ի մէջ անհաւատից, առ՚ի ուղղել զայս ըստ կամացն Այ, ուխտեցին զայս ուխտս փոխանորդին Քսի, որ զի նա բաժանեսցէ ընդ աշխարհս, ըս որում ենթադատեսցէ, թէ լիցէ բարի վն մեծագոյն փառացն Այ: Բայց անձինքն ընկերութե (ասէ) ոչ պարտին յառաջձգել զանձինս, և ոչ ջանալ կերպիւ իւիք երթալ, կամ կալ մանաւանդ ՚ի միում տեղւոջ, քան թէ ՚ի միւսում, այլ պարտին կալ յոյժ անտարբերք՝ թողլով զկարգաւորութին այնորիկ ազատաց, և ամբողջաբար ՚ի ձեռս մեծաւորին, որ ՚ի տեղի Այ կառավարէ զնս վն մեծագունի ծառայութեան, և փառաց նորա:

Ոչ զի տեսանիցի, թէ որքան կամի հայրն մեր, զի իցեմք անտարբերք, և պատրաստք առ՚ի երթալ յանկեցէ կողմն Քի, ուր հնազանդութին առաքեսցէ զմեզ. ընթեռնումք ՚ի վարս նորա, թէ անգամ մի հայրն դեկտալայինենց ասաց ցնա, գայ ինձ հայր փափագք

երթա

երթալոյ 'ի հնդստան առ 'ի հոգալ զփրկութիւն կուրացեալ հեթանոսացն. զի թուէր ինձ, թէ կուրութի՟ն նո՟ է վ՟ն պակասութե՟ աւետարանական մշակաց: Եւ հայրն մեր պատասխանեաց նմա, և ասէ. ես ոչ իմիք այդպիսի իրաց փափաքիմ: Եւ իբրև հարցեալ եղև պատճառն, ասէ նա, զի որովհետև ուխտեցաք մեք զհնազանդութի՟ ծայրագոյն քահանայապետին, որպ՟ զի ըստ կամաց իւրոց առաքեսցէ զմեզ յո՛ և իցէ կողմն աշխ՟ 'ի ծառայութի՟ Տ՟ն, պարտիմք ուրեմն կալ անտարբերք այնպ՟, մինչ զի ոչ յօժարիցիմք առաւել առ մի կողմն, քան առ միւսն: Մանաւանդ (ասէ) եթէ ես տեսանիցէի զիս յօժարեալ որպ՟ զքեզ գնալոյ 'ի հնդստան, ջանայի յօժարիլ առ ներհակ կողմն՝ առ 'ի ստանալ զայն հանդարտութի՟ն, և զանտարբերութի՟ն, որ է հարկաւոր առ 'ի ստանալ զկատարելութի՟ հնազանդութե՟:

Ոչ կամիմք ասել վ՟ն այսորիկ, թէ վատ իցէ ցանկալն գնալոյ 'ի հնդստան, կամ անկատար. զի է բարի, և սրբ՟ ցանկութի՟ս այս. է նաև իր բարի առաջադրել, և ներկայացուցանել վերհադունի՟ն զայն, յորժամ Տ՟ր տայ: Այսպ՟ ասէ անդ հայրն մեր, ուրախանան մեծաւորք՟ն, յորժամ հպատակք՟ն ծանուցանեն նո՟ զցանկութի՟ս զայսոսիկ. զի կարեն գոլ նշանք, թէ Ա՟Յ կոչէ զնո՟ վասն այնորիկ. և այսպ՟ իրքն եղանին համեղութբ: Բայց զայս ասեմք, որպ՟ զի տեսանիցի անտարբերութի՟ն, և յօժարութի՟ն, զոր հայրն մեր կամի, զի ունիցիմք առ 'ի գնալ և կալ յա՟մ կողմն աշխ՟, որովհետև նաև ոչ առ իր մի այսքան աշխատալի, և առ այսպիսի մեծ ծառայութի՟ Տ՟ն մերոյ կամի, զի ըղձաձկիցիմք. որպ՟ զի ըղձաձկութիս և ցանկութիս այս մանաւանդ ոչ բառնայցէ, կամ արգելուցու զանտարբերութի՟ն, և զյօժարութի՟ն, զոր պարտիմք

ունիմք

տինք ունիլ միշտ վն ամենից այլոց իրաց , և վն գնալոյ յամ ուրեք , յն և կամիցի առաքել զմեզ հնազանդութն ։

Բաստուսա հետևեն այլք իրք . որովք բարւոք իմանի այս . Առաջինն է , զի եթէ ցանկութնն գնալոյ 'ի հնդստան լինիցի պատճառ կորուսանելոյ զանտարբերութն , և զյօժարութն վն այլոց իրաց , զորս հնազանդութն կարգաւորէ , նշան է , թէ ոչ է այն բարի , այլ անկատար ։ Քանզի եթէ ես ունիցիմ զայնքան կամք , և զցանկութն գնալոյ 'ի հնդստան , կամ յայլ ուր , մինչ զի անհանգիստ առնիցէ զիս այն , կամ լինիցի պատճառ ոչ կալոյ իմ այնքան շատացեալ առտ , կամ անդ՝ ուր կամի հնազանդութն . և կամ ոչ թողուցու ընդգրկել ինձ այնքան կամաճոխաբար , և մտերմաբար զպաշտօնս ներկայս , յորս այժմ պարապիմ , վն ունելոյս զխորհուրդս և զսիրտ իմ 'ի յայն միւսն , է յայտնի ինձ , թէ ցանկութիւն այս ոչ է բարի . և ոչ է յԱյ . որովհետև խափանէ ըզկամս Այ . և այն զի Այ ոչ կարէ լինել հակառակ ինքեան . և մանաւանդ զի իրն ներշնչեցեալ 'ի Հոգւոյն սրբոյ ոչ է սովոր անհանգիստ առնել զոք , այլ պատճառէ ըզբազում խաղաղութի , և զանդորրութիւն ։ Եւ այս է մինն 'ի նշանաց , զորս դնեն վարդապետքն հոգևոր կենաց՝ առ 'ի ճանաչել , եթէ ներշնչմունքն , կամ ցանկութիքն են յԱյ , թէ ոչ ։

Երկրորդ իրն , որ հետևի սմա , է , թէ նա որ ունի զարամադրութի ընդհանրական , և անտարբեր գնալոյ յն և իցէ կողմն Տիս , և առնելոյ զայն , զոր հնազանդութն պատուէրէ նմա , թէև ոչ ունիցի զցանկութն և զմխիթարութն զայն գնալոյ 'ի հնդստան , կամ 'ի յայլ կողմն հեռի , զորս այլք ունին , ոչ պարտի տրտմիլ ընդ այս . զի վն այսորիկ

ոչ

ոչ է վատթար վիճակն իւր, այլ մանաւանդ
է բարեգոյն ։ Քանզի այս է տրամադրութն,
զոր հայրն մեր կամի, զի ունիցիմք ամենե-
քեան յլինկերութն մերում, ի՞ որքան է 'ի
կողմանէ մերմէ, ոչ ունիցիմք զցանկութն,
կամ զըղձականութն մասնաւոր առաւել վն
այսր իրի, քան թէ վն այնր իրին. այլ թէ
կայցեմք ոճ լեզուակն կշռոյ առանց հակե-
լոյ առաւել ընդ այս՝ քան ընդ այն կողմն ։
Եւ յայտնէ զոն բաղումք, և կարծեմ թէ
մեծագոյն մասն ։ Կամէր անգամ մի հայրն
մեր առաքել զհայրն Նաթալիոս յառաքելու-
թն իւր, բայց նախ կամեցաւ գիտել 'ի նմա-
նէ, թէ առ որ իր առաւել ձկտիւր առ'ի
առնել առաւել համեղութ ։ Եւ հայրն Նա-
թալիոս գրեաց առ նա, թէ առ այլ ոչինչ
ձկտիմ, որքան առ ոչ ձկտիլն ։ Զայս իրս
հայրն մեր համարի առաւել բարեգոյն, և
առաւել կատարեալ, և մեծաւ իրաւամբ ։
Քանզի թուի թէ միւսն կայի միայն ընդ
միում իրի. բայց սա իւրով անտարբերու-
թբն ընդգրկէ զամ իրս, որք նմա կարեն
հրամայիլ, և կայ միակերպաբար տրամա-
դրեցեալ առ ամ իրս ։ Եւ քանզի Աձ հայի
'ի սիրտն և 'ի կամս իւրաքանչիւրոյ ուրուք,
վն այնորիկ համարի զայն փոխանակ գոր-
ծոյ, ոճ թէ կատարեալ իցէր զամ ։ Եւ
առ'ի վճարել զպարզաբանութիս զայս, ա-
սեմ, եթէ ոք ոչ ունիցի զցանկութիս զայս
գտանելոյ 'ի հնդստան վն անարիութն, կամ
փոքրահոգութն, և վն ոչ գոլոյն մահա-
ցեալ, և կամ վն ոչ իշխելոյ թողուլ զդիւ-
րութին, զոր ունի, և կրելոյ զվիշտս, այս
եղիցի անկատարութն, և ինքնասիրութն.
բայց որ ոչ ցանկայ այսմիկ, և ոչ ցանկալն
այն ոչ է վն երկչոտութն, և ոչ վն պակա-
սութն ըղձի կրելոյ զայս, և զայլ մեծագոյն
վիշտս վն սիրոյն Այ, և վն փրկութն հո-
գւոց,

գուոց, այլ քանզի ոչ գիտէ, թէ արդեօք այն իցէ կամքն Այ, կամ թէ կամիցի հան- դիսավեհութն նր զայլ ինչ 'ի նմանէ, սա- կայն ինքն 'ի կողմանէ իւրմէ կայ յօժար և պատրաստ վն այսորիկ, և վն այլոց ամե- նից, զորս ծանիցէ գոլ կամքն Այ․ ուստի եթէ առաքեսցեն 'ի հնդստան, կամ 'ի յին- կիլթեռայ, և կամ յո և իցէ կողմն, գտանի- ցէ այնքան կամահօրատ, որպ թէ ունիցէր զցանկութն, և խնդրեալ իցէր երթալ, և գուցէ առաւել կամահօրապէս՝ վն լինելոյ առաւել ապահով, թէ ոչ առնէ զկամս իւր, այլ զտաբար զկամս Այ, այս առանց կոր- ծեաց է իւր մեծագոյն, և առաւել կատա- րեալ։ Եւ այսպ նոքա, որք ունին զայսպի- սի տրամադրութն, և զանտարբերութն, առաքեցեալք լինին կամահօրապ 'ի վեհա- գունից 'ի հնդստան ։

Բայց դառնալով առ բանն մեր նախապե- տական․ կամի հայրն մեր, զի ունիցիմք զայն քան անտարբերութն և զհնազանդութն կա- լս այնպ կամահօրաբար 'ի միում տեղւոջ, որպ 'ի միւսում, և այնպ 'ի միում գաւառի, որպ 'ի միւսում, մինչ զի և ոչ մարմնաւոր շահաւէտութն լիցի բաւական բառնալոյ զան- տարբերութնս զայս ։ Ասէ նա 'ի յերրորդ- մասին կացուցման, թէ է խնկական իւր կոչ- ման և կացուցման մերոյ ընթանալ 'ի զա- նազան կողմանս աշխարհի, և կալ անդ, ուր յուսամք առնել զմեծ ծառայութն Այ, և զմեծ օգնութն հոգւոց ։ Բայց եթէ փոր- ձիւ տեսանիցի, թէ վնասակար է ոմանց օդն այնր գաւառին, և անդ կալ միշտ չա- ճագար, վեհագոյնն նկատեսցէ, եթէ պա- տեհ է առաքել զնա յայլ տեղի, ուր կա- լով առողջ, կարիցէ պարապել բարւոք 'ի ծառայութն Այ, և հոգւոց ։ Բայց ասէ, թէ հիւանդն ոչ պարտի խնդրել զփոփո-

խու-

խութեանս զայս, և ոչ ցուցանել զյօժարութի առ այն, այլ թողլոցէ զամ հոգս 'ի ձեռս վեհագունին: Արդ՝ հայրն մեր յայսմիկ ոչ պահանջէ 'ի մէնջ զանկարծ, այլ զբազում. վն զի պիտոյ է, զի որք իցեն յոյժ անտարբեր, և մահացեալ առ 'ի ոչ խնդրել ամենևին, կամ ցուցանել բնաւ զյօժարութի առ՝ տեղափոխութիւն, թէև կայցէ անդ հանապազ հիւանդոտ: Ուստի յայնմիկ, զոր առնէաք վասն երթալոյ 'ի Հնդստան, կամ 'ի տեղիս հերետիկոսաց, ասէ, թէ կարէ որք բարեմ առաջադրել զյօժարութիւն և զցանկութիւն իւր՝ բայց հանդերձ անտարբերութե, և հնազդութե, սակայն յայսմիկ ոչ տայ զհրաման, ոչ առ'ի խնդրել զտեղափոխութիւն, և ոչ առ'ի ցուցանել զյօժարութի, և զփափաք առ այն, և այս է յոյժ առաւել: Միայն տայ զհրաման, զի եթէ ոք իցէ հիւանդ, կարիցէ առաջադրել վեհագունին զիւր հիւանդութիւն, և զանպատրաստութիւն, և զանհաստատութի, զոր զգայ վն պաշտօնից, և վն այսր ունիմք զկանոն, որ հրամայէ, զի առաջադրեսցուք զայն: Բայց յետ լինելոյ առաջադրութե այսորիկ՝ հպատակին ոչ պարտի առնել զայլ ինչ. այլ վեհագոյնն տեսանելոց է, եթէ իցէ վայելուչ այսմիկ հպատակի առաքել զնա յայլ տեղի, կամ թէ լինելով առողջ, կարիցէ առնել անելի, և կամ թէ իցէ մեծագոյն փառք ԱՅ, եթէ կայցէ անդ, թէև արասցէ ըզսակաւ, կամ զոչինչ: Այս ոչ է հոգ հպատակին, այլ պիտոյ է թողուլ, զի իւրաքանչիւրոք առաջնորդեսցի 'ի վեհագունէ իւրմէ, որ կառավարէ 'ի տեղի ԱՅ, և ունիցի իւրև զբարեգոյն, և զմեծագոյն ծառայութի Տն զայն, զոր մեծաւորն հրամայէ: Քանիք գոն, որք կան յայսմ գաւառի, կամ յայլում, ուր օգն առաւել ներ-

հակ է առողջութե̃ իւրեանց , բայց կան անդ , զի ունին զնրա , որովք ապրին՝ միջնորդութե̃ պաշտօնի , արհեստի , կամ բարերարութե̃ այլոց ։ Քանիք անցանեն ը̃ ծով , և երթան 'ի հնդստան , 'ի հռոմ , և 'ի կոստանդնուպօլիս վասն սակաւ դոյից , և դնեն 'ի վտանգի ոչ միայն զառողջութիւն , այլ և ըզկեանս իւրեանց ։ Սերեմն ոչ է մեծ իմն , զի և մեք կրօնաւորքս առնիցեմք վ̃ն Այ , և վ̃ն հնազանդութե̃ զայն , զոր առնեն մարդիկք աշխարհիս վասն արծաթոյ ։ Նաև եթէ անցցէ ը̃ միտս քո , թէ յայլում տեղւոջ կարէիր առնել զիր իմն , նաև աւելի , և ուր կաս այժմ , չարչարիս այդքան շուրջ զառողջութե̃ , մինչ զի ոչ կարես առնել զիր իմն , յիշեա այսու ամիւ , թէ բարեգոյն է կալն քո աստ կամաւն Այ առանց առնելոյ զիր իմն , քանթէ յայլում տեղւոջ քոյով կամաւ , թէև առնիցէիր զբազում իրս . և համակերպեա զքեզ ը̃ կամացն Այ , որ զայս կամի այժմ 'ի քէն վ̃ն պատճառի , և վախճանի , զոր ինքն գիտէ , և զոր չէ հարկաւոր , թէ գիտիցես դու ։

Ի ժամանակագիրս կարգին որբոյն Ֆրանչիսկոսի ճառի վ̃ն երանելւոյ եղբօր Եձիտիոսի , թէ երանելի հ̃րն ֆրանչիսկոս եա նմա զհրաման երթալ , ուր և կամի , և կալ յայնմիկ գաւառի , և մենարանի , ուր առաւել հաճի կալ , թողլով զնա̃մ ընտրութե̃ նր̃ , վ̃ն գոլոյն նր̃ մեծ առաքինի , և հ̃ր ։ Հազիւ եկաց նա այնու հրամանաւ զաւուրս չորս . զի պակասեցաւ նմա անդորրութիւն , և հանդստութիւն առաջին , և սկսաւ զգալ զինքն անհանգիստ ։ Ապա գնացեալ առ հ̃րն Ֆրանչիսկոս հայցեաց 'ի նմանէ մեծաւ թախանձանօք , զի առնչանեսցէ նմա զտեղի , և զմենարան , ուր կայցէ , և ոչ թողուցու զայն յընտրութե̃ նր̃ . զի հաւաստեաւ ծանեաւ,

թէ այնու ազատ և ընդարձակ հնազանդու-
թեամբ ոչ կարէր հանգուցանել զհոգին իւր ։
Բարի կրօնաւորքն ոչ գտանեն զհանգիստ ,
և զհաճութիւն 'ի կատարելն զկամս իւրեանց·
ուստի ոչ ցանկան այսմիկ կամ այնմիկ իրի ,
և տեղւոյ , այլ զի հնազանդութիւնն դիցէ
զնա ուր և կամի ձեռամբ իւրով · զի հաւաս-
տիք են , թէ այն է կամքն ԱՅ , յորում
միայն կարեն գտանել զհանգիստ , և զխա-
ղաղութիւն ։

## Գ Լ Ո Ւ Խ· ԺԴ։

Յաղագս անտարբերութեան , և համակերպութեան ընդ
կամացն ԱՅ , զոր պարտի ունել կրօնաւորն վասն
որոյ և իցէ պաշտօնի , և պարապման ,
յորում հնազանդութիւնն կամիցի
դնել զնա ։

ԶՍոյն անտարբերութիւնս , և զանձնա-
տրութիւնս պարտիմք ունել նաև վասն
որոյ և իցէ պաշտօնի , և պարապման , յո-
րում կամիցի հնազանդութիւնն դնել զմեզ ։
Տեսցուք բարւոք , թէ որչափ և ո՛րքան տար-
բերք են պաշտօնքն , և զբաղմունքն կրօնին ։
Արդ՝ երթիցէ իւրաքանչիւրոք խոկալով
զայնս՝ մինչև կարիցէ հանդէպ դիմօք ընդու-
նիլ զայնս ։ Ասէ հայրն մեր 'ի կացուցմունս ,
և զայս ունիմք 'ի կանոնս , թէ պարտի ամ̃
ոք յօժարաբար ընդունիլ զայնս պաշտօնս
անարգս , և խոնարհս , յորս գտանէ զընդդի-
մութիւն մեծագոյն , եթէ հրամայիցին նմա
առնել զայնս ։ Յաղագս պաշտօնից անար-
գաց , և խոնարհաց առնել հարկաւոր է
անտարբերութիւն և անձնատրութիւն վասն ընդդի-
մութեան , զոր ունի 'ի նմա բնութիւն մեր ։ Ասա-
տի առնէ ոք զաճելն , և ցուցանէ զմեծա-
գոյն

գոյն առաքինութիւն և զկատարելութիւն 'ի մատուցանելն Այ վն այսոցիկ պաշտօնից , քան թէ 'ի մատուցանելն վասն այլոց , որք լինեն առաւել գերազանցք , և պատուականք ։ Այլ թէ ոք ունիցի զայնքան մեծագոյն ցանկութիւն ծառայելոյ ումեք Տն , մինչ զի մատուցանիցէ նմա զինքն նաև առ 'ի լինել աւելածու տանն , եթէ պիտոյ լիցի , յայտնի իմն է , զի սա առնէ աւելի , և ցուցանէ զաւելի բարի կամս իւր , քան թէ ասիցէ այսպ , տէ՛ր ես կամիմ ծառայել քեզ որպ խոհակերապետ , կամ որպ վերակացու տան ։ Քանզի այս մանաւանդ է հայցել զարժանապատուութիւն , քան թէ մատուցանել զինքն առ 'ի ծառայել · և այնքան առաւել համարի խոնարհ մատուցումն այն , որ քան զմեծ քանքար ունի վասն գերագոյն պաշտօնից նա , որ մատուցանէ զինքն վասն անարգ պաշտօնից ։ Արդ՝ նոյնով կերպիւ եթէ դու ընծայես զքեզ Այ ասելով , Տր ես ծառայեցից քեզ 'ի պաշտօնի քարոզողի , կամ դասատուի ածաբանութե , ոչ առնես այսու զմեծ ինչ , զի այսոքիկ բարձրագոյն , և պատուելի պաշտօնքս են ըստ բնութե իւրեանց ախորժելիք , և ցուցանես զսակաւ ցանկութիւն ծառայելոյ Այ ։ Բայց յորժամ ընծայես դու զքեզ 'ի ծառայել Այ զամ աւուրս կենաց քոց 'ի պաշտօնս անարգս , և խոնարհս , և հակառակս մարմնոյ և հեշտախտութե քում , յայնժամ ցուցանես զաւելի ցանկութիւն ծառայելոյ ածայնոյ մեծվայելչութեան փառաց նր ։ Այս իսկ է առաւել արժանի բարձրացուցեալ , և վարկեցեալ լինելոյ · և այնքան առաւել , որքան զաւելի մեծ քանքար ունիս վն պաշտօնից բարձրագունից ։ Այս պարտ էր լինել բաճական մեզ առ 'ի ցանկալ անարգ և խոնարհ պաշտօնից , և յօժարել միշտ առ այնս ։ Մա

նաւանդ կարեմք ասել, թէ 'ի տանն ԱԾ ոչ գոյ պաշտօն ինչ անարգ ։ Այլ ևս, թէ 'ի տան Թագաւորի ոչ գոյ պաշտօն անարգ. զի ծառայելն Թագաւորին յորում և իցէ պաշտօնի, մեծ համարեալ լինի. ապա որքան առաւել մեծ պարտի համարիլ ծառայելն ԱԾ, որում ծառայելն է Թագաւորել ։

Սբն Բարսեղ առ 'ի յօժարեցուցանել զմեզ առ անարգ, և խոնարհ պաշտօնս, բերէ զօրինակն Քի, զորմէ ընթեռնումք 'ի սրբազան աւետարանի, թէ պարապեցաւ 'ի յայսպիսի պաշտօնս, լուանալով զոտս աշակերտաց իւրոց, և ծառայելով ամենայնիւ մօրն իւրում, և սրբոյն Յովսեփայ, և կալով հպատակ, և հնազանդ նց 'ի յամ իւրս, զորս նոքա հրամայէին նմա. ըստ այնմ ։ Եւ էր նոցա հնազանդ ։ Ղուկ. 2. 51 ։ 'Ի յերկոտասաներորդ ամէ հասակի նր մինչև ցամն երեսներորդ ոչ ձայնէ նր աւետարանն զայլ ինն, եթէ ոչ զայս ։ Ուստի յոյժ բարւոք խոկան ոմանք, թէ 'ի հարկէ ծառայեաց և օգնեաց նց 'ի բազում անարգ, և խոնարհ պաշտօնս, որովհետև էին նոքա յոյժ աղքատք ։ * Ուրեմն մի՛ գարշեսցի քրիստոնեայն 'ի առնելոյ զայն, զոր արար Քս ‖ ։ Որովհետև որդին ԱԾ ոչ գարշեցաւ 'ի առնելոյ զցածագոյն պաշտօնս վասն սիրոյ մերոյ, նաև մեք քրիստոնեայքս, և մանաւանդ կրօնաւորքս ոչ պարտիմք գարշիլ յայնց վն սիրոյ նր, թէև տևեսցէ այն զամ ժամանակս կենաց մերոց ։

Բայց գալով առաւել առ առաջադրութին մեր, 'ի մէջ այլոց գլխաւոր պատճառաց, և շարժառթից, որք առնեն, զի ընդունիցիմք կամաւորապէ զորպիսի և իցէ պաշտօն, կամ գործ, զոր տայ մեզ հնազանդութին, մինն է այս, զի իցեմք համոզեալք, թէ այն

է կամքն ԱՅ։ Զի որպ ասացաք 'ի վերոյ, այս պարտի գոլ միշտ մխիթարութիւն, և բերկրութիւն մեր 'ի յամ զբաղմունս մեր, որ կայ 'ի նմա առնելով զկամս ԱՅ։ Այս է այն, որ յաւելցուցանէ, և հանգուցանէ զհոգին, որ թէ ԱԾ կամի, զի ես առնի-ցեմ զայս այժմիկ. այս է կամքն ԱՅ, ոչ է պիտոյ ցանկալ այլում իրի. զի չիք ինչ բա-րեգոյն և վեհագոյն, քան զկամս ԱՅ։ Նո-քա, որք վարին այսու կերպիւ ոչ հոգան, թէ հրամայեսցի նց առնել այս, քան թէ այն. և ոչ է փոյթ նց, թէ դիցեն զնս 'ի ցած, կամ 'ի բարձր պաշտօնի. զի մի և նոյն է ամ ինչ վն նց։

Երանելին սբն Հերոնիմոս պատմէ զօրինակ մի յոյժ բարի վն այսորիկ, և ասէ, թէ յոր ժամ յայց եկի մի անգամ ուրեք միայնակեցայն անապատի, տեսի զմի ոմն 'ի նոցանէ, զի ու-նէր 'ի յուս իւր զքար մի յոյժ մեծագոյն, և տանէր 'ի միոյ տեղւոջէ առ այլ տեղի ե-րիւք մղոնիւք հեռի՝ ոչ ունելով զպիտոյս ինչ զայնմանէ։ Եւ զայս հրամայեալ էր նմա մեծաւորն, առնել երկիցս անգամ յաւուրն, զի ցանկայր յառաջադիմութն նր, և կամէր տալ զօրինակ հնազանդութե այլոց երիտա-սարդ կրօնաւորաց. և նա զայս առնէր առ 'ի հնազանդեցուցանել զնա, և մահացուցա-նել զդատողութն նորա։ Անցեալք էին արդէն ամք ութն, յորս առնէր նա զայս գործս։ Նոցա որք ոչ ճանաչէին (ասէ սբն Հերոնիմոս) զարժողութիւն առաքինութե հնազանդութե, և չէին ժամանեալք 'ի պար-զութն, և 'ի մաքրութն նորին, կարէր վն հպարտութե թուէր գործս այս խաղ տղայա-կան։ Եւ որոց թուէր դատարկագործու-թն, հարցանէին զնա, թէ ընդ առնէր ըղ հնազանդութն զայն։ Նա և ես (ասէ) հար-ցի զնա զայն, զի ցանկայի գիտել, թէ զի՞ր

պխալի շարժումն ունէր 'ի հոգւոջ իւրում 'ի
առնելոյ զայն ։ Եւ միայնակեացն պատաս֊
խանեալ ասաց ․ յորմէհետէ սկսայ առնել
զայս, եղէ այնքան հաճեալ, և ուրախ, որպէս
թէ արարեալ լիցէի զմեծագոյն, և զմեծ
օգտակար իր ինն, որ ինձ կարիցէր հրա֊
մայել ։ Եւ ասէ սբն Հերոնիմոս, թէ պա֊
տասխանիս այս այնչափ շարժեաց զիս, մինչ
զի այնուհետև սկսայ կեալ ըստ միայնակեաց ։
Այս է գոլն միայնակեաց, և կեալ որպէս
ճշմարիտ միայնակեաց, ոչ հայիլ 'ի յիրս ար֊
տաքինս, այլ հայիլ 'ի կատարել զկամս, և
զհաճոյսն Այ ։ Այդքա են, որք շահին, և
զարդարանան մեծաւ յառաքինութե, և 'ի կա
տարելութեան ․ զի մնանին միշտ առնելով
զկամս Այ ․ մնանին նաշհով ․ ըստ այնմ ։
Պարարտութեամբ ցորենոյ լնու զքեզ ։ Սաղմ
147․ 14 ։

Բայց թերևս ասիցէ ոք ցիս, ես բարւոք
տեսանեմ, զի է մեծ կատարելութիւն առ֊
նելն զկամս Այ յամ իրս ․ և յամ կրթու֊
թե, որ ինձ հրամայի, կարեմ առնել ըզ
կամս Այ ․ սակայն կամիմ ես պարապիլ
յայլում իրակութե, որ լիցէ մեծագոյն, և
վսեմ, և յայնմիկ առնել զկամս Այ ։ Ա֊
սեմ ես, թէ այս է մոլորութե 'ի նախկին
սկզբան, զոր ասես ․ զի այսու կամիս, թէ
Այ առնիցէ զկամս քո, և ոչ թէ դու զնորա ։
Ո՛չ պարտիմ ես տալ զօրէնս Այ, և կա֊
միլ, զի նա համակերպիցի այնմիկ, որ ինձ
թուէր բարի, և այնմիկ, զոր ես կամիմ ․ այլ
ինձ արժան է հետևիլ զհաճոյութե Այ ,
և համակերպել զիս այնմիկ, զոր նա կամի
յինէն ։ Յոյժ բարւոք ասէ սբն Օգոստի֊
նոս ․ *Նա է բարեգոյն պաշտօնեայ քո, որ
ոչ նկատէ առաւել զայն լսել 'ի քէն, զոր
ինքն կամի, այլ մանաւանդ զայն կամի, զոր
'ի քէն լսիցէ ‖ ․ Եւ սբ աբբայն Նեղոս
ասէ ․

տան ։ * Մի աղօթեր, զի եղիցին, զորս լի-նիլ կամիս, այլ մանաւանդ աղօթեա, ոպ աղօթել ուսոյց, զի եղիցի կամքն Այ 'ի քեզ ։

Ծանիր բարւոք զկէտս զայս, որ է յոյժ օգտակար, և հաստատակ վն ամենից վշտաց և պատահմանց, որք կարեն մեզ հանդի-պիլ ։ Ոչ պարտիմք մեք մեզէն ընտրել, թէ յորում իրի, կամ զիարդ պարտիմք կրել զնեղութիւս, այլ Այ է տանելոյ ։ Ոչ պարտիս դու ընտրել զփորձութիւն, զոր ունե-լոց ես, և ոչ պարտիս տալ, եթէ լինէր այլ փորձութիւն, ոչ էր ինձ փոյթ, բայց զայս ոչ կարեմ տանիլ ։ Քանզի եթէ վիշտքն և պատիժքն եկեալք 'ի վն մեր՝ լինէին այնք, զորս մեք կամիմք, ոչ լինէին վիշտք, և պա-տիժք ։ Եթէ ճշմարտապէ ցանկաս հաճոյ լի-նիլ Այ, պարտիս հայցել 'ի նմանէ, զի ա-ռաջնորդեսցէ քեզ անդ՝ ուր ինքն կամի, և գիտէ, այլ ոչ անդ՝ ուր դու կամիս ։ Եւ յորժամ Տր տայցէ քեզ զայն, ընդ որ դու ոչ ըստ հաճիս, և յորմէ տառաճել փախչիս, եթէ զքեզ համակերպես այնմ, յայնժամ տառաճել հետևիս Քի Տն մերում, որ ասաց ․ ոչ ոպ ես կամիմ, այլ ոպ դու ։ Այս է ու-նիլ զամենայն համակերպութի ընդ կամացն Այ, ի՞ ընծայել զմեզ բոլորովին նմա, զի արասցէ մեզ զայնքան, զորքան կամի, և ոպ․ և երբ կամի՝ տանց 'ի բաց տանելոյ, և ընդ-գիմանալոյ մեր, և տանց պահելոյ զիր իմն վն մեր ։

Պատմէ պղօսիոս, թէ սրբուհի կոյսն Ճեր-թրուտա շարժեալ 'ի գութ և յողորմութի առ անձն ոք, աղաչէր զԱՅ վն նորա, զոր-մէ լուեալ էր թէ տժգոհայր անհամբերա-բար, զի Այ տայքեր նմա զոմանս վիշտս, և զհիւանդութիւս, կամ զփորձութիւս, որ թուէ-ին ինքեան՝ թէ ոչ վայելէին այնք նմա ․

Բայց պատասխանեաց Տրն ասաց ցսրբուհին Գերթրուտա, ասա անձին այնմիկ, զի որոյ աղօթես դու. զի որովհետեւ արքայութեն երկնից ոչ ժառանգի առանց նեղութե և վշտաց. ընտրեսցէ նա՝ թէ որն իցէ առաւել օգտակար. և ապա յորժամ եկեսցէ վիշտն, համբերեսցէ: Այսու բանիւ և կերպիւ զոր Տրն ասաց, ծանեաւ սրբուհի կոյսն, թէ է կերպ ինչ անհամբերութե յոյժ վնասաբեր, յորժամ մարդ կամի 'ի բաց ձգել զիրս, յորս կրելոց է զնեղութն, ասելով, թէ այնք, զորս Այ առաքէ ինձ, ոչ են պատեհաւորք փրկութե իմում, և ոչ կարեմ տանիլ զայն: Վն որոյ իւրաքանչիւրոք պարտի հաւաստի լինել, և խոկալ, թէ այն զոր Այ առաքէ նմա, է այն՝ որ վայելէ. և այսպէս ընդունելոց է զայն համբերութե, համակերպելով զկամսն ընդ կամաց նորա: Արդ՝ ամ ոչ պարտիս դու ընտրել զվիշտս և զփորձութիս, զորս կրելոց ես, այլ պարտիս ընդունիլ ամ 'ի ձեռանէ Այ, զայն՝ զորս նա քեզ առաքէ, և լինիլ հաւաստի, թէ այն է, որ քեզ վայելէ. այսպէս ես ոչ պարտիս ընտրել զպաշտօնն, և զպատաւորութիւնն, զոր առնելոց ես. այլ պարտիս ընդունիլ ամ 'ի ձեռանէ Այ զայն, յորում հնազանդութիւնն դնէ զքեզ. և լինիլ հաւաստի, թէ այն է, որ քեզ առաւել պատշաճի:

Յաճելուն սրբն ասա զայլ իր մի յոյժ հոգեւոր, և ասէն, թէ մարդն այնքան պարտի մտադրել զինքն կամացն Այ, և այնքան պարտի ապաւինիլ, և յուսալ 'ի նա, մինչզի ցանկանայցէ ոչ գիտել զայն, զոր ամ կամի առնել և տրամադրել զնմանէ: Զի ամ իշխան մի՝ յորժամ վերակացուի տան իւրոյ այնքան հաւատայ, մինչզի ոչ ունի զգացօղութիւն ընչից իւրոց, և ոչ գիտէ զայն,

զոր ունի 'ի տան, նշան է մեծի համատարմութեան, որպ ասէ մր Յովսէփ նահապետն վն իւր, Ահաւասիկ Տր իմ զամ ինչ ետ 'ի ձեռս իմ, եւ ոչ ճանաչէ ինչ 'ի տան իւրում։ Ծննդ. 39. 9։ Այսպ ցուցանէ ոք ունել զմեծ հաւատս առ ԱԾ, յորժամ ոչ կամի գիտել զայն, զոր ԱԾ առնելոց է նմա, այլ ասէ զայս։ Կամ ես 'ի բարի ձեռս ԱՅ, այս միայն բաւական է ինձ. որպ ասէր մարգարէն, Սաղ. 30։ 16։ 'Ի ձեռս քո են ժամանակք իմ։ Սովաւ կամ ես հաճեալ և ուրախ. և ոչ է պիտոյ ինձ գիտել զայլ ինչ։

Նոքա, որք ցանկան պաշտօնից, և տեղեաց, կամ գործոց բարձրագունից, խոկալով թէ 'ի յայնս առնելոց են զառաւել պտուղ 'ի հոգիս, և զմեծագոյն ծառայութիւն ԱՅ. ասեմ թէ խաբին մեծապ. զի այս ոչ է մեծագոյն ծառայութիւն ԱՅ. և մեծագոյն բարի վն հոգւոյ, այլ է նախանձայուզութիւն, և ցանկութիւն պատուոյ, վարկման, և օգտի իւրեանց։ Քանզի վն այսորիկ ցանկան այնոցիկ, զի պաշտօնքն, և պատասխանատուութիւնքն այնոքիկ են առաւել պատուելիք, և համակերպաք ախորժման, և միտման իւրեանց։ Իսկ այս յայտնապ երևեսցի այսու, զի եթէ դու կայցէիր յաշխարհի միայնակ, թէպէտ կարէիր ասել, այս պաշտօնս է բարեգոյն քան զայն, և առաւել օգտակար հոգւոց. վասն որոյ կամիմ թողուլ զայն, և առնել զայս, որովհետև ոչ է կարելի զամ ինչ առնել 'ի միասին. բայց 'ի կրօնի աստ ոչ է թողլի այս վն այնորիկ, այլ զմինն և զմիւսն պարտիս առնել։ Իսկ այս իրաւի է. զի եթէ դու ոչ առնիցես զնուաստագոյնն, միւսն առնելոց է զայն։ Իսկ այն զի եթէ ես իցէի խոնարհ, պարտէի մանաւանդ կամիլ, զի այլ ոք առնիցէր զպաշտօնն վեհագոյն՝ հաճապալով թէ առնէ առաւել բարեպ քան

զխս, և մեծագոյն պտղով, և սակաւ կաս-
կածանօք անափառութե:

Յաղագս այսորիկ, և յաղագս այլոց նմանեաց սոցին, է յոյժ բարի վարդապետութիւն երանելւոյ հօրն մերոյ Իգնատիոսի, որ եդաւ 'ի նմանէ ոչ պչխմն յաղագս ընթերցմանց. և գնէ անդ զերիս աստիճանս, կամ զկերպս խոնարհութե. որոց երրորդն, և առաւել կատարեալն է, զի յորժամ պատահիցին երկու իրք, որք իցեն համահանգէտք վն փառաց և ծառայութե Այ, եւ ընտրիցէ 'ի նոցանէ զայն, որ իցէր առաւել անարգ, և պարսաւելի վն իմ, առ 'ի նմանելութեան նմանիլ այնու, և հետևիլ Քնի փրկչին և Տն մերում, որ կամեցաւ արհամարհիլ և անարգիլ վն մեր: Գտանի յայսմիկ այլ բարի մի մեծագոյն, որ է այս, զի յայսմիկ ոչ գոյ յատուկ շահասիրութի. և մարդն չունի զառիթ խնդրելոյ զինքն, և ոչ գոյ վտանգ անափառելոյ, ոչ գոյ 'ի բարձրագոյն և 'ի պատուելի պաշտօնս: Քանզի 'ի նուաստագոյն պաշտօնս 'ի գործածի խոնարհութեն և սէրն 'ի միասին, և այնքիւք մեծաւ պահպանի առաքինութին խոնարհութե իւրու ներգործութբ իւրով. բայց 'ի վեհագոյն և 'ի բարձրագոյն պաշտօնս 'ի գործածի սէրն միայնուք խոնարհութե. որ պարտ էր մեզ լինել բաւական առ'ի ոչ ցանկալ այնոցիկ, այլ երկնչիլ 'ի նոցանէ:

ԳԼՈՒԽ

# ԳԼՈՒԽ. ԺԵ.

Յաղագս համակերպութե՛, զոր պարտիմք ունել ընդ հաճոյն այ շուրջ զբաղխմամբ փանփարաց, և բնական պարգևաց ։

Իւրաքանչիւր ոք պարտի շատանալ այնու քանքարաւն, իմացողութե՛ն, ուշիմութե՛ն, ընդունակութե՛ն, և այլով որակութե՛, զոր Այ հաղորդեաց և ետ նմա ․ և ոչ պարտի վշտանալ, կամ տրտմիլ վն ոչ ունելոյ զայնքան ընդունակութի, կամ զքանքար, զորքան ունի այլ ոք ․ և կամ վն ոչ գոլոյ այնքան, որքան է նա ։ Այս է իր մի, որ հարկաւոր է մեզ ամենեցուն ․ քանզի թէպէտ ամենք կարծեն, և թուի ինքեանց, թէ իցեն գերազանցք, սակայն 'ի յամանս իւր ունին միշտ զհակաքարշ իմն, որ խոնարհեցուցանէ զնա, յորս ունին զպիտոյս համակերպութե այսորիկ ։ Ուստի պարտ է կալ մեզ զգոյշ, և պատրաստ, զի դեն սովոր է յառնել 'ի վն մեր այսու ձանապարհաւ ։ Յորժամ կաս դու 'ի յուսմունս, և տեսանես զաշակերտակիցն քո, որ գերազանցէ զքև ընդունակութե և ուշիմութե, որ և ձեռնարկէ, և պատասխանէ յոյժ բարւոք, կարելի է, թէ գայցէ քեզ նախանձ իմն, և թէպէտ ոչ ունիցիս զօրամութն յաղագս բարւոյ եղբօր քոյ, որ է յառկայպէս մեզք նախանձու, բայց սակայն 'ի վախճանի տեսանելով քոյ, թէ ընկերքն քո թուչին ուշիմուե, և յառաջադիմեն քանքարաւ իւրեանց, և դու մնաս յետնեալ, և ոչ կարես հասանիլ նոցա, և ոչ իսկ համբառնալ զգլուխ, սկսանիս զգալ զտրամութիւն և զխորութի, և կայցես ոտն զանգի ծաղու 'ի մէջ այլոց ․ ուստի գայ քեզ վհատութի, և

պատուիրելութեն, և փորձութեն թողլոյ զըն-
ցուածն, և երբեմն նաև զկրօնն : Փորձութիւն
այս արտաքսեալց զամենս 'ի կրօնէ, զի ոչ
էին բարեաց հիմնեցեալք 'ի խոնարհութե :
Այլ ոք կարծէր թաքչել յոյժ 'ի բարձունս,
և լինել նշանաւոր 'ի մէջ այլոց ամենից. զի
հրատարակեցելոյ համբաւ նր ընդ բոլոր գա-
ւառն որդ քաջ ուսումնաւորի. բայց տեսա-
նելով թէ այլանդ, և հակադարձաբար եւ
հնչումն համբաւոյն, միայ ամաչեցեալ : Եւ
զայս տեսեալ դիմին, ներկայացուցանէ նմա
այնու առթիւն, թէ ոչ կարէ ազատիլ յայն
մանէ ամօթոյ, և 'ի տրտմութէ անտի, եթէ
ոչ թողլով զկրօնն : Եւ փորձութիւս այս ոչ
է նոր, այլ հարկ հնագոյն :

'Ի ժամանակագիրս կարգին սրբոյն Դոմի-
նիկոսի ձեռի օրինակ մի յաղագս այսորիկ
զմեծէն Ալբերտոսէ, որ եղև ուսուցիչ սըր-
բոյն Թովմայի ագուինացւոյն, թէ մինչդեռ
մանուկ էր Ալբերտոս, էր յոյժ ջերմեռանդ
առ ամենափառաւոր մըն կոյսն տիրուհին
մեր, և ասէր յամենայն աւուր զաղօթս ինչ
'ի պատիւ նր : Որոյ միջնորդութեն և բա-
րեխօսութեն եմուտ 'ի կրօն սրբոյն Դոմի-
նիկոսի 'ի հասակի վեշտասան ամաց : Եւ
ապա անդ, թէ դոլով տակաւին մանուկ ոչ
ունէր զմեծ ուշիմութիւն, և զհասկացողու-
թիւն, այլ մանաւանդ էր անյարմար ուսման :
Եւ տեսանելով զնուրբս հասկացողութիւնս
աշակերտակցաց իւրոց, այնքան տառապէր,
մինչ զի փորձութեն բռնադատեալ զնա յուժ-
գին, և եդ զնա 'ի վտանգի թողլոյ զզգեստն
կրօնաւորական : Արդ՝ մինչդեռ կայր յայս-
պիսի անձկութե խորհրդոց՝ ընկալաւ զշար-
մանալի օժանդակութիւն 'ի տեսլենէ միոջ,
որ եղև այս : Մինչ կայր 'ի քուն 'ի գիշե-
րի միում, թուէր ինքեան, թէ եդ զսան-
դուղ մի առ որմով վանից առ 'ի ելանել ան-
տի,

տի, և երթալ յաշխարհ, և իբրև ել ընդ
սանդուղն ՚ի վեր, ետես ՚ի գագաթան նր̃
զորս յարգելի տիկնայս, և թուէր թէ մինն
լիցէր տիրուհի, և իշխօղ միւսոց. և մերձե_
ցեալ առ նա, մինն կալաւ զնա, և ընկէց
՚ի սանդղոյ անտի ՚ի վայր՝ արգելլով զելումն
նր̃ ՚ի վանից. և նա յամառեալ կամէր միւս
անգամ ելանել ընդ սանդուղն. և երկ_
րորդ տիկինն արար նմա, զոր արար առա_
ջինն : Կամեցաւ ելանել դարձեալ ընդ սան
դուղն երրորդ անգամ. և երրորդ տիկինն
եհարց ցնա թէ ընդէ՞ր կամիս ելանել ՚ի վա
նիցն. և նա պատասխանի ետ ամօթալի դէ
մօք, և ասէ, Տիրուհի, ես կամիմ ելանել,
զի տեսանեմ, թէ այլք ընկերք իմ զարդա
նան ուսմամբ փիլիսոփայութե. և ես աշխա_
տիմ ընդունայն. և ամօթն, զոր վն̃ այսո_
րիկ կրեմ, առնէ, զի թողուցում զկրօնն :
Յայնժամ ասաց ցնա տիկինն այն : Այս տի
րուհիս, զոր տեսանես, (և ցուցանէր մա_
տամբ զչորրորդն) է մայրն Այ̃. և թագու
հին երկնից. որոյ մեք երեքեանս եմք աղախ
նեայք. յանձնեա դու զքեզ նմա, քանզի և
մեք օգնեմք քեզ, և աղերսեմք զնա, զի բա
րեխօս լիցի վն̃ քո առ որդին իւր.
որ̃ զի տայցէ քեզ զհաստատութիւն ուսմանն.
և առնիցես զշահ ՚ի յուսմանն : Զայս լուեալ
Ալբերտոս սկսաւ ուրախանալ մեծապ̃. և
տիկինն այն էած զնա առ ամենափառաւոր
[illegible] կոյսն, որ ընկալաւ զնա քաղցրութբ̃, և
եհարց ցնա, թէ զինչ է, որում ցանկաս
այդքան, և խնդրես զայն : Եւ նա պատաս
խանի տուեալ ասաց, խնդիրս իմ է գիտել
զփիլիսոփայութիւն, զոր ուսանիմ, և ոչ
հասկանամ : Պատասխանի ետ թագուհին
երկնից, և ասէ, քաջալերեաց, և ջանա՛
զի եղանելոց ես մեծ ոմն այդու ուսմամբդ :
Բայց որ̃ զի գիտիցես (յաւէտ ասել), թէ

պարգեւս այս գայ քեզ յինէն, այլ ոչ յու-
շիմութ՟է, և յընդունակութ՟է քումմէ, զա-
ճուրս ինչ նախքան զմահն քո՝ 'ի յուսուցա-
նելն քոյ հրապարակաւ, մատուցիր զի՟մ, զոր
գիտէիր: Այսու տեսլեամբս եկաց նա մխի-
թարեցեալ, և այնուհետև այնքան շահե-
ցաւ ուսմամբ՝ ոչ միայն փիլիսոփայութե՟,
այլև ճարտարանութե՟, և ս՟բ գրոց. որքան
վկայեն գործք նր՟, զորս եթող գրեցեալ:
Արդ՝ զերիս ամս նախ քան զմահն իւր՝
յորժամ ուսուցանէր 'ի կոլոնիայ, կորոյս
բոլորովին զյիշատակս այնոցիկ, որք պատկա-
նէին առ գիտութին, մնալով այնմ, ո՟մ թէ
բնաւ չէր ուսեալ զինչ 'ի կեանս իւր: Եւ
թերևս այս եղև ապաշխարանք ինչ վն՟ փո-
քու համակերպութե՟ իւրոյ առ կամս Ա՟յ
շուրջ զքանքարօք, և զընդունակուե՟, զոր
Ա՟ծ տուեալ էր նմա: Եւ յիշելով զտեսիլն,
զոր տեսեալ էր՝ յորժամ կամեցաւ ելանել
'ի կրօնէն, պատմեաց հրապարակաւ ունկն-
դրողաց զի՟մ անցսն, որք անցին ընդ նա:
Եւ թողեալ զնո՟, դարձաւ 'ի վանս իւր,
ուր առանձնացեալ՝ պարապեցաւ բոլորովին
'ի յաղօթս, և 'ի հայեցողականութիս:

Արդ՝ ո՟մ զի մի գտանիցիմք և մեք 'ի յայս-
պիսի վտանգս, պարտիմք կալ զգոյշ, և պա-
տրաստ. և հարկաւոր պատրաստութին յա-
ղագս այսորիկ լինելոյ է բազում խոնարհու-
թին. զի 'ի պակասութ՟է խոնարհութե՟ յա-
ռաջ գան ա՟մ դժուարութիքս այսոքիկ. վն՟
զի ոչ կարելով դու տանիլ զգօլն քս համա-
բերցեալ պակասաւոր 'ի յուսման, ոչ կարես
համբերել՝ յորժամ մարդիկ ասեն քեզ. թէ
դու ոչ կարես յառաջանալ 'ի յուսման. և
ահա, զի ահա ընկերք քո են ճարտարանք, որք
և յետոյ լինելոց են վարդապետք և քարո-
զիչք. վն՟ այսորիկ յոյժ հարկաւոր է քեզ
բազում խոնարհութի, և մեծ համակեր-

պու-

պութն ընդ կամացն Այ ։ Եւ զայն հար֊
կաւորութնս պարտիս ունել նաև զկնի ուս
մանդ՝ յորժամ դայցէ քեզ փորձութն, և
ասիցէ ցքեզ, թէ ոչ ես դու այնպիսի՝ որ֊
պիսիք են այլք ․ զի ոչ ունիս զքանքար քա
րոզելոյ, ուսուցանելոյ, և կենցաղավարելոյ
բարուոք ընդ մարդկան՝ ոպ՟ այն միւսն ․ և ոչ
ես այնպիսի, որում կարիցէ յանձնել պաշ
տօն ինչ ․ նաև ոչ ես համարեցեալ յայլոց
իր իմն ։ Եւ զայնս ասեմ նաև զնոցանէ,
որք ոչ են 'ի կարգի ուսումնասիրաց, որոց
կարեն գալ խորհուրդք, և փորձութիք ա֊
սելով, ահ թէ ես լիցէի ուսեալ, ահ թէ
ես լիցէի քահանայ, կամ վարդապետ, ոպ՟
զի կարիցէի առնել զպտուղ 'ի հոգիս ։ Եւ
երբեմն կարէ լինել, թէ այնքան նեղեսցէ
և տառապեցուսցէ զքեզ փորձութիւն, մինչ
զի դիցէ 'ի վտանգի զկոչումն քո և զփրկու֊
թիւնդ, ոպ՟ և պատահեցաւ ումանց ։

Այս է հասարակ վարդապետութն, և ամ՟
ոք կարէ առակցել ինքեան ըստ կացութե
իւրում ։ Եւ այսպ՟ հարկաւոր է, զի ամենե֊
քեան ունիցին զհամակերպութն ընդ կա֊
մացն Այ, շատանալով իւրաքանչիւր ոք
այնու քանքարաւ, զոր Այ ետ նմա, և այ֊
նու կացութբ, յորում դտանի եղեալ ․ այլ
և ոչ ոք կամիցի գոլ աւելի քան զայն, զոր
Այ կամի, թէ լիցէ նա ։ Երանելին սբն
Օգոստինոս 'ի վր այնց բանից Սաղմոսեր֊
գուին, Սաղմ․ 118 ․ 36 ։ Խոնարհեցո՛ զսիրտ իմ 'ի
վկայութիւնս քո, և մի՛ յագահութիւն ։ ասէ, թէ այս
եղև սկիզբն, և արմատ ամ՟ չարեաց մերոց ․
զի առաջին ծնողքն մեր կամեցան գոլ աւե֊
լի քան զայն, զոր Այ արարեալ էր, և ցան
կացան ունել աւելի քան զայն, զոր Այ
տուեալ էր նց ։ Վա որոյ անկան 'ի կացու֊
թէն, յորում էին, և կորուսին զայն, զոր
ունէին ։ Դևն եդ առաջի նոցա զխորամանկն
զայն ․

զայն · Լինիցին բարք ձեր առանց արծաթսիրութեան վերայ և կար : Ծննդ. 3. 5: Եթէ զայս ժառանգութիւն ընկալաք մեք 'ի նոցանէ, որք ունիմք զախորժութիւն ինչ ածանալոյ, և զխնամութիւն, և զխնլադարութիւն մի կամելով դոլ աւելի քան զայն, որ եմք: Եթէ ոչ այնու ձանապարհաւ յաջողեցաւ դիւրին լրակութիւն խուր ընդ առաջին ծնողաց մերոց, ջանայ ես այժմ առնել զպատերազմ և ընդ մեզ նովին միջոցիւ, հակելով զմեզ ցանկալ դոլոյ աւելի քան զայն, զոր Ած կամի, թէ լցեմք. և ոչ շատանալ այնու քանքարաւ, զոր ետ մեզ. այլ և ոչ այնու կացութբ, յորում եդ զմեզ: Եթէ վս այսորիկ ասէ սրն Օգոստինոս, թէ մարգարէն խնդրէ յԱյ ասելով. Տր տուր ինձ զսիրտ առանց շահասիրութեան, և հաճատարմաբար յօժարեալ 'ի հաճոյս, և 'ի կամս քո, և ոչ առ շահասիրութիւն և առ հանդիստ իմ: Իսկ 'ի ձեռն ագահութե ասէ, թէ իմանի անդ ոչ միայն ցանկութիւն դրամոց, այլ և ամ կերպ շահասիրութե: Զայս ասէ նաև սրն Պօղոս. 1. Տիմ. 6. 10.

Արմատ ամ չարեաց ագահութիւն է:

Բայց ոչ զի ամենեքեան ունիցիմք զայս անտարբերութիւն, և զպատրաստութիւն՝ համակերպելով զմեզ կամացն Այ, շատացուք այնու քանքարաւ, զոր ետ մեզ Տր. և այնու կացութբ և աստիճանաւ, յորում եդ զմեզ. բաւական է գիտել՝ թէ այս է կամքն Այ: Քանզի ոչ ասէ սրն Պօղոս. Ա. Կորն. 12. 11: Զայս ամ յաջողէ մի և նոյն Հոգի, և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի: Եթէ յայլում տեղւոջ խօսի 'ի ձեռն օրինակի մարդկային մարմնոյ, (զոր և մեք աւելորդ յառաջագոյն ասլոյ եղև 'ի վերոյ) և ասէ՝ թէ ոչ Ած եդ զանդամս 'ի մարմնի զիւրաքանչիւրն այնու կերպիւ, ոչ և կամեցաւ, և ոչ տրտնջեն ոտքն, զի չեն գլուխ, և ոչ ձեռքն, զի

չեն

չեն աչք. այսպ արար եւ 'ի մարմինն եկեղեցւոյ. եւ նոյնն է եւս 'ի մարմինն կրօնի։ Այ եդ զիւրաքանչիւրոք 'ի տեղւոջ, եւ 'ի պաշտօնի, յորում հաճեցաւ դնել. եւ ոչ եղեւ այս պատահմամբ, այլ խորհրդով, եւ նախատեսչութեամբ իւրով։ Եթէ կամի Այ, զի դու լիցես ոտն, ոչ է իրաւունք, թէ լիցես գլուխ. եւ եթէ կամի, զի դու լիցես ձեռք, ոչ է բանաւոր, զի կամիցիս լինիլ աչք. Ով թէ որչափ բարձր, եւ խորագոյն է դատաստանն Այ, ո՛ արդեօք կարէ ըմբռնել զայն։ Զի ոչ է մարդ, որ գիտիցէ զխորհուրդս այ ։ Իմաստ. 9. 13։ Ամ ինչ յառաջ գայ 'ի քէն Տր. եւ վասն այսորիկ յամի հարկ է օրհնել զքեզ։ Դու գիտես զայն, որ պատշաճ է, եւ որ օրն իւրաքանչիւր ումեք. եւ թէ վն էր միոյն ունիցի աւելի, եւ միւսն պակաս, ոչ պատշաճի մեզ քննել զայս։ Զինչ գիտես դու ով մարդ, թէ զինչ լինիցէր քեզ, եթէ ունիցէիր զմեծ հասկացողութիւն, եւ զընդունակութիւն։ Մի՛ թէ գիտես, զի եթէ ունիցէիր զմեծ պարգեւ քարոզելոյ, եւ զխուռն ընթացումն ունկնդրողաց առ քեզ, եւ զմեծ համբաւ, եւ զմեծ վարկումն, ոչ երթիցէիր 'ի կորուստ, ոպ գնացին բազումք հպարտանալով եւ գոռոզանալով։ Իմաստունքն (առէ Թոմաս գեմբացին) ցանկան ուսանիլ, ճանաչիլ, եւ համարիլ ոպ իմաստուն։ Եթէ երկու խերեւէշ արժողութեան հասկացողութեանդ, զոր ունիս, եւ երեք խերեւէշ արժողութեան դպրութեանդ, զոր գիտես, եւ եթէ չափաւոր գիտութեանդ, որ գուցէ թէ պակաս քան զչափաւորն, եւ քան զմիջակն է, այդքան հպարտանաս, եւ փքացեալ գոռոզանաս, զի համարիս զքեզ, եւ բարգաւաճես, եւ թերեւս նախադասես զքեզ նաեւ այլոց. եւ այդքան դժուարանաս յաղագս ոչ լինելոյդ ընտրեցեալ վն այսորիկ, կամ վն այնորիկ իրի, արդ զինչ առնի.

առնիցէիր, եթէ լիցէիր գերազանց ումն: Զինչ լինիցէր, եթէ ունիցէիր դու զոմանս պարգևս սակաւագիւտս, և գերազանցս: Ծնանին թէպէտ մրջմանց 'ի մէսս խուրևանց, զի 'ի թուչելն խուրևանց եղանին կերակուրք ծիծռանց. և թերևս այսպէս ծնանիցէին և 'ի քեզ: Իրաւի եթէ ունիցէաք զաչս, և ոչ զաչքնոցս, և ոչ խակ զկամակորութի, զանհուն փոհութիս մատուցանէաք ԱՅ վս կացուցանելոյն զմեզ 'ի ստորնադոյն, և 'ի խոնարհ կացութե. և վս տալոյ մեզ զսակաւ քանքարս, և զսակաւ ընդունակութիս. և ասիցէաք ընդ սրբոյն այնմիկ, որ ասէր: Համարիմ մեծ բարերարութե ոչ ունիլն իմ զբազում իրս, յաղագս որոց արտաքուստ ածանցիցի գովութի, և պատիւ առ մարդիկս: Բարւոք ճանաչէին նքքն զխոնարհ մեծագոյն, որ ամոր է դուռ յայսմիկ գերազանցութե, և բարձրութե. վասն որոյ ոչ միայն ոչ ցանկային, այլ նաև երկնչէին վս վտանգին հպարտանալոյ, և կորնչելոյ: 'Ի Քաղցրութէ ամառին Երէնեայ: Սաղմ. 55. 4: Իմ այսու առաւել համոյանային ԱՅ, որ կամի զծառայս իւր առաւել խոնարհս, քան թէ մեծս: Երանի թէ կարիցէաք ճանաչել միանգամ, թէ ոչ ինչ է ծաղրական, բայց 'ի առնելոյ զկամս ԱՅ: Երանի թէ գիտէաք զմ հաճութե մեր 'ի հաճութեան ԱՅ: Եթէ դու առանց դպրութե հաճեցուցանես զԱԾ, և այն ոք սակաւ դպրութ, և ընդունակութբ հաճեցուցանէ զԱԾ, վս որոյ պատճառի կամիս դու զդպրութիւնն, և նա կամի զաւելի դպրութիւն, և զաւելի ընդունակութի, և զաւելի քանքար: Եթէ դու ունիցէիր զմեծ ընդունակութի, և զքանքար գիտութե, պարտէր քեզ զայն 'ի գործածել առ 'ի հաճեցուցանել զԱԾ, և առ 'ի բարւոք ծառայել ԱՅ

այնոքիւք : Ուրեմն եթէ Ած ընդունի յօժարաբար զծառայութիւն քո առանց ունելոյ քոյ զզուարթութիւն , կամ առանց ունելոյ զաճելի քանքար , և զընդունակութիւն քան զայն . զոր ունիս . որովհետև հաւաստի եմք , թէ նա արար զբաշխումն , և զբաժանումն զայս, ընդէ՞ր վշտանաս , կամ ընդէ՞ր կամիս գոլ աճելի քան զայն, զոր Ած կամի . և ընդէ՞ր կամիս զայն , որ քեզ ոչ պատշաճի : Ո՛չ հաճեցաւ Ած ընդ մեծագոյն զոհս , զորս սաւուղ կամեցաւ մատուցանել նմա , զի ոչ էին ըստ կամաց նր . սոյնպ և ոչ հաճեսցի Ած ընդ բարձր . և ընդ գերազանց ցանկութիւնս քո : Վս զի բարին , շահն , և կատարելութիւն մեր ոչ կայանայ 'ի գոլն մեր իմաստուն , կամ քարոզիչ , կամ 'ի յունելն զմեծ քանքար , և կամ 'ի պարապելն , և 'ի զբաղելն 'ի բարձր , և 'ի գերազանց իրս , այլ 'ի առնելն զկամս Այ , և 'ի տալն զբարւոք համար այնորիկ , զոր եդ 'ի ձեռս մեր հաճատալով մեզ . և 'ի բարւոք գործածելն զքանքարն , զոր ետ մեզ : Ուստի յայսմիկ պարտիմք դնել զաչս մեր , և ոչ 'ի յայլս իրս . զի այս է այն , զոր Ած կամի 'ի մէնջ :

Յայժ ազնիւ օրինակ է առ 'ի պարզաբանել զայս՝ այն խաղարկութիւն , զոր խաղացեալք Գօմէտիայ կոչեն , որոյ խաղացողաց վարկումն , և վարձն ոչ կշռի և ոչ նկատի անձամբքն , զորս ներկայացուցանեն , այլ բարի կերպիւն , և շնորհալիութեն , որով իւրաքանչիւրոք խօսի , շարժի , և ներկայացուցանէ զանձն ոք : Ուստի եթէ առաւել բարւոք առնիցէ զարհեստն իւր նա , որ ներկայացուցանէ զանձն գեղջկան միոյ՝ քան զնա , որ ներկայացուցանէ զանձն կայսեր , առաւել գովի , և վարկանի 'ի շրջակայից , և առաւել վարձատրի 'ի մեծամեծաց : Սոյնպ և՛ այն , առ որ հայի Ած , և մեծ համարի 'ի

մեզ

մեզ 'ի կեանս յայս, ( որ բոլորովին է ոմն ներկայացուցումն, և խաղարկութ, և երանի թէ ոչ լինէր տուն սգոյ ) ոչ է անձն, զոր ներկայացուցանեմք, ոմանք մեծաւորի, ոմանք քարոզչի, ոմանք լուսարարի, և ոմանք գնդապանի. այլ հայի առ նա, որ բարեաւ առնէ զպաշտօնն անձին, զոր ներկայացուցանէ: Ուստի եթէ հասարակ եղբայր ոք բարւոք առնէ զպաշտօնն իւր, և առաւել բարւոք ներկայացուցանէ զանձն իւր, քան թէ քարոզիչն, կամ մեծաւորն, եղիցի առաւել մեծ համարեցեալ առաջի այ, և առաւել վարձատրեսցի, և պատուեսցի: Երբեմն ոչ գիտէ ոք բարւոք ներկայացուցանել զանձն Թագաւորի, և ներկայացուցանելով զանձն ծառայի, կամ հովուի միոյ պատուէի, և առնու զվարձն: Այսպէս և դու թերևս ոչ կարիցէիր գիտել ներկայացուցանել զանձն քարոզչի, և մեծաւորի. և բարւոք ներկայացուցանես զանձն խոստովանահօր, և այն միայն հասարակ եղբօր. Ած բարւոք գիտէ բաժանել և տալ իւրաքանչիւր ումեք զարժանաւորութիւն, որ վայելէ նմա: Իւրաքանչիւր ըստ իւրում զօրու: Մատ. 25. 15: Վասն որոյ ոչ ոք պարտի ցանկալ այլում արժանաւորութեան, և այլում քանքարի, և տաղանդի, այլ ամ ոք պարտի ջանալ բարւոք ներկայացուցանել զպաշտօնն, որ տուաւ նմա, և բարւոք 'ի գործ ածել զքանքարն, զոր ընկալաւ, և տալ զրարն համար նր. զի այսու կերպիւ առաւել հաճոյ լիցի ԱՆՅ, և ստասցի զմեծագոյն վարձս:

ԳԼՈՒԽ.

# ԳԼՈՒԽ. ԺԶ:

## Յաղագս համաձայնութեան ընդ կամացն Ա՟Յ, զոր պարտիմք ունել 'ի հիւանդութեան:

Որպէս առողջութիւն է պարգև Ա՟Յ, այսպ՟ և հիւանդութիւն է պարգև Ա՟Յ. զոր Տ՟րն մեր առաքէ մեզ առ 'ի փորձել և ուղղել զմեզ. և վ՟ն այլոց բազմաց բարեաց, և օգտութեանց, որք յայնմանէ սովորք են յառաջ գալ. ո՟պ առ 'ի ճանաչել զթուլութիւն և զունայնութիւն մեր, առ 'ի անջատել 'ի սիրոյ աշխ՟հի, և յիրաց ն՟ր, ո՟պ 'ի ցանկութեանց հեշտասիրութե՟. առ 'ի նուաղեցուցանել զոյժն և զկամակորութիւն մեծագունի թշնամւոյն մերոյ՝ որ է մարմինս մեր. և առ 'ի զմտաւ ածել, թէ երկիրս այս ոչ է հայրենիքն մեր, այլ է ուղ՟ պանդխտի մի, և տեղի աքսորանաց մերոց. և վ՟ն այլոց սոցին նմանեաց. ուսանի ասէ իմաստունն: Սիրաք. 31. 2: Հիւանդութիւն ծանր զգաստացուցանէ զհոգի: Այնքան հարկ է մեզ կալ համակերպ ընդ կամացն Ա՟Յ 'ի հիւանդութե՟, որքան 'ի յառողջութե՟՝ ընդունելով զայն ուղ՟ եկեալ 'ի ձեռանէ Տ՟ն, յորժամ հաճի առաքել զայն մեզ: Ասէր ումն 'ի հնոց հարանցն յայնցանէ առ աշակերտն իւր, որ էր հիւանդ: Որդեակ մի տրտմիր վ՟ն հիւանդութե՟, այլ մանաւանդ գոհացիր զԱ՟Յ վասն այնորիկ, զի եթէ դու ես երկաթ, հրով հիւանդութե՟ կորնչի ժանգն. և եթէ ես ոսկի, փորձեսցիս հրով: Մեծ առաքինութիւն է (ասէր) և մեծ կրօն գոհանալ զԱ՟Յ 'ի հիւանդութե՟:

Պատմէ սուրբն զորբուհւոյ կուսէն Քլարայ 'ի վարս ն՟ր, թէ զամս քսանևութն եկաց 'ի ծանր հիւանդութե՟. և այնքան մեծ եղև համբերութիւն նորա, մինչզի ընդ բոլոր ժա-

ժամանակն այն ոչ երբէք լուաւ ոք զգան_
գատ , և զտրտունջ իմն վասն մեծագոյն
վշտացն , զոր կրէր , այլ մանաւանդ միշտ
գոհանայր զՏՆէ : Եւ յորժամ կայր նա 'ի
վերջին հիւանդութե իւրում այնքան վշտա_
ցեալ , մինչ զի զաւուրս ութևտասն ոչ եւս
զպատառ մի եկեր , և մխիթարելով զնա խոս
տովանահայրն իւր եղբայր Ռինալտոսն՝ յոր
դորէր ունել զհամբերութի 'ի յայնպիսի եր-
կարագունի մարտիրոսուե հիւանդութեն ,
նա պատասխանեալ ասաց ցնա այսպ : Յոր_
մէհետէ ծանեայ զշնորհ ՏՆ իմոյ Յսի Քսի
միջնորդութք սբ ծառային իւրոյ Ֆրանչիս_
կոսի , ոչինչ հիւանդութի եղև ինձ խիստ ,
ոչինչ տանջանք երևեցաւ խոշտանգիչ , և
ոչինչ ապաշխարանք եղև ինձ ծանր : Ի՛ նաև
զարմանալի յաղագս այսորիկ , և անօրա_
գոյն օրինակ քաջալերելոյ և մխիթարելոյ
զհիւանդս , կեանքն Անտոնինայ կուսին , որ
կրեաց զծանրագոյն , և զմեծագոյն հիւան_
դութի և զցաւս զամս երեսուն և ութն ,
առանց կարելոյ յառնել երբէք զամս երե_
սուն 'ի յաղքատիկ մահճէ իւրմէ . և ոչ իսկ
կարաց կոխել զերկիր . ուր ՏՐ առնէր նմա
զշնորհս մեծամեծս :

Բայց քանզի կարեն մեզ ներկայանալ ոմանք
մանաւոր պատճառք՝ դունով և երևութիւ
մեծագունի բարւոյ՝ առ 'ի արգելուլ մեզ
զայս անտարբերութիս , և զհամակերպու_
թիս , ուստի կամիմ պատասխանել , և հա_
ճեցուցանել զնս : Նախ՝ կարէ ոք ասել այս
պէս . 'ի կողմանէ իմմէ ոչ է ինձ փոյթ լի_
նել մանաւանդ հիւանդ քան թէ առողջ ,
բայց այն որ ցաւեցուցանէ զիս , է այս , զի
թուի ինձ , թէ տամ զծանրութի կրօնին ,
և զնեղութի տանն : Առ այս պատասխա_
նեմ , թէ զայս ասելով՝ դատես զմեծաւորն
քո , և զայլ անձինս տանն , որպ թէ չունին

զսէր

զսէր եղբայրական , և ոչ թէ չունիցին զհա-
մակերպութիւն ընդ կամացն Այ : Ոչ գի-
տես , զի և մեծաւորքն պարապին 'ի կատա-
րելուն առ՚ի ընդունիլ զամ իրս ոչ եկեալս
'ի ձեռանէ Այ , և համակերպիլ 'ի յայնս
ընդ կամացն այ : Ուստի եթէ կամի ԱԾ ,
զի դու լիցես հիւանդ , և նոքա պարապիցին
'ի ծառայել քեզ , և գգուել զքեզ , նաև նք
կամին զայն . և ոչ դու բառնաս զխաչն ,
զոր քեզ տայ ԱԾ , նաև նոքա բարձցեն զայն՝
որ պատկանի նց մեծաւ համակերպութբ ը
կամացն այ :

Բայց թերևս ասիցես , բարուք տեսանեմ
ես զեղբայրսիրութիւն մեր , զոր յայտնին 'ի
գործածէ ընկերութիւն . այլ այն , որ զիս
վշտացնէ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ պատուղն ,
զոր կարէի առնել ուսմամբ՝ քարոզելով և
լսելով զխոստովանութիւն , որք ամենեքեան
լեն վն գոլոյս հիւանդ : Առ այս յոյժ բա-
րւոք պատասխանէ սրն Օգոստինոս ասե-
լով , թէ մեք ոչ գիտեմք , եթէ բարեգոյն
լիցի առնել , կամ թողուլ զայն , զոր կա-
միմք . ուստի պարտիմք տրամադրել և կար
գաւորել զիրս ըստ ընդունակութե մերում .
իսկ եթէ յետոյ կարասցուք ըստ կարգաւոր
ման մերոյ առնել զայն , ոչ պարտիմք ուրա
խանալ վն առնելոյ զայն , զոր մեք խորհե-
ցաք , և կամեցաք , այլ պարտիմք ուրախա-
նալ , զի հաճեցաւ Տն , թէ այնպ լինիցի :
Ապա եթէ ոչ լիցի այն , զոր մեք խորհե-
ցաք , և կարգաւորեցաք , ոչ պարտիմք վն
այսորիկ խռովիլ , և կորուսանել զխաղաղու-
թիւն : * Քանզի արդարագոյն իմն է , զի մա
նաւանդ մեք հետևեսցիմք կամացն այ , քան
թէ նա հետևեսցի կամաց մերոց ‖ : Յետ այ
սորիկ եզրակացուցանէ սրն Օգոստինոս և-
ասէ : * Ոչ ոք բարեաւ կարգաւորէ առնել
զիր ինչ , եթէ ոչ նա՝ որ պատրաստ է ոչ
առնել

առնել զայն, որ ածային կարողութըն ար-
գելանի, քան թէ առաւանօք առնել զայն,
որ մարդկային խորհրդով մտածի ||: Արդ՝
այսու կերպիւ, և այսու անտարբերու-
թբ պարտիմք տրամադրել և կարգաւո-
րել մեք զայն, զոր առնելոց եմք. իբր կա-
լով յոյժ տրամադրեցեալք առ՚ի համակեր-
պել զմեզ ընդ կամացն ածոյ, յորժամ ոչ եղա-
նի այն՝ զոր կամիմք: Եւ այսպէս ոչ ալմկիմք,
և ոչ տրտմիմք, յորժամ վս հիւանդութե,
կամ վս այլոց պատճառի ոչ կարեմք առնել
զայն, զոր խորհեցաք և տրամադրեցաք,
թէև իցեն յոյժ օգտակարք վս հոգւոյ: Կա-
րի բարւոք ասէ հայրն Աւիլա՝ գրելով առ
քահանայ մի հիւանդ. Մի թուեր զայն,
զոր կարէիր առնել գոլով առողջ, այլ խո-
կա զայն, թէ որքան հաճի Տր, զի համբե-
ցես ըն հիւանդ գոլն քո: Եւ եթէ խնդրես
(ըստ հաւատամ) զտաբար զկամն ածոյ, զինչ
փոյթ է քեզ կալն քո հիւանդ, կամ առողջ.

որովհետև կամքն ածոյ բոլորովին է բարի:
Սբ Ոսկեբերանն ասէ, թէ երանելին Յոբ
առաւել արդիւնաւորեցաւ այնու բանիւ,
զոր ասաց. Որպէս Տն հաճոյ թուեցաւ, նոյնպէս
և եղև. եղիցի անուն Տն օրհնեալ: Յոբ. 1. 21:
համակերպելով զինքն ընդ կամաց Նր յայնո-
սիկ վիշտս, և ՚ի հարուածս, զորս նա առա-
քեաց, քան թէ առնելովն զայնքան ողոր-
մութիս, և զբարիս ՚ի ժամանակի առողջու-
թե, և հարստութե: Արդ՝ սոյն կերպիւս
և դու առաւել հաճոյ լիցիս Այ համակեր-
պելով զքեզ ընդ կամաց Նր, յորժամ կաս
հիւանդ, քան թէ յայնժամ, յորժամ կա-
լով քո առողջ կարիցէիր առնել զբազում
իրս վս Նր: Զայս ասէ նաև փառաւոր սբն
Բօնավէնթուրա. * Առաւել կատարելա-
գոյն է զձախորդութիս համբերութբ տա-
նիլ, քան թէ ՚ի գործս բարիս քրտնաջան

 աշխա-

աշխատիլ ‖ : Այ ոչ ունի զկարիս յինէն, և
ոչ 'ի քէն վն առնելոյ զպտուղ: Ասացի տն,
Տր իմ ես դու, և բարիս իմ չեն ինչ պիտոյ:
Սաղմ. 15. 2: Այժմ նա կամի քարոզել քեզ
հիւանդութն, և կամի զի ուսանիցիս ունիլ
զհամբերութն, և զխոնարհութն: Թող զի
տրասցէ քեզ Այ, զոր կամի, և ոչ պատ-
շաճի քեզ, զոր դու ոչ գիտես: Զի եթէ
վն այլոց իրաց ցանկայաք ունիլ զսա, և զա
ռողջութն, զայնս պարտ էաք 'ի գործածել
'ի ծառայութն Այ, և առ 'ի հաճոյանալ
նմա: Արդ՝ եթէ Այ համարի առաւել
ծառայութն իւր, և առաւել հաճի, զի ես
պարապիցիմ 'ի հիւանդութն, և տանիցիմ
համբերութբ զվիշտս հիւանդութն և նե-
ղութն. ուրեմն այս է կամք նր, և բարե-
գոյն վն իմ, որ ինձ վայելէ: Թոյլ ետ Տր,
զի նր առաքեալն Պօղոս քարոզօղն հեթա-
նոսաց կայցէր 'ի բանտի զերկուս ամն՝ յայն-
միկ հարկաւոր ժամանակի նախնականի ե-
կեղեցւոյն: Ուրեմն մի թուեսցի քեզ մեծ
ինն, եթէ Այ կալնուցու զքեզ 'ի բանտի
հիւանդութն զերկուս ամիսս, կամ զերկուս
ամս, կամ զամ աւուրս կենաց քոց, եթէ
նմա այսպէս հաճոյ թուեսցի. որովհետև դու
ոչ ես այնքան հարկաւոր եկեղեցւոյն նր,
որքան էր նր առաքեալն Պօղոս:

Այլոց ոմանց սովոր է ներկայանալ՝ յոր-
ժամ են հիւանդք, և կամ ունին զցաւա-
գարութն, և զտկարութն ինչ երկար, և
յարակայական՝ ոչ կարելն հետևիլ հասարա-
կութն, և գոլն եղական 'ի բազում իրս,
զորմէ զգան զտհաճութիւն, թուելով ին-
քեանց, կամ ոչ գոլ այնքան կրօնաւորք,
որքան այլքն. կամ գոնեա այլք կարասցեն
գայթակղիլ տեսանելով զմասնաւորութիւն
նց, և զգգուանս, մանաւանդ երբեմն ոչ
երևելով արտաքուստ հիւանդութն, և հար-

կամակորութիւն ուրուք, ոչ ոք գիտէ զհիւանդութիւն նր, զոր կրէ, եթէ ոչ Ած, և ինքն հիւանդն. և այսպէս եղականութիւնս և աղատութիւնս այսպիսի յայտնեն ըստ ինքեանց զմտանաւորութիւն ։ Պատասխանեմ այսմիկ և ասեմ, թէ այս է յոյժ բարի և արդար նկատումն, և է իր մի յոյժ գովելի. բայց ոչ պարտի 'ի բաց բառնալ զհամակերպութիւն ըստ կամացն Այ 'ի հիւանդութեն, այլ կրկնապատկելոց է զարդիւնսն ։ Քանզի յորժամ համակերպես զքեզ 'ի միոյ կողմանէ ամբողջաբար ընդ կամացն Այ 'ի յմ տկարութեն, և 'ի ցաւագարութեն. (որովհետև կամի նա, զի զայն կրեցես). և 'ի միւս կողմանէ ունիս դու 'ի կողմանէ քումմէ զմեծ ցանկութիւն հետևելոյ կրօնին յմ կրթութիւնս յոյժ յօժարաբար, և լռապէս՝ զգալով քոյ զմեծ տհաճութիւն 'ի սրտի քում վն ոչ կարելոյդ առնել զայն յմ, զոր առնեն այլք, ոչ կորուսանես, այլ շահիս ։ Վն զի այսու կերպիւ՝ բաց յայնմանէ, զոր արդիւնաւորիս տանելով համբերութբ, և համակերպութբ զհիւանդութիւն, կարես նաև արդիւնաւորիլ այնքան ևս յայսմիկ յերկրորդ իրի, որքան արդիւնաւորին նոքա, որք են առողջք, և կան բարւոք, և առնեն զյմ կրթութիւնս կրօնի ։

Սբն Օգոստինոս 'ի բանին վաթսներորդ երկրորդ յաղագս ժամանակի պահոց խօսելով զպարաճանդութէ, զոր ամենեքեան ունէին պահելոյ զպահս յայնմիկ սբ ժամանակի ընդ պատժոյ մահուչափ մեղաց, և խօսելով զնմանէ, որ է հիւանդ, և ոչ կարէ պահել՝ ասէ ։ Սմա բաւական է ոչ կարելն պահել, և ուտելն ցաւօք սրտի իւրոյ, հեծելով և հառաչելով. զի պահեն այլքն, և ինքն ոչ կարէ պահել ։ Քանզի ոպ քաջ զինուորն, որ վիրաւորեցեալ տարեալ լինի 'ի վրանն՝

վրանն՝ առաւել զգայ զոչ կարելն մարտն-չիլ, և եղանիլ նշանաւոր 'ի ծառայութե՟ն թագաւորին իւրոյ՝ քան զցաւն վիրաց իւ-րոց, և զխստութիւն դեղոց և սպեղանեաց 'ի բուժման․ այսպ՟ս և բարի կրօնաւորքն յորժամ են հիւանդք, առաւել զգան զոչ կարելն հետևիլ հասարակութե՟ն, և ոչ կա-րել առնել զկրթութ՟ս կրօնին, քան թէ զհիւանդութ՟ս իւրեանց ։ Բայց 'ի վախճա-նի ոչ այս, և ոչ այլ իր ինչ պարտի զրկել զմեզ 'ի համակերպելոյ զմեզ ընդ կամացն Ա՟Յ 'ի հիւանդութե՟ն, ընդունելով զայն որպ՟ս առաքեցեալ 'ի ձեռանէն Ա՟Յ 'ի մեծագոյն փառս նր՟, և 'ի յօգուտ մեր ։

Երանելի սբն Հերոնիմոս պատմէ, թէ աղա-չեաց միայնակեաց մի զսբ՟ աբբայն Յօհաննէս եգիպտացին, զի բուժիցէ զնա 'ի հիւանդու-թէ, և 'ի մեծագոյն ջերմանէ, զոր ունէր․ և սբ՟ աբբայն պատասխանեալ ասաց ցնա․ ․ Դու ցանկաս 'ի բաց ընկենուլ 'ի քէն զայն, որ հարկաւոր է քեզ․ զի որպ՟ս մար-մինքն բարակէ, կամ այլով այսպիսի իրօք լուանին 'ի յաղտից, այսպ՟ս և հոգին լուանի և մաքրի ախտաժետութ՟բ, և այլովք այս-պիսեօք պատժովք, զոր կրէ ։

## ԳԼՈՒԽ. ԺԸ:

Թէ ոչ պարտիմք դնել մեք զյոյսն մեր 'ի բժիշկս, և 'ի բժշկական դեղորայս, այլ միայն 'ի յԱյ. և մեզ պարտիմք համակերպել զմեզ ընդ ամենայն կամաց նորա, ո՛չ միայն յաղագս հիւանդութեան, այլև յաղագս ամենից այնց իրաց, որք պատահին 'ի նմին:

Այն որ ասացաւ զհիւանդութեէ, իմանալի է նոյնն և յաղագս այլոց իրաց՝ որք սովորք են պատահիլ 'ի ժամանակի հիւանդութեն: Սբն Բարսեղ ուսուցանէ մեզ յոյժ բարւոք վս ժամանակին, յոր ժամ եմք հիւանդք, և ասէ. Թէ այնպէս պարտիմք կարօտիլ բժշկաց, և սպեղանեաց, մինչ զի ոչ դիցուք զբոլոր յոյսն մեր 'ի նս: Եւ զի ոչ արար այսպէ արքայն Ասա, յանդիմանէ զնա Ածաշունչն ասելով. 2. Մնաց, 16. 12: 'Ի հիւանդութեանն իւրում ոչ խնդրեաց զՏր, այլ խնդրեաց բժիշկս: Ո՛չ պարտիմք ընձեռել զմտմ պատճառս բուժեցեալ լինելոյ, կամ ոչ բուժեցեալ լինելոյ այսմիկ արհեստիս, այլ պարտիմք դնել զբոլոր յոյս մեր 'ի յԱծ. որ երբեմն կամի տալ մեզ զառողջութի 'ի ձեռն դեղոց, և երբեմն ոչ կամի տալ: Եւ այսպէ Թէև պակասեսցի մեզ բժիշկն, և բժշկական դեղն, (ասէ Սբն Բարսեղ.) ոչ պարտիմք վս այսորիկ յուսահատիլ յառողջութեէ:

Որպէս ընթեռնումք 'ի սրբազան աւետարանի, Քս փրկիչն մեր երբեմն բժշկէր՝ միայն կամիմ ասելով, որպ արար բորոտին այնմիկ, որ ասաց ցնա. Տր եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Եւ նա պատասխանեաց. Կամիմ, սրբեաց: Մատ. 8. 2: Երբեմն բժշկէր առաջարկելով զեր իմն, որպ յորժամ Թքոյն

աչաց

արար զկաւ, և ծեփեաց զաչս կուրին, և հրամայեաց նմա երթալ, և լուանալ յաւազանին, կամ յաղբիւրն սելովմայ ։ Եւ երբեմն թողոյր զհիւանդսն 'ի հիւանդութեան իւրեանց. և ոչ կամէր բժշկել զնա, թէպէտ և ծախեալ իցէին զամ ինչս իւրեանց 'ի բժիշկս, և 'ի բժշկական դեղս ։ Այսպէս է և այժմ. զի երբեմն տայ Այ զառողջութիւն առանց բժշկի, և դեղոց, միայն 'ի ձեռն կամաց իւրոց. երբեմն տայ զայն միջնորդութեամբ բժշկաց. և երբեմն թէպէտ և կոչիցէ ոք զբազում բժիշկս, և խնդրիցէ 'ի նոցանէ զնպաստ, և առնիցեն նմա բազում դեղս, սակայն Այ ո՛չ կամի տալ նմա զառողջութիւն. որպէս զի այսու ուսանիցիմք ոչ դնել զյոյս մեր 'ի միջոցս մարդկայինս, այլ միայն 'ի յԱյ ։ Որպէս և Եզեկիա արքայն ոչ վերաբերեաց զառողջութիւն իւր առ պաղատանս թզոյ, զոր ասաց նմա Եսայի դնել 'ի վերայ վէրին, այլ առ Այ, որ բժշկէ զամ հիւանդութիւնս մեր ։ Որպէս ասէ իմաստունն. Իմաս. 16. 12: Քանզի ո՛չ դեղ, և ո՛չ սպեղանեաց դեղ բժշկեցին զնոսա. այլ քո՛ Տր, բանդ, որ զամ բժշկէ ։ Եւ յորժամ ոչ բժշկեսցիս, մի՛ դատեր զբժշկաց, և զդեղոց, այլ վերաբերեա զամ ինչ առ Այ. որ ո՛չ կամի տալ քեզ զառողջութիւն, այլ կամի, զի կացցես դու հիւանդ ։

Նմանապէս յորժամ բժիշկն ոչ ճանաչէ զհիւանդութիւն, կամ առնէ զսխալումն ինչ 'ի դեղս, որ բազում անգամ պատահի նաև մեծամեծ բժշկաց, և վեհագոյն անձանց, դու պարտիս ընդունել զսխալումն զայն որպէս զգործ ինչ և զկատարումն կամացն Այ. այսպէս և զզանցառութիւն և զանհոգութիւն վերակացուի հիւանդաց ։ Ուստի մի՛ ասիցես, թէ յաղագս այն ինչ պակասութեան եղև քեզ, դարձաւ անդրէն 'ի քեզ ջերմն,

այլ ընկալ զամ ինչ որ եկեալ 'ի ձեռանէ
ԱՅ, և ասա. Այսպէս հաճեցաւ Տր, զի
պատճեսցի ջերմն իմ. և գայցէ ինձ այս ինչ
պատահումն. Քանզի արդարև, թէպէտ 'ի
կողմանէ նոցա, որ զքեզ կառավարէ, եղև
սխալումն, սակայն 'ի կողմանէ ԱՅ եղև
գործ և կատարումն կամաց նր. զի 'ի կող
մանէ ԱՅ ոչինչ իր եղանի պատահմամբ.
Համարիս դու, թէ անցանելն ծիծռանց,
և կուրացուցանելն ծրտով իւրեանց զաչս
սրբոյն Տօբիթայ՝ եղեալ իցէ պատահմամբ.
ոչ եղև պատահմամբ, այլ մեծաւ խորհրդովն
ԱՅ, և կամաւ նր յատկապէս. առ 'ի թո_
ղուլ մեզ զօրինակ նովաւ. որ և 'ի ձեռն
սրբոյն յոբայ. ըստ որում ասէ Ածաշունչն.
Տօբ. 2. 12. Զայս փորձութիւն վասն այնորիկ թոյլ
ետ ԱԾ գալ 'ի վր նր, որպէս զի յետնոց տացի
օրինակ համբերութեան նր, որպէս և սրբոյն յոբայ.
Եւ հրեշտակն ասաց ցնա. Եւ քանզի ընդու_
նելի էիր այ, հարկ եղև, զի փորձութիւն քննիցէ
զքեզ. Տօբ. 12. 13. Պատմի 'ի վարս հարանց
սրբոց զՍտեփաննոսէ աբբայէ, թէ մինչ
կայր նա հիւանդ, կամեցաւ ընկերն նորա
առնել նմա զապուր, և կարծելով առնել
զայն ձիթով, արար իւղով կտաւատի, որ է
յոյժ դառն. և մատոյց զայն նմա ուտել.
Աբբայն Ստեփաննոս եկեր անտի սակա_
ւիկ մի, և զգացեալ զդառնութիւն, այլ ոչ
եկեր. և լռեաց. Միւսանգամ զնոյն արար
ընկերն այնու կերպիւ, զոր ճաշակեալ Ստե
փաննոս ոչ կամէր ուտել. իսկ ընկերն ասէ,
կեր հայր, զի բարի է յոյժ. և առ 'ի շար_
ժել զախորժ նր 'ի ուտել՝ սկսաւ ճաշակել
և ինքն. և իբրև իմացաւ զդառնութիւն,
սկսաւ տառապիլ և ասել, մարդասպան
եղէ ես. Յայնժամ ասէ ցնա Ստեփաննոս.
մի ամբոխիր որդեակ իմ. զի եթէ ԱԾ կա
մեցեր, զի մի սխալիցէիր դու առնելով զմի

իւղն

խաղն փոխանակ միւսոյ, ոչ առնիցէիր զայս։ Նաև զայլոց բազմաց սրբոց ընթեռնումք զայս, զի ընդունէին մեծաւ համակերպութ̃ և համբերութ̃ զդեղս, զորս առնէին նց̃, թէ և լցէին ներհակք հիւանդութե նց̃ ։ Արդ՝ այսու կերպիւ տանելոց եմք և մեք սխալանաց՝ զանցառուեաց, և անհոգուեաց, թէ բժշկաց, և թէ հիւանդապանին առանց դանդատելոյ, և մեղադիր լինելոյ նց̃ ․

Րայս է իր մի, որով յայտնի և երևի մեծապէս առաքինութն մարդոյ ։ Ուստի մեծամ̃ չինէ զայլս կրօնաւոր մի, որ 'ի հիւանդութեն առնու զամ̃ ինչ համահանդիտութ̃, և ուրախութ̃, որ̃ եկեալ 'ի ձեռանէ Այ̃ ․ և թողու զինքն առաջնորդել, և կառավարել 'ի վեհագունէ՝ և 'ի հիւանդապանէ մառանալով և յետադրելով բոլորովին զամ̃ հոգս, և զփոյթ զինքենէ ։ Ասէ ս̃րն Բարսեղ ․ Եթէ հաւատացեր զհոգի քո վեհագունին, ընդէ՞ր ոչ հաւատաս նմա յանձնելով և զմարմինդ ։ Եթէ եդեր 'ի ձեռս նր̃ զյաւիտենական փրկութին, ընդէ՞ր ոչ դնես և զժամանակաւորն ։ Եւ որովհետև կանոնն այս մեզ հրաման յետադրելոյ յայնժամ ըզ հոգս մարմնոյ մերոյ, և հրամայէ զայս մեզ, պարտեմք մեծ համարել զիրս զայս, և քար ուք 'ի գործ ածել զայսպիսի օգտակար հրամանս ։ Հակադարձաբար՝ այս զվատթար օրինակ կրօնաւորն այն հիւանդ, յորժամ ունի զմեծ փոյթ զինքենէ, և զայնցանէ, զորս տալոց են նմա, թէ ո՞ր տան, կամ ո՞րդեօք ծառայեն ըստ ժամանակի, թէ ոչ․ այսպիսիս դիտէ բարւոք արանջել, և տըժգոհալ ։

Սարի բարւոք ասէ Կասիանոս, թէ հիւանդութին մարմնոյ ո՛չ է արգելիչ մաքրութե մարմնոյ, մանաւանդ է օգնական, եթէ ընդունեցեալ եղիցի, ո՞ր պարտ է ընդունել ։

նիւ ։ Բայց զգո՛յշ լեր ( ասէ , ) զի մի՛ հիւան-
դութիւն մարմնոյ անցցէ 'ի հիւանդութիւն
հոգւոյդ ։ Զի եթէ ոք առնու զաւիթ 'ի
հիւանդութենէ կատարել զկամս իւր , և ոչ
լինիլ հնազանդ և համբերեցեալ , յայնժամ
հիւանդութիւն անցանէ 'ի հոգին . և առնէ՝
զի հիւանդութիւն հոգևոր առաւել վտանգ-
նեսցէ զվեհագոյնն , քան թէ հիւանդութիւն
մարմնաւոր ։ Ոչ ոք պարտի վասն լինելոյն
հիւանդ՝ ցուցանել զինքն ոչ կրօնաւոր . և
ոչ պարտի խոկալ , թէ վն իւր ոչ գոյ կա-
նոն , և գնելով զամ հոգս իւր յառողջութե
իւրում , և դգուելով զինքն . մոռանայցէ
զայն , որ պատկանի օգտի իւրում ։ Ասէ
հայրն մեր , թէ հիւանդն առաւել պարտի
'ի ժամանակի հիւանդութե իւրոյ ջանալ
շինել զայլս՝ ցուցանելով զբազում խոնար-
հութի , և զհամբերութի , քան թէ 'ի ժա
մանակի կատարեալ առողջութե ։ Մն Ոսկե-
բերանն 'ի վր այնց բանից մարգարէին .
Սաղմ. 5. 13։ Տր որպէս զինու հաճութբ թագ պսա
կեցեր զմեզ։ Խօսելով թէ ցորչափ մնամք 'ի
կեանս յայս , միշտ գոյ պատերազմ , վն որոյ
պարտիմք միշտ կալ սպառազինեցեալք ,
ասէ . Ժամանակն հիւանդութե է ժամա-
նակ կալոյ միշտ սպառազինեցեալ , և բար-
ւոք պատրաստեցեալ առ'ի մարտնչիլ . որով
հետև յայնժմիկ ցաւքն զմեզ ամբոխեն , տրտ-
մութիւն զմեզ պաշարէ . և դևն առեալ ան-
տուստ զաւիթ դրդէ զմեզ , և ստիպէ խօ-
սիլ և տրտնջել անհամբերութբ ։ Եւ այսպ
յայնժամ է ժամանակ 'ի գործածելոյ , և
ցուցանելոյ զառաքինութի ։ Այլև սենե-
քա ասէ , թէ արի մարդն ունի զաւիթ 'ի
գործածելոյ զարիութի իւր՝ այնքան 'ի մահ
ճի , յորժամ կրէ զհիւանդութի , որքան 'ի
պատերազմի , յորժամ մարտնչի ընդ թշնա-
միս . զի գլխաւոր մասն արիութե առաւել

կայա

կայանայ 'ի տանելն համբերութբ, քան թէ 'ի յաղթելն : Այսպէս ասէ նաև իմաստունն : Առակ. 16. 32. Լաւ է այր համբերող, քան զհզօր. և որ յաղթէ բարկութեան, լաւ է քան զայն, որ առնու զքաղաքս հզօրս :

## Գ Լ Ո Ւ Խ. ԺԲ:

Հաստատէ որ ինչ ասացաւ, օրինակօք ոմամբք :

Ընթերցեալ լինի 'ի վարս սրբուհւոյ կուսին Գեղթրուտայ, թէ անգամ մի երևեցաւ նմա Քս փրկիչն մեր, որ ունէր յաջոյ ձեռին զառողջութին, և 'ի ձախն զհիւանդութին. և ասաց ցնա. ընտրեա դու 'ի սոցանէ, զորն և կամիս : Առ որ նա պատասխանեալ ասաց. Տր, այն, որում ես ցանկամ 'ի բոլոր սրտէ իմմէ, է, զի մի հայեցիս դու 'ի կամս իմ, այլ զի եղիցի 'ի յիս այն, որ լիցի 'ի մեծագոյն փառս և 'ի հաճութի քո :

Պատմի զառնէ միոյ, որ էր ջերմեռանդ առ սրբն Թովմաս կանթվարիեցին, թէ գոլով սա հիւանդ գնաց 'ի գերեզման սրբյն, և հայցեաց 'ի նմանէ աղաչել զԱծ վս առողջութե իւրոյ, և ընկալաւ զայն : Եւ յորժամ դարձաւ առողջ 'ի գաւառ իւր, սկսաւ խորհիլ 'ի միտս իւր և ասել, եթէ հիւանդութիւնս այս պատշաճաւոր էր վասն փրկութե իմոյ, ընդէ՞ր կամեցայ զառողջութի : Եւ այնքան բանադատեցաւ այսու պատճառաւ, մինչ զի դարձեալ անդրէն 'ի գերեզման սրբյն աղաչեաց զնա, հայցել յԱյ վս նր զայն, որ առաւել օգուտ էր վս փրկութե : Եւ այսպէս դարձոյց Աճ առ նա զհիւանդութին. և նա եկաց յոյժ մխիթարեցեալ այնու հիւանդութբ, ճանաչելով թէ այն առաւել վայելուչ էր ինքեան :

Պատմէ սուրիոս 'ի վարս սբյն պէտաստոսի

եպիսկոպոսին, զայս օրինակ մի նման սքան
զկոյր մարդոյ միոյ, որ յաճախելն փոխադրու-
թե մարմնոյ նոյ եպիսկոպոսի այսորիկ ցան-
կացաւ յոյժ տեսանել զնէ նշխարս նր, և
հեռաւոր ունիլ զտեսութի յաղագս այնո-
րիկ : Նորա զտեսութիւն ՚ի տնէ, և ետես
զայն՝ որում ցանկայր . և մինչդեռ ունէր
զտեսութին, սկսաւ աղօթել, զի եթէ տե-
սութին այն ոչ էր պատշաճաւոր վն բարու-
թե հոգւոյ իւրոյ, դարձուսցէ յինքն կու-
րութին : Եւ արարեալ զայս աղօթս, վերս-
տին մնաց կոյր, ոպ յառաջն :

Պատմէ սբն Հերոնիմոս, թէ յորժամ սբ.
Անտոնիոս աբբայն եղև կոչեցեալ ՚ի սբյն
Աթանասէ եպիսկոպոսէ ՚ի քաղաքն աղեք-
սանդրիայ առ ՚ի օգնել՝ և ՚ի բաց մերժել
զհերետիկոսութիս, որք անդ թագաւորէին,
դիդիմոս, որ էր այր յոյժ հանճարեղ, բայց
կոյր մարմնաւոր աչօք, խօսեցաւ ընդ սբյն
Անտոնիոսի ՚ի վր բազում իրաց սբաշունչ
գրոց, և սբն Անտոն կայր զարմացեալ ընդ
հանճարն, և ընդ իմաստութի նր : Արդ
յետ բանից այսոցիկ՝ եհարց զնա սբն Ան-
տոն, և ասէ . արդեօք տրտմիս յաղագս կու-
րութե աչացդ քոց թէ ոչ . իսկ նա լռեաց,
և ոչ կարաց պատասխանել վասն ամօթոյն :
Այլ ՚ի վախճանի իբրև հարցաւ երկիցս,
և երիցս՝ խոստովանեցաւ ճշմարտութք, թէ
այս զգամ զտրտմութի : Յայնժամ ասէ ցնա
սբն . զարմանամ ես, թէ մարդ մի՝ այդքան
հանճարեղ՝ տրտմեսցի և ցաւեսցի վասն ոչ
ունելոյ զայն, զոր ունին ճանճք, մրջիւնք,
և որդունք երկրի . և ոչ ուրախասցի վն
ունելոյ զայն, զոր միայն սբքն, և առա-
քեալքն արժանաւորեցան ունիլ : Ուստի
կարէ տեսանել (ասէ սբն Հերոնիմոս) թէ
առաւել բարի է ունիլ զաչս հոգեւորս՝ քան
թէ զմարմնաւորս :

Պատմագիրս կարգին նորին Դոմինիկոսի պատմէ հայրն Ֆերտինանտոս, թէ յորժամ կայր սրբն Դոմինիկոս 'ի հռոմ, այց առնէր կնոջ միում հիւանդի, որ էր մեծ աղախին ԱՅ, և կայր առանձնացեալ յաշտարակի միում առ դուռն նորին Յոհաննու Լատերանու։ Եւ սովոր էր երանելի հայրն Դոմինիկոս խոստովանեցուցանել զնա բազում անգամ, և մատակարարել նմա զամենասուրբ հաղորդութիւն։ Կինս այս կոչիւր Բօնա, և կեանք նր էր այնքան համակերպ անուանն իւրում, (զի պօնա 'ի հայս թարգմանի բարի) մինչ զի ԱԾ ոչ զբարի աղախին իւր խրատէր զնա՝ ունիլ զանդութիւն 'ի վիշտս, և զհանգիստ 'ի մահուան։ Սա կրէր զխոստադոյն ցաւ ինչ 'ի ստինսն, որք այնքան նեխեցեալք էին՝ և լցեալք շարաւով և որդամբք. մինչ զի այն էր տանջանքմի, զոր անհնար էր կրել ումեք, եթէ ոչ նմա, որ տանէր այնմ զարմանալի համբերութբ, և գոհանայր զԱՅ։ Վասն որոյ սրբն Դոմինիկոս տեսեալ զնա, զի էր յոյժ հիւանդ, և յոյժ զարգացեալ յառաքինութե, սիրէր զնա մեծաւ։ Յաճախ միում յետ խոստովանեցուցանելոյ զնա, և հաղորդելոյ, կամեցաւ տեսանել զզազրալի, և զահարկու վէրն զայն. բայց նա մեծաւ դժուարութբ եցոյց զայն։ Եւ յորժամ եբաց նա զստինսն, և սրբն տեսեալ զշարաւն և զքաղցկեղն և զորդունսն, որք եռային, իսկ և զհամբերութն և զուրախութն նր, սկսաւ ցաւակից լինել նմա։ Բայց քանզի առաւել ցանկայր վերաց նր, քան թէ գանձուց աշխարհիս, վս որոյ աղաչեաց զնա մեծաւ աղերսանօք, տալ նմա ըզմին 'ի յորդանց անտի որպս զնշխար։ Իսկ աղախինն ԱՅ ոչ կամեցաւ տալ նմա զայն, եթէ ոչ նա նախ խոստանայցէ դարձուցանել զայն անդրէն առ ինքն. քանզի նա որ-

դէն ժամանեալ էր 'ի տխրել այնքան, մինչ զի կամէր կենդանւոյն կլանել 'ի յորդանց իւրոց։ Սուսի յորժամ անկանէր յերկիր մին 'ի յորդանց անտի, առեալ զայն դարձեալ դնէր 'ի տեղւոջ իւրում։ Եւ այսպէս ըստ խոստման նր ետ նմա զմին, որ էր պակասելի ինչ մեծ, և սեաւ գլխով։ Եւ նոյն ժամայն իբրև եառ զայն 'ի ձեռս իւր սրբն Դոմինիկոս, դարձաւ և եղև նա գեղեցկագոյն մարգարիտ մի։ Ընդ որ զարմացեալ եղբարքն՝ աղաչէին զհայրն իւրեանց չդարձուցանել զայն յետս. և ներհակաբար հիւանդն հայցէր զորդն իւր, ասելով, տուք ինձ զմարգարիտն իմ. և մինչ տուաւ նմա այն, առժամայն եղև որդն, որպէս էր յառաջն. և նա առեալ եդ զայն 'ի սափորն, ուր և իսկ ծնեալ էր, և սնանիւր անդ։ Եւ սրբն Դոմինիկոս արարեալ աղօթս վասն նր, և տուեալ նմա զօրհնութիւն իւր նշանաւ խաչին, եթող զնա, և գնաց։ Իսկ մինչ դեռ իջանէր նա ընդ աստիճանս սանդղոյ աշտարակին, թափեցան ատամնքն հիւանդին չարաճով և որդամբք հանդերձ, և այնուհետև սկսաւ աճել միսն, և յետ սակաւուց աւուրց առողջացաւ բոլորովին։ Եւ պատմէր ամենեցուն զնրս զարմանալիս, զոր Այ առնէր միջնորդութբ ծառային իւրոյ Դոմինիկոսի։

Ի նոյն պատմութեն ձեռի, թէ յորժամ եղբայր Ռէջինալդոս խօսեցաւ ընդ սբյն Դոմինիկոսի առնուլ զզգեստ կարգին նր, և հաստատեաց առնել զայն, դէպ եղև նմա հիւանդանալ յարակայական ջերմամբ, որ ըստ կարծեաց բժշկաց երևէր մահացու հիւանդութիւն։ Եւ նբ հայրն Դոմինիկոս յուժգին հոգաց վն առողջութե նր. զի հանապազ աղօթէր վն նր առ Այ. և երկոքինն համանդամայն կարգային յօգնութե

զոր Աստածինն բազմաւ ջերմեռանդութբ ։ Եւ մինչ նոքա երկրպագեալն էին յայս խնդրուածս , եմուտ 'ի կայարանն Բուէճինալտոսի ամենայն Թագուհին երկնից յոյժ զարմանալի փայլմամբ , և երկնային ճառագայթիւք , և ընդ նմա երկու երանեցեալ կուսանք , որք Թուէին դոլ սրբուհին Չեչիլեայ , և սրբուհին Կատարինէ մարտիրոսքն ․ որք և 'ի միասին ընդ մեծագոյն Թագուհւոյն մերձ եղեն առ մահիճն հիւանդին ։ Եւ սբ Կոյսն ողջ Թագուհի և մայր գթութեն մխիթարեաց զնա ասելով ․ զինչ կամիս , զի աբարից վն քո ․ ահա գամ առ քեզ տեսանել զայն , զոր խնդրես ․ ասա ինձ , զի տացի քեզ ։ Սկսաւ Բուէճինալտոս մնալ արգելեցեալ այսպիսի երկնային տեսլեամբ , և էր տարակուսեալ , և ոչ գիտէր , թէ զինչ պարտէր հայցել , որ լինէր պատշաճաւոր , և զինչ պարտէր ասել ։ Բայց մինն 'ի սրբուհեացն , որք էին ընդ տիրամօրն , վաղվաղակի էհան զնա 'ի տարակուսանացն , զի ասաց ցնա ․ ով եղբայր՝ մի հայցեր զիր ինչ , այլ յանձն արա զքեզ բոլորովին 'ի ձեռս նր , զի առաւել բարւոք գիտէ նա տալ , քան թէ դու հայցել ։ Ընկալաւ հիւանդն զխմաստուն , և զխոհեմ խրատս զայս , և պատասխանեաց առ կոյսն , և ասէ ․ Տիրուհի՝ ես ոչ հայցեմ զիր ինչ , և ոչ ունիմ զայլ կամս , եթէ ոչ զքոյն , ուստի յանձնեմ և 'ի ձեռս քո դնեմ զիս ։ Յայնժամ ձգեալ զձեռն իւր սբ կոյսն Մարիամ , էառ զձէթն , զոր յազագս այսորիկ բարձեալ բերէին այնոքիկ աղախնեայք իւր , և էօծ զԲուէճինալտոսն այնու կերպիւ , որով սովոր է օծել 'ի վերջին օծման ։ Եւ այնքան զօրաւոր եղև շօշափումն սրբասնեալ ձեռացն այնոցիկ ․ մինչ զի իսկոյն մնաց ազատ 'ի ջերմանէ , և առողջ ․ և այնպ նորոգեցաւ ոյժն մարմնաւոր ,, մնչ

թէ

թէ ոչ լիցէր եղեալ հիւանդ։ Բայց այն որ է առաւել զարմանալի՝ է այս, զի ընդ մեհագոյն շնորհիս այսմիկ, տուաւ նմա այլ շնորհ մի առաւել մեծագոյն 'ի զօրութե հագւոյ նորա․ զի այնուհետեւ ոչ երբէք զգայ զշարժումն ինչ զգայական, եւ ոչ զանպարկեշտ իմն յանձին իւրում՝ զա՛մ աւուրս կենաց իւրոց՝ յոչ իմիք ժամանակի, եւ յոչ իմիք տեղւոջ, եւ առթի։

Դ՚յեկեղեցական պատմութե՛ ձայնի, թէ 'ի մէջ անձանց, որք ծաղկէին յայնմ ժամանակի, էր կարի գերապայծառ Բենիամինն, որ ունէր զպարգեւ յա՛յ բուժելոյ զհիւանդս առանց դեղոց․ զի միայն շօշափմամբ ձեռաց, կամ օծանելով սակաւ ձիթով, կամ առնելով զաղօթս 'ի վ՛ր նց, բժշկէր զնս։ Ընդ շնորհիս այսմիկ, որով բժշկէր զայլս, ստացաւ եւ ինքն զծանրագոյն հիւանդութե ջրգողութե, որով այնչափ եղեւ ուռուցեալ, մինչ զի ոչ կարէր ելանել 'ի սենեկէն, մինչեւ ոչ լայնացուցանիցէին զդուռն․ եւ այսպէս եկաց 'ի սենեկի զամիսս ութն, մինչեւ մեռաւ նստեալ 'ի լայնագոյն աթոռ․ եւ անդ բժշկեաց զբազում հիւանդս՝ առանց տրտնջելոյ եւ առանց տրտմելոյ վասն ոչ կարելոյն բուժել զինքն։ Եւ՛ զնոսա որք ցաւակցէին նմա, մխիթարէր եւ ասէր, աղաչեցէք զՏ՛Ծ վ՛ն հոգւոյ իմոյ, եւ մի՛ հոգայք վ՛ն մարմնոյս, որ նաեւ յառողջութե ոչ էր պիտոյ ինձ։

Պատմի 'ի հոգեւոր հովտի զմիայնակեցէ միոյ բեռնաբէոս կոչեցելոյ, թէ 'ի ճանապարհին մխեցաւ յոտս նր մացառ մի փայտի․ իսկ նա զաւուրս ինչ ոչ կամեցաւ հանել զայն, եւ ոչ 'ի գործածել զդեղ առ վէրն, առ'ի ունել զառիթ կրելոյ զցաւ իմն վ՛ն սիրոյն Այ․ Եւ՛ ասի թէ սովոր էր ասել այնոցիկ, որք աղցանէին նմա, թէ որչափ առաւել կրէ, եւ մանհացուցանէ մարդն արտաքին, այնչափ

առա-

առաւել կենդանանայ, և արկանայ մարդն ներքին ։

Ի վարս սրբոյն Պակումիոսի պատմէ Սու- րիոս զմիայնակեցէ միոյ Զաքէոս կոչեցելոյ. և ասէ. սա թէպէտ հիւանդ էր չարաչար ցաւով, սակայն ոչ թուլացուցանէր երբէք զխստութիւն սովորական պահոցն, զի միայն զհաց և զաղ ուտէր, և ոչ կասէր յաղօթիցն, զոր սովորք էին առնել այլք միայնակեացքն առողջք, երթալով առ առաւօտեան ժամն, և առ այլ ժամսն. իսկ զմնացեալ ժամա- նակն, յորում դադարէր յաղօթելոյ՝ ծա- խէր 'ի հիւսել զափիրթս, զզամբիղս, և ըզ- չուանս, և յաղագս խստութեան խոտոյն, զոր հիւսէր, ունէր զձեռսն այնքան չարաչար վիրաւորեցեալս, և պատառոտեցեալս, մինչ զի անդադար հեղանէր արիւն 'ի ձեռացն. և զայս առնէր առ 'ի ոչ կալ դատարկ ։ Եւ 'ի գիշերի նախքան զննջելն, սովոր էր մտա- ծել զբան ինչ ածաշունչ գրոց. և ապա կըն- քելով զինքն նշանաւ խաչին, ննջէր մինչև ցժամ առաւօտեան ժամուն. և յարուցեալ դնայր միշտ ընդ առաջ 'ի ժամն, և կայր 'ի նմին, և յայլ աղօթս մինչև ցաւէն ։ Այս- պէս բաժանեցեալ ունէր զժամանակն ամ այրս այս հիւանդ, և այսպիսի էին սովորա- կան կրթութիւնք նր ։ Պատահեցաւ անգամ մի, զի գնաց առ նա միայնակեաց մի, որ տեսեալ զձեռս նր այնպ վիրաւորեցեալս, ասաց ցնա, օծ եղբայր ձիթով զդոսա, ոմ զի մի զգայցես զայդչափ ցաւ պատառոտա- ծոց դոցա ։ Արար Զաքէոս զայն, բայց ոչ միայն ոչ զիջաւ ցաւն, այլ ևս առաւել ա- ճեցաւ ։ Գնաց յետոյ տրն Պակումիոս 'ի տեսանել զնա, և նա պատմեաց նմա, զոր արարն ։ Յայնժամ ասէ ցնա տրն Պակու- միոս. կարծէիր դու որդեակ, թէ Ած ոչ տեսանէ զամ հիւանդութիւս մեր, որ եթէ

հաճի

հաճիցի, մինթէ ո՞չ կարէ փարատել զայնս, և յորժամ ոչ կամի առնել զայս, այլ թոյլ տայ, զի կրեսցուք զցաւն, մինչև հաճիցի նա վ̄ն ո՞յր վախճանի կարծես դու, թէ առնիցէ զայս, եթէ ոչ վ̄ն այնորիկ, ո̄ր զի մեք թողուցումք զա̄մ հոգս մեր 'ի նա, և միայն 'ի նմա դիցուք զա̄մ յոյս մեր ։ Այլև առնէ զայս 'ի յօգուտ հոգւոց մերոց, ո̄ր զի յետոյ կարիցէ յաւելուլ զհատուցումն և զվարձն յաւիտենական վասն այսոցիկ սուղ վշտաց՝ զորս առաքէ մեզ ։ Այսու սկսաւ զաքէոս փղձկել յոյժ, և ասէ ցնա ։ Թո՛ղ ինձ հայր, և աղաչեմ զԱ̄ծ, զի և նա թողցէ զյանցանս սակաւայուսութե իմոյ, և թերութե համակերպութե առ կամս Ն̄ր, և ցանկանալոյ բժշկութե ։ Եւ իբրև գնաց անտի պակումեոս, սկսաւ զաքէոս պահել զտարի մի ամբողջ վասն այսպիսի թեթեւագոյն մեղաց՝ այնքան խստագոյն պահօք, մինչ զի ո՛չ ուտէր, եթէ ոչ յերկուս աւուրս միանգամ զսակաւ ինչ ։ և լայր բազում ։ Սովոր էր յետոյ մեծն պակումեոս պատմել զայս երևելի օրինակս միայնակեցաց իւրոց առ 'ի յորդորել զնոսա յարատևել 'ի վիշտս, և յուսալ յԱ̄ծ, և համարել իր ինչ զփոքրիկ պակասութիս ։

## ԳԼՈՒԽ. ԺԹ:

Յաղագս համակերպութե͞ն, զոր պարտիմք ունել առ կամս ա͞յ թէ 'ի կեանս, և թէ 'ի մահու :

Պարտիմք համակերպիլ առ կամս ա͞յ նաև 'ի մեռանիլ, և 'ի ապրիլ : Եւ թէպէտ մեռանիլն ըստ բնութե͞ն խրթում է կարի դժուարին . զի ո͞պ փիլիսոփայն ասէ, 'Յ͞ամ իրս ոչինչ գոյ ահարկու և դառնագոյն քան զմահն || : Բայց սակայն 'ի կրօնաւորաց 'ի բաց բարձեալ է, և դիւրեցեալ ըստ մեծի մասին այս դժուարութիւն : Քանզի արդէն արարաք զկէսն ճանապարհին, և դրեթէ զամն : Նախ 'ի մէջ այլոց իրաց, յաղագս որոյ մարդիկ ծիս զգան զդժուարութի͞ն մահու, և յոյժ ցաւեցուցանէ զնոսա մերձենալն մահուան, մինն է այս, զի թողուն զհարստութիւնս, զպատիւս, զհեշտութիւնս, և զզբօսանս, և զզուարճութիւնս, զորս ունէին 'ի կեանս յայս : Թողուն զբարեկամս, և զազգականս, ոմանք զկանայս, ոմանք զորդիս, որք յայնմիկ ժամանակի տան ոչ սակաւ վիշտս, մանաւանդ յորժամ ոչ են բարւոք յարդարեցեալք, և կարգադրեցեալք : Արդ՝ կրօնաւորին զայս ա͞մ արդէն եթող . ուստի ո՛չ զգայ զվիշտ և զցաւ : Յորժամ առաջի է բարւոք զատեցեալ 'ի ընտերաց, դիւրաւ կարէ հանել, բայց եթէ կամիցիս հանել զայն սաստիկ զատելոյ 'ի ընտերաց, պատճառեսցէ քեզ զմեծագոյն ցաւ : Այլ ո͞չ ևս կրօնաւորին, որ արդէն զատաւ յա͞մ իրաց աշխարհիս, ոչ պատճառէ զցաւ 'ի ժամու մահուան թողուլն զայնս . զի եթող զա͞մ կամաւորաբար, և մեծաւ արդեամբ, յորժամ եմուտ 'ի կրօնն, և ոչ

սպա

սպասեաց թողուլ զայնս 'ի կէտ մահուան , որպ̄ տեսնեն աշխարհականքն , որք յայնմ ժամու 'ի հարկէ թողլոց են , թէեւ ոչ կամիցին թողուլ . բայց թողուն մեծաւ ցաւով , եւ բազումանգամ առանց իրիք օգտեան . որովհետեւ մանաւանդ ինչքն թողուն զստացիչս իւրեանց , քան թէ նոքա զայնս ։ Եւ 'ի մէջ այլոց պատեհից կրօնաւորաց , մինն է այս՝ թողուլ զաշխարհս , եւ մտանել 'ի կրօն ։ Եւ սբ̄ Ռոկեբեկրանն յոյժ բարւոք նկատէ , եւ ասէ , թէ յոյժ ցանկալի է լինելոց մահն նց̄ , որք յաշխարհի աստ կան յոյժ միաւորեցեալք ընդ ինչս , ընդ զբօսանս , ընդ փառթամութիւնս , եւ ընդ փափկութիւնս , ըստ այնմ , զոր իմաստունն ասէ , Սիրաք. 41. 1։ Ո՜վ մահ որչափ դառն է յիշատակ քո առն , որ ունի խաղաղութիւն 'ի ստացուածս իւր ։ Արդ՝ եթէ միայն յիշատակն մահու է դառն , ապա զինչ լինելոց է ներկայութիւն նորա ։ Եթէ մահն խորհեցեալ՝ է դառն , ապա զինչ եղիցի ճաշակեցեալն ։ Բայց ոչ է դառն վն̄ կրօնաւորին , որ եթող զայս ամ̄ , այլ եղիցի յոյժ բերկրալի , եւ ախորժելի իբրեւ զեզր եւ զվախճան ամ̄ վշտաց իւրոց . եւ այնպ̄ է վն̄ նր̄ , որպ̄ թէ գնայ 'ի առնուլ զվարձս , եւ զհատուցումն համայնից այնոցիկ , զորս եթող վն̄ Այ̄ ։

Այլ գլխաւոր իր մի , որ սովոր է պատճառել զվիշտ , եւ զցաւ յայնմիկ ժամու մարդկան աշխարհիս , եւ առնէ նց̄ զմահն ահարկու եւ զարհուրելի՝ ըստ որոյն Ամբրոսիոսի , է վատթար խիղճմտացն , եւ պակասութիւն բարի նախապատրաստութե̄ ։ Իսկ այս ոչ ունի , եւ ոչ պարտի ունել զտեղի 'ի կրօնաւորն . քանզի բովանդակ կեանք նր̄ է յարակայ նախապատրաստութիւն բարւոք մեռանելոյ ։ Պատմի վն̄ որոյ կրօնաւորի միոյ , թէ յորժամ ասաց նմա բժիշկն , զի պատ-

րաս-

բասանեցի առ՚ի մեռանիլ. Նա պատասխա
նի ետ և ասէ ցբժիշկն, յորմէհետէ զգե-
ցայ զզգեստս զայս կրօնաւորական, զայլ
ոչինչ արարի, եթէ ոչ պատրաստիլ վն̃ մա-
հուան ։ Այս է կրթութիւն կրօնաւորին,
զի նոյն ինքն կացութիւն կրօնին խրատէ ըզ
մեզ կալ այնու պատրաստութ̃բ. զոր Ք̃ս
փրկիչն մեր կամի, զի ունիցիմք յաղագս
դալստեան իւրոյ, ասելով ։ Եղիցին գօտիք
ձեր պնդեալ ընդ մէջս, և ճրագունք լուցեալ ՚ի ձեռս
ձեր ։ Ղուկ. 12. 35 ։ Սր̃բն Գրիգորիոս ասէ,
թէ պնդելն զմէջս՝ նշանակէ զողջախոհու-
թիւն, և ունիլն զճրագունս լուցեալ՝ նշա-
նակէ զբարեգործութիւս, և այսոքիկ երկու
իրքս փայլին նախապետաբար ՚ի կրօնաւորա
կանի կացութե̃. ուստի բարի կրօնաւորն
ոչ ունի զառիթ երկնչելոյ ՚ի մահուանէ ։

Արժան է նկատել աստէն զիր մի, զոր-
մէ խօսեցաք նաև այլ ուր, որ յարմար է
առաջադրութեա մերում, և է այս, թէ ՚ի
մէջ այլոց նշանաց բարեաց առ՚ի ճանաչել,
թէ ունիցի ոք զբարի խիղճմտաց, մինն է
կալն բարեա̃ ընդ Ա̃յ, և գոլն յոյժ հա-
մակերպ ը̃ կամաց նորին յայնմիկ, որ պատ-
կանի մահուան իւրում, և սպասելն այնմիկ
մեծաւ ուրախութ̃բ, ո̃պ թէ ոք սպասէ փե-
սային իւրում առ՚ի տանել ընդ նմա զհար-
սանիսն երկնային ։ Եւ դուք նմանօղք մարդ-
կան, որք ակնկալուիցեն տ̃ն իւրեանց, թէ երբ դառնայ
ցէ ՚ի հարսանեաց ։ Ղուկ. 12. 36 ։ Եւ հակադար
ձաբար տհաճիլն ուրուք ընդ մահն իւր, և
ոչ ունիլն զհամակերպութիս զայս, ոչ է նշան
բարի ։ Սովորք են առբերիլ ազնիւ օրինակք
ամենք առ՚ի պարզաբանել զայս իրս ։ Տես
թէ որպիսի խաղաղութ̃բ և հանդարտութ̃բ
երթայ ոչխարն ՚ի սպանդ՝ առանց բանա-
լոյ զբերանն, և առանց ընդդիմանալոյ ու-
մեք. և զայս օրինակս բերէ ա̃ծաշունչն զՔ̃սէ
փրկչէն

փրկչէն մերմէ ասելով: Իբրեւ զոչխար 'ի սպանդ վարեցաւ: Եսայ. 53. 7: Բայց աղտեղի կենդանիին, զի խոզն յոյժ ճչայ, և յոյժ ընդդիմանայ՝ յորժամ կամին զենուլ զնա: Արդ՝ այս տարբերութիւն գոյ 'ի մէջ բարեաց, որք նշանակին ոչխարաւն, և վատթարաց և մարմնաւորաց, որք նշանակին խոզիւն: Նա որում հասանեցեալ է վճիռ մահուան, քանզի անգամ խմանայ զբացումն դրան բանտին, տրտմի, զի խորհի, թէ կամին հանել անտի առ 'ի կախել: Բայց անմեղն, որ է արձակեցեալ՝ ուրախանայ քանզի անգամ խմանայ զբացումն դրան, զի խոկայ՝ թէ երթան առ 'ի ազատել զնա: Այսպէս ամբարիշտն, յորժամ խմանայ զձայնն փականաց մահու, մինչ հիւանդութիւն տագնապէ զնա, սկսանի զարհուրիլ, և վշտանալ մեծապէս. զի ունի բծաւորեցեալ զխիղճմտացն, և հաւատայ առաքիլ 'ի բոց հրոյն դժոխոց յաւիտենականաբար: Բայց նա որ ունի զմաքուր խիղճ մտաց, մանաւանդ ուրախանայ, զի գիտէ թէ ունելոց է զազատութիւն, և զհանգիստ յաւիտենական: Արասցուք ուրեմն մեք զայն, զոր պարտիմք առնել որպէս բարի կրօնաւորք, և ոչ միայն ոչ զգայցուք զդժուարութիւն 'ի համակերպելն զմեզ 'ի ժամու մահուան ընդ կամացն Այ. այլ մանաւանդ ուրախասցուք, և աղաչեսցուք զԱծ ընդ-[illegible]որդարէլն, զի հանիցէ զմեզ 'ի բանտէ յայսմանէ ասելով: Տր հան 'ի բանտէ զանձն իմ:

Սաղմ. 141. 8:

Սբն Գրիգորիոս 'ի վր այնց բանիցն Յոբայ. 5. 22: 'Ի գազանաց վայրենեաց ոչ երկիցես: ասէ, *Ապահովութիւն մտաց 'ի մահուանն՝ է սկիզբն հատուցման արդարոց ||: Զի 'ի մահուան սկսանին ճաշակել զկաթիլ մի հանգստութեան այնորիկ, որ որպէս գետ առատ և պարարտ շուտով է մտանելոց 'ի հոգիս նց:

Առ-

Որդէն սկսանին զգալ զերանութիւն իւր-
եանց: Եւ հակադարձաբար ամբարիշտքն
սկսանին զգալ զտանջանս և զդժոխս իւ-
րեանց այնու ահիւն, և խայթմամբ խղճի
մտացն, զոր զգան յայնմիկ ժամու:

Մի որոյ ցանկալն մահու, և ուրախանալն
ընդ այն, է յոյժ բարի նշան: Սրբն Յօհան
նէս կլիմաքեանն ասէ այսպէս· յոյժ գովելի
է նա, որ սպասէ յամենայն աւուր մահուան,
բայց նա, որ յամենայն ժամու ցանկայ նմա,
է սուրբ: Եւ սուրբն Ամբրոսիոս գովէ զնոսա, որք
ունին զցանկութիւն մեռանելոյ: Եւ այսպէս
տեսանեմք, զի հին նահապետքն այնոքիկ ու-
նէին զայս ցանկութիւն՝ համարելով զինքեանս
պանդուխտս, և օտարս 'ի յերկրի աստ, և
ոչ հաստատ բնակիչս: Ասէ սուրբն Ամբրո-
սիոս· * Խոստովանէին զանձինս իւրեանց
գոլ պանդուխտ, և հիւր 'ի վերայ երկրի ||: Եւ
սոյնպէս յոյժ բարւոք ծանոյց սուրբն Պօղոս· Եբր.
11. 14: Որք այսպիսիսն խօսին, յայտ առնեն,
եթէ զհայրենիսն խնդրեն: Այս էր այն, վասն
որոյ հառաչէր մարգարէն Դաւիթ ասե-
լով: Սաղմ. 119. 5: Վա՜յ ինձ, զի ընդ երկար
եղև պանդխտութիւն իմ: Արդ՝ եթէ զայս ա-
ռնէին հին հարքն այնոքիկ, յորում ժամանա-
կի փակեցեալ կայր դուռն երկնից, ուր
չէին գնալոց իսկոյն, ապա զինչ եղիցի վասն
այժմուս, յորում կայ բացեալ, ուր իսկոյն
գնայ հոգին մաքուր՝ առ 'ի զմայլել Ած:

# Գ Լ Ո Ւ Խ. Ի:

## Յաղագս ոմանց պատճառաց և շարժառիթից, վասն որոց կարեմք օրինաւորապէս և արժանաւոր ցանկալ մահու:

Որպէս զի կարիցեմք առաւել բարեաւ և մեծաւ կատարելութե համակերպել զմեզ ընդ կամացն Այ թէ 'ի կեանս, և թէ 'ի մահուան, դիցուք աստէն զոմանս շարժառիթս, և զպատճառս, վն որոց կարեմք ցանկալ մահու, ոչ զի ընտրեսցուք զբարեգոյնն: Արդ՝ առաջին պատճառն, վն որոյ կարէ ոք ցանկալ մահու, է առ'ի զերծանիլ 'ի վնասուց, զորս ունի մն ինքեան կեանքս այս. զի ոչ ասէ իմաստունն. Սիրաք: 30. 17: Լաւագոյն է մահ. քան զկեանս դառինս: Տեսանեմք զի մարդիկ աշխարհիս բազում անգամ ցանկան այսու կերպիւ մահու. և զայն հայցեն յԱյ. և զայս կարեն առնել առանց մեղաց. վն զի այնքան բազումք և զանազանք են վնասք աստի կենաց մինչ զի օրինաւոր է ցանկալն մահու առ'ի ազատիլ յայնց: 'Ի մէջ այլոց պատճառաց, զորս դնեն մրքն, թէ վն էր ետ Աձ զայս քան վիշտս մարդկան, մինն է այս, զի մի միաւորիցին ընդ աշխարհիս, և մի յոյժ սիրեսցեն զկեանս զայս, այլ դնիցեն զսիրտս, և զսէրն իւրեանց 'ի հանդերձեալ կեանս, և հառաչեսցեն առ այն: Ուր ո՛չ եղիցի սուգ, և ոչ աղաղակ, և ո՛չ ցաւ, և ո՛չ աշխատանք: Յայտ. 21. 4: Սբն Օգոստինոս ասէ, թէ Աձ Տրն մեր վն անհունն բարութե և ողորմութե իւրոյ կամեցաւ, զի կեանքս այս լիցեր կարճ, և վերջանայցեր շուտով, քանզի է լի վշտօք. իսկ հանդերձեալ կեանքն որում սպասեմք՝ լիցեր յաւիտենական. որպէս զի

վիշտն

վիշտն մնայցէր ը̄ սուղ ժամանակ, և բերկրութիւն և հանգիստն լիցէր մշանջենաւոր ։ 'Այնքան չարեօք լի է կեանքս այս, մինչ զի բաղդատեալ ն̄ց մահն առնել կարէ դեղ, և ոչ պատիժ ‖ ։ Այս ճշմարիտ է, զի բազում անգամ մարդիկ աշխարհիս մեղանչեն յայամիկ վ̄ն անհամբերութե̄. որով տանին վշտաց, և վ̄ն կերպին, որով խնդրեն յԱ̄յ զմահ, զի խնդրեն զայն տժգոհալով, և տրտնջելով · որք եթէ հայցիցէին զայն խաղաղութե̄ և հպատակութե̄ ասելով, Տ̄ր եթէ հաճիս հանել զիս 'ի վշտացս յայսցանէ, բաւական է ինձ այսքան ապրիլն իմ, ոչ բնաւ մեղանչիցէին ։

Երկրորդ՝ կարէ որ ցանկալ մահու մեծագունիւ կատարելութե̄, առ'ի ոչ տեսանել զվիշտս եկեղեցւոյ, և զհանապազորդական մեղս, զորս մարդիկ գործեն ընդդէմ Ա̄յ · որպէս տեսանեմք, զի ցանկայր մարգարէն Եղիա մահու · որ տեսանելով զհալածանս աքայաբու, և եզաբելայ, որք քակեալք էին զսեղանն, և սպանեալք զն̄մ մարգարէսն Ա̄յ, և խնդրէին նաև զնա առ'ի սպանանել, բորբոքեցեալ նախանձայուզութե̄ պատուոյն Ա̄յ, իբրև ետես, եթէ ոչ կարէր դարմանել, գնաց յանապատ, և նստեալ ընդ ծառով միով · Խնդրեաց մահ անձին իւրում, և ասէ, շատ է արդ, առ զոգի իմ յինէն Տ̄ր, զի ոչ եմ ես լաւ քան զհարս իմ ։ 3. Թագ. 13. 4։ Եւ քաջ զօրագլուխն այն ժողովրդեանն Ա̄յ Յուդա մակաբեանն ասէր · Լաւ լիցի մեզ մեռանել 'ի պատերազմի, քան տեսանել զչարչարանս ազգին մերոյ, և սրբութեանց մերոց ։ 1. Մակ. 3. 59։ Եւ այսու յորդորէր և քաջալերէր զզօրս իւր ։ Եւ վ̄ն երանելւոյ սրբոյն Օգոստինոսի ընթեռնումք 'ի վարս ն̄ր, թէ յորժամ անցին վանդալքն 'ի սպանիոյ 'ի յափրիկէ, և աւերէին զն̄մ երկիրն, և սպա-

նանէին

նանէին զամ մարդ և ոչ խնայէին ումեք, ոչ արանց, և ոչ կանանց, ոչ եկեղեցականաց, և ոչ աշխարհականաց. ոչ տղայոց, և ոչ ծերոց. հասին 'ի քաղաքն հիպոնայ. որոյ էր ինքն եպիսկոպոս, և պաշարեցին զքաղաքն յամ կողմանց բազում զօրօք: Եւ տեսեալ սրբոյն Օգոստինոսի զայնքան մեծամեծ վիշտս, զեկեղեցիս աւանդ քահանայից, զքաղաքս աւերեալս բնակչօք հանդերձ, լայր դառնապէս 'ի ծերութեան իւրում, և ժողովեալ զկղերիկոսունս իւր ասաց ցնոսա: Աղաչեցի զՏր. զի կամ ազատեսցէ զմեզ յայսմանէ վտանգէ. կամ տացէ մեզ զհամբերութիւն. և կամ հանցէ զիս 'ի կենաց աստի. զի մի՛ տեսից զայսքան չարիս. և Տր շնորհեաց ինձ զերրորդ խնդրուածն իմ: Եւ այսպէս յերրորդ ամսեան պաշարման քաղաքին, հիւանդացաւ և մեռաւ: Այլև յաղագս երանելւոյ հօրն մերոյ Իգնատիոսի ընթեռնումք 'ի վարս նր զայլ օրինակ մի նման սմին: Այս է կատարելութն սրբոց, զի այնքան զգան զվիշտս եկեղեցւոյն, և զանարգանս փառացն ԱՅ, մինչ զի ոչ կարիցեն տանիլ զայն: Աւստի ցանկան մեռանիլ, որպ զի մի՛ տեսցեն զայսքան մեծամեծ չարիս:

Գոյ ևս այլ պատճառ մի յոյժ բարի, և յոյժ կատարեալ առ 'ի ցանկալ մահու, և հայցել զայն յԱՅ, և է այս, զի առ 'ի տեսանել զինքն ազատ և ապահով 'ի վշտացուցանելոյ զԱԾ: Քանզի ճշմարիտ է այս, զի ցոր չափ կամք 'ի կեանս յայս` ոչ գոյ ապահովութն, և կարեմք անկանիլ 'ի մահացու մեղս. որովհետև գիտեմք զայս, զի այլք որք էին աւելի քան զմեզ, և ունէին զաւելի պարգևս ԱՅ, և էին ճշմարիտ սրբք, և մեծ Նրք, անկան: Այս է իր մի, որ առաւել երկեցուցանէ զծառայս ԱՅ. վս որոյ ցանկան ելանել 'ի կենաց աստի: Եթէ ոք կարէ ցան-

կալ, զի ոչ լիցէր ծնեալ, և ոչ ունիցէր ըղձ գոյ՝ առ՚ի ոչ մեղանչել, ապա որքան ևս առաւել կարէ ցանկալ մահու: Վն զի առաւել մեծագոյն չար է մեղքն, քան զոչ գոլն, և լաւագոյն է ոչ գոլն, քան զմեղանչելն, որպէս ասաց Քն փրկիչն մեր զնմանէ, որ վաճառելոց էր զնա: Լաւ էր նմա, թէ չէր ծնեալ մարդն այն: Մատ. 26. 24: Եւ սրբն Ամբրոսիոս պարզաբանելով զայն բանն Ժողովողի, որ ասէ, 4. 2. Եւ գովեցի առաւել զմեռեալսն, որք յառաջագոյն մեռանն՝ քան զկենդանիս: Եւ լաւագոյն քան զերկոսեան զչերևեալն, որ չեղեալ է չեւ: ասէ, թէ մեռեալն նախագահի կենդանւոյն, զի դադարի ՚ի մեղանչելոյ. և մեռելոյն նախագահի ոչ ծնեալն, զի ոչ գիտաց մեղանչել: Ուստի եղիցի յոյժ բարի կրթութիւն, եթէ արասցուք զսովորութիւն ասել բազում անգամ յաղօթս. Տէր՝ մի թող տար լինել բաժանիլ ՚ի քէն. Տէր եթէ վշտացուցանելոց եմ զքեզ՝ բարձ զիս յաշխարհէ աստի, յառաջքան թէ վշտացուցից զքեզ: Զի ես ոչ կամիմ զայս կեանս, եթէ ոչ առ՚ի ծառայել քեզ. և եթէ այնու ոչ եմ ծառայելոց քեզ, ոչ կամիմ զայն: Կրթութիւս այս յոյժ հաճոյ է Այ, և կարի օգտակար մեզ զի գոյ յայսմիկ կիրառութիւն զղջման, ատելութե, և գարշելոյ ՚ի մեղաց. գոյ նաև կիրառութիւն խոնարհութե, և սիրոյն Այ. և է հայցուած առաւել հաճոյ Այ քան զայլ ամ հայցուածս, զորս կարեմք առնել: Պատմի վն սրբոյն Լուդովիկոսի արքային Ֆրանսայոյ, թէ մայրն իւր ասէր երբեմն, կամիմ որդեակ իմ, մանաւանդ տեսանել զքեզ մեռեալ առաջի աչաց իմոց, քան թէ տեսանել զքեզ ՚ի մահուչափ մեղս: Եւ այնքան հաճեցաւ Այ ընդ ցանկութիս, և զ օրհնութիս այս, զոր տայր նմա, մինչ զի ասի զնմանէ, թէ զամ աւուրս կենաց իւրոց ոչ

գործեաց զմեզ ինչ մահուչափ: Այնս կա-
րելի է և 'ի քեզ գործել այսու ցանկութբ,
և այսու հայցուածով:

Պարծեալ ոչ միայն առ 'ի խորշել 'ի մահու-
չափ մեղաց, այլև առ 'ի խորշել 'ի ներելի մե-
ղաց, որովք լի եմք 'ի կեանս յայս, բարի է
ցանկալն մահու. քանզի ծառայն Այ պար
տի կալ յոյժ պատրաստ առ 'ի մեռանիլ մա-
նաւանդ, քան թէ գործել ոչ միայն զմեղ
ինչ մահուչափ, այլև ոչ առնել զանիծեա
սուտ մի, որ է ներելի մեղք: Եւ որ մե-
ռանիցի վն ոչ գործելոյ զներելի մեղս, եղի
ցի մարտիրոս. որովհետև հաւատարի իմն է,
զի եթէ ապրիցիմք, կարեմք գործել զբա-
զում ներելի մեղս, ըս այնմ, զոր ասէ իմաս
տունն. Առակ. 24. 16: Եօթնանգամ անկցի ար-
դարն: ի բազում անգամ: Եւ ոչ միայն առ 'ի
խորշել 'ի ներելի մեղաց ցանկան ծառայքն
Այ մահու, այլև ցանկան այնմիկ առ 'ի տե
սանել զինքեանս ազատ յամ պակասութեց,
և յանկատարութեց, 'ի փորձութեց, և 'ի
թշուառութեց, զորոց զփորձ առնումք հա
նապազօր: Յոյժ բարւոք ասէ Թովմաս գեմ
պացին. Ո՜ թէ որչափ չարչարիմ Տր, զի
մինչ խորհիմ 'ի յաղօթս իմ զիրս երկնայինս,
ներկայանան ինձ մեծամեծ ամբոխք իրաց
մարմնաւորաց: Ո՜ թէ որպիսի է կեանքս
այս, յորում ոչ երբէք պակասին նեղութիւնք,
և թշուառութիւնք. ամ ինչ լի է որոգայթիւք,
և թշնամեօք. 'ի յանցանել միոյ նեղութե,
գայ միւսն, և չև ևս վերջացեալ մի պատե-
րազմն, հասանին այլք բազումք պատերազ
մունք յանկարծօրէն: Զիա՞րդ կարէ սիրել
կեանք մի, որ է լի այսքանեօք դառնութբք,
և ենթակայ այսքան գխպուածոց, և թշուա
ռութեց: Զիա՞րդ կարէ կոչել կեանք այն,
որ ծնանի զայսքան մահս, և զայսքան ժանտս:
Ընթեռնումք զմեծագոյն սրբուհւոյ կուսէ
միոյ,

միոյ, թէ աւելորդ էր տանել. եթէ կարիցէի ընտրել զեր իմն, ոչ զայլ ինչ ընտրէի, եթէ ոչ զմահ. զի հոգին միջնորդութեամբ նորին լինի ազատ յամենայն երկիւղէ առնելոյ երբէք զայնպիսի ինչ, որ իցէ խափանիչ մաքուր սիրոյ։ Արդ՝ թուի թէ իցէ առաւել մեծ կատարելութիւն ցանկալն մահու առ՚ի խորշիլ ՚ի ներելի մեղաց, ՚ի պակասութեանց, և ՚ի թերակատարութեանց, քան թէ առ՚ի խորշիլ ՚ի մահուչափ մեղաց։ Քանզի կարէ լինել թէ ոք ՚ի յիրս մահուչափ մեղաց շարժիցի առաւել վասն երկիւղին դժոխոց, և վասն օգտի և ինքնասիրութեան իւրոյ, քան թէ վասն սիրոյն Այ։ Բայց ունիլ զայնքան սէր Այ. մինչ զի ցանկասցի մահու առ՚ի ոչ գործել զմեղ ինչ ներելի, և ոչ զպակասութիւն, կամ զթերակատարութիւն իմն, է մեծ մաքրութիւն դիտաւորութեան, և մեծ կատարելութիւն։

Բայց կարէ ոք ասել, թէ ես ցանկամ ապրիլ առ՚ի վճարել վասն մեղաց և պակասութեանց իմոց։ Առ այս պատասխանեմ, և ասեմ, եթէ ապրելով կարիցեմք հատուցանել զպարտս անցելոց մեղաց, բարի էր այս. սակայն եթէ ոչ միայն ոչ կարիցես հատուցանել, այլ յաւելցես մանաւանդ. և որքան աւելի ապրեսցիս, զայնքան աւելի համարս տալ պարտաւորիս Այ, ոչ ասես բարւոք։ Յոյժ բարւոք ասէ տէրն Բեռնարդոս. * Ընդէ՞ր ապա այդքան ցանկամք կենաց, յորում որքան առաւել ապրիմք, այնքան առաւել մեղանչեմք, որքան կեանքն է երկարագոյն, այնքան մեղքն են բազմագոյնք ‖։ Եւ տէրն Հերոնիմոս ասէ. զի՞նչ զանազանութիւն կարծես, թէ իցէ ՚ի մէջ նորա, որ մեռանի մանուկ, և նորա որ մեռանի ծեր, եթէ ոչ այս, զի ծերն երթայ առաւել բեռնաւորեալ մեղօք քան զմանուկն, և տալոց է զաւելի համար Այ։ Եւ այսպէս տէրն

Բեռնարդոս աճարտէ յայսմիկ, և ասէ մեծաւ խոնարհութբ իւրով զոմանս բանս, զորս մեք կարեմք ասել վս մեր ճշմարտութբ : *Ընդ ապրելս ամաչեմ, զի սակաւ շահիմ. 'ի մեռանելոյ երկնչիմ, զի ոչ եմ պատրաստ. սակայն կամիմ մանաւանդ մեռանիլ և յանձնել զիս ողորմութեն Այ, զի բարեգութ է և ողորմած, քանթէ չարաչար կենցաղավարութբ իմով զայլս գայթակղեցուցանել || : Այս է բարի խոկումն : Հայր վարդապետն աւիլա ասէր, թէ նմ ոք ունօղ զմիջակ տրամադրութի, պարտէր մանաւանդ ցանկալ մեռանիլ քանթէ ապրիլ պատճառաւ վտանգին, յորում կեամք, որ և դադարի մահուամբ : Ըստ որում ասէ սբն Ամբրոսիոս. *Զինչ է մահն, եթէ ոչ գերեզման մոլութեանց, և յարուցիչ առաքինութեանց || :

Համայնք այսպիսիք բանք և շարժառիթք բարիք են առ'ի ցանկալ մահուան. բայց շարժառիթն մեծագունի կատարելուն է այն, զոր ունէր սբ առաքեալն Պօղոս, այ տեսանելն զինքն ընդ Քսի, զոր նա յոյժ սիրէր. Ցանկամ ելանել, և ընդ Քի լինել : Փիլիպ. 1. 23: Զինչ է այս, զոր ասէս ով Պօղոս. ընդէր ցանկաս բաժանիլ 'ի մարմնոյ. թերևս առ'ի զերծանել 'ի վշտաց : Ոչ է այդպ. զի մանաւանդ, Պարծիմ 'ի նեղութիւնս : Հռովմ. 5. 3: Ապա ընդէր կամիս մեռանիլ: Գուցէ առ'ի փախչիլ 'ի մեղաց : Եւ ոչ վս այսորիկ : Քանզի հաստատեալ եմ, եթէ ոչ մահ, և ոչ կեանք կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյն այ : Հռովմ. 8. 38: Զի արդէն հաստատեալ էր 'ի շնորհս. և գիտէր, զի ոչ կարէր կորուսանել զայն. և այսպ ոչ ունէր զառիթ երկնչելոյ վս այսորիկ : Ապա ընդէր այսպ ցանկայ մահուան. առ'ի տեսանել զինքն ընդ Քսի : Ցանկայր մահու վս զուտ սիրոյն. որպ ասէր հարսն

յերգս

յերգս իւր, 2. 5. Վասն զի խանդակաթ եմ ես սիրով։ Հիւծեալ էր սիրով, և հառաչէր վն սիրականին իւրոյ. և ամ փոքրիկ յամեցուցմն թուէիւր նմա երկար առ'ի ժամանել առ նա, և զմայլել ներկայութբ նորին։

Ասէ ՏրՆ Պօնավէնթուրա, թէ երեք են աստիճանք սիրոյն Այ։ Առաջինն է սիրել զԱծ 'ի վեր քան զամ ինչ՝ խոտելով բոլորովիմբ զամ իրս Ծի. և ոչ գործել վասն իրի իմիք զմի միայն մեղ մահուչափ, և կամ անցանել զպատուիրանաւն Այ, որ է այն, զոր Քս փրկիչն մեր ասաց երիտասարդին այնմիկ. Եթէ կամիս 'ի կեանսն յաւիտենականս մտանել, պահեա զպատուիրանս։ Մատ. 19. 17. Երկրորդ աստիճան սիրոյն է ոչ շատանալ պահելով զհրամանս Այ, այլև առաւելցել ըզ խորատն. որ է յատուկ կրօնաւորաց, որք ոչ միայն ջանան առ բարին, այլև առ բարեգոյնն, և առ կատարեալն, ըստ այնմ, զոր ՏրՆ Պօղոս ասէ. Հռոմ. 12. 2։ Ա՛ռ 'ի փորձել ձեզ զկամսն, և եթէ զինչ են կամքն Այ՝ բարին, և հաճոյն, և կատարեալն։ Երրորդ աստիճան սիրոյն (ասէ ՏրՆ Պօնավէնթուրա) է. Այնքան ըղձիւ առ Այ բորբոքիլ, մինչ զի գրեթէ առանց նր կեալ ոչ կարիցես ‖։ Ուստի այսպիսիս ցանկայ տեսանել զինքն ազատ, և արձակեցեալ 'ի բանտէ մարմնոյ՝ առ'ի կալ ընդ Քսի. և ցանկայ ելանել յաքսորանաց աստի. և սպասէ, զի քակտիցի և անկցի պարիսպն մարմնոյ, որ իբրև զմիջնորմն խափանէ, և արգելու տեսանել զԱծ։ Իսկ յաւելու ասել, թէ այսպիսեացս կեանքն՝ է անհամբերութն, և մանաւանդ ձանձրութիւն. իսկ մահն է բոցալից ցանկութն։

Ընթեռնումք վասն երանելւոյն հօրն մերոյ Իգնատիոսի 'ի վարս նր; թէ ունէր զբոցակեզ ցանկութն ելանելոյ յոյամանէ բանտէ

մարմնոյ · և հառաչէր այնքան հոգին նորա առ 'ի երթալ և տեսանել զԱծ, մինչ զի յորժամ խոկայր զմահն իւր, ոչ կարէր ժուժել յարտասուաց, որք հոսէին յաչաց նր յաղագս զուտ ուրախութե։ Բայց ասի զնմանէ, թէ ոչ այնքան բորբոքիւր այսու ցանկութ՛բ առ 'ի տեսանել զայն ծայրագոյն բարին վն իւր, և առ 'ի հանգչել յայնմիկ երանելի տեսութե, որքան ցանկայր տեսանել զամէներջանիկ փառս մարդկութեն Քի, զոր նա յոյժ սիրէր՝ այնու կերպիւ, որպէս 'ի յերկրի սուտ սովոր է բարեկամ ոք ուրախանալ՝ յորժամ տեսանէ զփառս և զպատիւ բարեկամի իւրոյ, զոր սիրէ խանդակաթ սիրով. սոյնպէս ցանկայր հայրն մեր տեսանել զինքն ընդ Քի միաւանալով զօգուտն, և զհանգիստն իւր վն զուտ սիրոյն Քի։ Փափաքէր կալ ուրախանալով և առնելով զտօն վասն փառացն Քի, և խնդակցելով ընդ նմա, որ է վեհագոյն և կատարելագոյն գործ սիրոյ, զոր կարեմք առնել։

Այսու կերպիւ ո՛չ միայն ոչ եղիցի դառն յիշատակ մահու, այլ մանաւանդ բերկրեցուսցէ, և ուրախ արասցէ զմեզ։ Ասից սակաւ մի յառաջ, և խօսիմ, զի յետ սակաւ ինչ աւուրց լինելոց ես 'ի յերկինս, և վայելեսցես անդ զայն, զոր ակն ո՛չ ետես, և ունկն ո՛չ լուաւ, և ոչ 'ի սիրտ մարդոյ անկաւ. և թէ ինչ դարձցի քեզ յուրախութի, և 'ի զուարճութի։ Ո՞վ կարէ ոչ ուրախանալ, յորժամ տեսանէ, թէ զվախճան առնու աքսորանքն և վիշտն իւր։ Ո՞վ կարէ ոչ ուրախանալ՝ յորժամ հասանի առ վերջին վախճան իւր, և ստանայ զայն, վասն որոյ տանջեցաւն։ Ո՞վ կարէ ոչ ուրախանալ՝ յորժամ մտանէ 'ի ստացուածն ժառանգութե իւրոյ։ Արդ՝ մահն է այն, որոյ միջնորդութ՛բն մտանեմք 'ի ժառանգութիւն յայն երկնից.

նից · Ես այնմ, զոր ասէ մարգարէն · Սաղմ. 126 · 3: 'Ի ժամանակի որդւոց տացէ քուն սիրելեաց իւրոց · ժառանգութիւն Տն որդիք են ։ Զի ոչ կարեմք մտանել 'ի ժառանգել զյաւիտենական բարիս զայնոսիկ, եթէ ոչ 'ի ձեռն մահու · ուստի ասէ իմաստունն, թէ արդար մարդն յուսայ 'ի մահն իւր · Յուսայ արդարն 'ի մահ իւր ։ Առակ · 14 · 32: Որովհետև նա է միջոցն և սանդուղն ելանելոյ յերկինս ։ Եւ այսպէս այս է մխիթարութիւն իմ 'ի վայրի աքսորմանս ։ Սաղմոս ասացից, և 'ի միտ առից, ճանապարհս անբիծ մինչև եկեսցես առ իս ։ Սաղմ. 100 · 1: Սէն Օգոստինոս պարզաբանէ զայս տեղիս, և ասէ · Տր՝ ակնկալութիւն և ցանկութիւն իմ է պահել անբիծ զամ զկեանս իմ, և սովին փութով, և հոգացողութեամբ մշտերգելով, և նախերգանք երգոյն իմոյ, մինչև դարձուցես զիս յայսմանէ աքսորանաց վայրէ, եղիցի այս, Ե՞րբ եկեսցէ օրն այն, Ե՞րբ եկից Տր առ քեզ ։ Ե՞րբ եկից երևեցայց երեսացն Այ ։ Սաղմ. 41 · 3: Ո՜հ թէ որքան յամէ ժամն այն · ո՜ թէ որքան մեծ եղիցի վասն իմ բերկրութիւն, և ուրախութիւն, յորժամ ասասցեն ինձ, ահա մերձ է օրն ։ Ուրախ եղէ այն ասէին ցիս, 'ի տուն Տն երթիցուք մեք · Հաստատեալ կային ոտք մեր առ դրունս քո Երուսաղէմ ։

Սաղմ. 121 · 1 ։

## Գ Լ Ո Ւ Խ. Ի Ա:

Հաստատէ որ Աստուած, ամենէն օգնական :

Պատմէ Սիմէոն մետափրաստէսն 'ի վարս սրբոյն Յօհաննու ողորմածին՝ արհիեպիսկոպոսին աղեքսանդրու, թէ այր ոմն ունէր որդի մի, զոր յոյժ սիրէր, և աղաչեաց նա զսուրբն Յօհաննէս՝ աղօթել առ ԱԾ, զի պահեսցէ զորդին իւր առողջ, և անվտանգ, և ետ նմա վն այնորիկ զբազում ոսկիս առ 'ի բաշխել աղքատաց : Եւ արար սուրբն Յօհաննէս զհայցուած առնն . և զկնի երեսնից աւուրց մեռաւ որդին նր : Մնաց յոյժ վշտացեալ հայր մանկանն, զի թուէր նմա, թէ եղեն ընդունայն աղօթքն, և ողորմութիւն արարեալ վն նր : Եւ իբրև ծանեաւ պատրիարքն զվիշտս նր, աղօթեաց վն նր առ ԱԾ, հայցելով 'ի նմանէ՝ մխիթարել զնա : Լուաւ Տր աղօթից նր . և 'ի գիշերի միում առաքեաց զհրեշտակ մի 'ի յերկնից, որ երևեալ առն այնմիկ՝ ասաց ցնա . ծանիր, զի աղօթքն որ եղև վն որդւոյ քոյ՝ լսելի եղև, և այնու աղօթիւք կայ մանուկն քո 'ի յերկինս առողջ և անվտանգ . քանզի յայնմ ժամանակի մեռանիլն էր նմա օգուտ առ 'ի փրկել, զի եթէ կենդանի մնայցէր՝ լինէր չար, և անարժան փառացն արքայութեն : Եւ յաւելեալ ասել . ծանիր և զայս, զի ոչինչ իր կարէ պատահիլ 'ի կեանս յայս առանց արդար դատաստանին ԱՅ, թէպէտ պատճառք դատաստանին նր անյայտք են մարդկան . վն որոյ ոչ ոք պարտի տրտմել անկարգաբար, այլ ընդունել համբերութբ հոգւոյ, և շնորհակալութբ զայն, զոր ԱԾ առաքէ նմա : Այսու երկնային ազդեցութբս հայր մեռեալ մանկանն մնաց մխիթա_

մխիթարեցեալ, և յոյժ զօրացեալ առ՚ի ծառայել ԱՅ ։

Ճ՚աւի 'ի յեկեղեցական պատմութիւս մասնաւոր և եզական շնորհ մի, զոր ե՟բ վկայն Մաճրիցիոս զօրագլուխ զօրաց Թեբայեդոյ արար աղնուական կնոջ միում իւրոյ ջերմեռանդի ։ Ունէր կինս այս զմի միայն որդի, և ո՟ղ զի բարւոք մնանիցի իւր կրօնաւորական վարուք 'ի դալար տիոջ իւրում, յանձնեաց զնա 'ի վանս ս՟բյն Մաճրիցիոսի ընդ կառավարութ՟բ կրօնաւորաց, ըստ որում էր սովորութն առնել յայնմիկ ժամանակի. (զոր արարին նաև հայրն և մայրն մաճրոսի, և փլաչիտոսի. և այլք ոմանք մեծազգի հռօմայեցիք 'ի ժամանակի ս՟բյն Բենեդիկտոսի. և զկնի ամաց բազմաց արարին նաև մայրն սրբոյն Թօմայի աքուինացւոյն Թէոդորեթա կոչեցեալ, և կոմսք աքուինոյ եղբարք նորին Թօմայի) ։ Արդ՝ անաւ 'ի վանքն յայն միածին որդին վերոյասացելոյ աղնուական կնոջն դայրութ՟բ, և կրօնաւորական վարուք և կրթութ՟բ յոյժ բարեպ՟ղ. և արդէն սկսեալ էր երգել 'ի դասի համեղաբար ը՟ն այլ կրօնաւորսն ։ Բայց հասեալ 'ի վ՟ր ն՟ր ջերմն, մեռաւ ։ Գնաց ցաւալնեալ մայրն ն՟ր յեկեղեցին, և անչափ արտասուօք հետևեցաւ մեռելոյն մինչև 'ի գերեզմանն ։ Սակայն չեղեն բաւական այնքան արտասուքն բարեխառնել զցաւն նորա, և ոչ իսկ արգելուլ զնա 'ի գնալոյ զօրհանապազ 'ի գերեզման որդւոյն իւրոյ առ'ի լալ անչափաբար. և զայս առնէր մանաւանդ յայնժամ, յորժամ կրօնաւորքն ասէին զպաշտօնն ա՟ծային. որովհետև յիշէր, զի զրկեցեալ էր 'ի լսելոյ զձայնն որդւոյն ։ Արդ՝ մինչ դեռ նա կայր յայնմիկ տրտմութեան, և այնու զախճն անցուցանէր յեկեղեցւոջ. և զգիշերն 'ի տան իւրում անդադար 'ի յողբս. անդամ մի յաղ

թեցեալ յաշխատանացն և 'ի տրտմութէ
նիրհեաց. և 'ի տեսլեան երևեցաւ նմա որդ
զօրագլուխն մաւրիկիոս, և ասաց ցնա. Ընդ-
էր լաս յարաժամ ով կին դու զմահն որ-
դւոյ քոյ, և ոչ տաս զվախճան այդքան ար-
տասուաց. Եւ նա պատասխանեալ ասաց.
համայնք աւուրք կենաց իմոց ոչ կարասցեն
տալ զվախճան արտասուաց իմոց. վն որոյ
որքան մնացից կենդանի, լացից միշտ զոր-
դին իմ. և ոչ դադարեսցին աչք իմ 'ի լալոյ
և 'ի հեղլոյ զարտասուս, մինչև մահն փա-
կեսցէ զնս, և զատուսցէ զմարմինս զայս 'ի
տառապեալ հոգւոյ իմմէ. Ասէ ցնա սբն.
ասեմ քեզ կին դու, մի վշտանար, և մի
լար զորդին քո մեռեալ, որպ թէ մեռեալ
իցէ. զի ոչ է մեռեալ, այլ կենդանի է, և
կայ ընդ մեզ 'ի յաւիտենական ուրախութե.
և 'ի նշան այսր ճշմարտութե, յարուցեալ
'ի վաղիւ երթիցես յեկեղեցին, ուր լուի-
ցես զձայն որդւոյ քոյ 'ի մէջ կրօնաւորաց.
որք երգեսցեն զածային պաշտօնն. և զմայ-
լեսցիս ոչ միայն 'ի վաղիւն, այլ համապազ-
քանիցս անգամ և գտանիցես ներկայ ածայ
նոյ գովաբանութե յեկեղեցւոջ. Դադա-
րեաց ուրեմն 'ի լալոյ, և տուր զվախճան
արտասուաց քոց, զի ունիս զառիթ մանաւ-
անդ ուրախանալոյ, քան թէ տրտմելոյ.
Զարթուցեալ կինն 'ի քնոյ իւրմէ, սպասէր
մեծաւ ըղձիւ առաւօտեան ժամուն՝ առ 'ի
իմանալ զճշմարտութիւն. զի կայր երկմտու-
թե իւիք. թէ մի գուցէ երազ իցէ տե-
սիլն այն. Արդ՝ հասեալ նա 'ի ժամն ա-
ռաւօտեան, և մտեալ յեկեղեցին, լուաւ
զի երգէին զմեսեդին, և ծանեաւ զհամե-
ղագոյն ձայնն որդւոյ իւրոյ. Ուստի իբրև
ճշգրտեցաւ վն փառաց նր 'ի յերկինս, ար-
տաքսեաց յանձնէ զցաւն, մատոյց զանհուն
գոհութիս Այ. և կայր զմայլեալ յամեն
աւուր.

աճուր սրբազունին ձայնին այնու 'ի պաշտօնս ածայինս յեկեղեցւոջն յայնմիկ . և Ած մխիթարէր զնա այսու աւթիւ , և ճոխացուցանէր այսու պարգևաւ ։

Պատմէ հայրն գրանատա , թէ ազնուական ոմն գնալով յորս , եւ ընդ առաջ նր գազան մի , և նա պնդեցաւ զհետ նր միայնակ առանց ծառայի ումեք , զի այլքն զբաղեալք էին շուրջ զայլովք որսովք ։ Եւ գնալով զկնի նր մեծաւ ըղձիւ , հեռացաւ յոյժ 'ի ծառայից իւրոց , և եհաս յանտառ մի , ուր լուաւ զձայն մի մարդկային յոյժ քաղցր . և սկսաւ հիանալ յոյժ , իբրև լուաւ զձայնն զայն յայնպիսի անտառի . զի թուէր նմա , թէ ոչ կարէր լինիլ այն ձայն ծառայից իւրոց , այլև ոչ այլոյ ուրուք անձին այնր երկրին . և ցանկանալով գիտել թէ զինչ իցէր այն՝ եմուտ 'ի ներքսագոյն տեղին անտառին . և եգիտ անդ զբորոտ մի տեսլեամբ ահարկու և յոյժ զազրալի . որ բոլորովին ունէր զմարմին իւր վիրաւորեցեալ . որոյ և մասունքն , և իւրաքանչիւր անդամքն արդէն սկսեալ էին մաշիլ ։ Զայս տեսեալ ազնուականն , մնաց երկմիտ , և ահաբեկ , սակայն քաջալերեալ զանձն , և զօրացուցեալ զսիրտն՝ մերձեցաւ առ նա , և ողջունեաց զնա քաղցր բանիւք . և եհարց ցնա , և ասէ , եթէ դու էիր այն , որ երգէիր . և ուստի՞ է ձայնդ այդ այդքան քաղցր ։ Պատասխանեաց բորոտն ասելով . այո՛ ես էի , որ երգէի Տր իմ . և այս է ձայնն իմ բնական ։ Եւ ասէ ցնա ազնուականն . զիարդ կարես ուրախանալ դու՝ որովհետև ունիս զայդքան ցաւս ։ Պատասխանի ետ աղքատն , և ասէ . 'ի մէջ իմ , և Այ Տն իմոյ ոչ գոյ այլ միջոց , եթէ ոչ կաւեղէն որմս այս , որ է մարմինս իմ . որոյ 'ի քակտելն՝ բարձցի կզծիմն , և երթայց առ 'ի զմայլել տեսութե



յաւի-

յաւիտենական փառաց նր: Արդ՝ տեսա-
նելով իմ, թէ յաւուր աւուր երթայ մար-
մինս իմ քակտելով 'ի մասունս իւր, ուրա-
խանամ անպատմելի ցնծութբ սրտի իմոյ վս
այսորիկ. և սպասեմ բաժանման մարմնոյս
'ի հոգւոյս. զի մինչև ոչ թողից զմարմինս
զայս, ոչ կարեմ երթալ առ 'ի զմայլել ծվ.
որ է աղբիւր կենդանի. ուր գտանին մշտն-
ջենական և յաւիտենական վայելքն:

Սբն Կիպրիանոս ճառէ զեպիսկոպոսէ միոյ.
թէ իբրև հիւանդացաւ, և եղև մերձ 'ի
մահ, կայր յոյժ վշտացեալ. ուստի աղա-
չէաց զՏր՝ երկարել զկեանս նր: Եւ երևե-
ցաւ նմա հրեշտակ մի տեսլեամբ լուսաւոր
և գեղեցկագոյն երիտասարդի միոյ. և ասաց
ցնա ծանր և խստագոյն ձայնիւ. "'Ի չարչա-
րեցեալ լինելոյ երկնչիք, և ելանել 'ի մար-
մնոյ ոչ կամիք. զինչ արարից ձեզ ||. ցուցա-
նելով նմա, թէ չէր հաճոյ Այ ընդդիմու-
թիւն այն 'ի յելանելն 'ի կենաց աստի: Եւ
ասէ Սբն Կիպրիանոս, թէ հրեշտակն ասաց
նմա զբանս զայս, որպ զի 'ի տագնապի իւ-
րում ասիցէր զայն, և ուսուցանիցէր այ-
լոց.

Պատմէ Սիմէոն մետափրաստէսն (զոր և
տարբերէ սուրիոս) զսրբոյն Թէոդոսիոսէ
աբբայէն, թէ գիտելով սա, զի յոյժ օգուտ
էր յիշատակն մահուան, և կամելով տալ
աշակերտաց իւրոց զառիթ յառաջադիմու-
թեան, հրամայեաց բանալ զգերեզման մի. և
ապա հանդերձ աշակերտօք իւրովք եկաց
շուրջ զնովաւ, և ասէ ցնս: Ահա բացեալ
է գերեզմանն. բայց ո 'ի ձէնջ եղիցի առա-
ջինն, որում առնելոց եմք զուղարկաւորու-
թիւն զայս: Յայնժամ մի ոմն յաշակերտաց
անտի իւրոց բարսեղ կոչեցեալ, որ էր քա-
հանայ, և այր յոյժ առաքինի, և էր կարի
յօժար և պատրաստ առ 'ի ընդունել զմահն.

կա-

կալաւ զձեռանէ աբբային մեծաւ ուրախութբ, և 'ի ծունր իջեալ ասաց ցնա · օրհնեա զիս հայր, զի ես եղէց առաջին, որում առնելոց էք զպաշտօն ննջեցելոց ։ Եւ աբբայն շնորհեաց նմա զայն ըստ խնդրոյ նորին ։ Եւ ապա հրամայեաց սր աբբայն Թէոդոսիոս, զի առնիցէին նմա զնմ պաշտօնս, որք սովորք էին լինիլ վս մեռելոց, զառաջինն, և զերրորդն, և զիններեակն, և յետոյ զայլս, որք լինէին մինչև 'ի լրումն քառասնից աւուրց ։ Այս է զարմանալի, զի մինչև 'ի կատարած կարգին, և պաշտօնին զաւուրս քառասուն, կայր Բարսեղ կրօնաւորն առողջ, առանց ջերման, առանց գլխացաւութե, և առանց հիւանդութե իմիք · և ապա ապ թէ ոք ըմբռնիցի քաղցր և համեղ քնով · փոխեցաւ աստի առ Տր առ 'ի ընկալնուլ զվարձն առաքինութե իւրոյ, և յօժարուե · և ուրախութեն, որով ցանկայր տեսանել զինքն ընդ Քի ։ Եւ ապ զի տեսանիցի · թէ որքան հաճեալ էր Այ ընդ յօժարութին, և ընդ ուրախութին, որով սր կրօնաւորն այն ցանկայր ելանել 'ի կենցաղոյս յայսմանէ, զկնի այս հրաշիցս պատահեցաւ այլ իմն հրաշք ։ Ասէ Սիմէոն Մետափրաստէսն թէ յետ աւուրց քառասնից զկնի մահուան նր, ետես զնա աբբայն Թէոդոսիոս, զի գայր նա 'ի յերեկոյեան ժամն, մտանելով 'ի դասն յամենայն աւուր ընդ այլոց աշակերտաց, և երգէր · Թէպէտ ոչ ոք տեսանէր զնա, և ոչ ոք լսէր զերգս նր, եթէ ոչ մինն միայն, որ էր նշանաւոր առաքինութբ ակակիոս կոչեցեալ, որ լսէր զերգն, բայց ոչ տեսանէր ։ Սա գնացեալ առ Թէոդոսիոս աբբայն, ասաց ցնա, հայր՝ ոչ լսես զերգն եղբօր մերոյ Բարսղի, որ երգէ ընդ մեզ ։ Առ որ ասաց աբբայն, ես լսեմ զերգն, և տեսանեմ զնա, և եթէ կամիս, արարից

քզ

զի և դու տեսանիցես զնա ։ Եւ իբրև ժողովեցան եղբարքն 'ի միւսում աւուր 'ի դաւն առ 'ի տանել զժամն, ետես արքայն Թէոդոսիոս զմի կրօնաւորն Բարսեղ, որ երգէր ընդ այլոց ըստ սովորութե՛, և եցոյց արքային զնա մատամբն ակակիոսի, աղաչելով միանգամայն զԱծ, զի բացցէ զաչս ակակիոսի առ 'ի տեսանել զնա ։ Իսկ ակակիոս իբրև ետես, և ծանեաւ զնա, ընթացաւ փութաղակի մեծաւ ուրախութե՛ առ 'ի ողջագուրել զնա ․ բայց ոչ կարաց կալնուլ զնա ․ զի անյայտ եղև խնդոյն՝ ասելով այնպիսի ձայնիւ, զոր ամենեքեան լսէին, մնացէք խաղաղութե՛ հարք և եղբարք, մնացէք խաղաղութե՛, զի այսուհետև այլ ոչ ևս տեսանէք զիս ։

'Ի ժամանակագիրս կարգին սրբոյն Օգոստինոսի ձառի զսրբոյն Կոլումբանոսէ երիտասարդէ, (որ էր աշակերտ և ազգական սրբոյն կոլումբանոսի աբբային) թէ յորժամ վն սաստկութե՛ ջերմանն մերձ էր 'ի մեռանիլ, և ոչ՟ չի մեծագոյնիւ յուսով ցանկայր մահու, երևեցաւ նմա մանուկ մի փայլուն, որ ասաց ցնա ․ ծանիր զի աղօթքն աբբայինս քոյ, և արտասուք նր, զորս վն քոյ հեղու, արգելուն զելումն քո 'ի կենաց աստի ։ Յայնժամ սբ՟ հիւանդն այն սկսաւ սիրալրական կերպիւ գանգատիլ զաբբայէն իւրմէ, և ասաց ցնա լալով ։ Ընդէ՛ր բռնադատես զիս կեալ 'ի կեանս յայս, որ է լի տրտմութե՛, և արգելուս զգնալն իմ 'ի կեանս յաւիտենականս ։ Դադարեցաւ այսու աբբայն 'ի լալոյ, և 'ի տանելոյ զաղօթս վն նր ․ և այսպէս ժողովեցան կրօնաւորքն, և նա տանեալ զնր խորհուրդն, գրկեաց զամենեսեան, և մեռաւ 'ի Տր ։

Սբ՟ն Ամբրոսիոս ասէ զժողովրդենէն Թրակեցւ, թէ յորժամ ծնանէին մարդիկ, լային ․ և մինչ մեռանէին, առնէին զատօն մեծ ։ Լային

զծնունդն, և ուրախութիւն տօնէին զօր մահուան. զի թուէր նց, և մեծաւ պատճառաւ (ասէ սրբն Ամբրոսիոս) թէ նոքա, որք գային յայս աշխարհս ողորմելի, որ է լի այսքան վշտօք, էին արժանիք լինելոյ ողբացեալք. և յորժամ ելանէին յայսմանէ աքսորանաց վայրէ, բանաւոր իմն էր առնել զտօն, և ուրախանալ, զի ազատէին յայսքանեաց թշուառութեանց: Արդ՝ եթէ նոքա զայս առնէին գոլով հեթանոսք, և կռապաշտք, որք և ոչ ճանաչէին, և ոչ ունէին զծանօթութիւն փառացն, յորս մեք յուսամք, և որոց ապասեմք, ապա զինչ պարտիմք առնել մեք, որք լուսաւորեցեալք լուսովն հաւատոյ, ճանաչեմք զպարգևն, զոր վայելեն նոքա, որք 'ի Տր մեռանին: Ուստի մեծաւ իրաւամբ ասաց իմաստունն. Ժողով. 7. 2: Բարի է օր մահուան, քան զօր ծննդեան:

Սրբն Հերոնիմոս ասէ, թէ վն սոյն պատճառի նաև Քն փրկիչն մեր՝ յորժամ կամեցաւ չուել յաշխարհէ աստի, և երթալ առ հայր իւր, ասաց ցաշակերտս իւր, որք կային տրտմեալք: Եթէ սիրէիք զիս, ապա ուրախ լինէիք եթէ՝ զի Ես առ Հայր երթամ: Յովհ. 14. 28: Եւ հակադարձաբար՝ յորժամ կամեցաւ յարուցանել զՂազարոս, ելաց: Ո՛չ ելաց (ասէ սրբն Հերոնիմոս) զի մեռեալ էր, որովհետև ինքն կարէր յարուցանել, այլ ելաց, զի դառնալոց էր յայս աշխարհս ողորմելի: Լայր՝ զի նա, զոր այնքան սիրեալ էր, և սիրէր, դառնալոց էր առ վշտաալից աքսորանաց:

ԳԼՈՒԽ.

## ԳԼՈՒԽ. ԻԲ.

### Յաղագս համաձայնութեան ընդ կամացն Այ, զոր պարտիմք ունել 'ի վիշտս և 'ի պատահմանս հասարակս, և ընդհանրականս, որք գան մեզ:

ՈՉ միայն պարտիմք համակերպել ըզմեզ ընդ կամացն Այ 'ի մասնաւոր վիշտս և 'ի պատահմունս մեր, այլև պարտիմք ունիլ զհամակերպութիւն 'ի վիշտս, և 'ի տառապանս ընդհանրականս, զոր օրինակ, սովու, պատերազմի, հիւանդութեան, ժանտամահու և այլոց նմանեաց սոցա, զորս Տր̃ առաքէ եկեղեցւոյ իւրում: Յաղագս այսորիկ պիտոյ է նկատել, զի թէպէտ 'ի միոյ կողմանէ արժան իցէ մեզ զգալ զտառապանս, և զպատուհասս զայսոսիկ, և տհաճիլ ընդ չարիս, և ընդ վիշտս մերձաւորաց մերոց, որպ̃ իրաւունքն պահանջէ, բայց սակայն 'ի միւս կողմանէ եթէ նկատիցեմք զայնս՝ ըստ որում են կամքն Այ, և կարգաւորեցեալք 'ի յարդար դատաստանաց նր̃ առ 'ի արտահանել յայնց զչարիս, և ըզպտուղս 'ի մեծագոյն փառս իւր, զոր ինքն գիտէ, կարեմք զմեզ համակերպել 'ի նոսին ընդ ամենայնը կամաց նորին այնպիսաբար, որպ̃ տեսանեմք 'ի դատաւոր մի, որ հատանէ զվճիռն, և դատապարտէ զոք 'ի մահ, որ թէպէտ 'ի միոյ կողմանէ տհաճի ընդ մեռանելն մարդոյն այնորիկ, զի ցաւակցի նմա բնականաբար, և կամ վս̃ լինելոյ նր̃ բարեկամ. սակայն 'ի միւս կողմանէ հատանէ ըզվճիռն, և կամի զի մեռցի, որովհետև այնպէս պատշաճի բարւոյն հասարակի: Արդ թէպէտ ճշմարիտ իցէ և այս, թէ Ած ոչ կամեցաւ պարաճանդել զմեզ զի յամ իբր

կայսր

յայսոսիկ համակերպեսցուք զմեզ ընդ կա-
մաց նորա · և սիրեսցուք և կամիցիմք զայնս
դրականացն, այլ շատացաւ, զի տարցուք
զայնս համբերութբ առանց երբէք տրտնջա-
նաց, և ընդդիմութեն դատաստանի նորա ·
բայց սակայն ասեն ածաբանքն, և հրքն ·
թէ եղիցի գործ մեծագունի կատարելութե,
և արդեանց, և առաւել կատարեալ և ամ-
բողջ հնադրութեն, եթէ մարդն ոչ միայն
համբերութբ տանիցի զայնոսիկ, այլև սի-
րեսցէ, և կամիցի զայնս՝ զի որում են կամք
և բարեհաճութեն Այ, և հրաման ածայ-
նոյ արդարութեն, և ծառայօղք մեծագոյն
փառաց նր ։ Այսպ առնեն երանեցեալքն
'ի յերկինս, որք 'ի յամ իւրս համակերպին
ընդ կամացն Այ, ոպ ասէ հրն Թովմաս ։
Իսկ հրն Անսելմոս պարզաբանէ զայն այ-
սու օրինակաւ ասելով. թէ 'ի փառս երկ-
նայինս, ըստ յարքայութեն, կամքն մեր, և
կամքն Այ եղիցին այնպ համաձայնք, ոպ
են աստ 'ի յերկրի երկու աչք՝ մի և նոյն մար
դոյ, որոց մինն ոչ կարէ հայիլ յիր ինչ,
եթէ ոչ հայեսցի ընդ նմա և միւսն · ուստի
թէպէտ իցեն տեսանի երկու աչք, բայց
միշտ երևի մի և նոյն ։ Արդ՝ ոպ ամ սրբք
անդ 'ի յերկինս համակերպին ընդ կամացն
Այ 'ի յամ իրս, զի 'ի բնաւն տեսանեն
զկարգն արդարութեն նր, և զվախճանն մե-
ծագոյն փառաց նորա, առ որ են ուղղե-
ցեալք, այսպ և եղիցի մեծ կատարելութի,
եթէ նաև մեք հետևեսցուք նց յայսմիկ՝ կա-
մելով և ըղձալով, զի եղիցի կամքն Այ 'ի
յերկրի աստ, ոպ լինի անդ 'ի յերկինս ։
Քանզի կամիլն զայն, զոր կամի Այ, վասն
նոյնոյ պատճառի, և վախճանի, վս որոյ
կամի Այ, միշտ է բարի ։

Փոսիդոնիոս պատմէ զսրբոյն Օգոստինո-
սէ 'ի վարս նր, թէ յորժամ կայր պաշարե-
ցեալ

ցեալ 'ի վանդալաց քաղաքն ազնիւ, ուր նա
նստէր, 'ի տեսանելն նորա զայնքան աւե_
րուածս, և զմահս մարդկան, մխիթարէր
վճռով իմաստնոյ միոյ, որ ասաց: * Ոչ է
մեծ համարելի մարդն այն, որ մեծ համա_
րի զանկումն փայտից և քարանց, և զմե_
ռանելն մահկանացուաց ||: Առաւել մեծաւ
իրաւամբ պարտիմք մխիթարիլ մեք, խոկա_
լով, թէ այսպիսի բնաւք գան 'ի ձեռանէ
ԱՅ, և թէ այս է կամքն նր. և թէպէտ
պատճառն վն որոյ առաքէ զվիշտս, և զտա
ռապանս, լիցի անյայտ մեզ, սակայն միշտ
է արդար: Դատաստանք ՏՆ են յոյժ խո_
րինք, և գաղտնիք, և են խորք անյատակք,
ըստ ասէ մարգարէն. Սաղմ. 35. 7: Դատաս_
տանք քո որպէս խորք բազումք: Եւ ոչ պար_
տիմք քննել մեք զայն կարճագոյն, և նուաս
տագոյն, և պակասաւոր իմացութբ մերով,
զի այս է մեծ յանդգնութիւն: Ով գիտաց
զմիտս տն, կամ ով խորհրդակից եղև նմա: Հռոմ.
ԺԱ. 34: Պարտիմք յարգել զայն խոնարհու_
թբ, և հաւատալ, թէ 'ի յանհուն իմաս_
տութէ անտի գայ ամ ինչ. և թէ անկա_
րելի է գալ յայնմանէ իր իմն, որ ոչ լիցէ
յոյժ բարի, և որ ոչ կարգեսցի առ մեծա_
գոյն բարին, և օգուտն մեր: Մինչ գնա_
լոց եմք այսու հիմամբ, թէ հաւատալով 'ի
յանհուն բարութիւնն և ողորմութիւնն ԱՅ,
թէ ոչ երբէք առաքէ մեզ չարիս, և զվիշտս
զայսոսիկ, եթէ ոչ լիցէ արտահանելոց յայն
ցանէ զմեծագոյն բարիս: Բազմաց կամի
ԱԾ այսու ճանապարհաւ առաջնորդել 'ի
յերկինս, որք այլով կերպիւ երթիցեն 'ի
կորուստ: Քանիք գան, որք այսպիսի վշտօք
դառնան բոլորով սրտիւ առ ԱԾ, և մեռա_
նելով ճշմարիտ զղջմամբ, փրկին. և այլով
ճանապարհաւ կարէին դատապարտիլ: Ուստի
այն, որ թուէր թէ լիցէ պատուհաս, և հարուա
ած,

ած, է ողորմածն, և բարերարուն մեծագոյն ։ 'Ի յերկրորդ գիրս Մակաբայեցւոց (6. 12.) զկնի որոյ պատմէ հեղինակն զահարկու և զանողորմ հալածանսն ամբարշտի արքային Անտիոքոսի, և զհեղումն արեան, զոր արար առանց խնայելոյ ծերոց, և տղայոց, կուսից, և արամբեաց. և թէ որպէս կողոպտեաց և այրեաց զտաճարն, և զգարշութիւնս, զորս անդ հրամանաւ նորա գործէին, յաւելու, և ասէ ։ Աղաչեմ զընթեռնուսն, որք զգիրքս յայն աղջանիցեն, մի ինչ վասն աղէտին խղճիցեն, և զհետ պայս առ տառապանաց փորձին համարիցեն, այլ 'ի խրատ ազգին մերոյ ։ Սբն Գրիգորիոս յոյժ բարւոք ասէ յաղագս այսորիկ ։ Տզրուկն ծծէ զարիւն հիւանդին ունելով զդիտաւորութն յագիլ այնու, և ըմպել զամ, եթէ կարիցէ, բայց դիտաւորութն բժշկին է արտահանել այնու զվատթար արիւնն, և բժշկել զհիւանդն ։ Արդ՝ այս է այն, զոր կամի ԱԾ 'ի ձեռն վշտաց և նեղութեանց, զորս մեզ տայէ ։ Եւ որչափ անխոհեմ լիցէր հիւանդն, եթէ ոչ թողուցուր արտահանել զվատթար արիւնն, առաւել համարելով զդիտաւորութիւն տզրկին քան զդիտաւորութիւնն բժշկին. այսպէս և լիցուք մեք անխոհեմք, եթէ ընդդիմանայցեմք ԱԾ ։ Ուստի 'ի յորժամ վիշտս՝ որք գան մեզ թէ միջնորդութեամբ մարդկան, և թէ այլոց արարածոց, ոչ պարտիմք հայիլ առ այնս, այլ առ ամենիմաստ բժիշկն, որ է ԱԾ. զի համայնք այնոքիկ 'ի գործ ածին 'ի նմանէ որպէս տզրուկք, և միջոցք արտահանելոյ զվատթար արիւնն, և տալոյ մեզ զամբողջ առողջութն ։ Եւ այսպէս պարտիմք լինել հաստատիք, և հաւատալ, թէ զամ ինչ առաքէ նա մեզ վասն մեծագունի բարւոյ, և օգտի մերոյ ։ Եւ թէև ոչ լիցէր այլ բարի, եթէ ոչ կամիլ պատժել զմեզ 'ի կեանս յայս որպ

զոր

զորդիս, և ոչ պահել զպատիժն 'ի հանդերձեալ կեանսն, այս ես է շնորհ, և բարերարութին կարի մեծագոյն:

Պատմի զսրբուհւոյ կուսէն Կատարինեայ սենացւոյ, թէ յորժամ կայր անգամ մի յոյժ վշտացեալ յաղագս սուտ վկայութեն միոյ՝ եղելոյ ընդդէմ պարկեշտութե և պատուոյ նր, երևեցաւ նմա Քն փրկիչն մեր, որ ունէր յաջ ձեռին զպսակ մի ոսկեղէն զարդարեցեալ բազում ակամբք, և պատուական քարամբք. և 'ի ձախն ունէր զայլ պսակ մի փշեղէն, և ասաց ցնա. Ծանիր ով դուստր իմ սիրական, զի հարկ է քեզ պսակիլ այսոքիւք երկու պսակօքս 'ի զանազան ժամանակս զանազան կերպիւ. վն որոյ ընտրեա քեզ զայն, զոր առաւել կամիս, թէ կամ պսակիլ 'ի կեանս յայս փշեղէն պսակաւս այսուիկ, և այս միւս պատուական պսակս պահեսցի քեզ վասն յաւիտենական կենաց, կամ տացի քեզ 'ի կեանս յայս պատուական պսակս այս, և վն հանդերձեալ կենաց պահեսցի քեզ պսակն փշեղէն: Եւ սրբուհի կոյսն պատասխանեալ ասաց. Տր իմ, 'ի բազում ժամանակաց հետէ հրաժարեցայ ես 'ի կամաց իմոց՝ առ'ի հետևիլ կամաց քոց, վն որոյ ոչ պատկանի ինձ ընտրել զայս. բայց սակայն եթէ դու կամիս Տր, զի տաց զպատասխանի, ասեմ, թէ ես միշտ ընտրեմ լինիլ 'ի կեանս յայս համակերպ ամենայնիւ չարչարանաց քոց. և վասն սիրոյ քոյ կամիմ ընդգրկել միշտ զչարչարանս առ զովացումն իմ: Եւ զայս ասացեալ՝ էառ զպսակն փշեղէն ձեռամբ իւրով 'ի ձեռաց փրկչին, և եդ զայն 'ի գլուխ իւր ամ զօրութբ իւրով, և այնքան բռնութբ, մինչ զի փուշքն ծակոտեցին զգլուխն շուրջանակի, և այնուհետև զաւուրս բազումս զգաց զցաւ գլխոյն յաղագս մտանելոյ փշոյն 'ի գլուխն:

ԳԼՈՒԽ.

## ԳԼՈՒԽ. ԻԳ։

Յաղագս միջոցի միոյ, որ մեծապէս օգնեսցէ մեզ առ 'ի պահել բարւոք, և մեծաւ համաձայնութբ̄ ընդ կամացն Այ զամ̄ կիրս՝ թէ զմասնաւորս, և թէ զընդհանրականս. զորս առաքէ մեզ Տր̄, որ է ճանաչելն զմեղս մեր, և ցաւելն վասն նոցա ։

Է Հասարակ վարդապետութիւն սրբոց, թէ Ած Տր̄ն մեր սովոր է առաքել զվիշտս և զպատուհասս զայսոսիկ ընդհանրականս հասարակօրէն վս մեղաց գործեցելոց, ո̄պ յայտ է յա̄ծաշունչ գիրս, որք լի են այսու, և այլն. Ճշմարտութբ̄ և յիրաւի ածեր զայս ամ̄ վասն մեղաց մերոց. զի մեղաք, անօրինեցաք, և ապստամբեցաք քեզ ու անսացաք. և զամ̄ զոր ածեր 'ի վերայ մեր, արդար դատաստանաւ արարեր : Դանիէլ. 3. 28: Երբ այսպէս տեսանեմք, զի Ած պատժէր զժողովուրդն իւր, և տայր զնա 'ի ձեռս թշնամեաց նր̄, յորժամ զայրացուցանէր զնա. և ազատէր զնա յորժամ զղջանայր 'ի մեղաց, և դառնայր առ նա: Երբ վս այսորիկ աքիօր զօրադրուխ և իշխան որդւոցն ամոնայ՝ յորժամ պատմեաց հոլոփեռնեայ, թէ ո̄պ Ած պաշտպանէր զորդիսն իւրի, և պատժէր զնոսա՝ մինչ հեռանային 'ի հնազանդելոյ նմա, ասաց ցնա, նախ քան զյառնելքոյ 'ի վր̄ նց̄, ջանա իմանալ, եթէ իցեն նոքա յայնմիկ ժամանակի 'ի մեղս. զի եթէ իցէ այսպէս, կարես առանց կարծեաց ունել զյաղթութի, ապա թէ ոչ՝ մի՛ լինիր ձեռնամուխ, զի ոչ յաջողի քեզ, և լինիս յամօթ նախատանաց. քանզի Ած պատերազմեսցի վասն ժողովրդեան իւրոյ, որոյ ընդդէմ ոչ ոք կարէ զօրանալ: Երբ մասնաւորապէս ծանուցանեն Սրբքն զայս իրս 'ի վր̄ այնորիկ բանի փրկչին մերոյ,

մերոյ, զոր տեսաց հիւանդին այնմիկ, որ զամս երեսուն և ութ կայր 'ի պրոբատիկէ աւազանին, յետ բժշկելոյն զնա. Ահաւասիկ ողջացար, մի ևս մեղանչեր. զի մի չար ևս ինչ լինիցի քեզ: Յով. 5. 14: Ըստ այսմ ուրեմն մինն 'ի մէջ միջոցաց, որ 'ի մէջ մասնաւոր և ընդհանրական վշտաց, և տառապանաց կարէ օգնել մեզ մեծապէս առ 'ի համակերպիլ ընդ կամացն Այ, և տանիլ զայնս բազում համբերութբ, եղիցի մտանելն վաղվաղակի 'ի մեզ, և նկատել զմեղս մեր, վս որոց արդիւնաւորեցաք զպատիժն զայն: Զի այսու կերպիւ կարասցուք զամ ձախորդութիւնս պատահեալս մեզ տանիլ բարեպէս. և ենթադասեսցուք զայն փոքրագոյն քան զայն, որ պարտ էր գոլ ըստ մեղաց մերոց:

Սբն Բեռնարդոս, և սբն Գրիգորիոս յայտբարբառք խօսին զայսմանէ, զի ասէ սբն Բեռնարդոս. *Եթէ կատարեալպէս զգացեալ լիցի մեղքն 'ի ներքուստ, խրամի արտաքին պատիժն փոքրագոյն, կամ ոչինչ զգացեալ լիցի. ոպ երանելին Դաւիթ ոչ զգայ զանարգանս, զորս տայր նմա սեմէի՝ յիշելով զհալածանս որդւոյն իւրոյ աբեսաղոմայ ||: Վս որոյ ասաց. Ահաւասիկ որդին իմ, որ ելեալ է յորովայնէ իմմէ, խնդրէ զանձն իմ, որչափ ևս որդին Յեմինեայ: 2. Թագ. 16. 11: Եւ սբն Գրիգորիոս 'ի վր այնց բանիցն Յոբայ. 11. 6: որ ասէ. Ահա գիտասջիր, թէ արժանի չար որոց մեղար, եհաս ընդ քեզ 'ի Տեառնէ: Պարզաբանէ զայս աղնիւ օրինակաւ միով, և ասէ. Թէ ոպ յորժամ հիւանդն զգայ զուռուցն չարացեալ, կամ զվէրն փտեցեալ՝ կամաւորապէս դնէ զինքն 'ի ձեռս վիրաբուժին, որպէս զի բացցէ, և հատցէ ուր կամի, և ոպ կամի, և որքան առաւել է չարացեալ, և փտեալ խոցն, այնքան առաւել ըմբերէ երկաթոյն, և հրոյն. այսպէս և յորժամ ոք ճշմարտապէս

կգայ զնոյն, և զհիւանդութիւն, զոր պատճառեաց 'ի հոգւոջ նորին մեղքն, յօժարաբար ընդունի զխարանս վշտաց, մահացուցման, և խոնարհեցուցման, որով ԱԾ կամի դարմանել զնոյն հոգւոյն, և արտահանել անտի զչարաճն: * Ցաւքն հարուածոց մեղմանայ (ասէ սբն Գրիգորիոս) յորժամ մեղքն ճանաչի ||: Իսկ եթէ դու ոչ ընդունիս կամաւորաբար զմահացուցումն, և ըզվիշտս, որ քեզ կարկառի, պատճառն է, զի ոչ ճանաչես զհիւանդութիւն հոգւոյդ, և ոչ զգաս զչարաճն, որ կայ 'ի ներքս. վն որոյ ոչ կարես ըմբերել խարանին, և ածելւոյն:

Սուրբք, և ճշմարիտ ծառայքն ԱՅ ոչ միայն ընդունէին յօժարութբ զայսոսիկ, այլև ցանկային նց, և ճշմարտութբ հայցէին զայնս յԱՅ. ուստի ասէր երանելին Յոբ. 6. 8: Ո՞ տացէ, զի եկեսցէ յիս խնդրուածք իմ, և որ յուսամն, ինձ խոստասցէ զիս, արձակեսցէ զձեռն իւր, և հարցէ զիս. և այս եղիցի ինձ մխիթարութիւն, զի վշտագնելով զիս ցաւով, ոչ անխայեսցէ: Եւ մարգարէն Դաւիթ ասէր. Փորձեա՛ զիս Տր, և քննեա՛ զիս: Սաղմ. 2. 25: Զի ես 'ի տանջանս պատրաստ եմ: Սաղմ. 37. 18: Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս: Սաղմ. 118. 71: Այսպիսաբար ցանկային ծառայքն ԱՅ, զի ԱԾ պատժիցէր զնս, և խոնարհ առնիցէր 'ի կեանս յայս, (ասէ սբն Գրիգորիոս) մինչ զի մանաւանդ տրտմէին, յորժամ 'ի միոյ կողմանէ խոկային զմեղս իւրեանց, և 'ի միւսոյ կողմանէ տեսանէին, զի ԱԾ ոչ պատժեաց զնս վն մեղաց, քանզի կասկածէին, և երկնչէին, թէ գուցէ կամի յապաղել առ 'ի պատժել յետոյ 'ի հանդերձեալն, ուր առաւել խստագոյն եղիցի պատիժն: Եւ այս էր, զոր յաւելուր Յոբ: Եւ այս եղիցի ինձ մխիթարութիւն, զի վշտագնելով

զիս

դէս չարին, ու անխայելոյ : Իբրու թէ ասի_ցէ, քանզի Ած զամանս ոչ պատժէ 'ի կենանս յայս, այլ 'ի պատժել յետոյ յաւիտենակա_նաբար 'ի հանդերձեալն . մի՛ անխայեսցէ Ած ինձ այսպիսաբար 'ի ներկայ կենանս յայս, որ զի անխայեսցէ ինձ յետոյ յաւի_տենականաբար . պատժեսցէ զիս Ած իմ աստ որպէս հայր գթած, որ զի մի՛ յետոյ պատ_ժեսցէ զիս որպէս դատաւոր խստագոյն, քան_զի ես ոչ դանդաղեմ, ոչ տրտնջեմ, և ոչ ընդդիմանամ . ուստի ասէ, Ո՛չ ընդդէմ կացից բանից սրբոյն : Յոբ. 6. 10: այլ մանաւանդ այս եղիցի ինձ մխիթարութիւն իմ: Զայս ասէր նաև սբն Օգոստինոս այսպիսի բանիւք . * Աստ կիզեա՛, աստ աղոյեա՛, աստ ինձ մի՛ խնայեր, որ զի 'ի յաւիտեան խնայեսցես :||

Իրաւի տգիտութիւն և կուրութիւն մեր է պատ_ճառն, զի այսքան դառնապէս զգամք զվիշտս մարմնաւորս, և ոչ զգամք զվնասս հոգևորս . և այն զի ոչ պարտին լինիլ զգա_ցեալք այնքան վիշտքն, որքան մեղքն: Եթէ ճանաչիցէաք, և քննիցէաք բարւոք զծան_րութիւն մեղաց մերոց, ամ պատիժ թուէի_ցիւր մեզ փոքրագոյն, և ասիցէաք ը Յո_բայ . Մեղայ, և ճշմարտապէս յանցեայ, և ոչ որպէս արժանի էր՝ ու ընկալայ : Յոբ. 33. 27: Զայսո_սիկ բանս պարտէաք տանիլ միշտ դրեցեալս 'ի սրտի մերում, և առէպ ասել բերանով : Այն ամ, զոր կարեմք կրել 'ի կենանս յայս, է ոչինչ բաղդատեալ այնմիկ, զոր արժա_նաւորի մի միայն մեղքն: Իմանայցէիր, զի նո_րի փոքրագոյն պահանջի 'ի քէն, քան զոր արժա_նաւորի անօրէնութիւն քո : Յոբ. 11. 6: Որ խոկայ՝ թէ անարգեաց մեղօք զմեծութիւն Այ, և զի այսպիսի արժանի եղև կալ 'ի յաւիտեան 'ի դժոխս, զո՞րպիսի անարգանս, զո՞րպիսի նախատինս, կամ զո՞րպիսի պարտաւանս ոչ ընդունիցի յօժարութ՟ առ 'ի վճարել և հա_

 տու_

տուցանել այնքանեաց, և այնպիսեաց անարգանաց, զորս արար ԱՅ ։ Յորժամ սեմէի անիծանէր զԴաւիթ, սկսաւ ասել Դաւիթ, Թերևս տեսցէ Տր զտառապանս իմ, և հատուսցէ ինձ բարիս փոխանակ անիծից նր յաւուր յայսմիկ ։ 2. Թագ. 16. 12: Այսպիսաբար պարտիմք ընդգրկել և մեք զանարգանս, և զվիշտս, որք գան մեզ, և ասել. Թո՛ղ զի գայցեն. Թերևս հաճեսցի Տր ընդունել զայս 'ի վճարումն և 'ի հատուցումն վն մեղաց մերոց. և այս լիցէր մեծ երջանկութն մեր ։ Քանզի եթէ զայն զոր ծախեմք 'ի տրտնջելն, և 'ի ոչ ուրախանալն 'ի վիշտս, ծախեցէաք զայն գոհանալով ընդդէմ մեզ այսու կերպիւ, առնէաք զեր իմն յոյժ հաճելի ԱՅ, և առնել բարւոք դարմանէաք զմեզ ։

Որքան 'ի գործ ածէին սրբքն զմիջոցս զայս 'ի յառիթս այսպիսիս, և այնպիսաբար կրթէին զինքեանս, մինչ զի ընթեռնումք վն ոմանց 'ի նոցանէ, որպէս վն սրբուհւոյ կուսին կատարինէի սենացւոյն, և վն այլոց, թէ զհարուածս, և զվիշտս զորս ԱՅ առաքէր եկեղեցւոյն, զայնս ընձեռէին նոքա մեղացն՝ և պակասութեանց իւրեանց յատկաբար, և ասէին ։ Ես եմ պատճառն պատերազմիս այսորիկ. մեղք իմ են պատճառ ժանտամահուս այսորիկ, և վշտացս, զորս ԱՅ առաքէ ։ Թուէր նց, թէ մեղքն իւրեանց աւելի արժանաւորէին քան զայն ։ Եւ առ 'ի հաստատել զայս յաւելում ասել, թէ բազում անգամ վն մեղաց միոյ մարդոյ՝ պատժէ ԱՅ զբոլոր ժողովուրդն. որպէս վն մեղացն Դաւթի առաքեաց ԱՅ զմահ առ ամ ժողովուրդն իւր. և ասէ ածաշունչն, թէ մեռան եօթանասուն հազար 'ի մէջ երից աւուրց ։ Բայց թերևս ասիցես. Դաւիթ էր թագաւոր, և վն մեղաց գլխոյն, ԱՅ պատժէ զժողովուրդն ։ Պատասխանեմ,

նեմ, թէ աքար ոչ էր թագաւոր, այլ մարդ մի մասնաւոր, որ գողացաւ 'ի կործանմանն Երիքովի զոմանս իրս . իսկ Այ պատժեաց զամ ժողովուրդն այսու կերպիւ, զի երեքհարիւր զինուորք առաւել քաջագոյնք դարձուցեալք զթիկունս առ թշնամիս՝ բռնադատեցան փախչիլ վասն այնր մեղաց : Ո՛չ միայն վն մեղաց գլխոյն, այլեւ վասն մեղաց միոյ մարդոյ մասնաւորի սովոր է Այ պատժել զբազումս : Եւ այսու կերպիւ մեկնեն ոմանք զայն, զոր այնքան անգամ վերակրկնէ ս.գ. գիրն ասելով, թէ Այ պատժէ զմեղս հարց յորդիս մինչեւ յերրորդ եւ 'ի չորրորդ ծնունդ : Մեղք հօրն ասի՝ թէ ոչ անցանէ յորդիս, եւ ոչ մեղք որդւոյն 'ի հայրս, ըստ որում է մեղք, որպ ասի Եզեկիէլի, 18. 20: Անձն որ մեղիցէ, նոյն մեռցի . եւ որդի զհօր մեղս մի առցէ, եւ մի հայր առցէ զանիրաւութիւն որդւոյ իւրոյ : Բայց ըստ որում է պատիժ, տայ զայն Այ երբեմն միում վն մեղաց միւսոյն: Եւ այսպ թերեւս վն մեղաց իմոց, եւ վասն մեղաց քոց պատժեսցէ Այ զբոլոր տունն, եւ զբոլոր կրօնն:

Ապաուրեմն միշտ պարտիմք ունել առաջի աչաց 'ի միոյ կողմանէ զխոկումն զայս, եւ 'ի միւս կողմանէ զբարեհաճութիւն Այ, եւ այսպէս դիւրաւ կարասցուք համակերպել ըզմեզ ընդ կամացն Այ 'ի վիշտս, զորս մեզ առաքէ . եւ տասցուք ընդ հեծեալ քահանայիւն, Տր է, որ ինչ բարի է առաջի իւր, ինքն արասցէ : 1. Թագ. 3. 18: Եւ ընդ սրբոց մակաբայեցւոցն, Որպէս եւ իցէ կամք ՟ն 'ի յերկինս, այնպէս եւ կատարեսցի : 1. Մակ. 3. 60: Նաեւ ընդ մարգարէին Դաւթի . Լուռ եղէ եւ ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր . Սաղմ. 38. 10: ՟ք, ոչ տրտնջեցի Տր վն փորձոց, զորս ինձ առաքեցեր, այլ մանաւանդ որպ թէ համր իցէի՝ լռեցի, եւ տարայ զայնս համբե

րու_

րութեն , և համակերպութեն առ կամս քո ·
որովհետև գիտեմ , զի դու առաքես զայնս :
Այս է լինելոց միշտ մխիթարութիւն մեր
յամ ևրս · ք , Այ կամի զայս · Այ հրա_
մայէ զայս · Այ է այն , որ առաքէ զայս ·
եղիցի օրհնեալ գալուստ նր : Ո՛չ է պիտոյ
մեզ այլ պատճառ առ 'ի բարւոք տանիլ զամ
ևրս :

'Ի վր այնր բանի Սաղմոսի · 28 · 6 : Որ ոխ_
բերէն է որպէս որդի միեղջերուոյն : Ծանուցա_
նեն մեզ , թէ Այ նմանեցուցանէ զինքն
միեղջերուծի · զի կենդանին այն ունի զեղ_
ջիւրն 'ի ներքոյ աչաց , ուստի բարւոք տե_
սանէ , թէ ուր պարտի հարկանել զեղ_
ջիւրն , և ոչ որպ ցուլն , որ ունի զեղջիւրսն
'ի վեր քան զաչսն , և ոչ տեսանէ , թէ ուր
հարկանէ : 'Ի պարձեալ միեղջերուն այնու
եղջերբն' ուր հարկանէ , նովիմբ բժշկէ :
Այսպէս և առնէ Այ , զի որովք խոցէ
հարկանէ , նովիմբք առողջացուցանէ :

Արդ՝ այնքան հաճոյ է Այ համակերպու_
թիւն , և խոնարհ հպատակութիւն այս առ
պատիժն , մինչ զի երբեմն եղանի միջոց ,
որով Տր զիջանի , և ոչ կամի պատժել : Ծա_
նի 'ի պատմագիրս եկեղեցականս զԱթթի_
լայէ արքայէն հոնաց , որ աւերեաց զբա_
զում գաւառս , և անուանեցաւ ահ երկրի ,
և հարուած Այ , թէ յորժամ մերձեցաւ
սա 'ի քաղաքն Թրոյիա 'ի Փրանսա , սբ Լու_
պոս եպիսկոպոսն քաղաքին ել ընդ առաջ
նր քահանայապետական զգեստուք , և ամ
կղերիկոսօք հանդերձ , և ասաց ցնա · Ո՞ ես
դու , որ խռովես զերկիր , և աւերես զայնս :
Եւ նա պատասխանեաց ասաց · ես եմ հա_
րուածն Այ · Յայնժամ սբ եպիսկոպոսն
ետ բանալ զդրունս քաղաքին , և ասաց ·
բարի լիցի գալուստ հարուածոյն Այ : Եւ
ապա իբրև մտին զինուորքն 'ի քաղաքն ,

ոյնից կուրացոյց զնա Տր̃, մինչ զի անցին ը̃ այն առանց առնելոյ զվնաս ինչ: Քանզի թէպէտ Աթիլա էր հարուած Այ̃, սակայն Այ̃ ոչ կամեցաւ, թէ լիցի հարուած վս̃ նց̃, որք ընդունէին զնա որպ̃ զհարուած նր̃ մեծաւ հպատակութբ̃:

## ԳԼՈՒԽ. ԻԴ:

*Յաղագս համակերպութե̃ ընդ կամացն Այ̃, ուր պարտիմք ունել 'ի չորութե̃ հոգւոյ, և 'ի տրտմութե̃ որ յաղթեն. և թէ զինչ իցէ չորութին և տրտմութին 'ի մէջ աղօթից, պարզաբանի:*

ՈՉ միայն պարտիմք համակերպել զմեզ ընդ կամացն Այ̃ 'ի յարտաքին բնական, և 'ի մարդկային իրս, այլև յայնմիկ, որ բազմաց թուի, թէ իցէ սրբութն ցանկալի նց̃ յուժգին, ք̃ 'ի բարիս հոգևորս, և գերընականս. որպիսի է հոգևոր մխիթարութին, առաքինութին, պարգևն աղօթից, հանդիստն, և ներքին խաղաղութին հոգւոյ, և այլք գերազանցք իրք հոգևորականք: Բայց թերևս հարցանիցէ ոք ինձ. զուցէ կարիցէ մտանել 'ի յայսպիսի իրս անձնասիրութիւն անկարգ, որպ̃ զի հարկ լիցի բարեխառնել զայն նաև 'ի յայսոսիկ իրս. Ասեմ թէ այո: Եւ աստ տեսանի, թէ ո՛րքան մեծ է չարութին ինքնասիրութե̃, որովհետև ոչ երկնչի նաև 'ի յայսպիսի բարի իրս խառնել զչարութի իւր: Բարի են մխիթարութիքն և ախորժմունքն հոգևորք. զի նոքօք հոգին 'ի բաց հերքէ, և առնէ դիւրապէս զհեշտութիս և զախորժմունս երկրային իրաց, որք են կերակուրք և սնուցիչք մոլութեց, զօրանայ և թեթևանայ առ 'ի շրջել դիւրաբար 'ի ծառայութե̃ Այ̃, ըստ ասացելոյ մարգարէին. Սաղմ. 118. 32: 'ի ճանա_

պարհս

պարհս պատահմանաց գոց ընթացայ, ըն անդուրր արարէր արդի իմոյ։ Քանզի հոգևոր ուրախութի, և մխիթարուի ընդարձակի, և լայնանայ սիրտն, որպ և տրտմութի անձկանայ։ Արդ՝ մարգարէն Դաւիթ ասէ, թէ յորժամ Այ առաքէր ինձ զմխիթարութիս, լինէին նոքա ինձ որպ զթևս, որք ընթացուցանէին, և թռուցանէին զիս 'ի ճանապարհի առաքինութեց, և պատուիրանացն Այ։ Դարձեալ՝ օգնեն մարդոյ հոգևոր մխիթարութիքն առ 'ի քամահել զկամս իւր․ առ 'ի յաղթել ախորժմանն, առ 'ի ճնշել զմարմինն, և առ 'ի տանիլ զօրութի մեծաւ ըզխաչն, և զվիշտս, որք պատահին։ Եւ այսպէս սովոր է Այ առաքել զմխիթարութիս այնոցիկ․ որոց առաքելոց է զվիշտս և զնեղութիս, որպ զի նոքօք պատրաստեսցին առ 'ի տանիլ զայնս բարեպ, և մեծաւ պտղով։ Այպ և տեսանեմք, զի Քս փրկիչն մեր կամեցաւ մխիթարել նախ զաշակերտս իւր 'ի թափօր լերինն ամենափառաւոր այլակերպութի իւրով, որպ զի մի յետոյ խռովեսցեն տեսանելով զնա չարչարեցեալ, և մեռեալ 'ի խաչին։ Այսպ ևս տեսանեմք, զի Այ սովոր է տալ հասարակօրէն զմխիթարութիս զայս նորապ սկսողաց ծառայել Այ․ որպ զի այսու գործունէութի թողուցուն զախորժուածս երկրաւորաց՝ վս ախորժման երկնայնոյ։ Բայց զկնի որոյ կապէ զնս սիրով իւրով․ և տեսանէ, զի արարին զհաստատուն արմատ առաքինութե, սկսանի կրթել զնս խստութի իւիք, որպ զի ստասցին զմեծագոյն առաքինութի խոնարհութե և համբերութե, և արժանաւորեսցին զմեծագոյն յաւելուածս շնորհաց և փառաց՝ ծառայելով Այ զտաբար առանց մխիթարութե։ Այս է պատճառն, վս որոյ ոմանք 'ի սկզբան յորժամ մտանեն 'ի կրօնն, և թերևս նաև ար-

տաքոյ նորին, յորժամ կային ցանկութք մտա-նելոյ 'ի յայն, զգային զանէլի մխիթարութե, և զախորժումն հոգևոր. և զայս առնէր նը Այծ, զի յայնժամ վարէր ընդ նը ըստ տկոյ նոցին, մնուցանելով զնոսա կաթամբ տղայոց՝ առ'ի հատանել զնը 'ի սոենէ աշխարհիս. ոչ զի կարիցէին տանել զաշխարհս, և գտրչիլ յիրաց նը: Այլ.քանզի կարեն յետոյ ուտել զհաց չոր, տայ նը Այծ զկերակուր մեծաց: Վն այսորիկ, և վն այլոց վախճանաց սոցին նմանեաց, սովոր է Այծ տալ նը զմխիթարութե, և զախորժումն հոգևոր: Ուստի մըքն հասարակաւար խրատեն զմեզ, զի 'ի ժամանակի մխիթարութե նախապատրաստեսցուք վն ժամանակի փորձութե. ոչ սովորութի է 'ի ժամանակի խաղաղութե առնել զնախապատրաստութի վն պատերազմի. զի մխիթարութիքն սովորք են լինիլ նախընթացական հակմունք փորձութեց և վշտաց:

Ուստի հոգևոր ախորժմունքն և քաղցրութիքն են յոյժ բարիք և օգտակարք, եթէ գիտասցեմք բարեաց 'ի գործ ածել զայնս. վն որոյ յորժամ տայ մեզ Տր զայնս, պարտիմք ընդունիլ զնը մեծաւ շնորհակալութբ: Այլաթէ կամի ոք կալ և մնալ 'ի մխիթարութիս յայսոսիկ. և ցանկալ նը միայն վասն իւրոյ հաճութե, և վն բերկրութեն զոր հոգին զգայ 'ի նոսին, այս է մոլութի, և աղակարդ խնքնասիրութի: Զի ոչ 'ի յիրս հարկաւորս վն կենաց, զոր օրինակ 'ի յուտելն, 'ի յըմպելն, և 'ի ննջելն եթէ ունիցի մարդ զբերկրութին սոցա ոչ զվերջին վախճան իւր, է մեղք. այսպէս և յորժամ 'ի յաղօթս ցանկայ ոք ունիլ զախորժմունս և զմխիթարութիս զայսոսիկ ոչ զվախճան, է մոլութի հոգևորի որկրամոլութե: Ո՛չ են ցանկալիք՝ և ոչ ընդունելիք այսոքիկ վն հաճոյն և ախորժ-

ման

մանն մերոյ, այլ զի են միջոցք, որք օգնեն
մեզ վասն վախճանելն զոր ասացաք ։ Քանզի
ա͞տ հիւանդն, որ գարշի 'ի կերակրոյ, զոր-
մէ ունի զգլխոյս, ուրախանայ յորժամ
գտանէ 'ի նմին զհամ ինչ. և այն ոչ վ͞ն հա-
մոյն, զոր ոչ ինչ համարի, այլ զի զարթու-
ցանէ զքաղցն առ'ի յուտել, և պահպանել
զկեանս իւր, այս͞տ նաև ծառայն Ա͞յ ոչ
պարտի կամիլ զմխիթարութն հոգևոր առ'ի
դադարիլ յայնմիկ, այլ զի երկնային զւարճացու-
ցիչս այս սնուցանէ զհոգին, և զօրացուցա-
նէ զնա առ'ի աշխատիլ 'ի ճանապարհի առա-
քինութե, և մնալ հաստատ 'ի նմին ։ Այ-
սու կերպիւ բերկրութիքն ոչ լինին ցանկա-
ցեալ վասն բերկրութեց, այլ վ͞ն մեծագոյն
փառացն Ա͞յ, և ըստ որում վերադառնան
'ի մեծագոյն պատիւ, և 'ի փառս ն͞ր ։

Բայց ասեմ աւելի ևս, զի թէև ցանկա-
նայցէ ոք մխիթարութեցս այսոցիկ հոգևո-
րաց այսու կերպիւ, և վ͞ն ասացեալ վախ-
ճանաց, որք են ն͞րք, և բարիք, այլ սա-
կայն կարէ լինիլ, թէ 'ի յայնպիսի ցանկու-
թիս գտցի աւելորդութի ինչ, և խառնուածս
ապականող ինքնասիրութե ։ Եւ այս եղա-
նի՝ յորժամ ցանկացեալ լինի անձարձակա-
բար, աւելորդ տոփանօք, և նեղասրտու-
թբ, մինչ զի եթէ պակասիցին մխիթարու-
թիքն այնք, ոչ մնայ այնքան հաճեալ, և ոչ
այնքան համակերպ ընդ կամացն Ա͞յ. այլ
մանաւանդ ամբոխի, տրտնջէ, և տրտմի ։
Այս է անկարգ ըղձաձկութի, և տոփումն
հոգևոր, վ͞ն զի ոչ պարտի ոք այնքան յե-
նուլ 'ի քաղցրութիս, և 'ի մխիթարութիս
հոգևորս, մինչ զի արգելցէ այն զխաղաղու-
թիւն հոգւոյ, և զհամակերպութիւն ընդ կա-
մացն Ա͞յ, յորժամ նա ոչ հաճի տալ զայնս ։
Զի առաւել բարեգոյն է կամքն Ա͞յ քան
զայս ամ. և է առաւել օգտակար, թէ ոք

չատուցեալ համակերպելի ընդ այնմիկ, զոր կամի Տր̃ ։

Արդ՝ զայն զոր առնեմք զքաղցրութեանց, և զմխիթարութեանց հոգևորաց, զնոյնն իմանամք և զպարգևէ աղօթից, և զջերմեռանդութէ, զոր ցանկամք ունիլ 'ի նմին. այլև զներքին խաղաղութէ և զանդորրութէ հոգւոյ մերոյ, և զայլոց նախապատուականաց իրաց հոգևորաց ։ Քանզի 'ի ցանկութէ ամենից իրացս այսոցիկ կարէ խառնիլ անկարգ ըղձաձկութի, և բաղձանք. ի̃ յորժամ բաղձացեալք լինին այնքան ներղսարտութ̃, մինչզի եթէ ոք ոչ կարիցէ ունել զայն, որում ցանկայ, տրտնջէ, տրտմի, և ոչ համակերպէ զինքն ընդ կամացն Այ ։ Արդ՝ 'ի ձեռն քաղցրութեանց և մխիթարութեանց հոգևորաց իմանամք այժմ ոչ միայն զջերմեռանդութին, զախորժմունս, և զմխիթարութիւս զգալիս, այլ նաև զնոյն գոյացութին, և զպարգևն աղօթից, և զկալն 'ի նմին հանգստութ̃, և խաղաղութ̃, զոր կամիմք ։ Մանաւանդ այժմ զամանէ բուռն հարցուք խօսիլ նախապատուաբար՝ ցուցանելով, թէ ո՜րպէս պարտիմք յայսմիկ համակերպել զմեզ ընդ կամացն Այ, և ոչ թողուլ զմեզ բռնադատիլ և շարժիլ անհեդրդ բաղձանօք և ներղսարտութ̃ ։ Արդ՝ առեմ թէ դիւրաբար կարէ ոք հրաժարել 'ի մխիթարութեանց, 'ի քաղցրութեանց, և 'ի ջերմեռանդութեանց զգալեաց, յորժամ տեսանէ զայն, որ է գոյացական աղօթից, և զգայ յինքեան զպտուղ նր̃. զի ամենեքեան գիտեն, թէ աղօթքն ոչ կայանայ 'ի քաղցրութիս, 'ի ջերմեռանդութիս, և 'ի կակղութիս յայսոսիկ. ուստի վն̃ սորին պակաս զօրութի է պիտոյ ։ Բայց յորժամ երթայ ոք յաղօթս, և կայ 'ի նմին ոպ̃ պատառած քար, և ունի զայնքան մեծագոյն ցամաքութի և զչորու֊

'ի

'ի նմին, մինչ զի ոչ ընաւ գտանէ զջերմե-
ռանդութիւն և զախորժումն ինչ առ այն,
այլ թուի ինքեան, թէ ծածկեցեալ և թա-
քուցեալ իցէ ԱՅ. և եկեալ իցէ 'ի վերայ
իւր անէծքն այն, զոր ԱՅ սպառնայր ժո-
ղովրդեան իւրում ասելով. Եւ արարից զձեր եր-
կինս երկաթի, և զերկիր ձեր իբրեւ պղնձի։ Ղևտ.
26. 19։ պիտոյ է մզ սորին մեծագոյն զօրու-
թեն, և մեծագոյն արիութեն։ Թուի այսպի-
սեացս՝ թէ երկինն դարձեալ իցէ յերկաթ,
և երկիր 'ի պղինձ վասն իւրեանց, զի մի
անձրևեսցէ 'ի վր նց զկաթիլ մի ջրոյ առ'ի
կակղացուցանել զսիրտս նց, և տացէ նց
զպտուղ, որով կարասցեն ապրիլ. այլ ու-
նին զանպտղութեն և զչորութեն յարամնայա-
կան։ Եւ ոչ միայն ունին զչորութիւն
այլև զտարապնդութեն մտաց, և զայլ և այլ
խորհուրդս, որք երբեմն են այնքան վատ-
թարք և ագեղք, մինչ զի թուի, թէ ոչ եր-
թան յաղօթս վասն այլ ինչ իրի, եթէ ոչ
առ'ի փորձիլ, և թշնամանիլ ամ փորձու-
թե։ Արդ՝ երթ դու այժմ առ այսպի-
սիս, և ասա նց, զի յայնմ ժամու խոկայ-
ցեն զմահուանէ, կամ զՔնէ խաչեցելոյ, որ
սովոր է լինել բարի դեղ, և տեսցես, զի
առասցեն քեզ, զայս նաև ես գիտեմ, զոր
եթէ կարիցէի խոկալ, զինչ պակասիլ կա-
րէր ինձ։ Երբեմն գտանի ոք յայնպիսի կա-
ցութե 'ի յաղօթս, մինչ զի նաև զայս խո-
կալ ոչ կարէ. կամ թէև խոկայցէ, և ջա-
նայցէ զմտաւ ածել, ոչ շարժէ այս զնա, և
ոչ հաճոյքէ նովաւ զինքն ընաւին, և ոչ իսկ
տալէ զեր ինչ 'ի նմա։ Այս է այն, զոր
աստ կոչեմք տրտմութեն, և չորութիւն, և
լքումն հոգևոր։ Հարկաւոր է՝ զի ջանաս-
ցուք համակերպել զմեզ յայսմիկ ընդ կա-
մացն Այ։

Այս է կէս մի յոյժ հարկաւոր, զի է մինն

'ի մեծագունից գանգատանաց, և մինն 'ի մեծագունից ընդդիմութեց, զոր ունին նոքա, որք պարապին յաղօթս. զի ամենեքեան հեծեն և լան, յորժամ գտանին յայսմիկ կացութե: Որովհետև 'ի միոյ կողմանէ լսեն զմեծագոյն բարիս աղօթից, և զգովութիս նր, թէ նովին քայլին որով ընթանայ աղօթքն, ընթանայ և մարդ զամ առուրս կենաց իւրոց. լսեն թէ աղօթքն է գլխաւոր միջոց, զոր ունիմք վն օգտի մերոյ, և վն շահելոյ զմերձաւորս, և 'ի միւս կողմանէ տեսանեն զինքեանս յոյժ հեռի 'ի յառնելոյ ըստ կարծեաց իւրեանց զճշմարիտ աղօթս զգալով 'ի նմին զմեծ ձանձրութի. զի թուի ինքեանց, թէ Այծ լքեալ է զնոսա, և մոռացեալ, և սկսանին երկնչիլ, թէ գուցէ կորուսեալք են զբարեկամութին Այծոյ, և ոչ են 'ի շնորհս նորա. և ոչ ժողովին 'ի նմանէ: Իսկ յաւելանայ այսպիսեացս փորձութի, յորժամ տեսանեն, թէ այլք 'ի միջոցի սակաւ ժամանակի յոյժ յառաջադիմեցին աղօթիւք գրեթէ առանց իրիք աշխատանաց, և ինքեանք այնքան աշխատելով, և ջանալով, ոչինչ շահին: Յորմէ ծնանին 'ի նն նաև այլք փորձութիք չարագոյնք. զի երբեմն գանգատեն զՏնէ, թէ ընդէր այն պխտաբար վարի ընդ նոսա: Կամին թողուլ զկրթութիւն աղօթից, զի երևի այն նց անօգուտ վասն ինքեանց, որովհետև ոչ առնեն զայն բարուք: Յաւելանայ նոցա մեծագոյն տառապանք, յորժամ դեն դնէ զխորհուրդ 'ի միտս նց, թէ պատճառն այսցիկ բնաւից են ինքեանք, և Այծ վն մեղաց նոցա վարի այսպէ ը̃ նն: Իսկ այսու ոմանք կեան յոյժ անմխիթար, և ելանեն յաղօթից ոչ 'ի տանջանաց՝ վշտացեալք, տրտմեալք, և անտանելիք ինքեանց, և նց, ընդ որոց կենցաղավարին: Արդ՝ երթիցուք այժմ պատա-

խանե.

խանելով փորձութեանց, և գանգատանաց
այսուցիկ շնորհօքն Այ։

# Գ Լ Ո Ւ Խ. Ի Ե։

Պատասխանեալ լինի գանգատանաց նոցա, որք
զգան զչորութիւն և զտրտմութիւն
՚ի յաղօթս։

Նախ և յառաջ ես ոչ ասեմ, թէ յոր ժամ Այծ այց առնէ ումեք, ոչ պարտի նա ուրախանալ. զի յայտնի իմն է, թէ ոչ կարէ ոք ոչ ուրախանալ ՚ի ներկայութեան նորին մխիթարելոյ. այլև ոչ ասեմ, թէ ոչ պարտի զգալ զտհաճութիւն յաղագս բացակայութեան նր, յորժամ պատժէ զնա չորութբ և փորձութբ. բայց ոչ գիտեմ, զի անկարելի է, թէ ոչ զգայցէ զտհաճութիւն վն այսորիկ. որովհետև նաև Քս փրկիչն մեր զգաց ըզլքումն ՚ի յերկնաւոր հօրէ իւրմէ՝ յորժամ կախեցաւ ՚ի խաչէ, ասաց. Ած իմ, Ած իմ ընդէ՞ր թողեր զիս։ Մատ. 27. 46։ Արդ խիղճ և դիտումն իմ այս է, զի արտահանիցուք զպտուղ ՚ի վշտաց և ՚ի փորձութեանց յայսցանէ, որով սովոր է Տր բազում անգամ փորձել զընտրեալս իւր, և ջանասցուք համակերպել զմեզ ընդ կամացն Այ ասելով. Բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Մատ. 26. 39։ Վասն զի ոչ կայանայ սրբութիւն և կատարելութիւն մեր ՚ի մխիթարութեան, և ՚ի առնել զգերամբարձ և զբարձրագոյն աղօթս, և ոչ իսկ պարտիմք չափել զօգուտն, և զկատարելութիւն մեր այսու. այլ կայանայ ՚ի ճշմարիտ սէրն Այ, որ ոչ կայանայ յայտուկ իրս, այլ ՚ի ճշմարիտ միաւորութեան և յամբողջ համակերպութեան ընդ կամացն Այ, զոր պարտիմք ունել թէ ՚ի յիրս դառինս, և թէ ՚ի քաղցունս, թէ ՚ի յաջողութեան, և

թէ 'ի ձախորդութեան ։ Իսկ այսպէս պարտիմք համբերութեամբ ընդունիլ 'ի ձեռանէն Այ զխաչն , և զլքումն հոգևոր , զնպաստն , և զմխիթարութիւն , շնորհակալ լինելով զնմանէ յաղագս միոյն և միւսոյն , և ասել ։ Եթէ կամիս , զի իցեմ 'ի խաւարի , եղիցիս օրհնեալ . և եթէ կամիս , զի իցեմ 'ի լոյս , նմանապէս եղիցիս օրհնեալ . Եթէ կամիս մխիթարել զիս , եղիցիս օրհնեալ . և եթէ կամիս վշտացուցանել զիս , եղիցիս օրհնեալ ։ Այսպէս խրատէ զմեզ սբ առաքեալն Պօղոս , և ասէ . I. Թեսա. 5. 18: Յամ գոհացարուք , զի այս է կամք Այ 'ի Քն Յսն 'ի ձեզ ։ Արդ՝ եթէ այս է կամքն Այ , այլ որպիսւոյ իրի կարեմք ցանկալ ։ Եթէ նա կամի ուղղել ըզկեանս իմ ընդ այս մթին և քարուտ ճանապարհս , ոչ պարտիմ ես բաղձալ գնալ ընդ այլ պայծառ և համեղ ճանապարհ ։ Կամի ԱԾ , զի այն ոք երթիցէ ընդ ճանապարհ ձարի , ուր կարիցէ տեսանել , և ունիլ ըզ բերկրութիւն , և կամի , զի ես երթիցեմ ընդ ճանապարհ մի անապատ , և առանց մխիթարութեան , ես ոչ կամիմ փոխել զիմ սերջութիւնս ընդ պարապտութեան նոյ ։ Զայս ամէն նոքա , որք բացին զաչս իւրեանց առ ճշմարտութիւն , և այսու մխիթարին ։ Յոյժ բարւոք ասէ հայր վարդապետն Աւիլա . ոչ եթէ Տր բացցէ միանգամ զաչս մեր , յայն ժամ յայտնապէս երևեսցի մեզ պայծառ քան զլոյս արեգական , թէ համայնք իրք երկնից , և երկրի են յոյժ անարգք առ 'ի լինիլ ցանկացեալ , և փափաքեցեալ , եթէ բարձցի 'ի նոցանէ կամքն Այ ։ Իսկ ոչ գոյ այնպիսի իր , թէև իցէ յոյժ փոքրիկ և դառն , որում եթէ համակցեսցի կամքն Այ , ոչ եղիցի յոյժ արժանաւոր ։ Առանց իւիք բաղդատութեան բարեգոյն է կալն 'ի վիշտս , 'ի դառնութիւնս , 'ի չքաւորութեան , և 'ի փորձութիւնս .

եթէ

եթէ այսպէս կամի ԱԾ, քան թէ կալ ՚ի քաղցրունս, ՚ի մխիթարութիւնս, և ՚ի հայեցողականութիւնս, եթէ բարձցի ՚ի նոցանէ կամքն ԱՅ ։

Բայց թերևս ասիցէ ոք ինձ այսպ․ եթէ ես գիտիցէի, թէ այս է կամքն ԱՅ, և ըստ այս հաճի նա, և շատանայ այսու, դիւրաւ կարէի համակերպել զիս․ և մնալ շատացեալ, թէև ամ̃ աւուրք կենաց իմոց անցանիցեն այսպիսաբար․ զի բարւոք գիտեմ ես, թէ ոչ գոյ այնպիսի ինչ ցանկալի, որպիսի է հաճոյ եղանիլ ԱՅ, և հաճեցուցանել զԱԾ, քանզի մարդն եղև միայն վն̃ այսորիկ ։ Բայց թուի ինձ, թէ ԱԾ կամի և պահանջէ յինէն, զի առնիցեմ զբարեգոյն աղօթս, և մեծաւ մտադրութբ̃, և վերահաւաքմամբ տրամադրիցեմ զիս․ և այն, որ վշտացուցանէ զիս մեծապ̃ է այս, զի հաւատամ, թէ մեղք և գայթակղութիւն իմ, և ոչ առնելս ՚ի կողմանէ իմմէ զայն, զոր պարտիմ առնել, լցէ պատճառ, զի կամ ՚ի յաղօթս տարացնդեցեալ միտք, և չորացեալ ոչ կարելով գտանել զախորժումն ինչ առ աղօթս ։ Զի եթէ գիտիցէի, թէ առնեմ ես ՚ի կողմանէ իմմէ, զորքան կարեմ, և պարտիմ, և չունիմ զմեղադրութիւն ինչ, ոչ բնաւ զգայի զվիշտ ինչ ։ Պատասխանեալ առ այս ասեմ, թէ յոյժ բարւոք արարեր զգանգատն քո․ և ոչ մնաց այլ ինչ ասելի, զի յայսմիկ պարփակին համայնք պատճառք նց̃, որք առնեն զգանգատ նման սմին ։ Ուստի եթէ պատասխանիցեմք այսմիկ բարւոք, առնեմք զմեծ ինչ․ զի է յոյժ հասարակ և սովորական գանգատս այս․ այլ և ոչ գոյ ոք այնքան սբ̃, և կատարեալ, որ ՚ի յոմանս ժամանակս ոչ զգայցէ զչորութիւն, և զլքումն հոգևոր ։ Զայս ընթեռնումք զսրբոյն Ֆրանցիսկոսէ, և զսրբուհւոյն Կատարինեայ Սենայ

նայ

ծացւոյն, Թէպէտ էին յոյժ գգուեցեալք յԱծյ, և ընկալեալք զբաղում շնորհս 'ի նմանէ : Եւ սր̃ աբբայն Անտոնիոս, Թէպէտ էր այնքան աղօԹասէր, մինչ զի գիշերքն ամբողջք Թուէին նմա կարճագոյնք, և գանգատէր զարեգականէ, զի ելանէր այնքան վաղ. սակայն երբեմն լինէր այնքան վհատացեալ 'ի չար խորհրդոց, մինչ զի համբառնայր զձայնն առ ԱԾ, ասելով. Տր̃ կամիմ ես լինիլ բարի, բայց խորհուրդք իմ ոչ Թողուն զիս լինիլ բարի : Եւ սր̃ն Բեռնարդոս ևս գանգատէր վս̃ այսորիկ, և ասէր. * Զորացաւ սիրտ իմ, մածեաւ ոսկ̃ կաԹն, եղև իբրև զերկիր անջուր, և ոչ կարեմ փղձկիլ յարտասուս. այնքան է խստուԹի սրտիս, մինչ զի ոչ հաճի ընդ սաղմոսս, և ոչ 'ի ընԹեռնուլ զգրեանս. ոչ բերկրեցուցանէ զիս աղօԹելն, և զամփոփեալն մտածմունս ոչ գտանեմ : Ո՞ւր է արբեցուԹիւնն այն հոգւոյ. ո՞ւր է պարզուԹին մտաց, և խաղաղուԹին և խնդուԹին 'ի Հոգին սր̃ ||: Ուստի հարկաւոր է վարդապետուԹիս այս ամենեցուն, և յուսամ 'ի Տր̃ հաճեցուցանել զամենեսեան :

Սկսեսցուք ուրեմն աստուստ. Ես ընդունիմ, Թէ մեղքն քո է պատճառ տարացնդուԹե և չորուԹե քոյ, և ոչ կարելոյդ գտանել զախորժուԹն ինչ 'ի յաղօԹս. և բարի է, զի այսպ̃ հաւատայցես, և դիցես 'ի միտ, և ասիցես, Թէ վս̃ մեղաց իմոց անցելոց, և վս̃ զանցառուԹե ներկայի կամի Տր̃ պատժել զիս, ոչ տալով ինձ զախորժուԹն ինչ առ աղօԹս. զի ոչ կարեմ հաւաքել զիս, և չունիմ զհանգիստ, և զզգաստուԹի ինչ 'ի նմին. քանզի արդիւնաւորիմ մանաւանդ զղջալով, քան Թէ զգուշանս : Բայց ոչ է ուղիղ եզրակացուԹի, Թէ վս̃ այսորիկ պարտիս ուրեմն Թողուլ, և գանգատիլ, այլ

մա-

մանաւանդ պարտիս մեծաւ համակերպել զքեզ յայսմիկ ընդ կամացն ԱՅ ։ Կամիս տեսանել զայս յայտնապէս . 'Ի Բէրնարդոյ Փռանճէ Պոփէշէյ Վէէր ։ Ո՛չ ապաքէն տաս դու, թէ վասն մեղաց քոց անցելոց, և վասն անհնազանդութե՛ քոյ ներկայի արդիւնաւորիս զմեծ պատիժ յԱՅ ։ Այս արդիւնաւորեցայ բազում անգամ զդժոխս . վասն որոյ ոչինչ այլ պատիժ եղիցի մեծ վասն իմ, այլ զոր ինչ եղիցի վասն իմ ողորմութեն բաղդատելով այնմիկ, զոր են արդիւնաւորեցայ . և մինչ ԱԾ կամի առաքել ինձ զպատիժ ինչ 'ի կեանս յայս, ընկալայց զայն որպէս զմանաւոր բարերարութի . քանզի համարիմ ես զայն որպէս զնշան, թէ ԱԾ թողեալ է զմեղս իմ, և ոչ կամի պատժել զիս 'ի հանդերձեալն, զի պատժէ աստ ։ Բանական է այս, և ոչ է պիտոյ այլ իր . Ես շատանամ այսու . բայց ոչ կամիմ, զի զոր ինչ դատապարտեցի 'ի խօսս, այլ եկեսցուք առ գործս ։ Այս է պատիժն, զոր ԱԾ կամի, զի կրիցես այժմ վասն մեղաց քոց ։ Կամի զի կրիցես զայս տրտմութիւս, զայս դառնութիւս, զայս տարացնդութիւս, զայս չորութիւս, զայս հոգեւոր լքումս, զայս դառնալս երկնի յերկաթ, և երկրի 'ի պղինձ, զայս ծածկիլս և թագչիլս ԱՅ յաչաց քոց, և զայս ոչ կարելդ գտանել զախորժութիւնս 'ի յաղօթս ։ Այսու կամի ԱԾ պատժել զքեզ, և մաքրել 'ի մեղաց ։ Ո՛չ ապաքէն թուի քեզ, թէ մեղքն քո անցեալ, և անհնազանդութիւն քո ներկայ արդիւնաւորին զպատիժս զայս ։ Այո այսպէս է ։ Արդ՝ այժմ ասեմ ես քեզ . թէ այս է յոյժ փոքրագոյն բաղդատմամբ այնորիկ, զոր արդիւնաւորիս . և է լի պատիժս այս ողորմութեամբ և արդարութեամբ ։ Ո՛չ է արդարութեամբ, զի դու բազում անգամ փակեցեր ընդդէմ ԱՅ զդուռն սրտի քոյ, և եղեր խուլ, յորժամ

նա

Նա բաղձէր զայն ներշնչմամբ իւրով, և ընդ-
դիմացար նմա ։ Ուրեմն արդար իմն է, զի
մինչ դու կոչէիր զնա, նա ևս խցցէ զականջս
իւր, և ոչ պատասխանեսցէ քեզ. և ոչ կա-
մեսցի բանալ քեզ զդուռն, այլ փակեսցէ
ընդդէմ երեսաց քոց ։ Եւ յոյժ արդար պա-
տիժս այս, բայց է կարի փոքրագոյն վասն
քոյ, և է լի ողորմութեամբ, որովհետև ար-
ժանի էիր մեծագունի քան զայս ։ Համա-
կերպեա՛ ուրեմն զքեզ յայսմիկ ընդ կամացն
Այ, և ընկա՛լ զպատիժս զայս մատուցա-
նելով Այ զգոհութիւն. որովհետև պատժէ
զքեզ այսպիսի ողորմութեամբ, և ոչ ըստ ար-
ժանեաց քոց ։ Ո՛չ ասացեր դու, թէ ար-
դիւնաւորեցայ ես զդժոխս ։ Զիա՞րդ ու-
րեմն իշխես խնդրել զմխիթարութիւն և
զախորժութիւն յայն 'ի յաղօթս. և ունիլ զըն-
տանութիւն ընդ Այ 'ի նմին. այլև զխաղաղու-
թիւն, զհանգիստ, և զանդորրութիւն, որ պատ-
կանի այնպիսեաց որդւոց, որք են յոյժ սի-
րեցեալք, և ողջագուրեցեալք ։ Ո՞չ իշխես
դանդաղել. ո՛չ իմանաս, թէ այս է մեծա-
գոյն լրբութիւն, և հպարտութիւն ։ Շատ եղի-
ցի քեզ, զի Ած պահէ զքեզ 'ի տան իւ-
րում, և կամի, զի կայցես 'ի ներկայութեան
իւրում. և համարեա՛ զայս մեծ շնորհ, և
բարերարութիւն ։ Եթէ ունիցէաք զխոնար-
հութիւն 'ի սրտի, ոչ կարէաք ունիլ զլեզու
և զբերան գանգատելոյ, որով կերպիւ և վա-
րիցիւր Ած ընդ մեզ, նա և դիւրաւ կարէաք
դադարել փորձութենիս այս ։

ՖԻՆԻՍ.

## Գ Լ Ո Ւ Խ . Ի Զ ։

Թէ որպէս կարեմք դարձուցանել զչորութիւնս, զտրտմութիւնս, և զդառնութիւնս 'ի յոյժ բարի և յօգտակար աղօթս ։

Ո՛Չ միայն պարտի դադարել 'ի մեղաւոր տրտունջս, և գանգատս այս, այլև պարտիմք ջանալ արտահանել զպտուղ 'ի չորութէ, 'ի տրտմութէ, և 'ի դառնութէ, և դարձուցանել զայնս 'ի բարի աղօթս ։ Նախ և յառաջ յաղագս այսորիկ օգնեսցէ մեզ այն, զոր առէաք խօսելով զաղօթից, թէ յորժամ տեսանեմք զմեզ յայսպիսի կացութեան, պարտիմք ասել ։ Տր̄ ըստ որում իրս այս յառաջագայն վն̄ մեղաց իմոց, իրաւի անհաճոյ է ինձ մեծապէս, և զղջամ 'ի վերայ մեղաց իմոց . բայց ըստ որում է կամք քո, պատիժ և պատուհաս, զոր ըստ իրաւանց արդիւնաւորեցայ վն̄ մեղաց իմոց, ընդունիմ ես զայն յոյժ կամաւորաբար . և ոչ միայն այժմ, կամ 'ի սակաւ ժամանակս, այլև զամ̄ աւուրս կենաց իմոց ( թէև իցէ յոյժ երկար ) մատուցանեմ զիս խաչիս այսմիկ . և պատրաստ եմ կրել զայս՝ գոհանալով զքէն ։ Համբերութիւնս, և խոնարհութիւնս այս, նաև մ̄նազրութիւնս և համակերպութիւնս այս ընդ կամացն այ̄ յայսմիկ վշտի, առաւել հաճոյ է այ̄, քան թէ տրտունջելն, և աւելորդ նեղսրտութիւն վն̄ ոչ գտանելոյ զախորժուածն 'ի յաղօթս, կամ վասն կալոյ 'ի նմին այլ և այլ խորհրդովք, և մեծաւ տարայնդութէ մտաց ։ Ասա՛ ինձ աղաչեմ . 'ի մէջ որդւոց առն միոյ, ո՞րն թուի քեզ՝ թէ առաւել հաճոյ լինի հօրն և մօրն, որդին այն, որ շատանայ ո՛ և իցէ իրօք, զոր տան նմա, թէ որդին այն, որ ո՛չ երբէք շատանայ

նայ

նայ իրօք իմէք, այլ միշտ տրտնջէ և գանգատէ՝ համարելով թէ սակաւ է այն ժամ, զոր տան նմա, և պարտ էին աւելի, կամ զայլ բարեգոյն ինչ տալ. յայտնի ինչ է այս, թէ առաջինն է առաւել սիրելի: Արդ՝ այսպէս անցանէ իրս այս ընդ իմ: Որդին համբերող և լռակաց, որ շատանայ, և համակերպի ընդ կամաց հօրն իւրոյ երկնաւորի 'ի յամ իրս, զորս առաքէ նմա, թէ պէտ իցէ այն խիստ, և ձախորդական, և իցէ ոսկր առանց մսոյ, յայժ հաճոյ լինի իմ, և կարի հաճեցուցանէ զնա, քան ըզ միւսն, որ է ապաշնորհ, և ոչ իմէք շատանայ, և կայ միշտ տրտնջելով, և գանգատելով, այնու զի ոչ ունի, և ոչ տան նմա զայն, զոր կամի: Այս ինձ, ո տանէ բարւոք, և ո շարժէ առաւել 'ի ցանկութի, և յողորմածութի առ ինքն առ 'ի ընդունիլ զողորմուն յայլոց, աղքատն այն, որ սկսանի տրտնջել և գանգատիլ վս ոչ պատասխանելոյ ինքեան շուտով, և վս ոչ տալոյ զիր ինչ, թէ աղքատն այն, որ յարատևէ առ դրան մեծատան համբերութբ, և առանց տրտնջման. այլ յետ բաղխելոյն զդուռն, գիտելով թէ լուան զձայն բաղխմանն, կայ սպասելով 'ի ցրտի, և 'ի յանձրևի՝ առանց բաղխելոյ միւսանգամ, և առանց գանգատելոյ. և այն զի գիտէ տանուտէրն, թէ աղքատն այն սպասէ խոնարհութբ, և համբերութբ այնու: Յայտնի ինչ է, զի սա շարժէ մեծատն 'ի գութ, և այն միւս աղքատն հպարտ մանաւանդ շարժէ 'ի բարկութիւն:

Արդ՝ այսպէս անցանէ ևս իրն ընդ իմ:

Եւ ոչ զի առաւել բարւոք անցի զօրութի, և պտուղն այն աղօթիցս, և թէ որքան հաճոյ իցէ իմ, հարցանեմ ես. զայլ որպիսի բարեգոյն աղօթս կարէ առնել ոք, և զայլ որպիսի մեծագոյն պտուղ կարէ ոք

աղա-

արտաշանել յայնմանէ, քան զմեծագոյն համբերութիւն 'ի վիշտս, զմեծ համակերպութիւն ընդ կամացն Այ, և զմեծ սէր նր ։ Զի՞նչ այլ ինչ խնդրեսջիք 'ի յաղօթս, եթէ ոչ զայս ։ Արդ՝ յորժամ Տր առաքէ քեզ զփորձութիւն, և զչորութիւն 'ի յաղօթս, համակերպեսջիր զքեզ ընդ կամաց նորա յայնմիկ հոգևորն լքման և նեղութեան ․ և արասցես զգործ մի մեծագոյն համբերութեան, և սիրոյն Այ, քան զոր առնելն ոչ կարես առնել ։ Ասեն յոյժ բարեաւ, թէ սէրն ցուցանի 'ի տանելն, և 'ի կրելն զվիշտս վն իւրն սիրեցելոյ ․ և թէ որքան մեծագոյնք են վիշտքն, այնքան մեծագոյն ցուցանի սէրն ։ Արդ՝ սոքին են մեծագոյն վիշտք, և մեծագոյն խաչք, և մնհացուցմունք ծառայիցն Այ, զորս առաւել զգան մարդիկ հոգևորք, քան զմարմնաւոր վիշտս, որք պատկանին առ ինչս, առ առողջութիւն, և առ բարիս ժամանակաւորս, որք ոչինչ են համարելիք բաղդատութբ նց ։ Ապատուրեմն յորժամ ըք ժամանէ առ այս, զի ըր անձի համակերպէ զինքն ընդ կամացն Այ յայսպիսի վիշտս, հեռանելով քնի փրկչին մերոյ յայնմիկ հոգևորն տարալքման, զոր կրեաց 'ի խաչին, և ընդունի զհոգևոր խաչս զայս զնով առաւել կենաց իւրոյ մեծաւ ուրախութբ (եթէ Տր կամիցի տալ զայն) միայն առ 'ի հաճեցուցանել զԱծ, է յոյժ վեհագոյն, և յոյժ օգտակար աղօթք, և իբ մի մեծի կատարելութեան այնքան բարձրագոյն, մինչ զի ոմանք կոչեն զայս արխաս դերագանց մարտիրոսս ։

Պարձեալ հարցանեմ ես քեզ, զինչ երթաս դու առնել յաղօթս, եթէ ոչ առ 'ի արտահանել անտի զխոնարհութիւն, և առ 'ի ճանաչել դու զքեզ ․ քանզի սա անգամ աղաչեցեր զԱծ տալ քեզ զշնորհ ճանաչելոյ

զքո

դու զքեզ · ահա լռեաց Ած յաղօթից քոց, և կամի, զի ծանիցես դու զքեզ, որ ինչ ես : Ոմանք եդին զճանաչումն իւրեանց 'ի մտածելն խորագոյն զմեղս իւրեանց, և 'ի հեղուլն զբազում արտասուս վասն նոցա · բայց խաբին, զի զայս առնէ Ած, և ոչ դու, այլ գոլ որպէս զքար, և որպէս զապառաժ, այս է քոյ, և դու ես այսպիսի : Ուստի եթէ Ած ոչ հարցէ զվէմն, ոչ ելցէ ջուր, և ոչ մեղր : Յայսմիկ կայանայ ճանաչելն քոյ ընդ քեզ, որ է սկիզբն ամենից բարեաց : Այսու ունիս լի զձեռսդ, յորժամ կաս չոր, ցամաք, և լքեցեալ 'ի յաղօթս որպէս ասացաւ : Եւ եթէ հանցես զայս յաղօթից, հանցես անտի զպտուղ յոյժ բազում :

## Գ Լ Ո Ւ Խ · Ի Է ·

Յաղագս այլոց պատճառաց, վասն որոց պարտիմք համակերպել մեզ ընդ կամացն Ած 'ի չորու-թե, 'ի տրտմութե, և 'ի տառապանու-թե, որ յաղօթս :

Թէպէտ բարի է վասն մեր խոկալն, թէ ծմ մինչդեռ գան մեզ վասն մեղաց մերոց, որպէս զի առաւել խոնարհեալ ամաչեսցուք · բայց սակայն հարկաւոր է մեզ նաև գիտել, թէ ոչ է այս միշտ պատիժ մեղաց մերոց, այլ կարգաւորութիւն, և բարձրագոյն նախախնամութիւն Տն, որ բաժանէ ընդ պարգևս իւր, որպէս և հաճի : Քանզի ոչ է պատշաճ, թէ բոլոր մարմինն լինիցի աչք, կամ ոտք, կամ ձեռք, և կամ գլուխ, այլ զի յեկեղեցւոջ իւրում գտցին անդամք զանազանք · և այսպէս ոչ է վայելուչ, զի ամենեցուն պարգևեսցի աղօթքն այն եղական, և վեհագոյն, զորմէ ասացաք 'ի խօսելն զաղօթից : Ուստի ասեմ, թէ այս ոչ է հարկա-

կամօք ամենեցուն, զի ոչ արդիւնաւորին ոմանք զայս, այլև ոչ արդիւնաւորին այնքան յայսմիկ, որքան արդիւնաւորին յայլում իրի. և եղիցի առաւել մեծագոյն շնորհ ԱՅ տալն նմա զայն, քան զայս։ Եղեն բազում մեծամեծ սրբք, զորոց ոչ գիտեմք, թէ ունէին արդեօք զայսօսիկ իրս, բայց թէև ունիցէին զայնս, ոչ պարծէին, այլ ասէին ընդ սրբոյն Պօղոսի. Գաղ. 6. 14։ Այլ ինձ քաւ լիցի պարծել. բայց միայն 'ի խաչն տն մերոյ ՅԻ ՔԻ։

Դայր վարդապետն աճիլա ասէ շուրջ զայսու զիր մի մեծի մխիթարութեն, և է այս, թէ ԱԾ թողու զոմանս անմխիթար զամս բազումս, և երբեմն զամ առօրս կենաց նց. և յաւելու ասել, համառամ թէ մասն, և վիճակ սոցա է բարեգոյն, եթէ գոյ 'ի նոսա համատ առ 'ի ոչ զգալ չարապէս, և համբերութն, և արխութն տանելոյ զայսպիսի մեծ աքսորանս։ Եթէ ոք համառայցէր թէ վիճակս այս է բարեգոյն վս իւր, դիւրաւ կարէր համակերպել զինքն ը կամայն ԱՅ։ Սրբքն և ուսուցիչքն իրաց հոգևորաց առբերեն զբազում պատճառս՝ առ 'ի պարզաբանել և ցուցանել, թէ վս այսպիսեացս բարեգոյն, և առաւել վայելուչ է վիճակս այս. բայց վս այժմիս աւասցուք զմինն միայն, որ է առաւել նախապետական, զոր և առբերեն սրբն Օգոստինոս, սրբն Հերոնիմոս, սրբն Գրիգորիոս, և հասարակաբար նոքա ամենեքեան, որք խօսին զայսմանէ նիւթոյ, և ասեն, թէ ոչ կարեն ամենեքեան պահել զխոնարհութի 'ի մէջ բարձրութն հայեցողականութն։ Վս զի յորժամ յաջօթս հեղումք զաակաւ ինչ արտասուս, թուի մեզ, թէ արդէն եղեալք իցեմք արք հոգևորք, և մարդիք աղօթակերք. և կամիմք զմեզ համառաքել այլոց.

և թէ-

և թերևս նաև նախատանեալ նք ։ Թուի թէ
նաև նոյնոյ սրբոյն Պօղոսի պիտոյ եղև հակա
քարշ, ոչ՟ զի մի՛ հպարտացուցանիցէին զնա
երեքս այսուքիկ, վս՟ որոյ ասէ ․ 3․ Կորն․ 12․7։
Զի մի՛ առաւելութե յայտնութեանց հպարտացայց,
տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատան կոփել
զիս ։ Ոչ՟ զի լինիցի յափշտակեցեալ մինչև
յերրորդ երկինս, և մեծամեծ յայտնութք,
զորս տեսեալ էր, մի՛ հպարտացուցանիցէին
զնա, թոյլ ետ Այ փորձութեն այնմիկ գալ
՚ի վր՟ նր, որ խոնարհեցուցանիցէր զնա, և
տայցէր ճանաչել զտկարութի իւր ։ Ուստի
թէպէտ ճանապարհս այս թուի առաւել
բարձրագոյն, սակայն միւսն է առաւել ան
կասկած ։ Եւ այսպ՟ ամենիմաստն Այ, որ
առաջնորդէ առ մի և նոյն վախճան, որ է
ինքն, ածէ զիւրաքանչիւրոք ընդ այն ճա_
նապարհ, զոր ինքն գիտէ առաւել պատե_
հաճար իւրաքանչիւր ումեք ։ Վս՟ որոյ եթէ
ունիցէիր զմեծ ջերմեռանդութի ՚ի յաղօթս,
գուցէ փոխանակ խոնարհելոյ հպարտացեալ
բարձրամտիցէիր ։ Եւ միւս կերպիւն կաս
միշտ խոնարհ, և պատկառեալ՝ համարելով
զքեզ ցածագոյն քան զամենեսեան ․ ուստի
այս ճանապարհս է առաւել բարի, և ա_
ռաւել ապահով վս՟ քո, թէպէտ դու ոչ
ճանաչես զայն ։ Ոչ գիտէք, զինչ խնդրէք ։
Մատ․ 20․ 21։

Սբն Գրիգորիոս ՚ի վր՟ այնց բանիցն Յո_
բայ ․ 9․ 11։ Եթէ գնասցէ առ իս, ոչ տեսից ․
և եթէ անցցէ առ իս, ոչ այնպէս գիտասցից ։
Ուսուցանէ զվարդապետութի մի յոյժ բա_
րի յաղագս այսորիկ ասելով․ Այնքան կու_
րացեալ մնայ մարդն վս՟ մեղաց, մինչ զի ոչ
ճանաչէ՝ յորժամ մերձենայ առ Այ, և ոչ
յորժամ հեռանայ ՚ի նմանէ ․ մանաւանդ
բազում անգամ այնու, որով կարծէ մերձե
նալ յոյժ առ Այ, և զոր համարի՝ թէ

իցէ

իջէ շնորհք, բարկացուցանէ զա͞ծ, և հեռա
ցուցանէ զնա յինքենէ. և հակադարձաբար
բազում անգամ այն՝ զոր կարծէ, թէ իջէ
բարկութիւն, և համարի թէ ա͞ծ հեռանայ
'ի նմանէ, և մօտանայ զնա, այն է շնորհք,
և պատճառ ոչ հեռանալոյ: Քանզի ո՞ է նա,
որ տեսանելով զինքն գգուեցեալ յաղօթս,
և գոլ 'ի բարձրագոյն հայեցողականութեան,
ոչ խոկայ, թէ մերձենայ օրըստօրէ առ ա͞ծ,
և միաւորի ընդ նմա: Բայց սակայն բա-
զումանգամ այսու բարերարութեամբ սկսանի
ոք հպարտանալ, և լինել անկատար, և
յուսայ յանձն իւր. և գեն ընկենու զնա
նովին ճանապարհաւ, որով ինքն կարծէր
ելանել 'ի վեր, և մերձենալ առ ա͞ծ: Իսկ
հակադարձաբար բազում անգամ տեսանե-
լով ոք զինքն անմխիթար, և վշտացեալ 'ի
ծանր փորձութեանց, և յոյժ մարտուցեալ
աղտեղի խորհրդովք, և հայհոյութեամբք ընդ-
դէմ հաւատոյ, կարծէ թէ ա͞ծ բարկա-
ցեալ է նմա, և լքեալ է զնա, և կամի հե-
ռանալ 'ի նմանէ. այլ սակայն յայնժամ է
առաւել մերձաւորագոյն նմա. զի այնու
առաւել խոնարհի, ճանաչէ զտկարութիւն և
զչէականաւորութիւն իւր, յուսահատի յինքե-
նէ, և դիմէ առ ա͞ծ մեծաւ զօրութեամբ և
արիութեամբ, և զետեղէ 'ի նմա զբոլոր յոյս
իւր, և ջանայ ոչ երբէք բաժանիլ 'ի նմա-
նէ: Ուստի ոչ է բարեգոյն այն, զոր դու
բարեգոյն կարծես, այլ բարեգոյնն է այն
ճանապարհն, ընդ որ Տ͞ր կամի քեզ առաջ
նորդել. և պարտիս հաւատալ, թէ այս է
բարեգոյն, և առաւել վայելուչ քեզ:

Դարձեալ նոյն ինքն դառնութիւն, ձանձրու-
թիւն, և ցաւն, զոր դու զգաս՝ կարծելով
թէ ոչ առնես զաղօթս այնպ͞ բարւոք, որպ͞
պարտէիր առնել, կարէ լինել այլ պատճառ
մի մխիթարութեան. զի է մասնաւոր շնորհ,

և բա.

և բարերարութեն Տն . քանզի նշան է, թէ սիրես զնա, որովհետև ոչ գոյ ցաւ առանց իրիք սիրոյ: Ոչ կարէ լինել 'ի յիս տհաճու-թիւն վն ոչ ծառայելոյս բարուք, մինչև ոչ ունիցիմ զառաջադրութն և զկամք ծառայե-լոյ բարւոք . ուստի այս տհաճութիւն և ցաւս ծնանի 'ի սիրոյն Այ, և 'ի ցանկութէ բար-ւոք ծառայելոյ նմա: Եթէ ոչ ունիցէիր զփոյթ ինչ վն յոռեպ ծառայելոյդ, և վն յոռեպ առնելոյդ զաղօթս, և վասն այլոց իրաց յոռեպէս արարեցելոց, այս էր չար նշան . բայց որովհետև զգաս զցաւ և զտհա-ճութիւն վն ոչ առնելոյդ (ըստ կարծեաց քոց) բարւոք զիրս զայսոսիկ, է նշան բարի: Պա-դարեսցի ուրեմն ցաւդ և տհաճունդ այդ գիտելով, թէ քաւ որում այս է պատիժ, է կամքն այ, որ կամի հաստատել զքեզ, 'ի հաճեցուցանել զինքն, թէև իցեն տկար գործքն այնոքիկ:

Դարձեալ թէև դու 'ի յաղօթս զոչ այլ ինչ արասցես, եթէ ոչ կալ անդ առ ոտս արքայական մեծութեն այ, յայսմիկ դու մե-ծամ ծառայես նմա . ուր և յաշխարհի աստ տեսանեմք, զի է մեծ փառք թագաւորին, և իշխանաց երկրի, զի մեծամեծք ապարա-նին երթիցեն յամենում աւուր 'ի պալատն, և կալով անդ պատուեսցեն զնա: Երանելի է այր, որ լուիցէ ինձ, և մարդ որ զճանապարհս իմ պահիցէ, որ տքնիցի առ դրունս իմ հանապազ, և պահիցէ զսեմս մտից իմոց: Առակ. 8. 34: Առ փառս մեծութեն այ, և առ նուաս-տութիւն կացութեն մերոյ, և առ մեծութն իրակութն, զորմէ խօսիմք, վերաբերի կալն քոյ բազում անգամ 'ի դուռն երկնայնոյ պա-լատի նր, և սպասել անդ . և յորժամ բա-նայ քեզ զայն լեր շնորհակալ զնմանէ, և յորժամ ոչ բանայ, խոնարհեցո զքեզ, ձա-նաչելով թէ ոչ արժանաւորիս զայն: Այ-

առ կերպիւ միշտ եղիցի յոյժ բարի, և յոյժ օգտակար աղօթքն քո ։ Զայս ամ, և զայլս այլս նմանս պարտիմք 'ի գործ ածել առ'ի համակերպել զմեզ ընդ կամացն Այ յայսմիկ դառնութեան, և 'ի հոգևոր լքման, ընդունելով զամ, և շնորհս մատուցանելով Այ, և ասելով, Ո՛ղջ լեր դառնութիւն դառնագոյն, լի ամ շնորհօք ։

## ԳԼՈՒԽ. ԻԲ։

Թէ է մեծ խաբէութիւն, և մեծ փորձութիւն Թողուլն մարդոյ զաղօթս, յորժամ փախնի այնու հեշտալին, որ առայժմ ։

Այս յնմանէ որ ասացաւ հետևի, թէ է մեծ խաբէութիւն և մեծագոյն փորձութիւն, յորժամ ոք տեսանելով զինքն յայսմիկ կացութեան, բացորոշէ թողուլ զաղօթսն, կամ ոչ յարատևէ այնքան 'ի նմին, կարծելով թէ զոչինչ առնէ, այլ մանաւանդ կորուսանէ զժամանակն ։ Այս է փորձութիւն մի, որով դևն եա թողուլ զկրթութիւն աղօթից ոչ միայն բազում աշխարհականաց, այլ և բազում կրօնաւորաց․ և զի ոչ կարէ բառնալ 'ի նոցանէ զաղօթքն բոլորովին, առնէ, զի մի՛ պարապեսցին այնքան 'ի նմին, և ոչ ծախիցեն զերկար ժամանակ, զորչափ կարեն ։ Բազումք սկսանին պարապիլ 'ի յաղօթս․ և մինչ ունին զյաջողութիւն և զջերմեռանդութիւն, յարատևեն յոյժ բարւոք 'ի նմին․ բայց մինչ հասանի ժամանակն չորութեան, և տարացնդութեան, թուի նց, թէ այն ոչ լիցէ աղօթք, այլ մանաւանդ նոր մեղք․ որովհետև կան անդ առաջի Այ այնքան տարացնդութբ, և այնքան սակաւ պատկառանօք ։ Եւ այսպ սկսանին սակաւ առ սակաւ թողուլ զաղօթս․ զի թուի նց, թէ

առաւել զմեծ ծառայութիւն առնեն Այ
պարապելով 'ի յոյժ կրթութիւս, և 'ի զբաղ
մունս, քան թէ կալ անդ այնու կերպիւ:
Իսկ յորժամ գեն տեսանէ զբեկանաւորու-
թիւս զայս 'ի նմ, զօրանայ այնու առթիւ,
և ջանայ ներկայացուցանել նմ զխորհուրդս
և զփորձութիւս 'ի յաղօթս, որք զի թուեսցի
նմ չարաչար ծախել զժամանակն զայն. և
առնէ, զի սակաւ առ սակաւ թողուցուն
զաղօթս բոլորովին, և ընդ նմա զառաքի-
նութիւն. և երբեմն անցանեն նաև այլ յա-
ռաջ: Իսկ այսմ գիտեմք մեք, զի յայսմանէ
առին զսկիզբն կործանման բազում անձինք:
Եւ ընկեր սեղանոյ, եւ ո՛չ մնասցէ յաւուր նեղու-
թեան: Սիրաք. 6. 10: Ոչ ոք է, որ ոչ կամի-
ցի զմիանալ Այ, բայց նշան ճշմարիտ սիրոյ
է վշտանալ, և կրել զնեղութիւն վասն նր:
Յորժամ 'ի յաղօթս գոյ մխիթարութիւն, և
ջերմեռանդութիւն, ոչ է մեծ ինչ յարատևելդ
'ի նմին զբաղում ժամանակս, զի կարէ լի-
նել, թէ զայս առնես վն քոյոյ հաճոյութե.
որոյ նշանն է, զի յորժամ պակասի քեզ մխի
թարութիւն, ոչ ևս յարատևես: Յորժամ
Աձ առաքէ զդառնութիւն, զտրտմութիւն,
զչորութիւն, և զտարացնդութի, յայնժամ
փորձին ճշմարիտ բարեկամքն, և ճանաչին
ծառայքն հաւատարիմք. որք ոչ խնդրեն
զշահս իւրեանց, այլ պարզաբար զհաճոյսն նր:
Իսկ այսմ յայսմիկ ժամանակի պարտիմք յա
րատևել խոնարհութբ, և համբերութբ,
կալով անդ զնմ ժամանակն նշանակեալ,
նաև փոքր ինչ աւելի, ըստ որում ծանուցա
նէ մեզ հայրն մեր՝ առ 'ի յաղթել այնու ըղ
փորձուին, և ցուցանել զմեզ արիս, և զօ-
րեղս ընդդէմ դիւին:

Պատմէ Պաղատիոս զինքենէ, և ասէ, թէ
յորժամ կայր 'ի կրթութե խոկմանց անձային
իւրոյ ներփակեցեալ 'ի խցի. մնում, ունէի

զմեծ

զԱծ փորձութիւն խստութեն, և զԱծ պատերազմ խորհրդոց, որք նեղէին զիս թողուլ զկրթութիւն աղօթից, զի անպէտ համարէի զայն վն իմ: Բայց յարուցեալ գնացի առ տրն Մակարիոս աղեքսանդրացին, և պատմեցի նմա զփորձութիւն իմ, խնդրելով 'ի նմանէ զխրատ և զդեղ: Եւ պատասխանի տուեալ ինձ տրն ասէ. յորժամ եկեսցեն քեզ խորհուրդք այդպիսիք, և ասասցեն, երթ այտի, զի զոչինչ առնես, ասասցես խորհրդոցն ցայնոսիկ. 'Վն Քի զորմս խցիս այսորիկ կամիմ պահել||: Կամէր ասել տրն, թէ յաղօթանեալ առնելով զոր գործ զայդ վն սիրոյն Քի, թէև զայլ ոչինչ կարասցես արտահանել յաղօթից, եթէ ոչ զպարտաւէլդ զայդ համբերութբ: Այս է յոյժ բարի պատասխանի, յորժամ գայ 'ի վր մեր փորձութիւն այս, զի նախապատական վախճանն, զոր պարտիմք կամիլ 'ի սբ կրթութեանս յայսմիկ լինելոյ է դիտաւորութիւն, որով պարտիմք երթալ, և պարապել յայնմիկ: Ոչ է լինելոյ ախորժումն մեր, այլ առնելն զգործ մի բարի և սբ, որով հաճոյանայցեմք Այ, և հաճեցուցանիցեմք զնա. նաև վճարիցեմք զմասնիկ իմն բազմաց պարտուց, զոր պարտիմք վճարել նմա թէ վն ինքեան, և թէ վասն անթիւ բարերարութեանց, զորս ընկալաք 'ի ձեռաց նր: Եւ ես զի նա կամի և հաճի, զի ես կայցեմ աստ 'ի ծունկս աղօթել, թէպէտ ինձ թուիցի թէ զոչինչ առնեմ, բայց ես այսու չատանիմ:

Պատմի զսրբուհւոյ կուսէն Կատարինէէ սենացւոյ, թէ զամուրս բազմաց զրկեցաւ 'ի հոգևոր մխիթարութենէ, և ոչ զբայր զսովորական եռացունն ջերմեռանդութեան. Նաև յոյժ վշտանայր և տառապէր 'ի վատթար խորհրդոց, և 'ի տգեղ, և յանհամեստ մտած-

մանց . զորս ոչ կարէր արտաքսել յինքենէ . սակայն ոչ ընաւ թողոյր վասն այսորիկ զաղօթս իւր , այլ մանաւանդ ըստ կարեաց իւրոց յարատևէր 'ի նմին մեծաւ հոգունակութբ , և խօսէր ընդ անձին իւրում այսուկերպիւ , և ասէր . ՈՎ անարգագոյն մեղաւոր՝ ոչ ես դու արժանի մխիթարութե . ապա ոչ շատանաս այնու , զի չես դատապարտեցեալ , թէև զամ աւուրս կենաց քոց կրեսցես զայս խաչարս և զտանջանս : Ճշմարիտ է թէ ոչ ընտրեցեր զծառայութին այս առ 'ի ընդունիլ 'ի նմանէ զմխիթարութիւն 'ի կեանս յայս , այլ առ 'ի զմայլել նովաւ 'ի յերկինս յաւիտենականապէս : Արդ ուրեմն , և արա զկրթութին քո՝ յարատևելով 'ի համատարմութե Տն քոյ :

Արդ՝ հետևեսցուք և մեք օրինակաց այսոցիկ , և շատասցուք բանիւք սրբոյն այնորիկ , որ ասէր . Ո՛ Տր ունիմ ես փոխանակ մխիթարութե զտեսանելն զիս առանց մարդկային մխիթարութե . և եթէ պակասիցէ ինձ մխիթարութին քո , կամք քո և արդար փորձառութիւնդ եղիցին ինձ 'ի տեղի մեծագունի մխիթարութե : Եթէ ժամանիցեմք առ այս , զի կամք և հաճութին ԱՅ լիցի ամ հաճութին մեր , մինչ զի նոյն զոկին մեր յամ մխիթարութեց մերոց , լիցի հաճութի և մխիթարութի մեր , այնու զի է այն հաճութին և կամք ԱՅ , յայնժամ եղիցի ճշմարիտ հաճութին մեր , և ոչ ինչ իր կարասցէ բառնալ զայն 'ի մէնջ :

ԳԼՈՒԽ .

# ԳԼՈՒԽ ԺԹ։

Հաստատի այն որ ասացաւ, օրինակօք ամամբք։

ՊԱտմի 'ի ժամանակագիրս կարգին
սրբոյն Դոմինիկոսի, թէ հայր ոմն
'ի նախկին հարցն նոյնոյ կարգին եկաց 'ի
կրօնին յայնմիկ զամս բազումս մեծաւ օրի-
նակաւ առաքինական վարուց, և մեծաւ
պարզամտութբ, բայց ոչ զգայր զմխիթա-
րութն և զախորժումն ինչ 'ի կրթութիս կրօ-
նին. ոչ 'ի մտածմունս, ոչ 'ի յաղօթս, ոչ
հայեցողականութբ, և ոչ ընթերցմամբ սբ
գրոց։ Եւ լսելով միշտ զայցելութին, զոր
ԱՃ առնէր այլոց, և զհոգևոր զգայմունս,
զորս այլք ունէին, կայր ոմն յուսահատեալ։
Եւ այսմ 'ի գիշերի միում 'ի յաղօթս առա-
ջի խաչելոյն միոյ սկսաւ ասել լալով դառ-
նամբ զանպատեհ բանս զայսոսիկ։ Տր ես
միշտ հաւատացի, թէ դու բարութբ և ողոր-
մուբ քով յաղթես ամ ստեղծուածոց քոց.
ահաւասիկ կամ ես աստէն, որ ծառայեցի
քեզ զամս բազումս, և կրեցի վն քո զվիշտս
բազումս. և յօժարաբար ընծայեցի զիս քեզ
միայնոյդ։ Եթէ զչորրորդ մասն ժամանա-
կին այնորիկ, զոր ծախեցի 'ի ծառայութն
քում, ծախիցէի 'ի ծառայութն բռնաւորի
ուրուք, ցուցանէր նա ինձ զնշան իմն բա-
րեկամութն՝ գոնէ բարի բանիւ, կամ բարի
հայեցուածով իմիք, և կամ ծիծաղմամբ
միով. իսկ դու Տր ոչ երբէք գգուեցեր զիս,
և ոչ ընկալայ 'ի քէն զդոյզն ինչ այցելութն,
զոր սովորես առնել այլոց. դու որ ես նոյն
ինքն քաղցրութն, դէպ 'ի յիս ես առաւել
խիստ քան զհազար բռնաւորս։ Զինչ է այս,
ընդէ՞ր կամիս, թէ այսպէս լինիցի։ Նորդ՝

մինչդեռ խօսէր նա զայսոսիկ բանս, լռեաց իսկոյն զդղրդումն մի այնքան մեծ, որպ̅ թէ բոլոր եկեղեցին անկանիցէր յերկիր, և որպ̅ թէ լցէին անդ շունք բազումք առ'ի կործանել զձեղունս և զառաստաղս: Ընդ որ նա զարհուրեալ և դողացեալ ահիւ, դարձոյց զգլուխն առ'ի տեսանել՝ թէ զինչ իցէր այն․ և ետես անդէն 'ի թիկունս իւր զահարկու և զտգեղագոյն դև մի, որ երկաթի գաւազանաւ, զոր ունէր 'ի ձեռին, եհար զգլուխ և զբոլոր մարմին նորա այնքան սաստկապ̅, մինչ զի անկեալ յերկիր ոչ կարէր յոտն կալ: Բայց մնաց այնքան ոյժ 'ի նմին, զի կարիցէր գետնաքարշ երթալ առ սեղանն, որ կայր մերձ այնր տեղւոյն՝ առանց կարելոյ շարժիլ վն̅ ցաւոյն, որպ̅ թէ 'ի սաստկութե̅ հարուածոյն բաժանեցեալք իցէին ոսկերքն: Արդ՝ յորժամ յարեան եղբարքն առ'ի ասել զառաջներորդ ժամն, գտին զնա իբրև զմեռեալ առանց դիտելոյ զպատճառն այնպիսի յանկարծ, և մահացու պատահման․ և տարան զնա 'ի հիւանդանոցն․ յորում եկաց զերիս ամբողջ շաբաթս մեծագունիւ ցաւով․ և եղանէր 'ի նմանէ հոտ այնքան աղտեղի, և զազրալի, մինչ զի ոչ ինչ կերպիւ կարէին կրօնաւորքն մտանել առ նա առ'ի հոգալ զնա, և ծառայել նմա, եթէ ոչ նախ խնլով զռունգունս իւրեանց, և այլովք դեղովք: Անցեալ ժամանակս այս, ստացաւ զսակաւ ինչ ոյժ․ և սկսաւ կարել յոտն կալ, և կամեցաւ բուժիլ 'ի խեղադարութէ, յինքնահաւանութէ, և 'ի հպարտութէ իւրմէ․ ուստի դարձեալ առ այն տեղին, ուր գործեաց զմեղն զայն, խնդրեաց զդեղ վն̅ մեղաց՝ առնելով զբազում աղօթս արտասուօք և խոնարհութ̅ յոյժ տարբեր քան զառաջին աղօթքն: Խոստովանէր զմեղս իւր, և ճանաչէր զինքն անարժան բարւոյ իմիք,

և

և յոյժ արժանի պատժոյ, և պատուհասի։ Եւ Տր մխիթարեաց զնա ձայնիւ միով 'ի յերկնից, որ ասաց ցնա. Եթէ կամիս զմխիթարութի և զհաճութի, հարկ է քեզ լինել խոնարհ, և ճանաչել զանարգութիւն քո, և համարել զանձն քո անարգագոյն քան ըզաճիւն, և քան զորդն, զոր կոխեն ոտիւք։ Եւ այսու մնաց յոյժ երկիւղալի, և այնուհետև եղև կրօնաւոր կատարեալ։

Օհօրէն մերմէ երանելւոյն Իգնատիոսէ ընթեռնումք զօրինակ մի յոյժ տարբեր։ Պատմի 'ի վարս նր, թէ յորժամ խոկայր նա զպակասութիւս իւր, լայր 'ի վր նց, և ասէր մեծաւ փափաքանօք, իցէ՞ թէ Տր 'ի պատիժ մեղաց իմոց բարձցէ յինէն զայցելութի մխիթարութե իւրոյ, որպ զի այնու բարձմամբն վարեցիմ առաւել մեծաւ փութով, և զգուշութբ 'ի ծառայութե նորա։ Բայց այնքան մեծ էր ողորմութին ԱՅ. և բազմութիւն հաւեզութե և քաղցրութե նր առ նա, մինչ զի որքան առաւել ցանկայր նա պատժել այնու կերպիւ, այնքան առաւել գթած էր Տր առ նա, և այնքան առաւել առատութբ հեղոյր 'ի վր նր ըղգանձս անհուն առատաձեռնութե իւրոյ։ Աստի ասէր, հաւաստեմ, թէ ոչ գոյ այնպիսի մարդ յաշխարհի, յորում գտանիցէ կարիցեն 'ի միասին երկու իրքս այսոքիկ, որպ գտանին 'ի յիս, որ պակասիլ ինձ այսչափ 'ի ծառայութե ԱՅ, և ընդունիլ զայսչափ, և զայսպիսի հանապազորդական շնորհս 'ի ձեռաց նր։

Պատմէ Պլօսիոս զծառայէ միոյ ԱՅ, թէ Տր առնէր նմա զմեծագոյն այցելութիւնս տալով նմա զմեծամեծ լուսաւորութիւս, և հաղորդելով նմա զիրս զարմանալիս 'ի յաղօթս։ Իսկ նա վն մեծի խոնարհութե իւրոյ, և վն առաւել հաճոյանալոյ ԱՅ խնդրեաց

'ի նմանէ ասելով. Տր եթէ հաճոյ է քեզ, բարձ յինէն զշնորհս զայս։ Լուաւ ԱԾ աղօթից նր, և եբարձ զշնորհն զայն 'ի նմանէ զամս հինգ, թոյլ տալով կրել զբաղում փորձութիւնս, զդառնութիւնս, և զնեղութիւնս։ Իբր մինչ լայր նա անդամ մի դառնապէս, երևեցան նմա երկու հրեշտակք, և կամեցան մխիթարել զնա. որոց նա պատասխանեաւ ասաց. ես ոչ խնդրեմ զմխիթարութիւն, քանզի բաւական է ինձ վն մխիթարութեան, զի կատարեցի 'ի յիս կամքն այ։

Այլոյն պլօսիոս պատմէ, թէ Քն փրկիչն մեր ասաց ցսրբուհին Բրիգիտա. ով դուստր իմ, զինչ է այն, որ ամբոխէ, և ձանձրացուցանէ զքեզ. և նա պատասխանեաւ՝ ասաց. Վշտանամ ընդունայն, անօգուտ, և վնասակար խորհրդովք. և զի ոչ կարեմ արտաքսել զայնս յինէն, նեղէ զիս ահարկու դատաստանն քո։ Յայնժամ պատասխանեաւ Տր ասաց ցնա. այս է ճշմարիտ արդարութիւն, զի որպ դու բերկրէիր ունայնութբ աշխարհիս ընդդէմ կամաց իմոց. այսպէս և այժմ լիցին քեզ վշտալիք և ձանձրալիք՝ զանազան և թիւրագոյն խորհուրդք ընդդէմ կամաց քոց։ Սակայն պարտիս երկնչել 'ի դատաստանէ իմմէ բարեխառնօրէն, և ընտելութբ՝ յուսալով միշտ 'ի յիս հաստատապէս, որ եմ ԱԾ քո. զի պարտիս լինել հաւաստի, թէ վնասակար խորհուրդքն, որոց ընդդիմանայ մարդն, և արտաքս վանէ զնս, են քաւարան, և պսակ հոգւոյ։ Եթէ ոչ կարես արգելուլ զայնս, տուր համբերութբ զնս, և ընդդէմ կաց նց կամօք. և թէև ոչ տայցես նց զհաճանումն, սակայն երկիր, զի մի ծնցի 'ի քեզ հպարտութն, և անկցիս. զի ամ որ յոտն կայ, պահի 'ի շնորհայն ԱՅ։

Ասէ Թոմլերոս այսպէս, (և առբերէ զայն

պէօ.

պլօսխոս 'ի գիրս մխիթարութն փոքրահա-
գեաց ) թէ բաղումք մինչ վշտանան 'ի նե-
ղութեց , սովորք են ասել ցիս , հայր տա-
ռապիմ յոյժ , և իրք իմ ոչ յառաջանան
բարւոք վասն իմ, զի նեղասրտիմ զանազան
վշտօք , և տրտմութք . և ես պատասխա-
նեմ նմա , թէ մանաւանդ յոյժ բարւոք յա
ռաջանան իրքն վն քո , և է արարեցեալ
քեզ շնորհ մեծագոյն ։ Յայնժամ ասեն ցիս,
ոչ է այսպէս , մանաւանդ հաւատամ , թէ
այս պատահի ինձ վն մեղաց իմոց . առ որ
ես պատասխանեմ . թէ վն մեղաց քոց իցէ,
և թէ ոչ , հաւատամս դու , թէ զխաչս զայս
տայ քեզ ԱԾ . եթէ հաւատաս , գոհութք
համբեր այնմ, և հնազանդեա զքեզ բոլոր-
վին նմա ։ Ասեն դարձեալ . ես մաշիմ 'ի
ներքուստ մեծաւ չորութք , և մթութք .
և ես ասեմ ցնա , որդեակ իմ սիրելի , ամր
համբերութք , զի այս եղիցի առաւել մեծ
շնորհ , քան զունիլն քո զմեծ ջերմեռանդու-
թին զգալի ։

Պատմի զմեծ ծառայէ միոյ ԱՅ , թէ ա-
սէր այսպէս . են որդէն ամք քառասունք ,
յորմէհետէ ծառայեմ ԱՅ , և պարապիմ
յաղօթս , և ոչ երբէք առի 'ի նմն զճաշակ
և զմխիթարութն ինչ . բայց յայնմիկ աւուր
յորում առնեմ զայս , զգամ 'ի յիս զմեծ յոյժ
վն կրթութեն առաքինութեց . և յորժամ
նուաղիմ յայնմիկ , զգամ զիս այնքան թու-
լացեալ , մինչ զի ոչ կարեմ համբառնալ ըղ
բաղուկս վն բարւոյ իրիք ։

## ԳԼՈՒԽ Է.

Յաղագս համաձայնութեան ընդ կամացն Այ, [illegible]

Որպէս պարտիմք համաձայնել զմեզ ընդ կամացն Այ՝ որպիսաբար և կարգադրեսցէ զմեզ ՚ի յաղօթս. այսպէս և պարտիմք համաձայնել ընդ նմա՝ որպիսաբար և կամիցի կարգադրել զմեզ ՚ի յայլս առաքինութիւնս, և ՚ի պարգևս իւր, և ՚ի յայլ ամ նախախնամութեան իւրում հոգևորս։ Յոյժ բարեգոյն է ցանկութիւն ամենից առաքինութեանց, հառաչելն վասն նց, և ջանալն առ այն. Բայց այնպիսաբար պարտիմք ցանկալ առ՚ի զինել բարեգոյն, և յառաջադիմել և զարգանալ յառաքինութեան, մինչ զի ունիցիմք զխաղաղութիւն, եթէ ոչ կարիցեմք ժամանել առ այն, որում ցանկամք, և համաձայնեսցուք զմեզ ընդ կամացն Այ՝ շատանալով նովաւ։ Եթէ ԱԾ ոչ կամի տալ քեզ զողջախոհութիւն մի հրեշտակային, այլ կամի, զի դու յայնմիկ կռուեսցես զփորձութիւն ծանրագոյն, լաւագոյն է՝ զի ունիցիս զհամբերութիւն, և համաձայնեսցես զքեզ ընդ կամացն Այ յայնմիկ փորձութեան և նեղութեան, քան թէ խռովեսցիս, և աղմկեսցիս վն ոչ ունելոյդ զմաքրութիւն զայն հրեշտակային։ Եթէ ԱԾ ոչ կամի տալ քեզ զխոնարհութիւն այնքան խորագոյն, որպիսի էր խոնարհութիւն սրբոյն Ֆրանչիսկոսի. ոչ զայնքան հեզութիւն, որքան էր Մովսէսի և Դաւթի. և ոչ զայնքան համբերութիւն, որքան էր Յոբայ. այլ կամի զի դու զգայցես զշարժումն և զախորժումն ներհակաց նոցին, բարի է

զի

զի խոնարհեսցիս, և ամաչեսցես, և առցես անձն զառիթ խոստելոյ զքեզ, քան թէ լիցիս անհանգիստ, և նեղասրտեալ տրտնջեսցես՝ վս այսորիկ, զի ոչ արար զքեզ Ած համբերող՝ որպէս զՅոբ. և ոչ այնքան խոնարհ, որպէս էր սրն Ֆրանչիսկոս : Պարտիմք համակերպել զմեզ ընդ կամացն Այ նաև յայսմիկ իրս, այլ թէ ոչ՝ ոչ երբէք գտցուք զհանգիստ : Յոյժ բարւոք ասէ հայր վարդապետն Աւիլա. Ո՛չ համարիմ եմ, թէ եղեալ իցէ յայսմիկ աշխարհի այնպիսի մդ, որ ոչ իցէ ցանկացեալ լինելոյ առաւել մդ քան զայն՝ որ էրն. բայց այս ոչ բառնայր 'ի նոցանէ զխաղաղութիւն իւրեանց, զի այնմիկ ոչ ցանկային վս տափանայ իւրեանց, որք ո՛չ երբէք ասեն բաւական է, այլ ցանկային այնմիկ վս Այ, որոյ բաշխմամբն շատանային. Թէև Ած տայցէր նց զպակաս. զի համարէին առաւել ճշմարիտ սէր զշատանալն այնու, զոր Ած տայր նց, քան զցանկալն ունելոյ զբազում. Թէպէտ ինքնասիրութիւն ասէ, թէ լաւ է ցանկալ բազմաց առ'ի առաւելաբար ծառայել Այ :

Նայց գուցէ ասիցէ ոք ցիս, Թուի թէ կամիս ասել, թէ ոչ պարտիմք լինիլ ջերմեռանդք 'ի ցանկալ գոլոյ առաւել առաքինիք, և բարեգոյնք, այլ թէ պարտիմք թողուլ զամ ինչ Այ՝ թէ ըստ հոգւոյ, և թէ ըստ մարմնոյ. որով և տրի մեզ առիթ լինելոյ գաղջ և պղերգ, և ոչ հոգայցող առ'ի զարգանալ և յառաջադիմել : Արդ՝ յոյժ բարւոք նկատելի է կէտս այս, զի է կարի օգտակար, և հարկաւոր : Այնքան լաւ է վերակրկնումն և առարկութիւն այս, մինչ զի միայն յայսմանէ երկնչելի է յայսմիկ իրս կուրթն : Ո՛չ գոյ այնպիսի վարդապետութ, թէև իցէ յոյժ բարեգոյն, զոր ոչ ոք կարիցէ չարաչար 'ի գործ ածել, յորժամ ոչ գի-

ակ 'ի գործ ածել, և 'ի կիր առնուլ՝ ում վայելէ : Դժուարին իմանալի է այս թէ զայն_մանէ, որ պատկանի առ աղօթս, և թէ զայնմանէ, որ պատկանի առ այլս առաքի_նութիւնս և պարգևս գերբնականս : Վա որոյ հարկաւոր է՝ զի պարզաբանեսցուք, և իմա_ցուք զայս բարւոք : Ես ասեմ ես, թէ ոչ պարտիմք ցանկալ, զի յանուռ առաւել լի_ցուք առաւել մեք, և ոչ հետևեսցուք միշտ բարեգունից, և ոչ ջանասցուք լինել ջերմե_ռանդք և բարեգոյնք. որովհետև վա այսո_րիկ եկաք 'ի կրօն. և թէ ոչ արասցուք այս_պէս, ոչ կարեմք լինել բարի կրօնաւորք : Այլ ասեմ, թէ ամ 'ի յարտաքին իրս պար_տին լինել մարդիկք հոգևորականք, այլ ոչ նեղասիրտք, և յոյժ փափաքօղք այնց. զի այս արգելեցեալ եղև առեն մեզն 'ի Քրիստ փրկչէն մերմէ այնու բանիւ, զոր ասէ. Մատ. 6. 25: Մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց, զինչ ուտիցէք. և մի՛ վասն մարմնոյ ձերոյ թէ զինչ ագանիցիք : Որով յանդիմանէ զանձկոտն նե_ղասրտութիւն, և զանհոգորդ փափաքն այսո_ցիկ իրաց. բայց ոչ բառնայ զպատկանաւորն փոյթն, և զհարկաւոր հոգունակութիւն. այլ հրամայէ մանաւանդ զայս. և ետ սմա զապաշխարանս ասելով : Քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո : Ծննդ. 3. 19: Պիտոյ է, զի մարդիկ աշխատեսցին և հոգասցեն առ 'ի գտա_նել զհաց. ապա թէ ոչ այս լինէր փորձել զԱծ : Այսպէս պարտ է լինել ևս 'ի յիրս հոգևորս, յր 'ի ջանս որ վա առաքինութեց և պարգևացն ԱՅ : Պիտոյ է, զի իցեմք ջարի հոգևորակք, և փութացօղք յայս_միկ. բայց այնպիսաբար՝ զի մի՛ բարձցի այս_մու խաղաղութիւն սրտի, և համակերպու_թիւն ընդ կամացն ԱՅ : Արա դու զայն 'ի կողմանէ քումմէ զոր կարես, և եթէ աւ_անիցես, թէ այսու առաւել ոչ կարես ունել

զայն_

զայնքան, զորքան կամիս, ոչ պարտիս գա-
հավիժել զքեզ 'ի յանհամբերութիւն վս այ-
սորիկ, զի այս է մեծագոյն պակասութիւն
քան զոչ ունիլդ զայն, որում ցանկաս ։ Եւ
թէպէտ թուիցի քեզ, թէ պակասութիւն
այնորիկ, զոր դու կամէիր, յառաջ գայ 'ի
գաղջութենէ քումմէ, (որ է այն, որ սովոր
է տրամեցուցանել զբաղումս) ջանա գո-
բարոյականաբար առնել զհոգեւորականն քո ·
և եթէ ոչ տրտմեցես զմտ, և անկցիս 'ի պա-
կասութիւնս, մի զանգիտեր վս այսորիկ, զի այս
պիտիք եմք ամենեքեան ։ Մարդ ես, և ոչ
հրեշտակ · տկար, և ոչ երանեցեալ · և այն
զի ճանաչէ Ած բարեաց զթուլութիւն մեր, ըստ
այնմ · Սաղմ. 102. 14 ։ Զի նա գիտաց զստեղծուա-
ծս մեր · և յիշեաց թէ հող եմք ։ Ուստի ոչ
կամի թէ տառապիցիմք վս այսորիկ, այլ
զի զղջասցուք, խոնարհեսցուք, և խոկոյն յա-
րիցուք 'ի վեր, և խնդրեսցուք 'ի Տնէ զկա-
րողութիւն մեծագոյն, ջանալով կալ շատա-
ցեալք 'ի ներքուստ և արտաքուստ ։ Բայց
բարեգոյն է զի շուտով յարիցես ուրախու-
թբ, որ բազմապատիկ զօժն առ'ի ծառայ-
ել Այ, քան թէ լալ անելորդ նեղսր-
տութբ 'ի խոկալն զպակասութիւնս վս Այ ·
որով անհաճոյանաս նմա վատթար ծառայ-
ութբ սրտիդ, և տրտմութբդ, և այլովք
պատովք, որք անտի բուսանին ։

Միայն երկնչելի է սատէն 'ի վտանգէն,
զոր ծանուցաք, թէ զի մի ներսպրդիցի 'ի մեզ
գաղջութիւն · և մի թողցուք առնել զայն,
որ է 'ի կողմանէ մերմէ՝ ընդ երեւութիւ ա-
նելոյ, թէ Ած պարտի տալ ինձ · զոր ինչ
պարտի տալ 'ի ձեռանէ նր · ոչ կարեմ ա-
նել առաւել քան զայս ։ Եւ 'ի սոյն վտան-
գէս պարտիմք զգուշանալ նաև շուրջ զաղօ-
թիւք · զի և աստ կարէ ներսպրդիլ պղեր-
ջութիւն ընդ նոյնոյ երեւութիւ ։ Այլ փա-
կեա-

կեցուք զդուռս զայս. քանզի մինչ առնեմ
դու բարեյականութեան զայն, զոր 'ի կողմա-
նէ քումմէ կարես առնել, առաւել հաճի
Աձ ընդ համբերութիւն և ընդ խոնարհութիւն
'ի տկարութե, քան թէ ը այնքան նեղասր-
տութիւն և տրտմութիւն անօգուտ, զոր ունին ո-
մանք թուելով ինքեանց, թէ ոչ զարգանան
առաքինութք և կատարելութք, և թէ ոչ կա-
րեն ջերմեռանդութը և ախորժմամբ կալ
յաղօթս, որքան կամին: Քանզի այսպէս
այս կատարելութե և աղօթից ոչ ստացեալ
լինի տխրութը և բռնութը, այլ Աձ տայ
զայն ում կամի տալ, և որչ կամի, և երբ
կամի տալ: Յայտնի և հաւաստի իմն է,
թէ ոչ են լինելոց հաւասարք նոքա ամենե-
քեան, որք գնալոցք են յերկինս. Այլ
ոչ պարտիմք յուսահատիլ վն այսորիկ, թէ
չեմք 'ի բարեգունից. գուցէ և ոչ 'ի միջա-
կաց. այլ պարտիմք համակերպիլ ընդ կա-
մացն ԱՅ յամ իրս. և շնորհակալ լինիլ
զՏնէ յաղագս յուսոյն, զոր ետ մեզ, թէ
փրկելոց է զմեզ վն ողորմութե իւրոյ: Իսկ
եթէ ոչ ժամանեմք առ այս, զի չունիցիմք
զլինն տկարութե, գոհասցուք զԱՅ, զի
ետ մեզ զծանօթութիւն տկարութեց մերոց:
Իսկ որովհետեւ ոչ կարեմք երթալ յերկինս
միջնորդութը բարձրութե առաքինութեց,
որչ երթան ոմանք, ջանասցուք երթալ միջ-
նորդութը խոնարհութե և ծանուցման մե-
ղաց մերոց, որչ երթան այլք բազումք:
Ահա այն Հերոնիմոս. մատուսցեն այլք 'ի
տաճարի Տն իւրաքանչիւրոք ըստ կարի իւ-
րում, ոմն զոսկի, ոմն զարծաթ և զականս
պատուականս, ոմն զկերպաս, զբեհեզ, և
զծիրանիս, ինձ բաւական է մատուցանել
'ի տաճարի զմորթս այծեաց և անասնոց:
Մատուսցեն ուրեմն այլք ԱՅ զառաքինու-
թիւնս իւրեանց, և զգործս գերազանցս, և

զկե-

զվեհագոյնս , զբարձրաթռիչ , և զգերամբարձ աղօթս և զհայեցողութիւնս ։ Իսկ ինձ բաւական է մատուցանել Նմա զանարգութիւս իմ ճանաչելով զիս , և խոստովանելով թէ եմ մեղաւոր , և առանց իրիք կատարելութեան , և ներկայացուցանելով զիս առաջի մեծութեան նր̄ որպ̄ զաղքատ , և զկարօտ ։ Յոյժ օգտակար է մեզ , զի յայժմիկ ուրախասցուք սրտիւ , և գոհասցուք զա̄յ , որպ̄ զի մի բարձցէ 'ի մէնջ որպ̄ յաւերախաղաց զայն , զոր ետ մեզ ։

Ասեն Բօնավենթուրա ։ Ճերսոն , և այլք առակցեն այսմիկ զայլ իր մի , որով բարւոք հաստատի այն , որ ասացաւ ։ և ասեն , թէ բազում անձինք առաւել ծառայեն Այ ոչ ունելով զառաքինութիւն , և զվերահաճաքումն , և ցանկանալով ունիլ , քան թէ ունիցէին զայն ։ Զի այսու կեան խոնարհութե̄ , և հոգունակութե̄ , և ջանան յառաջադիմել և հասանիլ ։ վա̄ որոյ յաճախ դիմեն առ Այ ։ որք եթէ ունիցէին զմեծ առաքինութի̄ , գուցէ հպարտանայցէին , և անհոգացեալ գաղջանայցէին 'ի ծառայութե̄ այ ։ զի կարէր երևիլ նց̄ , թէ արդէն ունին զայն , զոր ոչ ունին , և ոչ ջանային աշխատիլ առելի ։ Զայս ասացի ես , որպ̄ զի տրտասցուք մեք բարոյականաբար զայն , որ է 'ի կողմանէ մերմէ , և երթիցուք փութով և հոգացողութե̄ ջանալով առ կատարելութի̄ ։ Իսկ յայնժամ շատանայցեմք այնու , զոր Տր̄ տացէ մեզ , և ոչ մնասցեմք տխրեալ և ներղամբեալ վասն այնորիկ , զոր ոչ կարեմք առնուլ՝ որ և ոչ է 'ի ձեռս մեր ։ Քանզի այս ( որպ̄ ասէ հայր վարդապետն Աւիլա ) ոչ այլ ինչ է , եթէ ոչ կալ 'ի տանջանս , այնու զի ոչ տուեալ լինին մեզ թևք առ 'ի թռչիլ ըն̄ օդս ։

## Գ Լ ՈՒ Խ. ԼԱ.

Յաղագս համակերպութեն ընդ կամացն Այ, որ պար-
տիմք ունիլ շուրջ զբարեօքն փառաց:

ՈՉ միայն պարտիմք համակերպել ըզ մեզ ընդ կամացն ԱՅ շուրջ զբարեօք շնորհաց, այլև շուրջ զբարեօք փառաց. Ճշմարիտ ծառայն ԱՅ պարտի լինիլ այնքան օտար 'ի շահասիրութենէ իւրմէ նաև յայսոսիկ իւր փառաց, մինչ զի ուրախանայցէ մանաւանդ վն կատարման կամացն ԱՅ, քան թէ վն առաւելոյն զայն 'ի յօգուտ իւր: Այս է կատարելութի կարի մեծագոյն (ըստ ասէ Թօմաս Գեմբացին) ոչ խնդրել զշահն իւր՝ ոչ 'ի սակաւս, և ոչ 'ի բազումս. ոչ 'ի յիրս ժամանակաւորս, և ոչ 'ի յաւիտենականս. և այս զպատճառն առնելով. զի կամք քո Տր իմ, և սէրն պատուոյ քոյ պարտին գերազանցել զամ իրս. և առաւել պարտի մխիթարել զմեզ այս, քան թէ այլ ամ բարերարութի, զոր ընկալաք, կամ կարեմք ընդունիլ 'ի քէն:

Այս է հանճարութի և ուրախութի երանեցելոց, զի առաւել ուրախանան նքա 'ի յերկինս յաղագս կատարման կամացն Այ, քան թէ յաղագս մեծութե փառաց իւրեանց. զի կան այնքան անդրափոխեցեալք 'ի յԱծ, և այնքան միաւորեցեալք ընդ կամաց նր, մինչ զի զփառս, զորս ունին, և զբարի վիճակն որ հանդիպեցաւ նց, ոչ կամին այնքան վն օգտի իւրեանց, որ անտի յառաջ գայ ինքեանց, և վն բերկրութեն, զոր զգան, որքան վն այսորիկ զի Ած հաճի ընդ այն, և է կամք իւր ածային: Աստուստ է, զի իւրաքանչիւրոք կայ այնքան շատացեալ և ուրախ այնու աստիճանաւ, զոր ունի, մինչ

զի

զի ոչ յանկայ ունիլ աւելի քան զայն. և ոչ տհաճի՝ զի այլք ունին աւելի։ Քանզի որ տեսանէ զԱծ, այնպ փոխի 'ի յԱծ, մինչ զի Թողու զկամիլն իւր, և սկսանի կամիլ ոպ Ած. և մինչ տեսանէ թէ այն է կամք և բարեհաճութիւն Այ, նոյնն է և հաճութիւն իւր։ Կատարելութիւն այս փայլէր 'ի մեծագոյն աստճան յայնոսիկ, որպ 'ի Մովսէս, և 'ի Պօղոս. որք վս կեցութեան հոգւոց, և վս մեծագոյն փառացն Այ Թուէր թէ մոռանային, և ոչինչ համարէին զյաւիտենական փառս իւրեանց. զի Մովսէս ասէր։ Եթէ թողուս նոցա զմեղս իւրեանց՝ թող. ապա թէ ոչ ջնջեա՛ զիս 'ի դպրութենէ քումմէ՝ զոր գրեցեր։ Ելից, 32. 31։ Եւ սրբն Պօղոս ասէր։ Զի աղօթէի խնդրէի ես ինքնին նզովս լինել 'ի Քրիստոսէ վասն եղբարցն ազգականաց իմոց ըստ մարմնոյ։ Հռոմ. 9. 3։ Յորոց ուսաք սրբն Մարտինոս, և այլք որք. զի սրբն Մարտինոս 'ի ժամու մահուան իւրոյ ասաց։ ՝Եթէ տակաւին հարկաւոր եմ ժողովրդեան քում, ոչ հրաժարեմ յաշխատանաց ‖։ Յետադրէին զհանգիստն իւրեանց, և հրաժարէին յօժարաբար 'ի փառաց իւրեանց, որ էր արդէն մերձակայ, և ընծայէին զինքեանս դարձեալ 'ի յաշխատանս առ 'ի առաւել ծառայել Այ 'ի փառս նր։ Այս է կատարել զկամս Այ 'ի յերկրի աստ, որպ կատարի անդ 'ի յերկինս, զի մոռանալով զամ շահասիրութիւն մեր, դիցուք զամ հաճութիւն մեր 'ի կատարել զկամս Այ. և առաւել մեծ համարեսցուք զհաճութիւն Այ քան զամ շահս և զօգուտս մեր, և քան զստանալ զերկինս և զերկիր։

Իսկ բարւոք կարեմք տեսանել զկատարելութիւն, զոր պահանջէ 'ի մէնջ կրթութիւն այս համակերպութեան ընդ կամացն Այ. Եթէ պարտիմք բառնալ զաչս մեր 'ի շահասիրութենէ բարեացն հոգևորաց, նաև բա-

րեացն

րեայն յաւիտենականաց , և ես նոյն փառացն՝ առ 'ի դնել զաչս մեր 'ի հաճութեն , և 'ի կամս Այ̄ , առաւ զինչ պարտիմք առնել շուրջ զմարդկային օգտիւք , և նկատմամբ : Որով կարեմք նաև իմանալ բարւոք , թէ որքան հեռի է 'ի կատարելութենէ յայսմանէ նա՝ որ ունի զդժուարութի 'ի համակերպիլն ընդ կամացն Այ̄ 'ի յայնս իրս , զորս առնէ 'ի սկզբանն , իբր 'ի դնելն յայսմիկ , կամ յայնմիկ տեղւոջ · յայսմիկ , կամ յայնմիկ պաշտօնի · 'ի տալն առողջ , կամ հիւանդ · 'ի տալն արհամարհեցեալ , կամ վարկեցեալ յայլոց : Այսու կարեմք ճանաչել , թէ առաւել պարտիմք համարել զկամս և զհաճոյսն Այ̄ քան զամ գերազանց իրս , որք կարեն լինել 'ի բարիս հոգևորս , այլև 'ի բարիս յաւիտենականս · իսկ դու կաս հայելով յայսոսիկ իրս ժամանակաւորս , որք նկատմամբ նց̄ են աղտեղութիք : Նա որ ցանկայ հաճոյից Այ̄ , և կատարման կամաց նր̄ այնքան , մինչ զի կամաւորապէս հրաժարի 'ի փառաց իւրոց , շատանայ նուաստագոյն տեղեաւ և պաշտօնիւ · ոչ թէ պակաս իցէ նմա ցանկութիւն աշխատելոյ և առնելոյ զգործս զօրեղս , այլ միայն վս̄ կամելոյ մանաւանդ զկամս և զբարեհաճութիւն այ̄ , եղանելին նմա առաւել դիւրինք այլք համայնք իրք , զի հրաժարի յայնմանէ իրէ , յորմէ կարէ հրաժարել միայն վս̄ սիրոյն այ̄ : Ահա այս է առաւել մեծ իր , զի ոք կարիցէ ընդունիլ զամ ինչ առ 'ի համակերպիլ ը̄ կամացն այ̄ : Եթէ կամի Այ̄ , զի ես մեռանիցիմ այժմ իսկոյն , և ունիցիմ զփոքրագոյն փառս , մանաւանդ կամիմ զայս , քան թէ մեռանիլ զկնի քանից , կամ երեանից ամաց , թէև յայնժամ ունելոց իցեմ զառաւելի մեծագոյն փառս : Իմ՟ հակադարձաբար , թէև իցեմ ես հաւասարի վասն փա-

փառաց՝ մեռանելով այժմ, բայց եթէ կամի ԱԾ, զի մնայցեմ յայսմիկ բանտի և աքսորման զասս բազումս վշտանալով և կրելով զնեղութիւս, կամիմ մանաւանդ զայս, քան թէ գնալ իսկոյն 'ի փառս. զի հաճոյն ԱՅ, և լրումն կամաց նր է հաճութիւն և փառք իմ։ Դու ես փառք իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։ Սաղմ. 3. 4։

Պատմի վն երանելւոյ հօրն մերոյ Իգնատիոսի օրինակ մի յարմար ամին յոյժ զարմանալի. թէ յաւուր միում մինչ կայր նա ընդ հօրն Լայինեզայ, և ընդ այլս, եհարց ցնա ասելով. ասա ինձ Լայինէզ. զինչ արդեօք առնէիր դու ըստ կարծեաց քոց, եթէ ԱԾ Տրն մեր առաջադրիցէր քեզ զայս թէուխս, և ասիցէր. եթէ դու կամիս մեռանիլ այժմ, ես ընկալայց զքեզ 'ի բանտէ մարմնոյդ այդորիկ, և տաց քեզ զփառս յաւիտենականս. բայց եթէ կամիս կեալ տակաւին, ոչ առնեմ զքեզ հաւաստի զայնմանէ, որ ինչ քեզ պատահել կարէ. քանզի եթէ կայցես յառաքինութեան, և յարատեւիցես 'ի նմին, տաց քեզ զվարձս, սակայն եթէ պակասիցիս և թողուցուս գործել զբարին, որպ գտից, այնպէս դատեցից զքեզ։ Արդ՝ եթէ Տր ասիցէր քեզ զայս, և դու հաւատայցէիր, թէ մնալովդ զժամանակ ինչ 'ի կեանս յայս՝ կարէիր առնել զգործ մի մեծ և նշանաւոր 'ի ծառայութեան ածային փառաց նր, զո՞րն ընտրէիր, և զինչ պատասխանէիր։ Պատասխանեաց հայրն Լայինէզ ասաց։ Հայր՝ ես խոստովանիմ յարգութէ քում, թէ ընտրէի երթալ իսկոյն առ 'ի զմայլիլ ածվ. և հաստատել առնել զփրկութիւն իմ, ազատելով զիս 'ի վտանգէ միոյ, որ է այնքան հարկաւոր։ Յայնժամ ասաց հայրն մեր. իրաւի ես ոչ առնէի այդպ, այլ եթէ ենթադրատիցէի, թէ մնալով իմ 'ի կեանս յայս, կարէի առնել

նել զծառայութիւն իմն եղական Տն, յայն-
ժամ աղաչէի զնա թողուլ զիս 'ի կեանս
յայս, մինչև առնիցէի զծառայութիւն զայն.
և դնէի զաչս յայնմիկ, և ոչ բնաւ 'ի յիս,
նկատելով զվտանգն, կամ զապահովութիւն իմ։
Զի ոչ թուէր հօրն մերում, թէ երկբայե-
լի մնայր այնու փրկութիւն իւր. այլ եղանիւր
առաւել համառօտ, և առաւել օգտակար՝
վն հաւատալոյն այ. որովհետև մնայր աստ
վն ծառայութեն նր։ Քանզի ո՞ է թագաւորն,
կամ իշխանն այն յաշխարհի աստ, որ եթէ
տայցէ զմեծագոյն շնորհ ինչ ումեմն ծառայի
իւրում, և եթէ ծառայն այն ոչ կամիցի իս
կոյն վայելել զայն, այլ կամիցի նախ առ-
նել զծառայութիւն իմն նշանաւոր, ոչ պա-
րաւանդեսցի Տրն այն պահել զշնորհն զայն
վասն նր, մանաւանդ յաւելուլ ևս զայն.
որովհետև նա զրկեցաւ 'ի շնորհաց անտի
վն սիրոյ նր, և վն առաւելաբար ծառայե-
լոյ նմա։ Արդ՝ եթէ զայս առնեն մարդիք,
որք սովորք են գոլ ապերախտք, ապա զինչ
պարտիմք յուսալ 'ի Տնէ, որ այսպիսաբար
կանխէ առ մեզ 'ի ձեռն շնորհաց իւրոց. և
առնէ մեզ զայսքան բարերարութիւնս։ Զիարդ
կարեմք երկնչիլ, թէ լքելոց իցէ զմեզ վն այ-
սորիկ, զի յապաղեցուցաք զերանութիւն մեր,
և ոչ կամեցաք զմտանել նովաւ վաղն նր, ք
առ 'ի առաւել ծառայել նմա։ Ո՛չ է հաւա-
տալի, և ո՛չ է ակնունելի այսպիսւոյ իրի
յայսպիսւոյ Տնէ։



ԳԼՈՒԽ.

# ԳԼՈՒԽ. ԼԲ։

Յաղագս համակերպութեան, միաւորութեան, և կատարեալ սիրոյ ընդ Այ, և թէ որպէս պարփակի 'ի գործածել շնորհութեանց զայս։

Որ 'ի բարւոք տեսանել զկատարելութիւն, և զգերազանցութիւն մեծ, զոր պարունակէ յինքեան կրթութիւնս այս համակերպութեն ընդ կամացն ԱՅ. և առ'ի գիտել թէ մինչև ցո՞ կարեմք ժամանել այնու (վասն եղերելոյ զընձեռումս զայս) ասասցուք զեր իմն զկրթուէ առաւել բարձրագունէ, զոր գնեն սբքն և վարդապետքն երաց հոգևորաց յաղագս սիրոյն ԱՅ, որ թուի թէ իցէ յարմար այսմ տեղւոյ։ Քանզի 'ի մէջ գլխաւոր գործոցն սիրոյ միոյն է առնել զկամս սիրողաց մի. ոպ ասէ սբն Դիոնէսիոս արիսպագացին. յս ունել զմի և զնոյն կամիլ, զմի և զնոյն ոչ կամիլ։ Եւ այսպէս որքան ոք եղիցի առաւել միաւորեցեալ, և համակերպեցեալ ընդ կամացն Այ, այնքան առաւել սիրեսցէ զնա. և որքան մեծագոյն եղիցի սէրս այս, այնքան առաւել միաւորեսցի, և եղիցի համակերպ ընդ կամացն ԱՅ։ Արդ՝ առ'ի բարւոք պարզաբանել զայս, հարկ է զի ելանիցեմք 'ի յերկինս խոկմամբ, և տեսանիցեմք, թէ ոպ կան երանեցեալքն անդ սիրելով զԱծ, և համակերպելով զինքեանս ընդ կամաց նր. ունելով զմի և զնոյն կամիլ և զկամս ընդ նմա. զի որքան առաւել մերձեսցուք առ այս, այնքան առաւել կատարեալ եղիցի կրթութիւն մեր։ Փառաւոր առաքեալն և աւետարանիչն սբն Յոհաննէս 'ի յառաջին թղթին իւր կանոնական անդ՝ ուր խօսի, թէ տեսութիւն ԱՅ առնէ զերանեցեալսն

նման

նման նմա, ասէ. 3. 2: Զի յորժամ նա յայտ-
նեսցի, նման նմա լինելոց եմք: Քանզի խոկոյն
'ի տեսանելն զԱծ, մնան այնպիսաբար միա
Հօրեցեալք եւ անդրափոխեցեալք 'ի յԱծ,
մինչ զի ունիցին զմի եւ զնոյն կամք, եւ զմի եւ
զնոյն կամիլ ը̃ նմա: Արդ՝ տեսցուք այժմ,
թէ որն է կամիլն, կամքն, եւ սէրն Այ,
ոպ̃ զի կարասցուք իմանալ, թէ որն իցէ
կամիլն եւ կամքն երանեցելոց. յորմէ նաեւ
յետոյ կարեմք վերահասանել, թէ որպիսի
պայծառ լինիլ կամիլն, սիրելն, եւ կամքն մեր
կատարեալ: Կամիլն եւ կամքն Այ եւ սէրն
նոյն ծայրագոյն, եւ կատարելագոյն՝ է նոյն
փառքն իւր, եւ գոլն իւր, որ է ծայրագու-
նապ̃ կատարեալ, եւ փառաւոր: Արդ՝ սոյնս
է նաեւ կամիլն, կամքն, եւ սէրն երանեցե-
լոց: Ուստի սէրն սրբոց եւ երանեցելոց է
սէր մի՝ եւ կամիլ մի, որով սիրեն եւ կամին
ամ̃ զօրութ̃բ, զի Ած իցէ այն, որ է, եւ
իցէ յինքեան բարի՝ այնքան փառաւոր՝ եւ
այնքան արժանի պատուոյ, որքան է. եւ
տեսանելով 'ի յԱծ զայն ամ̃, որում ցան-
կան. հետեւի 'ի նոսա այն պտուղն Հոգւոյն
սրբոյ, զոր առաքեալն ասէ. Գաղ. 5. 22.
Պտուղ հոգւոյն է խնդութ̃ն: Զի է խնդութ̃ն
մի անճառելի տեսանելով զայն՝ զոր այնքան
սիրեն, այնպ̃ լի ամ̃ բարեօք, եւ գանձուք
յինքեան: Այժմ զոր տեսանեմք մեք աստ,
կարեմք իմանալ զէր իմն խնդութ̃ն այնորիկ
ածայնոյ, զոր ընդունին երանեցեալքն:
Տես թէ որքան մեծ է ուրախութ̃ն, զոր
ունի աստորդի մի 'ի տեսանելն զհայրն իւր,
զոր մեծապ̃ սիրէ, պատուեալ եւ հաճոյ առ
ամենեսեան, զգօն եւ հարուստ, կարող եւ
յոյժ մեծ համարեցեալ եւ սիրեցեալ 'ի թա-
գաւորէն: Իրաւի գոն որդիք այնքան բա-
րեք, մինչ զի ասեն, թէ չիք այնպիսի իր,
որում կարիցէ բաղդատիլ ուրախութիւնն

եւ

և խնդութեան այն, զոր զգան 'ի տեսանելն զհայրն իւրեանց այնքան մեծ համարեցեալ։ Արդ՝ եթէ այս ուրախութի՟ է այսքան մեծ աստ, ուր սէրն է այսքան թոյլ, և բարիքն այսքան անարգ, ապա որպիսի է լինելոց ուրախութիւն այն սրբոց՝ յորժամ տեսանեն զճշմարիտ Տ՟րն իւրեանց, զստեղծօղն, և ըզ հայրն երկնաւոր, առ որ են յոյժ անդրա-փոխեցեալք սիրով այնքան բարի, այնքան ս՟բ և այնքան լի գեղեցկութ՟բ. որ և է այնքան անհնա՟ր կարօղ, մինչ զի միայն կամելովն տայ զգոյն և զգեղեցկութի՟ ամենից ստեղծուածոց, և առանց որոյ և ոչ տերև մի ծառոյ կարէ շարժիլ։ Ուստի ասէ ս՟բն Պօղոս, թէ այս է խնդութի՟ մի այնքան մեծ, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ոչ 'ի սիրտ մարդոյ անկաւ։ Այս է գետն այն պարարտացուցիչ, զոր ետես ս՟բն Յօհաննէս 'ի յայտ-նութե՟ ելեալ յաթոռոյն Այ՟ և գառին, որ ուրախ առնէ զքաղաքն զայն, յորմէ ըմ-պեն երանեցեալքն 'ի յերկինս, և արբեալք այսու սիրով երգեն զմշտնջենական աւե-լուիայն, փառաւորելով, և օրհնելով զԱ՟ծ։ Ալէլուիա. զի թագաւորեաց Տ՟ր Ա՟ծ մեր ամենակալ։ Խնդասցուք, և ցնծասցուք, և փառս տացուք նմա։ Յայտ. 19. 6։ Կան ուրախանալով, և առնելով զտօն վ՟ս մեծութե՟ փառացն ա՟յ, և խնդակցելով ը՟ նմա մեծաւ հրճուանօք, և ասելով։ Օրհնութի՟, և փառք, և իմաստութի՟, և գոհութի՟, և պատիւ, և զօրութիւն, և շնորհք ը՟ն ա՟յ մերոյ յաւիտեանս յաւիտենից. Ալ՟էլ։

Յայտն. 7. 12։

Այս է սէրն սրբոց առ Ա՟ծ 'ի յերկինս, միաւորութի՟, և համակերպութին զոր ունին ընդ ա՟ծային կամաց ն՟ր, խօսելով ը՟ նուաս-տութե՟ մտաց մերոց։ Այս է ուրեմն այն, որում պարտիմք ջանալ հետևիլ աստ ըստ կերպի մերում, ք՟ զի եղիցի կամքն Ա՟յ 'ի յեր-

յերկրի, ոպ եղանի 'ի յերկինս: Զգոյշ լեր որպէս ցուցած քեզ օրինակ 'ի լերինն՝ արասցես, ասաց ԱԾ ցՄովսէս, յորժամ հրամայեաց նմա շինել զխորանն. Ելից. 25. 40: Այսպէս և մեք պարտիմք առնել զմ ըստ օրինակի այնորիկ, որ առնի անդ 'ի բարձրագոյն լերինն փառաց: Եւ այսպ պարտիմք սիրել և կամիլ զայն, զոր սիրեն, և կամին երանեցեալքն 'ի յերկինս, և զոր սիրէ, և կամի ինքն ԱԾ, որ է նոյն փառքն, և գոլն իւր ծայրագունապէս կատարեալ և փառաւոր:

Ոպ զի իւրաքանչիւր ոք բարւոք կարիցէ առնել զայս, դիցուք աստ համառօտաբար զգործածութիւն կրթութեան այսորիկ: Յորժամ կաս 'ի յաղօթս խորհեաց մտօք զանհուն գոլն այ, զյաւիտենականութիւն, զամենակարողութիւն, զանհուն իմաստութիւն, զգեղեցկութիւն, զփառս, և զերանութիւն նր: Եւ կամօքդ ուրախացիր, զուարձացիր, հաճեաց, և բերկրեաց, զի ԱԾ է այն, որ է. ուրախացիր վս գոլոյն նր ԱԾ. զի ինքնին ունի զգոլն իւր, և զանհուն բարին, զոր ունի. զի ոչ ունի պիտոյս յումեքէ. և մեք ամենեքեան ունիմք զպիտոյս 'ի նմանէ: Զի է ամենակարօղ. բարի, սբ, և լի փառօք. այսպ և զայլոց կատարելութեց և զանչափ բարեաց նմա, որք գոն 'ի յԱԾ:

Ասէ սբն Թովմաս, և այլք ածաբանք, թէ այս է մեծագոյն և կատարելագոյն գործ սիրոյն այ: Եւ այսպ է նաև բարձրագոյն, և գերազանցագոյն կրթութիւն համակերպութեն ընդ կամացն այ. քանզի ոչ գոյ մեծագոյն, և կատարելագոյն սէր այ քան զայն, զոր նոյն ինքն ԱԾ ունի առ ինքն, որ է վս նոյն փառաց իւրոց, և վասն գոլոյն իւրոյ ծայրագունապ կատարեալ և փառաւոր. և ոչ կարէ գոլ կամք կատարելագոյն քան

զայս։ Ուրեմն այնքան բարեգոյն և կատարելագոյն եղիցի սէրն մեր, որքան առաւել նմանեսցի այնմիկ սիրոյ, որով ԱԾ սիրէ զինքն․ այնու ևս առաւել մեծ և կատարեալ եղիցի միաւորութիւն մեր, և համակերպութիւն ընդ կամացն ԱՅ։ Ասեն փիլիսոփայքն, թէ սէրն է կամիլ զբարի այլոց, յորմէ հետևի, թէ որքան մեծ է բարին, զոր ցանկամք, զի ունիցի ոք, այնքան մեծ եղիցի և սէրն մեր, որով սիրեմք զնա։ Արդ՝ մեծագոյն բարին, զոր կարեմք կամիլ և ցանկալ վասն ԱՅ, է այն՝ զոր ունի նա, այսինքն անհուն գոյն նորա, իմաստութիւն, ամենակարողութիւն, և անհուն փառքն նորա։ Յորժամ սիրեմք զստեղծուած ինչ, ոչ միայն հաճիմք ընդ բարին զոր ունի, այլև կարեմք ցանկալ, զի ունիցի զայն զոր ոչ ունի․ զի ամենայն ստեղծուած կարէ աճիլ․ բայց ոչ կարեմք ցանկալ, զի ԱԾ ունիցի յինքեան ընդ բարի ինչ այնպիսի, զոր ոչ ունի․ քանզի գոլով անհուն, ո՛չ կարէ ունիլ զկարողութիւն առաւել մեծագոյն, ոչ զաւելի փառս, ո՛չ զաւելի իմաստութիւն, և ոչ զաւելի բարութիւն քան զայն, զոր ունի։ Ուստի ուրախանալն, հրճուելն, հաճիլն, և ախորժելն վասն ունելոյն ԱՅ զայսպիսի բարիս՝ զորս ունի, և վասն լինելոյն նորա այնքան բարի որքան է, այնքան հարուստ, այնքան կարող այնքան անհուն, և այնքան փառաւոր, է մեծագոյն բարի, զոր կարեմք կամիլ նմա․ և հետևաբար է նաև մեծագոյն սէր, զոր առ նա կարեմք ունիլ։

Ուստի ամենայն սուրբքն, որք են 'ի յերկինս, և ամենափառաւոր կոյս տիրուհին մեր, և ամենայն դասք հրեշտակաց կան ուրախանալով ընդ բարութիւն ԱՅ, որ է այնքան գեղեցիկ, և այնքան առատ և լի բարութեամբ․ իսկ և ուրախութիւնն և հրճուանն այն, զոր զգան 'ի

նմին՝ է այնքան մեծ, մինչ զի ոչ կարեն
վճարել ցանկութեան իւրեանց, եթէ ոչ գո-
վելով զՏէրն զայն, և ոչ յագին օրհնելով և
գովելով ՚ի յաւիտեանս յաւիտենից, որպէս
ասէ Մարգարէն. Սաղմ. 83. 5: Երանի ամե-
նեցուն, որք բնակեալ են ՚ի տան քո. յաւի-
տեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ: Այսպէս նաև
մեք պարտիմք միաւորել զսիրտս մեր, և համ-
բառնալ զձայնս մեր ընդ նոսին. որպէս ուսու-
ցանէ մեզ մայրն մեր սուրբ եկեղեցին, ասելով.
* Ընդ որս և զձայնս մեր ընդունել հաճեսցիս
աղաչեմք, որք կոչկոչագին խոստովանութեամբ
ասեմք. Սուրբ սուրբ սուրբ Տէր Աստուած սաբաւօթ, լի
են երկինք, և երկիր փառօք քո ||: Ուստի
միշտ, և կամ որքան առաւել յաճախ կա-
րեմք, պարտիմք գովել և փառաւորել
զԱստուած. ուրախանալ և հրճուել ընդ բարիս,
ընդ փառս, և ընդ սրբութիւն զոր ունի. և
խնդակցել ընդ նմա. և այսու կերպիւ նմա
նմանեցուսցուք զմեզ ըստ կերպի մերում՝
երանեցելոցն, և նոյն ինքեան Այ. և ջա-
նասցուք ունել զառաւել բարձրագոյն սէր,
և զառաւել կատարեալ համակերպութիւն ընդ
կամացն Այ, զորքան կարեմք ունել:

## Գ Լ Ո Ւ Խ. ԼԳ:

### Թէ որքան յաճախ յանձնեալ և վերակրկնեցեալ լինի ՚ի յԱստուածաշունչ գրեանս կրթութիւնս այս.

Որովհետև այնքան յանձնեալ և վերա-
կրկնեցեալ լինի ՚ի յԱստուածաշունչն կրթու-
թիւնս այս, կարէ յոյժ բարւոք ճանաչել զօ-
րութիւն և գերազանցութիւն նր, և թէ որ-
քան հաճոյ իցէ Այ. և խնդամայն կա-
րեմք առնուլ անտի զնիւթ առ ՚ի գործ ա-
ծել զայս, և զտեղի կալնուլ ՚ի սմին երկա-
բօրէն: Մարգարէն Դաւիթ ՚ի սաղմոսս

իւր

էր յամ՛ տեղւոջ հրաւիրէ զմեզ առ այս կրթութիւն, ասելով. Ուրա՛խ լերուք և ցնծացէք արդարք ՚ի Տր. պարծեցարո՛ւք ամենեքեան՝ ոյք ուղիղ էք սրտիւք: Սաղմ. 31. 11: Ցնծացէք արդարք ՚ի Տր. Սաղմ. 32. 1: Ցնծա՛ ՚ի Տր, և նա տացէ զխնդրուածս սրտի քոյ: Սաղմ. 36. 4: Քանզի այս է աղօթք մի, յորում առանց խնդրելոյ՝ խնդրես. և ԱԾ լուիցէ զցանկութիւն սրտի քոյ. զի մեծապէս հաճի նա ընդ աղօթս այս: Եւ ո՛ր առաքեալն Պօղոս գրելով առ փիլիպպեցիսն ասէ. 4. 4: Ուրա՛խ լերուք ՚ի Տր յամ ժամ: Եւ թուելով ինքեան թէ խրատս այս ոչ իցէ խրատ միանգամ ասելոյ, դառնայ միւսանգամ կրկնել ըզ նոյնն ասելով: Դարձեալ ասեմ, ուրա՛խ լերուք: Այս է հրճուումն այն, զոր ունէր ամենամբ կոյսն Մարիամ, յորժամ ասաց ՚ի յերգս իւր: Ղուկ. 1. 47: Եւ ցնծացաւ հոգի իմ յԱԾ փրկիչ իմ: Զայս ուրախութիւս ունէր, և եցոյց նաև Քս փրկիչն մեր, յորժամ ասէ ո՛ր աւետարանն. Ղուկ. 10. 21. Ցնծացաւ Յս Հոգւովն սրբով: Եւ մարգարէն Դաւիթ ասէ, թէ այնքան մեծ էր ուրախութիւն և հրճուումն, զոր ստանայր հոգւոյն իւր ՚ի խոկալն, թէ որքան մեծ է բարին և փառքն ԱՅ. և որքան արժանի է ԱԾ, զի ամենեքեան ուրախանայցեն ը՟ն անհուն բարին նր, մինչ զի յաղագս մեծի առատութեն, վերադառնայր ուրախութիւն այն ՚ի մարմինն. և նոյն միւն մարմնոյ վառիւր սիրովն ԱՅ: Սիրտ իմ և մարմին իմ ցնծացան յԱԾ կենդանի: Սաղմ. 83. 3: Եւ յայլում տեղւոջ ասէ: Այլ անձն իմ ցնծասցէ ՚ի Տր, ուրախ եղիցի ՚ի փրկութեն նր. և ամ ոսկերք իմ ասասցեն, Տր ո՞վ նման քեզ: Սաղմ. 34. 10: Եւ վա լինելոյ այսքան ա՟ծային և երկնային սէրս այս, եկեղեցին ԱՅ կառավարեցեալ Հոգւով սրբով, ՚ի սկզբան կանոնական ժամուց

սկսանելով զառաւօտեան ժամն, հրաւիրէ զմեզ առ 'ի սիրել այսու կերպիւ զՏր. յորգորական 94. սաղմոսին, ասելով: Եկա՛յք ցնծասցուք 'ի Տր. հրճուեսցուք առ Այ փրկչի մեր: Կանխեսցուք առաջի նորա խոստովանութբ, և սաղմոսիւք հրճուեսցուք առ նա: Զի Այ մեծ է Տր, և թագաւոր մեծ 'ի վերայ ամ աստուածոց: Նորա է ծով. և նա արար զնա, և զցամաք ձեռք նր հաստատեցին: Եւ վասն այն պատճառիս գնէ նոյն եկեղեցին 'ի վերջն ամենից սաղմոսաց զառողն զայն. * Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Որպ էրն 'ի սկզբանէ, և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն ‖: Այս է մտանելն այն յուրախութիւն Այ, զոր ասէ Քս փրկիչն մեր, որպ ընթեռնումք յաւետարանի: Մուտ յուրախութի տն քո: Մատ. 25. 22: Մտանակցիլ ընդ անհուն ուրախութե Այ, հրճուիլ և ուրախանալ ընդ նմա փառօք նր, գեղեցկութբ, և անհուն հարստութբ նր:

Որպ զի առաւել ըղձասցուք այսմ կրթութեսս, և ջանասցուք կալ միշտ յայսմիկ ուրախութե, և 'ի տօնախմբութե, մեծապէս օգնէ մեզ խոկալ, թէ որքան բարի, որքան գեղեցիկ, և որքան փառաւոր է Այ: Զի ունի նա զայս ամ կատարելութիս յինքեան այնպիսի ծայրագոյն աստիճանաւ, մինչ զի միայն տեսութբ իւրով առնէ երանեցեալս զտեսօղս իւր: Այլև նք որք են 'ի դժոխս, եթէ տեսանիցեն զնա, դադարէր 'ի նոսա ամ տանջանք, և դժոխքն դառնայր վս նց 'ի դրախտ: Այս են յաւիտենականն կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Այ. ասէ ինքն Քս. Յոհ. 17. 3: Յայսմիկ կայանայ փառքն սրբոց, այս 'ի տեսութեն Այ. այս է, որ առնէ զնս երանեցեալս՝ ոչ զմի օր, և ոչ զտարի մի, այլ 'ի յաւիտեանս յաւիտենից. զի ոչ երբէք յագին հայելով 'ի յԱծ, այլ

միշտ

միշտ եղիցի նոր խնդութիւն այն՝ ըստ որում տայ մեզ Յոհաննէս՝ Յայտ. 14. 3։ Եւ երգէին իբրեւ զերգ նոր ։ Թուի թէ այսու բա-րուք պարզաբանիցի բարութիւն, գեղեցկու-թիւն, եւ անհուն կատարելութիւն Այ. բայց գոյ աճելի եւ յոյժ աճելի, զի յաճեսցուք առ 'ի տանել. ը թէ Այ է այնքան գեղե-ցիկ, եւ այնքան փառաւոր, մինչ զի նոյն ինքն Այ տեսանելով զինքն է երանեցեալ. զի փառք եւ երանութիւն Այ կայանայ 'ի տեսանելն եւ 'ի սիրելն ինքն զինքն ։ Տես եթէ ունիցիմք զպատճառ ուրախանալոյ, եւ հրճուելոյ բարութեամբ, գեղեցկութեամբ, եւ փառօք, որք են այսքան մեծագոյն. որք ուրախացուցանեն զայն բոլոր քաղաքն այ, եւ երանեցեալս առնեն զերկնաքաղաքացիսն զայնոսիկ ։ Նաեւ նոյն ինքն Այ ճանաչելով եւ սիրելով զինքն, է երանեցեալ ։

## ԳԼՈՒԽ Խ. ԼԳ.

### Թէ որպէս հարկ է պարծել զմեզ յայսմիկ երջանկութեան ։

Արժեմք նաեւ կանոնաւորել զմեզ առա-ւելաբար յայսմիկ կրթութեան, եւ 'ի գործ ածել զսէրս զայս ընդ ամենայն մարդկու-թեան Քսի Տն մերոյ, խոկալով զնորին ար-ժանաւորութիւն, եւ զկատարելութիւն մեծ, եւ այսպէս հաճիլ եւ բերկրիլ ընդ այն, ուրա-խանալով եւ ցնծալով զտօն, որովհետեւ տե-սանեմք զի ամենօրհնեալ մարդկութիւն Քսի է յոյժ բարձրացեալ եւ միաւորեցեալ ընդ անձին ածայնոյ. եւ է կարի լի եւ առատա-ցեալ շնորհօք եւ փառօք. նաեւ է գործի ածութե, որով գործեաց եւ գործէ զիրս այնքան վեհագոյնս, որպիսիք են սրբացու-ցանելն, եւ փառաւորս առնելն զմեզ ընտ-

ընալս, և տալն զնմ պարգևս և զշնորհս գերբնականս, որք հաղորդին մարդկան։ Նաև կարեմք ուրախանալ և հրճուիլ ընդ այն մեծ, որ վերաբերի առ կատարելութի և առ փառս ամենափառաւոր հոգւոյն, և ամենամբ մարմնոյն Քնի փրկչին մերոյ. և զտեղի կալնուլ ՚ի պատակաթ սէրս, և յուրախութիւն յայս այնու կերպիւ, որով սրբքն խոկան, և որով ուրախանայր և հրճուէր ամենօրհնեալ թագուհին հրեշտակաց յաւուր յարութե նր, յորժամ ետես զնա այնքան յաղթօղ և փառաւոր. ոչ առէ մեծաշունչն զՅակոբայ նահապետէն, թէ յորժամ լուաւ թէ որդին իւր Յովսէփ կենդանի էր, և էր Տր բոլոր երկրին եգիպտացի՝ ուրախացաւ այնքան մեծապէս, մինչ զի վերանորոգեցեալ հոգւով սաստ. բաւական է ինձ, զի որդին իմ Յովսէփ կենդանի է, ոչ կամիմ զայլ ինչ, եթէ ոչ տեսանել զնա.

և այսու մեռայց հաճեալ և ուրախ։

Օսոյն կրթութիւնս կարեմք առնել նաև շուրջ զփառօք ամենբրանեալ կուսին տիրուհւոյն մերոյ, և այլոց սրբոց. և է յոյժ բարի ջերմեռանդութի պարապիլ ՚ի տօնի նց, մանաւանդ իւրեք աղօթից յայսմիկ կրթութե. և եղիցի մինն ՚ի մեծագունից ծառայութեց. զոր կարեմք առնել նց։ Քանզի զմեծագոյն սէրն զոր կարեմք ունիլ առ նս, է կամիլ և ցանկալ վն նց զմեծագոյն բարի. և ուրախանալ և առնել զտօն վասն մեծի փառաց նց, և կալ անդ խնդակցելով ընդ նոսա։ Վասն որոյ եկեղեցին առաջադրէ մեզ զայս կրթութիւս ՚ի տօնի վերափոխման ածամօրն առելով. * Այսօր կոյսն Մարիամ ել ՚ի յերկինս, ցնծացէք, զի ընդ Քնի թագաւորէ ՚ի յաւիտեան ||։ Եւ ակամնի զպաշտօն պատարագին յայսմիկ տօնի, և ՚ի յայլ պատարագս այլոց սրբոց՝ հրաւիրելով զմեզ առ-

այս.

այս կրթութիս, և քաջալերելով զմեզ առ այն օրինակաւ հրեշտակաց, որք առնեն ըզ նոյնն։ * Խնդասցուք ամենեքեան 'ի Տ՟ր կատարելով զաօն 'ի պատիւ երանեցելոյ կուսին, ընդ որոյ վերափոխումն հրճուէին հրեշտակք, և գովեն զորդին ա՟յ ||։ Գոյ ևս այլ բարի և օգուտ մեծագոյն առնելով զայս կրթութիս ընդ սէրն, մանաւանդ ը՟ անենայնը մարդկութեն Ք՟սի, և է այս․ զի այսու ախանի մարդն ելանել 'ի վեր սակաւ առ սակաւ, և ունել զկերպարանութին 'ի յայլս կրթութիւնս ա՟ծութե․ զի որ՟պ ասէ նոյն ինքն Ք՟ս, ինքն է ճանապարհ և դուռն առ 'ի մտանել առ հայր։

Նշէևս յայսմիկ կրթութե, որ եղանի շուրջ զԱ՟ծ՝ ը՟ որում է Ա՟ծ, գոն աստիճանք զանազանք․ և կարեմք կանոնաւորել զմեզ 'ի նմին, իջանելով առ ներս աշխարհիս այսորիկ։ Քանզի թէպէտ ճշմարիտ է այս, զի Ա՟ծ ոչ կարէ առնել յինքեան վ՟ս գոլոյն անհուն․ ուստի ոչ կարեմք ցանկալ, զի ունիցի զիր լի՟ն, զոր ոչ ունի յինքեան․ բայց սակայն կարէ Ա՟ծ առնել արտաքուստ 'ի ստեղծուածս, ի՟ր գոլ առաւել ճանաչեցեալ, առաւել սիրեցեալ, և առաւել փառաւորեցեալ 'ի ստեղծուածոց։ Եւ այսպ՟ կարեմք նաև զայն սէրս 'ի գործ ածել՝ ցանկանալով զի ունիցի Ա՟ծ զայսոսիկ բարիս արտաքինս։ Արդ՝ յորժամ խոկամք 'ի յաղօթս, թէ որքան արժանի է Ա՟ծ, զի ա՟մ արարածք սիրեսցեն զնա, և ծառայեսցեն նմա, պարտիմք ցանկալ․ զի ա՟մ հոգիք ստեղծեցեալք, և ստեղծանելիք ծանիցեն զնա, սիրեսցեն զնա, գովեսցեն զնա, և փառաւոր արասցեն զնա յա՟մի։ Վ՟ս որոյ կարեմք ասել․ Ո՜ Տ՟ր երանի թէ կարիցէի դարձուցանել զա՟մ անհաւատս, և զմեղաւորս, որք կան յաշխարհի․ զի ոչ ոք վշտացուցանիցէր զքեզ,

այլ ամենեքեան հնազանդիցեն քեզ, և սպա
սաւորիցեն 'ի ծառայութեան քում այժմ և
միշտ, որ առնելով զանուն քո, որպ ասէ
աւետարանն: Եւ Դաւիթ ասէ. Սաղմ.
65. 4: **Ամ՟ երկիր երկիրպագցէ քեզ. սաղմոս ասաս**
**ցէ քեզ. սաղմոս ասասցէ անուան քում:** Իսկ անդ
'ի յաղօթս կարեմք խոկալ զբազում ծառայ-
ութիւս, և զպատասաւորութիւս, զորս սուրբ
ծառայք կարեն առնել Այ, և ցանկալ
այնմիկ:

Յայսմանէ պարտի նմ ոք խնամել առ'ի ցան
կալ, և ջանալ առնելոյ զկամս նյ, և զայն՝
որ է վն մեծագոյն փառաց նր, և զայն որ
պատկանի նմա՝ գուն գործելով առնել միշտ
զայն նմ, զոր ճանաչէ, թէ է կամքն նյ,
և մեծագոյն փառք նր, ըստ այնմ, զոր Քն
փրկիչն մեր ասաց զանձնէ իւրմէ: **Զի ես**
**զհաճոյս նր առնեմ յամենայն ժամ:** Յոհ. 8. 29: Զի
որպ ասէ որ Յոհաննէս աւետարանիչն: 1.
Յոհ. 2. 4: **Որ ասիցէ, եթէ ծանեայ զնա. և զպա**
**տուիրանս նր ոչ պահիցէ, սուտ է. և ճշմարտութի**
**'ի նմա ոչ գոյ:** Եւ յաւելու ասել. **Իսկ որ պա**
**հիցէ զբան նր, արդարեւ 'ի նմա է կատարեալ սէրն**
**նյ:** Ուստի առ'ի սիրել զԱծ, և առ'ի ու-
նել զամբողջ համակերպութիւն ընդ կամացն
նյ՝ ոչ է բաւական թէ մարդ հաճիցի ընդ-
բարին նյ, և ցանկասցի, զի այլ նմ սուրբ
ծառայք սիրեսցեն, և փառաւորեսցեն զնա,
այլև պիտոյ է, զի նոյն մարդն մատուսցէ
և նուիրեսցէ զինքն բոլորովին առ'ի կատա-
րել զկամս նյ: Եւ այս է սէրն այն, որով
հոգին կրթի, յորժամ 'ի յաղօթս կերպարանօ-
րէ զճշմարիտ առաջադրութիւն, և զցանկու-
թիւն կատարելոյ զկամս նյ յայսմիկ և յայն-
միկ իրի, որք պատահիցին. որ է կրթու-
թիւն այն, յորում հասարակաբար սովորք
եմք կրթիլ 'ի յաղօթս:

Եւ յաւ բացցք զգաշտ մի մեծ, զի յորժամ
առնի-

առնիցեմք զաղօթս , կարիցեմք պարապիլ ընդ բազում ժամանակս 'ի կրթութեան յայսմիկ · և պարզաբանեցաք զօգուտն , և զկատարելութին մեծ , որք գոն 'ի սմին : Բայց ոչ այլ ինչ մնայ՝ եթէ ոչ զի արկցուք զձեռս 'ի գործ , և սկսեսցուք զփորձ առնուլ աստ 'ի յերկրի զայնցանէ իրաց , զորս պարտիմք 'ի գործ ածել յետոյ յաճախենականաբար՝ մեծաւ օգտիւ , և գերազանցութ̃ք 'ի յերկինս : Որոյ հուրն է 'ի սիոն , և հնոց նր̃ յերուսաղէմ · տր̃ ասէ մարգարէն Եսայի · 31 · 9 : Աստ պարտի սկսանիլ վառիլ 'ի մեզ հուրս այս սիրոյն այ̃ , բայց բորբոքումն , կատարելութին , և բարձրութին նր̃ եղիցին 'ի յերկնային երուսաղէմն , որ է փառքն սրբոց :

# Վ Ե Ր Ջ

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ ԳՐՈՑՍ

Յաղագս համակերպութեան ընդ կամացն Այ։

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։


Ա. Սորին դնին երկու հիմունք գլխաւորք։ 3

Բ. Պարզաբանի առաւել բարեաւ երկրորդ հիմն։ 10

Գ. Յաղագս բարեաց և օգտից մեծամեծաց, զորս պարունակէ յինքեան համակերպութիւն այս ը կամացն Այ։ 15

Դ. Թէ կատարեալ համակերպութիւն այս ընդ կամացն Այ է երջանկութիւն և երանութիւն մի 'ի յերկրի աստ։ 21

Ե. Թէ 'ի յԱծ միայն գտանի հանգստութիւն, և որ ոք գիցէ զայն յայլս իրս, ոչ կարասցէ ունել զճշմարիտ հանգստութիւն։ 27

Զ. Պարզաբանի այլով կերպիւ, թէ ոչ համակերպելն զմեզ ընդ կամացն Այ լցէ միջոց ստանալոյ զխաղաղութիւն և զհանգիստ։ 32

Է. Յաղագս այլոց բարեաց և օգտութեանց՝ որք գոն յայսմիկ համակերպութեան ընդ կամացն Այ։ 41

Ը. Հաստատի ամենայն օրինակօք, թէ որքան հաճոյ է Այ կրթութիւն այս համակերպութեան ը կամաց Նր, և կատարելութիւն որ գոյ 'ի սմին։ 46

Թ. Յաղագս ոմանց իրաց, որք առնեն դիւրին և հաւէլ զկրթութիւն համակերպութեան ը կամացն Այ։ 49

Ժ. Յաղագս հայրականի և մասնաւորի Նախախ-

խախնամութեան և նախատեսչութեան, զոր Ած ունի առ մեզ, և յաղագս որդիականի համարձակութեան, զոր ունիլ պարտիմք առ նա: 54

Ժ ա. Յաղագս ոմանց տեղեաց և օրինակաց Աստուածաշունչ գրոց, որք օգնեսցեն մեզ առ ՚ի ստանալ զայս ընտելական և որդիական համարձակութիւնս առ Ած: 62

Ժ բ. Թէ յոյժ օգուտ է և մեծ կատարելութիւն առակցել զաղօթսն ընդ այսմիկ կրթութեան համակերպութեան ընդ կամացն Այ, և թէ ոչ խզանելոցք եմք առ իրս մասնաւորս, մինչև ժամանեսցուք առ երրորդ աստիճանն համակերպութեան: 75

Ժ գ. Յաղագս անտարբերութեան և համակերպութեան ընդ կամացն Այ, զոր պարտի ունիլ կրօնաւորն առ ՚ի երթալ, և կալ յոր և իցէ կողմն աշխարհիս, ուր հնազանդութիւն առաքիցէ: 82

Ժ դ. Յաղագս անտարբերութեան և համակերպութեան ընդ կամացն Այ, զոր պարտի ունիլ կրօնաւորն վասն որոյ և իցէ պաշտոնի և պարապման, յորում հնազանդութիւն կամիցի դնել զնա: 90

Ժ ե. Յաղագս համակերպութեան, զոր պարտիմք ունիլ ընդ կամացն Այ շուրջ զբաշխմամբ քանքարաց, և բնական պարգեւաց: 99

Ժ զ. Յաղագս համակերպութեան ընդ կամացն Այ, զոր պարտիմք ունիլ ՚ի հիւանդութեան: 109

Ժ է. Թէ ոչ պարտիմք դնել մեք զյոյսն մեր ՚ի բժիշկս, և ՚ի բժշկական դեղօրայս, այլ միայն ՚ի յԱծ. և միշտ պարտիմք համակերպել զմեզ ընդ ամենասուրբ կամացն Այ յամ դիպուածս: 116

Ժ ը. Հաստատի որ ինչ ասացաւ, օրինակօք ոմամբք: 121

Ժ թ. Յաղագս համակերպութեան, զոր պարտիմք ու-

ունիլ առ կամս Այ թէ 'ի կեանս, և թէ 'ի մահու: 129
ժ· Յաղագս ումանց պտճռաց, վս որոց կարեմք սրբաբար ցանկալ մահու: 134
ժա· Հաստատուն ասացելոյն օրինակօք· 144
ժբ· Յաղագս համակերպութե ը կամացն Այ 'ի յամ վիշտս, և 'ի տառապանս: 152
ժգ· Յաղագս միջոցի միոյ առ 'ի ստանիլ համակերպութե ընդ կամացն Այ զամ վիշտս, որ է ճանաչել զմեղս մեր: 157
ժդ· Յաղագս համակերպութե ընդ կամացն Այ 'ի ցամաքութե հոգւոյ յաղօթս· և թէ զինչ լիցի այն, պարզաբանի: 164
ժե· Պատասխանեալ լինի դանդատանաց նց, որք զգան զչորութն 'ի յաղօթս: 171
ժզ· Թէ ոչ կարեմք դարձուցանել զչորութին և զդառնութին 'ի յօգտակար աղօթս: 177
ժէ· Յաղագս այլոց պատճառաց, վս որոց պարտիմք համակերպիլ ը կամացն Այ 'ի չորութե, և 'ի դառնութե, որ յաղօթս: 180
ժը· Թէ է մեծ խաբէութն և փորձութն թողուլն զաղօթս վս այնր, որ ասացաւ: 185
ժթ· Հաստատուն ասացելոյն օրինակօք: 189
ի· Յաղագս համակերպութե ը կամացն Այ շուրջ զայլովք առաքինութբք և զպարգևօք դերբնականօք, զորս տայ մեզ Աձ: 194
իա· Յաղագս համակերպութե ընդ կամացն Այ շուրջ զբարեօքն փառաց: 200
իբ· Յաղագս համակերպութե, միաձևութե և կատարեալ սիրոյ ը Այ· և թէ ոչ պարտիմք 'ի գործ ածել զկրթութիս զայս: 205
իգ· Թէ որքան յաճախ յանձնեալ և վրկրկնեցեալ լինի 'ի յածաշունչ գիրս կրթութիս այս: 210
իդ· Թէ ոչ կարեմք [illegible] յայսմիկ կրթութե: 213

Гос. Библиотека
ՀՍԽՌ-Арм ССР

34

[illegible]

[illegible]